ԷԴԳԱՐ ՆԱՎՈՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

(1878-1923 թթ.)

113 Ռ 892 947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷԴԳԱՐ ՆԱՎՈՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

(1878-1923 թթ.)

(պատմական, իրավական և տնտեսական վերլուծություն)

Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2016

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 94(479.25):341
ԳՄԴ 63.3(5Հ)+67.412
Ն 387

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Մարուքյան

ՆԱՎՈՅԱՆ Է.

Ն 387 Հայկական հարցը միջազգային խորհրդաժողովներում և պայմանագրերում (1878-1923 թթ.) (պատմական, իրավական և տնտեսական վերլուծություն) / Է. Նավոյան- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, - 166 էջ:

Աշխատությունը նվիրված է Հայկական հարցի հետ սերտորեն կապված միջազգային վեհաժողովների և պայմանագրերի պատմաքաղաքական, իրավական և տնտեսական վերլուծությանը: Ներկայացվում են 1878-1923 թթ. պատմական բարդ ժամանակաշրջանը, միջազգային իրավունքի տեսանկյունից Հայկական հարցին առնչվող պայմանագրերի իրավական կողմը և լուծման հնարավոր տարբերակները:

Թեմայի վերաբերյալ հրապարակում առկա են բազմաթիվ աշխատություններ և հոդվածներ, սակայն պատմական որևէ ժամանակաշրջան, դեպք կամ իրադարձություն, քանի դեռ այն հարուցում է հետաքրքրություն, երբեք չպետք է համարել «սպառված», որի մասին ամեն ինչ ասվել է:

Նախատեսված է թեմայով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25):341
ԳՄԴ 63.3(5Հ)+67.412

ISBN 978-5-8080-1175-5

. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 4

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՆՐԱ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ (ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ԵՎ ԲԵՌԼԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ) 6

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՐՁԱՐՁՈՒՄԸ 1912-1914 ԹԹ. ԵՎ 1914 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ 17

3. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԳԱՂՏՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (ՍԱՅՔՍ-ՊԻԿՈ) 32

4. ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 41

5. ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 49

6. ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 58

7. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ 62

8. ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՐՑԸ 75

9. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻԼՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃՌԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 82

10. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 98

11. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 104

12. ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 121

13. ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (1921 թ.) 128

14. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ (ԼՈԶԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ) 134

15. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԼՔՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՐՑԸ 150

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 157

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 160

ԱՌԱՋԱԲԱՆ

1878 թ. միջազգային ասպարեզ իջած Հայկական հարցը և իրականացված Հայոց ցեղասպանությունը և դրա հետ կապված միջազգային ճանաչման ու հատուցման խնդիրները շարունակում են մինչ այժմ մնալ չլուծված: Այս առումով հայոց պատմության հիմնական ծանրագույն ժամանակաշրջանը, որ ընդգրկում է 1878-1923 թթ., գիտական հետազոտման առումով երբեք չպետք է համարել բազմակողմանիորեն «քննարկված» կամ «հետազոտված»: Հայկական հարցի բազմակողմանի ուսումնասիրությունն ունի ռազմավարական նշանակություն, նրա դրական լուծումը՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու ընդունումը, Արևմտյան Հայաստանի տարածքների վերադարձը, նյութական վնասների փոխհատուցումը ոչ միայն կունենա ազգային, պետական նշանակություն, այլև կջնջի այն թերարժեքության զգացումը, որ գիտակցականի կամ անգիտակցականի մակարդակով առկա է գրեթե յուրաքանչյուր հայի մոտ:

Հայկական հարցի պատմական և իրավական մաս կազմող միջազգային պայմանագրերի և խորհրդաժողովների մասին գրվել ու գրվում են բազմաթիվ աշխատություններ, գիտական հոդվածներ, կազմակերպվում են գիտաժողովներ և այլն: Եվ, չնայած այս ամենին, շատ քիչ են այնպիսի աշխատությունները[1], որոնք բազմակողմանի համեմատական վերլուծության են ենթարկել Հայկական հարցին վերաբերող հիմնական պայմանագրերը (1878-1923 թթ.): Մեր նպատակն է ուսումնասիրության ենթակա խնդիրը հետազոտության և վերլուծության ենթարկել ոչ միայն հայոց պատմության, այլև համաշխարհային պատմության, միջազգային հարաբերությունների, իրավագիտության և տնտեսագիտության տեսանկյունից:

Փորձ է արվել ուսումնասիրվող նյութի շրջանակներում քննության դնել ցեղասպանության արդյունքում հայ ժողովրդի նյութական կորուստների և «լքյալ գույքի» խնդիրը, որքանով որ դրանք տեղ են գտել ստորագրված պայմանագրերում:

---

[1] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999: Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2014: Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Ե., «Լուսակն», 2007: Առանձին հոդվածներով խնդրին անդրադարձել է նաև Ա. Պապյանը և այլք:

Առաջին աշխարհամարտից հետո, Հայաստանին ու Հայկական հարցին առնչվող գրեթե բոլոր պայմանագրերում (բացառությամբ Սևրի), որոնք հիմնականում պարտվողական էին, գոյություն ունեն առանձին կետեր, որոնցում կողմերը պարտավորվել են փոխադարձաբար հրաժարվել պատերազմի և նրա արդյունքում կրած տարբեր տեսակի վնասները փոխհատուցելուց, այսինքն՝ ռեպարացիաներից: Այս հանգամանքը բնավ չպետք է անտեսել, այլ անհրաժեշտ է քննության ենթարկել առանձին:

Ցավոք պատմությունը հիմնականում սպասարկում է պետական գաղափարախոսությունը, որը ժամանակի ընթացքում դառնում է կարծրատիպ, և չափազանց դժվար է այդ պայմաններում պաշտպանել ճշմարտությունը: Երբ տեղի է ունենում երկու քաղաքակրթությունների բախում, պարտվողը մի տեսակ դուրս է մղվում, իսկ հաղթողը սկսում է գրել պատմությունը նորովի, որով փառաբանում է իրեն և նսեմացնում պարտված կամ թույլ կողմին: Նապոլեոնն ասել էր. «Ինչ է պատմությունը, եթե ոչ առասպել, որին պայմանավորվել են հավատալ բոլորը»[2]: Իր բնույթով պատմությունը գրեթե միշտ եղել է իրադարձությունների միակողմանի մեկնաբանություն, քանի որ հիմնականում ենթարկվել է իշխող վարչակարգի գաղափարախոսության պահանջներին: Եվ, ուրեմն, խիստ արդիական է մնում ապագայի հեռավորությունից պատմական, իրավական և տնտեսական հաջորդական վերլուծության ենթարկել Հայկական հարցին վերաբերող հիմնական պայմանագրերը և դրանց հարակից խնդիրները՝ հնարավորինս անաչառ լույսի ներքո՝ զերծ ազգային պատկանելիության սկզբունքից:

---

[2] Наполеон Бонапарт - цитаты //http://www.omg-mozg.ru/avtory-napoleon-bonapart.htm

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՆՐԱ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ (ՍԱՆ ՍՏԵՖԱՆՈՅԻ ԵՎ ԲԵՌԼԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ)

Հայկական հարցը օտարների տիրապետությունից Հայաստանի ազատագրման, Հայկական լեռնաշխարհում ինքնուրույն հայկական պետականության վերականգնման, հայ ժողովրդի համախմբման և այդ նպատակին հասնելու համար մղած հայ ազգային-ազատագրական պայքարի հիմնահարցերի ամբողջությունն է: Այն ասպարեզ է իջել որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, կարևոր տեղ գրավել մեծ տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի մերձավորարևելյան քաղաքականության մեջ, Օսմանյան կայսրությունը ազդեցության գոտիների և նրա տիրույթների բաժանման համար նրանց մղած պայքարում: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետ «Հայկական հարց» եզրույթը մտավ միջազգային դիվանագիտության մեջ՝ դառնալով մեծ տերությունների մշտական քննարկման առարկաներից մեկը (1878-1923 թթ.):

XIX դ. առաջին կեսին Մերձավոր Արևելքում խիստ նպաստավոր ռազմավարական դիրք զբաղեցնող, ամենախոշոր պետություն հանդիսացող Օսմանյան կայսրությունը դարձել էր եվրոպական մեծ տերությունների մրցակցության առարկա: Սեփական շահերով առաջնորդվող տերություններից յուրաքանչյուրը չէր ցանկանում թույլ տալ, որպեսզի մրցակիցներից որևէ մեկը քաղաքական կամ տնտեսական առավելության հասնի Օսմանյան կայսրությունում: Տերություններից յուրաքանչյուրն իր ձգտումները թաքցնում էր կայսրության «ստատուս քվոյի» սկզբունքով: Մեծ տերությունների միջև առկա հակասությունները ձեռնտու էր օսմանյան կառավարությանը (Բարձր Դուռ), որը կարողանում էր վարպետորեն օգտվել դրանցից և վարել ներքին հետադեմ քաղաքականություն, ճնշել ազգային-ազատագրական շարժումներն ու պահպանել կայսրության ամբողջականությունը՝ հատկապես արևելյան վիլայեթներում:

Հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության խնդիրը եվրոպական տերությունների համար գործընթաց էր, որի միջոցով նրանք ճնշում էին գործադրում Օսմանյան Թուրքիայի վրա՝ վերջինիցս քաղաքական, տնտեսական և տարածքային զիջումներ ստանալու համար՝ քողարկվելով հայության իրավունքները պաշտպանողի դիմակով:

Եվրոպական տերությունների երկդիմի քաղաքականությունը ոչ միայն դրականորեն չազդեց Հայկական հարցի դրական լուծման վրա, այլև հանգեցրեց մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանությանը՝ 1915 թ. Հայոց մեծ եղեռնին:

Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ վայրերում բնակվում էին ավելի քան 3 մլն հայեր, որոնք ենթարկվում էին ազգային, տնտեսական, քաղաքական և կրոնական ճնշման ու հալածանքների: 19-րդ դարի 60-ական թթ. նկատելիորեն ուժեղացավ հայ ազգային-ազատագրական պայքարն Արևմտյան Հայաստանում (ապստամբություններ Վանում և Զեյթունում՝ 1862 թ., Մուշում՝ 1863 թ.): 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմն ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: Բալկանյան ճակատում ռուսական զորքերը մոտեցան Կոստանդնուպոլսին, իսկ Կովկասյան ճակատում գրավեցին գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը: Ռուս-թուրքական պատերազմը և բալկանյան ժողովուրդների ազատագրական հաջող պայքարը նոր թափ հաղորդեցին հայ ազգային-ազատագրական շարժմանը՝ հանուն ազգային ազատագրության, Ռուսաստանի հովանավորության ներքո Հայաստանի երկու մասերի միավորման: Ռուսական կայսրության ծավալապաշտական քաղաքականությունը, Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների «հովանավորի» նրա դիրքը օբյեկտիվորեն համընկնում էին թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրության կենսական շահերին[3]: Հայկական հարցն առաջին անգամ իր արտացոլումը գտավ 1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)-ին Սան Ստեֆանոյում ստորագրված ռուս-թուրքական պայմանագրում*: Պայմանագրի

---

[3] Կիրակոսյան Ա. Զ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահրավական եռալեզու տեղեկանք), Ե., «Նորավանք» ԳԿՀ, 2006, էջ 5-6:

* Սան Ստեֆանոյի պայմանագրի հիմնական կետերով Զեռնոգորիան, Սերբիան և Ռումինիան անկախ էին ճանաչվում: Բոսնիան և Հերցեգովինան ինքնավարություն էին ստանում Օսմանյան կայսրության շրջանակներում: Բուլղարիան (Արևելյան Ռումելիայով, Մակեդոնիայով և Թրակիայի մի մասով՝ մինչև Սալոնիկ և Էգեյան ծով) հռչակվում էր ինքնավար իշխանություն՝ տերությունների համաձայնությամբ և Բարձր Դռան կողմից հաստատվող իշխանությունով: Թուրքական զորքերը դուրս էին բերվում Բուլղարիայից, իսկ ռուսական զորքերը մնում էին այնտեղ՝ 2 տարի ժամկետով: Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին վճարել 1410 մլն ռ. ռազմատուգանք, որի մեծ մասը (1100 մլն ռ.) փոխարինվում էր տարածքային զիջումներով. եվրոպական մասում՝ Տուլչայի սանջակի դիմաց Ռուսաստանը ստանում էր 1856-ի Փարիզի պայմանագրով իրենից անջատված Հարավային Բեսարաբիան, ասիականում՝ Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազետը և մինչև Սողանլուղ ընկած տարածքը (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե. 1972, էջ 83-98: Մուրադյան Ա. Մ., Մինասյան Է. Գ., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Ե., ԵՊՀ, 2005, էջ 493-503):

16-րդ հոդվածում ասվում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից, կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»: Պայմանագրի 19-րդ հոդվածով Ռուսաստանին էին անցնում Կարսը, Արդահանը, Բայազետը, Բաթումը, Օլթին, Արդանուշը, Արդվինը, Ալաշկերտը, Կաղզվանը, Խումարը: 17-րդ հոդվածով Բարձր Դուռը պարտավորվում էր լիակատար և անվերապահ ներում պարգևել այն բոլոր օսմանահպատակներին, ովքեր մասնակցել էին պատերազմին կամ դրա հետևանքով ենթարկվել էին ազատազրկման ու տարագրության: 25-րդ հոդվածով սահմանվում էր, որ ռուսական զորքերի դուրսբերումը Ասիական Թուրքիայից կկատարվի 6 ամսվա ընթացքում՝ հաշված վերջնական հաշտություն կնքելու օրից: 26-րդ հոդվածով ռուսական զորքերի տեղակայման վայրերում թուրքական իշխանությունների իրավունքները դադարեցվում էին այնքան ժամանակով, քանի դեռ ռուսական զորքերը գտնվում էին տվյալ տարածքներում և մինչև ռուսական զորքերի դուրս բերումն այդ տարածքներում տարածվելու էր ռուսական զինվորական իշխանությունների իրավասությունները: Սակայն կառավարման կարգը մնալու էր նախկին վիճակում: Իսկ 27-րդ հոդվածը պարտավորեցնում էր Բարձր Դռանը՝ չհալածել և թույլ չտալ հալածել այն թուրքահպատակներին, որոնք պատերազմի ժամանակ կապեր են ունեցել ռուսական բանակի հետ, ինչպես նաև արգելք չլինել այն անձանց, ովքեր իրենց ընտանիք-ներով կցանկանան հեռանալ ռուսական զորքերի հետ[4]:

Թեև նոր պատմության շրջանում առաջին անգամ Հայաստան անվանումը և հայերը հիշատակվում էին միջազգային դաշնագրում, ակնհայտ է, որ ռուսական դիվանագիտությունը մտադրություն չուներ պայքարելու Արևմտյան Հայաստանի ինքնավարության համար, ինչ-

---

[4] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե. 1972, էջ 83-98, տես նաև Сборник договоров России с другими государствами. 1856-1917 (составлен Козьменко И. В.), М.: Госполитиздат, 1952, с. 159-175. Ճակատագրական պայմանագրեր (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ Ազատյան Հ. Գ.), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, էջ 47-53:

պես դա տեղի ունեցավ բալկանյան ժողովուրդների պարագայում: Ռուսաստանը սահմանափակվեց միմիայն արևմտահայերին հովանավորողի և գրավված տարածքներում բարենորոգումների իրագործումը հսկողի դերով: Սակայն, արձանագրելով ռուսական բանակի հեռանալուց հետո հայերի համար ստեղծվելիք վտանգը, Ռուսաստանի կառավարությունը միջազգային իրավունքի ուժ էր հաղորդում Բարձր Դռան կողմից Հայաստանում բարենորոգումներ իրագործելու անհրաժեշտությանը: Սակայն պայմանագիրը կնքվեց միջազգային լարված պայմաններում, Ռուսաստանին հակադրվեց անգլո-ավստրիական ուժեղ դաշինքը[5]:

16-րդ հոդվածը երաշխավորող ու հատկապես լրացնող հոդվածներից կարելի է ենթադրել, որ Ռուսաստանն էլ էր գիտակցում, որ կայսրության քրիստոնյաները, այդ թվում հայերն, իրենց կյանքի համար մեծ ռիսկի էին դիմել՝ օգնելով ռուսական բանակին: Սրանք չափազանց կարևոր հոդվածներ էին այն իմաստով, որ Ռուսաստանն օսմանյան ներպետական օրենսդրությունից դուրս էր հանում պատերազմի ժամանակ հակառակորդ համարող իր զորքերին սատարած օսմանահպատակների պաշտպանության հարցը, քաջ գիտակցելով, որ նրանք պատերազմի ավարտից հետո պետք է ենթարկվեն հալածանքների[6]:

Սան Ստեֆանոյի պայմանագիրը զգալիորեն մեծացնում էր Ռուսաստանի դիրքերը Բալկաններում, հատկապես սլավոնական բուլղարական մեծ պետության ստեղծմամբ, ինչպես նաև Անդրկովկասում Բաթումի և հայկական նահանգների ազատագրմամբ, ինչն անընդունելի էր եվրոպական տերությունների համար[7]:

Բրիտանական կառավարությունն անհապաղ միջոցների դիմեց՝ Ռուսաստանին զրկելու ռազմական հաղթանակի արդյունքներից, քանի

---

[5] Կիրակոսյան Ա. Զ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, էջ 6-7:

[6] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմիրավական հիմնավորումները, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2014, էջ 53:

[7] Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովներում Մեծ Բրիտանիայի և եվրոպական մյուս տերությունների հակառուսական և դրանով իսկ նաև հակահայկական դիրքորոշման մասին առավել մանրամասն տե՛ս Կիրակոսյան Ա. Զ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ.-1914 թ.), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 90-115: Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, էջ 284-314: Պողոսյան Ս., Պատմագիտական ուսումնասիրություններ, Հայոց ցեղասպանության պատմություն, Ե., ԵՊՀ, 2008, հ. I, էջ 152-204:

որ վտանգ էր տեսնում իր շահերին Մերձավոր Արևելքում և Հնդկաստան տանող ճանապարհին: Ստեղծված ոչ նպաստավոր պայմաններում Ռուսաստանը հարկադրված էր 1878 թ. մայիսի 30-ին համաձայնագիր ստորագրել բրիտանական կառավարության հետ, որով նա հրաժարվեց Արևմտյան Հայաստանում իր գրաված Բայազետ քաղաքից և Ալաշկերտի դաշտից: Բացի այդ, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցով զբաղվելու էր ոչ միայն Ռուսաստանը, այլև Մեծ Բրիտանիան[8]: Բրիտանական կառավարությանը հաջողվեց նաև 1878 թ. հունիսի 4-ին գաղտնի պայմանագիր պարտադրել Բարձր Դռանը, որի համաձայն՝ Մեծ Բրիտանիան գրավում էր Կիպրոս կղզին՝ փոխարենը պարտավորվելով վերադարձնել պատերազմի ընթացքում Ռուսաստանի գրաված հայկական տարածքները, ինչպես նաև պաշտպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունն ու շահերը[9]: Ավելին, Մեծ Բրիտանիան և Ավստրո-Հունգարիան նախաձեռնեցին հրավիրել միջազգային համաժողով, որի հիմնական նպատակն էր խոչընդոտել Ռուսաստանին օգտվելու իր հաղթանակի պտուղներից: Բեռլինի կոնգրեսի (1878 թ. հունիսի 13 – հուլիսի 13) հրավիրման նախօրեին Մկրտիչ Խրիմյանի (հայ հասարակական-քաղաքական գործիչ, 1869-1873 թթ.՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք, 1893-1907 թթ.՝ Ամենայն Հայոց կաթողիկոս) գլխավորությամբ Եվրոպա մեկնեց հայ ազգային պատվիրակությունը՝ եվրոպական պետությունների կառավարությունների հետ բանակցություններ վարելու նպատակով: Չստանալով իրական երաշխիքներ եվրոպական մայրաքաղաքներից՝ հայ ազգային պատվիրակությունը, այնուամենայնիվ, մեկնեց Բեռլին, սակայն նրան չթույլատրվեց մասնակցել կոնգրեսի նիստերին: Բեռլինի կոնգրեսում, Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման հետևանքով, արևմտաեվրոպական դիվանագիտությանը հաջողվեց Ռուսաստանին զրկել Հայկական հարցում նրա ունեցած մենաշնորհից[10]: Գլխավորապես Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի ճնշմամբ 16-րդ հոդվածը Բեռլինի վեհաժողովում փոխարինվեց 61-րդ

---

8 Ճակատագրական պայմանագրեր (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ Ազատյան Հ. Գ.), Ե., ՀՀ ԳԱԱ, 1998, էջ 54-57:

9 Տես Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 103-105, նաև՝ Մուրադյան Ա. Մ., Մինասյան Է. Գ., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Ե., ԵՊՀ, 2005, էջ 504-520: Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 55-57:

10 Կիրակոսյան Ա. Ջ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, էջ 7-8:

հոդվածով, որտեղ նշվում էր, որ «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»[11]: 58-րդ հոդվածի համաձայն՝ Ռուսաստանին էին միացվում Կարսը, Արդահանը և Բաթումը՝ իրենց մարզերով, իսկ 60-րդ հոդվածով Ալաշկերտի հովիտը և Բայազետը վերադարձվում էին Օսմանյան կայսրությանը: Եթե Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ ռուսական զորքի ներկայությունը Արևմտյան Հայաստանում կարող էր հանդիսանալ բարենորոգումների իրագործման իրական երաշխիք, ապա Բեռլինում ստորագրված պայմանագրի 61-րդ հոդվածից չէր երևում, թե ինչպես են Եվրոպայի տերությունները հսկողություն իրականացնելու Բարձր Դռան կողմից ձեռնարկված միջոցառումների հանդեպ: Սան Ստեֆանոյի պայմանագրում հիշատակվում էր Հայաստան անվանումը, իսկ Բեռլինի դաշնագրում խոսվում էր միայն հայաբնակ մարզերի մասին: Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն ընդհանրապես խուսափում էր Հայաստան աշխարհագրական անվանման օգտագործումից՝ ապագայում նույնիսկ ինքնավար շրջանի ստեղծումը բացառելու նպատակով*: Օգտվելով բրիտանական քաղաքականության բարենպաստ

---

[11] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 128 պայմանագրի տեքստն ամբողջությամբ տե՛ս Сборник договоров России с другими государствами. 1856-1917, 181-206:

* Բեռլինի պայմանագրի մյուս դրույթները հանգում էին հետևյալին. Բուլղարիան հռչակվում էր ինքնավար պետություն՝ մեծ տերությունների համաձայնությամբ ընտրված և սուլթանի կողմից հաստատված կառավարչով: Բուլղարիայի հարավային սահմանագիծը պետք է լիներ Բալկանյան լեռնաշղթան, որից հարավ ընկած մարզերը կազմում էին մի առանձին նահանգ Արևելյան Ռումելիա անունով, որի նահանգապետին (քրիստոնյա) նշանակում էր սուլթանը 5 տարի ժամկետով: Թրակիան, Մակեդոնիան և Ալբանիան մնում էին Թուրքիային: Չեռնոգորիան, Սերբիան և Ռումինիան անկախ էին ճանաչվում: Ռումինիան Բեսարաբիայի մերձդանուբյան տարածքների փոխարեն, որոնք անցնում էին Ռուսաստանին, ստանում էր Դոբրուջան: Ավստրո-Հունգարիային իրավունք վերապահվեց ժամանակավորապես գրավելու Բոսնիան ու Հերցեգովինան և կայազոր պահելու Թուրքիային պատկանող Նովի Պազարի սանջակում: Բաթումը հայտարարվում էր ազատ նավահանգիստ (պորտոֆրանկո): Թուրքիան պարտավորվում էր խղճի ազատություն և քաղաքացիական իրավունքների հավասարություն ապահովել իր բոլոր հպատակների համար: Բեռլինի դաշնագիրը անփոփոխ թողեց սևծովյան նեղուցների վերաբերյալ՝ Փարիզի 1856 թ. պայմանագրի և Լոնդոնի 1871թ. կոնվենցիայի դրույթները (տե՛ս Մուրադյան Ա. Մ., Մինասյան Է. Գ., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Ե., ԵՊՀ, 2005, էջ 504-520):

դրսևորումներից, 61-րդ հոդվածի ոչ հստակ, հեղհեղուկ ձևակերպումներից՝ անմիջապես Բեռլինի վեհաժողովից հետո սուլթան Աբդուլ Համիդը որդեգրեց հակահայկական քաղաքականություն՝ վարչական միավորների վերածնման և հայ բնակչության ֆիզիկական բնաջնջման միջոցով «հայաբնակ շրջաններ» հասկացությունը վերացնելու նպատակով[12]:

Ըստ Բրիտանացի հետազոտող Մ. Մակքոլի «61-րդ հոդվածը մնաց իբրև մեռած տառ, քանի որ Բ. Դուռը մեծ տերություններին երբևիցե չհայտնեց որևէ տեղեկություն պայմանագրային պարտավորությունների իրագործման վերաբերյալ այն հիմնավոր պատճառով, որ որևէ միջոց այդ ուղղությամբ նա չձեռնարկեց: Եվ այս ամոթալի փաստի համար պատասխանատվությունը կրում էր Անգլիան»[13]: Իսկ Ֆ. Գրինի կարծիքով, 61-րդ հոդվածը և անգլո-թուրքական համաձայնագիրը ոչ մի դեր չխաղացին հայերի համար որևէ բարեփոխումներ կատարելու առումով: Նա գտնում է, որ Հայաստանի վիճակը դրանից հետո դարձավ ավելի անհուսալի, քան 20 տարի առաջ, և այդ վիճակը պայմանավորված էր նշված պայմանագրի հոդվածներով ու դրանք ստորագրած տերությունների հետագա գործողություններով[14]:

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածին որոշակիորեն լրացնում է 62-րդ հոդվածը, որը, թեև ուղղակիորեն, վերաբերում էր նաև կայսրության հայ բնակչության իրավունքների պաշտպանությանը: 62-րդ հոդվածով Բ. Դուռը մեկ անգամ ևս հրապարակայնորեն հռչակում էր կրոնական ազատությունների սկզբունքի ապահովման, իր պարտավորությունների պահպանման մասին[15]: Ըստ հոդվածի Օսմանյան կայսրության տարածքում դավանության տարբերությունը չէր կարող առիթ տալ որևէ հպատակի իրավունքները բացառելու համար բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վա-

---

[12] Կիրակոսյան Ա. Զ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ.-1914 թ.), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1999, էջ 114-115, տե՛ս նաև Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայուն և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Ե., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, էջ 16-19:

[13] Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году: Речь Гладстона, ст.: Ролен-Жекмена, Мак-коля, Грина, Диллона, Диева и др. / Предисл.: Л. А. Камаровский, проф. гр. – 2-е изд., М.: Тип. "Рассвет", 1896. с. 195.

[14] Նույն տեղում, էջ 275:

[15] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 60:

ռելու, պաշտոնական գործեր կատարելու կամ տարբեր ազատ մասնագիտություններով և արհեստներով զբաղվելու հնարավորությանը: Բոլոր հպատակներն առանց կրոնական խտրության թույլատրվում էր ազատ վկայություն տալ դատարանում[16]:

Սակայն, եվրոպական տերությունները և առաջին հերթին Անգլիան, Ռուսաստանին զրկելով Հայկական հարցում ունեցած մենաշնորհից և վերացնելով Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված բարենորոգումների իրականացման հստակ երաշխիք հանդիսացող 25-րդ և 26-րդ հոդվածները, Բեռլինի պայմանագրում չառաջարկեցին նման երաշխիքային հոդվածներ, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին, ոչինչ չձեռնարկել 61 և 62-րդ հոդվածների կատարման ուղղությամբ[17]:

Տարիներ անց Լլոյդ Ջորջը (Մեծ Բրիտանիայի վարչապետ 1916-1922 թթ.) իր հուշերում գրել է. «Եթե չլիներ մեր չարաբաստիկ միջամտությունը, ապա հայերի մեծամասնությունը դեռ 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով կանցներ ռուսական դրոշի պաշտպանության տակ: Հայաստանը զոհաբերվեց մեր կողմից ստեղծված հաղթական զոհասեղանին: Ռուսները ստիպված եղան հեռանալ, դժբախտ հայերը նորից ճզմվեցին իրենց հին կեղեքողների կրունկների տակ... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 թթ. և 1909 թ. սարսափելի կոտորածներին և 1915 թ. զարհուրելի կոտորածին... Հենց մենք թուրքերին տվեցինք հնարավորություն իրագործելու այդ ոճրագործությունը»[18]:

Հայկական հարցը 16-րդ հոդվածի որոշակիությունից 61-րդ հոդվածի անորոշության բավիղներ նետած այս հոդվածը, ճիշտ է ապահովում էր հարցի միջազգայնացումը, բայց և վերջին հաշվով աղետաբեր եղավ հայ ժողովրդի համար: Բեռլինի պայմանագիրը ամբողջությամբ վերցրած ուժի մեջ մնաց մինչև 1912-1914 թթ. Բալկանյան պատերազմը և Առաջին համաշխարհային պատերազմը կանխորոշող փաստաթղթերից մեկը եղավ[19]:

---

[16] Ճակատագրական պայմանագրեր (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ Ազատյան Հ. Գ.), էջ:

[17] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 61:

[18] ЛЛойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М.; Иностранная литература, 1957, с. 390.

[19] Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Ե., «Զանգակ-97», 2003, էջ 12:

Քննարկվող նյութն ավարտուն դարձնելու համար հարկ ենք համարում անդրադառնալ նաև 1879 թ. հունվարի 27-ի Կ. Պոլսի ռուս-թուրքական «Խաղաղության մասին» վերջնական պայմանագրին, որը հաշվի էր առնելու Բեռլինի պայմանագրի ճշգրտումները և Սան-Ստեֆանոյի չփոփոխված դրույթներ:

1879 թ. պայմանագրի 3-րդ հոդվածով Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի Բեռլինի համաձայնագրով չվերանայված դրույթներն այս պայմանագրով համարվում էին հաստատված: Նոր պայմանագրի 8-րդ հոդվածը կրկնում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 27-րդ հոդվածի պահանջը և պարտավորություն էր դնում կողմերի վրա չհետապնդել և հալածանքների չենթարկել, իրենց այն հպատակներին, ովքեր կասկածվում էին պատերազմի ժամանակ հակառակորդի բանակի հետ հարաբերություններ ունենալու մեջ: Նույն հոդվածը վերահաստատում էր Սան-Ստեֆանոյի 27-րդ հոդվածով թուրքական իշխանությունների պարտավորություններն այն մասին, ըստ որի, եթե որոշ անձիք ցանկանային հեռանալ ռուսական զորքերի հետ, ապա նրանք չպետք է արգելք ստեղծեն նրանց տեղափոխման համար[20]:

1879 թ. պայմանագրի 9-րդ հոդվածը վերահաստատում էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի 17-րդ հոդվածի պահանջը, որով թուրքական իշխանությունները պարտավորվում էին լիակատար համաներում շնորհել բոլոր այն օսմանահպատակներին, որոնք մասնակցել են պատերազմական գործողություններին և պետք է վերականգնեին բոլոր այն անձանց իրավունքները, որոնք աքսորվել կամ գաղթել էին իրենց հայրենիքից[21]:

Եթե Բեռլինի պայմանագրով վերացվեցին հայկական բարենորոգումները երաշխավորող Սան-Ստեֆանոյի պայմանագրի 25 և 26-րդ հոդվածները, ապա 1879 թ. պայմանագրով վերահաստատվեցին Սան-Ստեֆանոյի պայմանագրի հայերի բարենորոգումների 16-րդ հոդվածը լրացնող 17 և 27-րդ հոդվածները, որոնք Բեռլինի պայմանագրով չէին վերացվել ու փոփոխության չէին ենթարկվել[22]:

Ամփոփելով նյութը հանգում ենք հետևյալին՝

1) Մեծ տերությունների կայսերապաշտական, գաղութատիրական մրցակցությունը նրանց անհաղորդ էր դարձնում Օսմանյան կայսրու-

---

[20] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 62:

[21] Նույն տեղում:

[22] Նույն տեղում:

թյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: Հենց այդ հանգամանքն էլ հիմնականում պատճառ հանդիսացավ Սան-Ստեֆանոյի պայմանագրի վերանայման համար:

2) Բեռլինի պայմանագրով հայությանը խոստացված տնտեսական, քաղաքական և իրավական ապահովությունը. «...անհապաղ իրականացնել տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից», նույնպես չիրականացվեց: Բարձր Դուռը կարողացավ օգտվել մեծ տերությունների հակասություններից և չեզոքացնել 61-րդ հոդվածով ստանձնած բարենորոգումները: Բավականաչափ ընդհանուր գծերով գրված այս պարտավորության մեջ նկատելի է իրավաքաղաքական և տնտեսական գործունեությունն ապահովող ենթատեքստ:

Այնուամենայնիվ 61-րդ հոդվածում առկա անորոշության վրա, որոշակի լույս է սփռում 62-րդ հոդվածը, որով Օսմանյան կայսրությունում հաստատվելու էր կրոնական ազատություն, դատարանում վկայություն տալու թույլատվություն, քաղաքական և քաղաքացիական իրավունքներից օգտվելու, տարբեր մասնագիտություններով աշխատելու հնարավորություն:

3) 1879 թ. Կ. Պոլսի ռուս-թուրքական պայմանագիրը հետպատերազմյան իրողությունն արտահայտող փաստաթուղթ էր և ամփոփում էր Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերը: Ռուսաստանը պայմանագրից բխող առանձին խնդիրներից զատ (պարտված թուրքերից ռազմատուգանքի ստացում, ռուսահպատակների կրած վնասների հատուցում և այլն), խնդիր ուներ ցույց տալու, որ առանց մեծ տերությունների անմիջական մասնակցության ունակ է կարգավորել ռուս-թուրքական միջպետական հարաբերությունները և միջազգային հարաբերություններում վերականգնել իր խարխլված հեղինակությունը, որը խախտվել էր Բեռլինի վեհաժողովում, դրսևորել իր առաջնային դերը Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների հանդեպ իր առաջնային հովանավորի կարգավիճակը:

4) Մեծ տերությունների և հատկապես ռուս-անգլիական մրցակցությունը հաշվի առնելով՝ Հայկական հարցը պետք է դիտել ոչ միայն Արևելյան հարցի բաղկացուցիչ, այլև աշխարհաքաղաքական այն հակադրության մաս, որ XIX դարի կեսից մինչև XX դարի սկիզբը

ծավալվել է Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև ու պատմությանը հայտնի է «մեծ խաղ» (կամ «ստվերների մրցարշավ») անունով[23]:

Այդպես էր անվանվում Կենտրոնական և Հարավային Ասիայում (նաև Մերձավոր Արևելքում) գերիշխանություն ձեռք բերելու համար երկու կայսրությունների պայքարը, որի հորձանուտում իր կամքից անկախ հայտնվեց նաև հայ ժողովուրդը և Հայ դատը:

Պատահական չէ, որ «մեծ խաղի» առաջին ռազմական բախումը տեղի է ունեցել 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմում՝ 1812 թ Ասլանդուզի ճակատամարտի (Արաքսի աջ ափ) ժամանակ, որտեղ պարսկական զորքերի հրահանգիչները եղել են անգլիացի սպաները: Եթե անցկացնենք պատմական համեմատական, ապա այն հանդիսանում էր XIX դարի «սառը պատերազմը»:

Լինելով ծայրաստիճան հետամնաց ավատատիրական երկիր՝ Օսմանյան կայսրությունը իր գոյության ամբողջ ընթացքում չկարողացավ ստեղծել քիչ թե շատ կանոնավոր վարչաքաղաքական տնտեսական օրինական կարգեր: Թուրք և քուրդ ավատատերերի երկպառակտությունը, վայրենի ավազակային կամայականությունը, բռնություններն ու կողոպուտները եղել են այդ պետության մշտական ուղեկիցը, որտեղ հայության համար չկար կյանքի և գույքի ապահովության տարրական պայմաններ:

---

[23] Ռուս-բրիտանական հակադրման՝ «մեծ խաղի» մասին տես **Хопкирк П.** Большая игра против России: азиатский синдром. М.: Рипол классик, 2004; **Леонтьев М. В.**, Большая Игра. Британская империя против России и СССР, М.: «Астрель-СПб», 2012.

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱՐՁԱՐՁՈՒՄԸ 1912-1914 ԹԹ. ԵՎ 1914 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

1912-1913 թթ. Բալկանյան երկու պատերազմները* բարենպաստ պայմաններ ստեղծեցին Հայկական հարցի վերաբացման համար: Դրանում շահագրգռված էին հայերը, որոնց իրավազուրկ ու ճնշված վիճակը Արևմտյան Հայաստանում պահպանվում էր նաև համիդյան վարչակարգի տապալումից հետո՝ երիտթուրքերի իշխանության ժամանակաշրջանում, և Անտանտի պետությունները (առաջին հերթին Ռուսաստանը)*, որոնք ընդդիմանում էին Օսմանյան կայսրությունում Գերմանիայի տնտեսական և քաղաքական ներթափանցմանը: Հայ քաղաքական շրջանները որոշեցին օգտվել բարենպաստ առիթից և մեծ տերություններին հիշեցնել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների մասին: 1912 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Թիֆլիսում ստեղծվեց հայ ազգային ժամանա-

---

Բալկանյան առաջին պատեազմը տեղի է ունեցել Բալկանյան դաշինքի (Բուլղարիա, Հունաստան, Սերբիա, Չեռնոգորիա) ու Թուրքիայի միջև և ավարտվել վերջինիս պարտությամբ: Լոնդոնի պայմանագրով Թուրքիան կորցրել է իր բոլոր եվրոպական տիրույթները, բացառությամբ Ստամբուլի և արևելյան Թրակիայի մի փոքր մասի: Բալկանյան երկրորդ պատերազմը (1913 թ. հունիս - օգոստոսի 10) տեղի է ունեցել մի կողմից Բուլղարիայի, մյուս կողմից՝ Սերբիայի և Հունաստանի միջև, որոնց միացել են Չեռնոգորիան և Թուրքիան: Ավարտվել է Բուլղարիայի պարտությամբ, որը Բուխարեստի պայմանագրով Ռումինիային զիջեց Հարավային Դոբրուջան, Թուրքիային՝ Հարավային Մակեդոնիան ու Արևմտյան Թրակիայի մի մասը, Սերբիային՝ Հյուսիսային Մակեդոնիան: Բալկանյան պատերազմները հանգեցրին միջազգային հակասությունների սրմանը Բալկաններում և Եվրոպայում, արագացրին Առաջին համաշխարհային պատերազմի սանձազերծումը (Հարությունյան Ա. Հ., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից, Ե., «Հայաստան» հրատ., 1983, էջ 132-133):

Բուլղարական բանակի Մակեդոնա-Օդրինյան երկրապահ զորքերի կազմում 1-ին Բալկանյան պատերազմին մասնակցեց նաև հայկական կամավորական վաշտը (270 մարդ) պոդպորուչիկ Գարեգին Նժդեհի և վոյեվոդ Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ: Զորամասը մասնակցեց Մեսթանլիի, Ուզուն-Համիթլարի, Բալկան Թորեսի, Սերհամլի (որտեղ գերվեց թուրք զորահրամանատար Յավեր փաշան) մարտերին, Մխրետ և Շար Քյոյ քաղաքների գրավմանը, պաշտպանեց Մարմարայի ծովափը (1912 թ. դեկտեմբեր - 1913 թ. հունվար): Զորամասը լուծարվեց 1913 թ. մայիսին (Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 10-11):

Դեռ 1879 թ. Գերմանիան ռազմական դաշինք էր կնքել Ավստրո-Հունգարիայի հետ, որին 1882 թ. միացել էր Իտալիան (Եռյակ միություն): Ի հակակշիռ դրան, 1893-1907 թթ. ձևավորվել էր Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի ռազմական դաշինքը՝ Անտանտը (Եռյակ համաձայնությունը):

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կավոր բյուրո՝ Ա. Խատիսյանի, Ս. Հարությունյանի, Հ. Թումանյանի, Ն. Աղբալյանի, Ա. Ջամալյանի, Լեոյի և այլոց մասնակցությամբ, որը դիմեց հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանին ռուսաց կայսր Նիկոլայ II-ի առաջ արևմտահայության հարցը բարձրացնելու համար: Գևորգ V-ը կոնդակով դիմեց ցարական կառավարությանը, որպեսզի Ռուսաստանը հանդես գար արևմտահայերի պաշտպանությամբ: Հայկական հարցը նախատեսվում էր քննարկման դնել Լոնդոնի խորհրդաժողովում (1912 թ. դեկտեմբեր – 1913 թ. մայիս), ուր քննարկվում էր Բալկանյան երկրների և Թուրքիայի միջև հաշտության հարցը[24]: Միաժամանակ կաթողիկոսը Փարիզում գտնվող Պ. Նուբար Փաշային լիազորեց Բեռլինի պայմանագիրը ստորագրած եվրոպական տերությունների մոտ բարձրացնելու հայկական բարենորոգումների խնդիրը: Կազմվեց հայ ազգային պատվիրակություն Պ. Նուբարի գլխավորությամբ[25]:

Միջազգային լարված մթնոլորտում Հայկական հարցը դարձավ մեծ պետությունների՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի բանակցությունների առարկա:

1912 թ. դեկտեմբերի 21-ին Պոլսի հայ ազգային ժողովը որոշում ընդունեց Հայկական հարցը բարձրացնել Բալկանյան առաջին պատերազմին նվիրված Լոնդոնի հաշտության վեհաժողովում: Այդ նպատակով ստեղծվեց Ապահովության հանձնաժողով, որի մեջ մտան Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Լ. Տեմիրճիպաշյանը և Մ. Ոսկանյանը[26]:

Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցի շուրջ սկսվեց բարդ պայքար, որը շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:

Փորձելով կանխել հայերի հնարավոր դիմումը եվրոպական տերություններին, մասնավորապես Ռուսաստանին, Բարձր Դուռն ինքը նախաձեռնեց բարենորոգումների ծրագրի մշակումը[27]: 1912 թ. դեկտեմբերի սկզբին ներքին գործերի նախարար Ռեշիդ փաշայի ղեկավարությամբ պատրաստված նախագիծը ներկայացվեց մեծ վեզիրի կողմից գլխավորած հատուկ հանձնաժողովի քննարկմանը: Ծրագիրը նախատեսում էր Բարձր Դռան կողմից վեց տարով գլխավոր տեսուչի

---

[24] Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2-րդ, գիրք I, Ե., «Հայաստան» հրատ., 2001, էջ 246-264: Տես նաև Լազյան Գ., Հայաստանը և Հայ Դատը հայ և ռուս հարաբերություններու լույսի տակ, Ե., 1991, էջ 154-157:

[25] Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ., էջ 265-266:

[26] Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 14:

[27] Տես Լեո, Հայկական հարցի վավերագրեր, Թիֆլիս, 1915, էջ 308-314:

նշանակում արևելյան վիլայեթների համար, որին ենթարկվելու էին վալիին, ռազմական պարետը, ոստիկանությունն ու ժանդարմերիան: Համաձայն նախագծի, ստեղծվող հատուկ հանձնաժողովը կազմված էր լինելու երեք մահմեդականներից ու երեք քրիստոնյաներից և ղեկավարվելու էր թուրքական կառավարության ծառայության մեջ գտնվող, երկրի վարչական գործերին ու սովորություններին ծանոթ արտասահմանցի, որը միաժամանակ հանդիսանալու էր գլխավոր տեսուչի խորհրդականը: Հատուկ հանձնաժողովի պարտավորությունների մեջ էր մտնում կարգ ու կանոնի ապահովումը, քրդերի և հայերի միջև ծագող հողային վեճերի լուծումը, ժանդարմերիայի բարեփոխումը, ճանապարհների շինարարության ապահովումը և այլն: Նախագիծը չէր նախատեսում գոյություն ունեցող վարչական, ֆինանսական, իրավական օրենքների փոփոխություն և կիրառվելու էր միայն Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներում, դուրս էին թողնվում Էրզրումի և Սեբաստիայի նահանգները: Հայերից ստացված առաջարկությունների շնորհիվ նախագիծը ենթարկվեց որոշակի փոփոխությունների: Նոր տարբերակի համաձայն, հայկական վեց վիլայեթները բաժանվում էին երկու սեկտորների, որոնք ղեկավարվելու էին թուրք գլխավոր տեսուչների կողմից: Հատուկ հանձնաժողովները կազմված էին լինելու երկու մահմեդականից, երկու քրիստոնյայից ու երկու արտասահմանցուց և ղեկավարվելու էին գլխավոր տեսուչների՝ արտասահմանցի խորհրդականների կողմից: Սակայն Բարձր Դուռը ձգձգեց և այդպես էլ չիրագործեց այդ ծրագիրը[28]:

Ռուսաստանի քաղաքականության ակտիվացումը Հայկական հարցում 1912 թ. վերջին լրջորեն անհանգստացրեց բրիտանական դիվանագետներին, որոնց կարծիքով հայերն այլևս չեն բավարարվելու կիսամիջոցներով և ձգտելու են խնդրի արմատական լուծմանը, պահանջելով ինքնավարություն Ռուսաստանի հովանու ներքո, և Հայկական հարցի բարձրացմանը կհաջորդի Փոքր Ասիայի բաժանումը մեծ տերությունների միջև: Իսկ Նիկոլսոն II-ը համոզված էր, որ հայկական վիլայեթների գրավումը Ռուսաստանի կողմից այլևս ժամանակի հարց է[29]:

---

[28] Կիրակոսյան Ա. Զ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, էջ 404: Տե՛ս նաև Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Ե., ՀՀ ԳԱԱ, 2005, էջ 35-43:

[29] Կիրակոսյան Ա. Զ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, էջ 405:

1912 թ. դեկտեմբերին Ռուսաստանի արտգործնախարար Սազոնովը հրահանգեց Լոնդոնի և Փարիզի ռուսական դեսպաններին՝ Հայկական հարցի շուրջ պաշտոնական բանակցություններ սկսել ֆրանսիական և անգլիական կառավարությունների հետ: Առաջարկվում էր հանձնարարել Կ. Պոլսի երեք երկրների դեսպաններին՝ համատեղ մշակելու հայկական բարենորոգումների կոնկրետ ծրագիր: 1913 թ. սկզբին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները հայտարարեցին, որ իրենք պաշտպանում են Ռուսաստանի դիրքորոշումը Հայկական հարցում և այդ առթիվ համապատասխան հրահանգ են տվել Կ. Պոլսի իրենց դեսպաններին[30]:

Կանխատեսելով, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ Հայկական հարցի բարձրացումը միջազգային առկա պայմաններում, գերմանական դիվանագիտությունն իր հերթին որոշակի դեր խաղաց բրիտանական կառավարության կասկածանքը Ռուսաստանի «հայկական» ծրագրերի նկատմամբ գրգռելու հարցում: Գերմանիան հույս ուներ՝ Կիպրոսի կոնվենցիայի օրինակով, Մեծ Բրիտանիայի հետ համատեղ հանդես գալ Թուրքիայի ասիական շրջանների ամբողջականության երաշխավորողի դերում՝ ընդդեմ Ռուսաստանի նկրտումների[31]: Միաժամանակ գերմանական դիվանագիտությունը զգալիորեն աշխուժացրեց իր աշխատանքը Բարձր Դռան հետ՝ հայկական շրջանների համար բարենորոգումների ծրագիր նախապատրաստելու համար[32]: Համաձայն 1913 թ. երիտթուրքերի ծրագրի, հայկական վիլայեթները բաժանվում էին «հյուսիսային անատոլիական» (Էրզրում, Սեբաստիա, Տրապիզոն) և «արևելյան անատոլիական» (Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր) հատվածների: Նոր նախագիծը ոչ միայն հաշվի չէր առնում հայկական վիլայեթների յուրահատկություններն, այլև նպատակ էր հետապնդում լուծել հայերին մահմեդական բնակչության մեջ[33]:

1913 թ. ապրիլի սկզբին արևմտահայերը Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսին ներկայացրեցին բարենորոգումների իրենց նախագիծը: Այն նախատեսում էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի,

---

30 Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 14:

31 Истягин Л. Г. Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу, 1912-1914 гг. – В кн.: Из истории агрессивной внешней политики германского империализма, М., 1959, с. 27.

32 Տե՛ս Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2-րդ, Ե., «Հայաստան» հրատ., 1983, էջ 45-50:

33 Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, էջ 405:

Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներից կազմել մեկ երկրամաս՝ օտարերկրացի գերագույն կոմիսարի կառավարմամբ: Կոմիսարի թեկնածությունը հաստատելու էր սուլթանը՝ պետությունների առաջադրմամբ: Երկրամասի բարձրագույն ժողովի անդամների կեսը պետք է լինեին մահմեդականներ, մյուս կեսը՝ քրիստոնյաներ: Գերագույն կոմիսարին առընթեր ստեղծվելու էր վարչական խորհուրդ, որի կազմի մեջ մտնելու էին օտարերկրացիներ՝ որպես բաժնի պետեր և խորհրդականներ: Ոստիկանական և ժանդարմական պաշտոնները հավասարապես պետք է բաշխվեին քրիստոնյաների և մահմեդականների միջև, իսկ բարձր հրամանատարությունը պետք է տրվեր եվրոպացի սպաներին: Հայերից բռնագրաված հողերը պետք է վերադարձվեին իրենց տերերին: Պաշտոնապես պետք է ճանաչվեին հայ եկեղեցական, ազգային և կրթական իրավունքները: Հայերենը պետք է գործածվեր թուրքերենին հավասար: Բարեգործությունների գործը պետք է դրվեր բոլոր պետությունների վերահսկողության տակ՝ իրագործման ընթացքի ռուսական հսկողությամբ[34]: Արևմտահայությունը իրական երաշխիքներ էր պահանջում անձի և գույքի անձեռնմխելիության վերաբերյալ[35]: Այնուամենայնիվ մեծ տերությունները բարենորոգումների ծրագրի վերաբերյալ ունեին իրենց դիրքորոշումը:

1913 թ. հունիսի 8-ին ռուսական կառավարությունը վեց պետությունների դեսպանների քննարկմանը ներկայացրեց հայկական նահանգներում բարենորոգումների ռուսական նախագիծը՝ բաղկացած 22 հոդվածից, որը Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսի հանձնարարությամբ կազմել էր դեսպանատան առաջին թարգման և խորհրդական Ա. Մանդելշտամը՝ հիմք ընդունելով 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագիրը*: Անշուշտ, նոր և կարևոր ռուսական այս նախագծում

---

[34] Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 14:

[35] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2004, էջ 590:

* 1894 թ. Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված կոտորածները կանխարգելելու համար 1895 թ. մայիսի 11-ին Կ. Պոլսի անգլիական, ռուսական և ֆրանսիական դեսպանները հայկական վեց նահանգներում (Կարին, Բիթլիս, Վան, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) բարենորոգումներ անցկացնելու ծրագիր ներկայացրին Բ. Դռանը: 13 գլուխներից և 40 հոդվածներից բաղկացած բարենորոգումների այդ ծրագիրը նախատեսում էր որոշ չափով բարեփոխել վերը նշված նահանգների կառավարումը, բարելավել դատական գործը, կարգավորել հարկային համակարգը և այլն: Ծրագիրը, սակայն, խիստ սահմանափակ էր և չէր կարող բավարարել ավելի արմատական դիրքերի վրա կանգնած հայությանը: Դրանով հանդերձ, այն Բեռլինի վեհաժողովից հետո մեծ տերությունների կողմից 61-րդ խիստ անորոշ հոդվածի բովանդակությունը առարկայացնելու առաջին փորձն էր և իրագործվելու դեպքում, անշուշտ, որոշ օրինականություն կմտցներ Արևմտյան

հայկական վեց վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) մեկ Հայկական մարզ ստեղծելու գաղափարն էր, չնայած նախագծում Արևմտյան Հայաստանը որպես առանձին վարչական միավոր չէր հիշատակվում[36]:

Եվրոպական երկրներին, ինչպես նաև Բ. Դռանը չգրգռելու համար ռուսները շրջանառության մեջ էին դրել մի այլ փաստաթուղթ, որում ընդգծվում էր, որ «անհրաժեշտ է, որպեսզի Հայկական մարզն առանձնացվի կայսրության մնացած մասից՝ մնալով իհարկե կայսրության հետ լրիվ ամուր կապի մեջ...»: Սակայն այս հավաստիացումները դեր չխաղացին[37]:

Հայկական մարզի ստեղծումը կարող էր մեծ առաջընթաց լինել Հայկական հարցի լուծման խնդրում և հիմք հանդիսանալ Արևմտյան Հայաստանում հայկական կործանված պետության վերականգնման համար: Հենց սա էլ վախեցնում էր Անգլիային, Ֆրանսիային և հատկապես Օսմանյան կայսրությանը[38]:

Նախատեսվում էր, որ վեց հայկական վիլայեթները, որոնք ինչպես ասվեց կազմելու են Հայկական մարզ կամ նահանգ, բաժանվելու են սանջակների, կազների և նահիեների: Մարզը պետք է կառավարեր թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպական գեներալ-նահանգապետը, որը 5 տարի ժամկետով պետք է նշանակվեր սուլթանի կողմից՝ տերությունների համաձայնությամբ: Գեներալ-նահանգապետը մարմնավորելու էր մարզի գործադիր իշխանությունը, նրան էր վերապահվում բոլոր պաշտոնյաներին և դատավորներին նշանակելու կամ հեռացնելու իրավունքը, նրան անմիջականորեն ենթակա էին մարզի ոստիկանությունը, ժանդարմերիան և զինված ուժերը: Հայկական մարզի օրենսդիր մարմինը լինելու էր մարզային ժողովը, որն ընտրվելու էր 5 տարով, գաղտնի քվեարկությամբ և ունենալու էր հավասար թվով քրիստոնյա և մահմեդական անդամներ: Ժողովի ընդունած օրենքները վավերացնելու էր սուլթանը: Սահմանվում էր թուրքերենի, հայերենի և քրդերենի իրավահավասարություն, մայրենի լեզվով դպրոցական

Հայաստանում ու կչափավորեր կամայականությունները: Մայիսյան բարենորոգումների ծրագիրն այդպես էլ մնաց թղթի վրա և չիրականացվեց, իսկ արևմտահայության կոտորածները շարունակվեցին (տե՛ս Թառոյան Կ. Ջ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, էջ 273-283):

36 Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 599:

37 Նույն տեղում:

38 Նույն տեղում:

կրթության ազատություն՝ թուրքերենի պարտադիր ուսուցմամբ: Համիդե գնդերը վերացվում էին, զինծառայությունը անցնելու էր մարզում: Արգելվելու էր մահմեդական գաղթականների բնակեցումը մարզում: 17-րդ հոդվածը նախատեսում էր գեներալ-նահանգապետի գլխավորությամբ ստեղծել առանձին հանձնաժողով, որը մշակելու էր այն պայմանները, որոնց համապատասխան հայերը կարող էին հետ ստանալ իրենցից խլված հողերը կամ ստանալ համապատասխան փոխարժեք: Վերջին 22-րդ հոդվածով բարենորոգումների իրականացման հսկողությունը դրվելու էր պետությունների վրա[39]:

Ա. Մանդելշտամի նախագծով նախատեսված մեկ ընդհանուր նահանգի գաղափարը հիմնավորված էր վարչական ծախսերը կրճատելու, նահանգի ընտրությունները հեշտացնելու, նրա հեղինակությունը բարձրացնելու փաստարկներով[40]:

Այսպիսով, ռուսական այս նախագծով Հայկական հարցի լուծումը նախ և առաջ պետք է իրականացվեր Թուրքիայից փաստացիորեն քաղաքական և վարչական անկախության մեջ, որից հետո արևմտահայությունը իրական հնարավորություն կստանար ապահովելու և զարգացնելու իր տնտեսական և նյութական վիճակը: Նախագծի 17-րդ հոդվածում հայության հողերի վերադարձման կամ դրանց համապատասխան փոխարժեքի հատուցման համար գեներալ-նահանգապետի գլխավորությամբ ստեղծվելու էր հատուկ հանձնաժողով, որն էլ ուսումնասիրելու և որոշելու էր հայերի ունեցվածքի հատուցման չափերը: Հայկական մարզում օրենքի գերակայությամբ հաստատվելու էր կարգուկանոն, ցրվելու էին Համիդե գնդերը, դա նշանակում էր նաև, որ քայլեր պետք է ձեռնարկվեին հայերին մահմեդական ավազակախմբերի հարձակումներից, կոտորածներից, բռնություններից ու կողոպուտներից պաշտպանելու համար: Արևմտահայությունը ծեռք էր բերելու ներքին ինքնավարություն, կյանքի, գույքի, դավանանքի և դատարանում ազատ վկայություն տալու ապահովություն:

Ջեմալ փաշան Ա. Մանդելշտամի նախագծի մասին իր հուշերում գրել է. «Ես կարծում եմ և դա կասկածից դուրս է, որ այս նախագիծը ընդունելուց ամենաուշը մեկ տարի անց էրզրումի, Սվազի (Սեբաստիա), Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Մամուրեթ-ուլ Ազիզի (Խարբերդ) վիլա-

---

[39] Լեո, Հայկական հարցի վավերագրեր, Թիֆլիս, 1915, էջ 308-314; տե՛ս նաև Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 599-601, Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ., էջ 296-297:

[40] Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ., էջ 300:

յեթները կամ Ռուսաստանի հովանու տակ կլինեն կամ, որ ավելի հավանական է, Ռուսաստանը կտիրանա դրանց»[41]:

Եռյակ միության պետությունները, հատկապես Գերմանիան, վճռականորեն ընդդիմացան Ա. Մանդելշտամի նախագծի հիմնական դրույթներին: Ավստրո-գերմանական կողմը կտրականապես հրաժարվում էր ընդունել ռուսական նախագծի հիմնական երկու կետերը՝ հայկական միացյալ նահանգի ստեղծումը և տերությունների համաձայնությամբ նահանգապետի նշանակումը, համաձայնելով այնպիսի երկրորդական դրույթների հետ, ինչպիսիք էին համիդիե հեծելազորի լուծարումը, լեզուների իրավահավասարությունը, դպրոցների ստեղծումը և այլն: Անգլիան և Ֆրանսիան հիմնականում համաձայն էին ռուսական ծրագրին, սակայն երկակի խաղ էին խաղում քննարկումների ընթացքում, քաջ գիտակցելով, որ երկու հակադիր տեսակետների հաշտեցումը գրեթե անհնարին է: Վերջապես հուլիսի 10-ին, երբ Գերմանիայի ներկայացուցիչը պահանջեց բարենորոգումների հիմքում դնել թուրքական ծրագիրը, լրացնելով այն ռուսական նախագծի երկրորդական կետերով, Մանդելշտամը մերժեց այն, որի արդյունքում տերությունների դեսպանությունների հանձնաժողովը դադարեցրեց իր աշխատանքները[42]:

Ռուսական դիվանագիտության պարտությունը բարենորոգումների խնդրում և Բալկանյան երկրորդ պատերազմի ընթացքում զգալի բացասական ազդեցություն ունեցան Ռուսաստանի միջազգային հեղինակության վրա, թուլացրին նրա դիրքերը Բալկաններում և Փոքր Ասիայում: Իրադրությունը չկարողացան փոխել նաև ռուսական զորքի կուտակումները թուրքական սահմանի վրա և Արևմտյան Հայաստանի գրավման սպառնալիքները: Գերմանական կառավարությունն այդ կապակցությամբ հայտարարեց, որ ռուսական բանակի մուտքը Արևմտյան Հայաստան կդիտվի իր կողմից որպես պատերազմի պատճառ, իսկ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան բացարձակապես անընդունելի համարեցին Ռուսաստանի նման ծրագրերը[43]:

Այդ պայմաններում ռուսական դիվանագիտությունը որոշում է կայացնում գնալ զիջումների և անմիջական բանակցություններ սկսել Գերմանիայի հետ: Բանակցությունները սկսվում են օգոստոսի վեր-

---

[41] Նույն տեղում, էջ 298:

[42] Կիրակոսյան Ա. Զ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, էջ 416-417:

[43] Նույն տեղում, էջ 417:

ջին Կոստանդնուպոլսում, երկու տերությունների դեսպանությունների առաջին թարգմանների մակարդակով, և, դժվարին դիվանագիտական պայքարի պայմաններում, ավարտվում սեպտեմբերի կեսերին, երկու տերությունների դեսպանների միջև ձեռք բերված համաձայնությամբ: Սեպտեմբերի 26-ին Մարլինգը զեկուցում էր Գրեյին համաձայնության հիմնական կետերի վերաբերյալ: Արևելյան Անատոլիան բաժանվում էր «հյուսիսային» (Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի վիլայեթներ) և «հարավային» (Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներ) սեկտորների, որոնք ղեկավարվելու էին տերությունների համաձայնությամբ նշանակվող եվրոպացի գլխավոր տեսուչների կողմից: Ընդ որում՝ 1) Բ. Դուռը հինգ տարով համապատասխան պայմանագիր էր ստորագրում գլխավոր տեսուչների հետ. 2) գլխավոր տեսուչներին իրավունք էր վերապահվում Բ. Դռան հաստատմանը ներկայացնել սեկտորների բարձր պաշտոնյաների և դատավորների թեկնածություններ, ինչպես նաև նշանակել և պաշտոնից ազատել մյուս այլ պաշտոնյաների. 3) ամեն սեկտորում ստեղծվում էր ընտրովի խորհուրդ, որը հավասարաչափ կազմված էր լինելու մահմեդականներից և քրիստոնյաներից. 4) նույն հավասարության սկզբունքը կիրառվելու է երկու սեկտորների բոլոր վարչական մարմինների կազմավորման պարագայում. 5) Բ. Դուռը իրավունք է վերապահելու մեծ տերություններին, իրենց դեսպանների և հյուպատոսների միջոցով հսկելու բարենորոգումների իրագործումը. 6) Բ. Դուռը համագործակցելու է տերությունների հետ Արևելյան Անատոլիայի երկու սեկտորներում այլ բարենորոգումների կիրառման հարցում[44]:

Բրիտանական կառավարությունն անմիջապես հավանություն տվեց ռուս-գերմանական ծրագրին, համարելով այն «փոքրասիական շահերի հողի վրա վտանգավոր բարդություններից խուսափելու ամենից ճիշտ միջոցը»: Ստանալով նաև մյուս պետությունների համաձայնությունները՝ ռուս և գերմանացի դիվանագետները դժվարին և բարդ բանակցություններ են վարում Բ. Դռան հետ, մասնավորապես, տերությունների հսկողության և սեկտորներում օտարերկրյա նշանակումների շուրջ, որոնց մանրամասները լայնորեն լուսաբանված են պատմագրության մեջ[45]:

Դիտարկելով նոր ռուս-գերմանական ծրագիրը որպես Թուրքիան մասնատելու տերությունների հերթական փորձ, երիտթուրքական

[44] Նույն տեղում, էջ 417-418:
[45] Նույն տեղում, էջ 418:

կառավարությունը միջոցներ է ձեռնարկում այն տապալելու ուղղությամբ: Գերմանիան համոզված էր, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների տապալման ամենաիրական միջոցը բանակցությունների ձգձգումն էր, շարունակում էր խաբել Ռուսաստանին, որ ինքը նույնպես շահագրգռված է խնդրի լուծմամբ:

Թուրքական կառավարությունը կրկին փորձ արեց ներկայացնելու բարենորոգումների իր ծրագիրը, որը պահպանում էր վիլայեթների կազմակերպման նախկին ձևը, իսկ սուլթանի կողմից նշանակված օտարերկրացի գլխավոր տեսուչները ոչինչ չպետք է փոխեին, այլ սոսկ միայն պետք է վերահսկեին թուրք պաշտոնյաների գործունեությունը[46]:

Դիվանագիտական համառ պայքարից հետո չնայած Բ. Դռան և գերմանական դիվանագիտության դիմադրությանը, ռուս դիվանագետները շարունակեցին բանակցությունները և պարտադրեցին երիտթուրքական կառավարությանը 1914 հունվարի 26-ին ստորագրել ռուս-թուրքական համաձայնագիր հայկական բարենորոգումների վերաբերյալ[47]: Փաստաթուղթը ստորագրեցին Կոստանդնուպոլսում Ռուսաստանի ժամանակավոր հավատարմատար Գուլկևիչը և Թուրքիայի մեծ վեզիր ու արտգործնախարար Սաիդ Հալիմ փաշան:

Համաձայնագրում Արևմտյան Հայաստանը փոխարինվել էր Արևելյան Անատոլիա աշխարհագրական բառակապակցությամբ, սակայն, ըստ էության, խոսքը Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների մասին էր: «Աշխարհագրական» այս խմբագրումը, որ կատարվել էր Բ. Դռան ճնշման տակ, քաղաքական լրջագույն նպատակ էր հետապնդում. Թուրքիայի քարտեզից Ռուսաստանի «վավերացմամբ» ջնջել Հայաստան անունը[48]: Ըստ համաձայնագրի հիմնական դրույթների. 1) Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթներից կազմվում էր երկու սեկտոր. Ա սեկտորը ներառելու էր Էրզրումը, Տրապիզոնը, Սեբաստիան, իսկ Բ սեկտորը՝ Վանը, Բիթլիսը, Խարբերդը, Դիարբեքիրը, որոնց կառավարումը հանձնարարվում էր տերությունների համաձայնությամբ Բարձր Դռան կողմից նշանակվող երկու օտարերկրացի գլխավոր տեսուչների, 2) տեսուչների իրավասությանն էր հանձնվում

---

[46] Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 16:

[47] Այս մասին տես Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, էջ 418-427: Պողոսյան Ս., Պողոսյան Կ., նշվ. աշխ. էջ 246-346: Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 618-634:

[48] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 628:

այդ հատվածների վարչության, արդարադատության, ոստիկանության և ժանդարմերիայի վերահսկողությունը, իսկ հարկ եղած դեպքում նաև բանակը, 3) նրանք իրավունք էին ստանում պաշտոնից ազատել անընդունակ և նշանակել ստորին պաշտոնյաներին, դատի տալ պատժի ենթակա հանցանքների մեջ մեղադրվողներին, առաջարկություններ ներկայացնել Բ. Դռանը բարձրաստիճան պաշտոնյաների թեկնածություններ, լուծել հողային վեճերը, առանձին դեպքերում ազատել դատական պաշտոնյաներին, 4) օրենքները, հրովարտակները և պաշտոնական հաղորդագրությունները յուրաքանչյուր սեկտորում հրապարակվելու էին տեղական լեզուներով, 5) կենտրոնական իշխանությունները չէին խոչընդոտելու համայնքներին հոգալու իրենց դպրոցների ծախսերը, 6) խաղաղ ժամանակ յուրաքանչյուր օսմանյան հպատակ իր զինվորական պարտականությունը կատարելու էր այն շրջանում, որտեղ որ բնակվում էր, 7) համիդիե հեծելագնդերը վերափոխվում էին պահեստի հեծելազորի, 8) մինչև երկու հատվածներում եղած տարբեր կրոնների, ազգությունների և լեզուների հարաբերակցությունը վերջնականապես պարզվելը (ինչը տեղի էր ունենալու մարդահամարի միջոցով՝ տեսուչների հսկողությամբ) Վանի և Բիթլիսի վիլայեթների ընդհանուր խորհուրդների և կոմիտեների անդամներն ընտրվելու էին հավասար թվով՝ մահմեդականներից և քրիստոնյաներից, 9) եթե մեկ տարվա ընթացքում մարդահամար տեղի չունենար, Էրզրումի վիլայեթում նույնպես ընդհանուր խորհրդի անդամներն ընտրվելու էին հավասարության նույն սկզբունքով, 10) մնացած վիլայեթների խորհուրդներն ընտրվելու էին համեմատական սկզբունքով, 11) տեսուչների որոշմամբ հավասարության սկզբունքը կարող էր կիրառվել ոստիկանության ու ժանդարմերիայի հավաքագրման ժամանակ, ինչպես նաև մյուս պաշտոնյաների բաշխման դեպքում[49]:

Ընդհանուր առմամբ ռուս-թուրքական համաձայնագիրը չէր բավարարում հայերի պահանջները և հայերին չէր տալիս ինքնավարական այն լայն իրավունքները, որոնք նախատեսված էին ռուսական ծրագրում: Այնուամենայնիվ, իր պակասություններով հանդերձ, այն մի դրական քայլ էր Հայկական հարցի հետագա լուծման շուրջ. առաջին անգամ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հարցը, որը միջազգային իրավունքի առարկա էր դարձել դեռևս 1878 թ. Բեռլինի

[49] Կիրակոսյան Ա. Զ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը, էջ 424-425, տե՛ս նաև Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 339-342:

վեհաժողովի 61-րդ հոդվածով, հստակ արտահայտություն էր գտնում միջպետական պայմանագրի մեջ: Հայկական վիլայեթների կառավարումը դրվում էր օտարերկրացիների (որոնք նաև բարձրագույն կառավարիչներ էին տվյալ վիլայեթներում) վերահսկողության տակ: Ընդգծվում էր Ռուսաստանի առաջատար դերը հայկական հարցում, դրանով թերևս հաստատելով Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, ինչը նպաստավոր պայմաններ էր ապահովում թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրման համար: Համաձայնագիրը արևմտահայերին չէր տալիս ինքնավարական այն լայն իրավունքները, որը վերջիններս ակնկալում էին[50]: Ըստ Ա. Մանդելշտամի. «Ռուսաստանի համար հունվարի 26-ի պայմանագիրը կարևոր էր այնքանով, որ արտահայտում էր թուրքական գերիշխանության տակ գտնվող արևմտահայերի նկատմամբ ռուսական հովանավորչության պաշտոնական ճանաչումը, այսինքն՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը մեզ կրկին բերեց Սան Ստեֆանոյի 16-րդ հոդվածին»[51]:

Ակադեմիկոս Գ. Գալոյանը հայտնում է նաև այն կարծիքը, որ ռուս-թուրքական համաձայնագիրը ոչ միայն չէր նպաստում Հայկական հարցի լուծմանը, այլև նոր բարդություններ էր հարուցելու, քանի որ նրանում ոչ միայն մթագնում էր Արևելյան և Արևմտյան Հայաստանների միավորումը, այլև Արևմտյան Հայաստանը մասնատվում էր երկու սեկտորների և կորցնելով իր պատմական անունը և տարածքային ամբողջականությունը՝ վեր էր ածվելու «Արևելյան Անատոլիայի երկու սեկտորների»[52]:

Երկար որոնումներից հետո, ի վերջո գտնվեցին եվրոպացի երկու գլխավոր տեսուչները՝ Վեստենեկը (Հոլանդիա) և Հոֆը (Նորվեգիա), որոնք 1914 թ. մայիսի 10-ին Կ. Պոլսում ստորագրեցին իրենց պայմանագրերը Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի հետ: Նրանք չհասցրին անցնել իրենց պարտականությունների կատարմանը: Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքական կառավարությունը չեղյալ հայտարարեց համաձայնագիրը, և Արևմտյան Հայաստանի բարենորոգումների հերթական ծրագիրը կրկին մնաց թղթի վրա:

---

[50] Պողոսյան Ս., Պատմագիտական ուսումնասիրություններ, Հայոց ցեղասպանության պատմություն, Ե., ԵՊՀ, 2009, հ. II, էջ 293-294:

[51] Мандельштам А. Н., Младотурецкая держава. М., 1915, с. 34.

[52] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 631:

Չնայած, պատերազմը պայմանագրերը կատարելու տեսակետից ֆորս-մաժորային (անհաղթահարելի ուժ) իրավիճակ է և տվյալ պայմաններում պայմանագրի դրույթների իրագործման մասին խոսելն ավելորդ է, սակայն պատերազմի ավարտից հետո գոնե պայմանագրի կողմ հանդիսացող Ռուսաստանը, որը այդքան շահագրգռված էր դրա ստորագրման գործում, պետք է անդրադառնար դրա դրույթները կատարելու հարցին: Սակայն խորհրդայնացումից հետո նոր իշխանությունները բավարարվեցին միայն «Թուրքահայաստանի մասին դեկրետի» ընդունմամբ և գործնականում քայլեր չձեռնարկեցին տվյալ պայմանագրով Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները հսկելու և կատարել տալու ուղղությամբ[53]:

Պատերազմի մեջ մտնելով՝ Օսմանյան կայսրությունը նպատակ ուներ իրականացնելու պանթուրքիզմի գաղափարախոսությունը: Ծրագրված էր գրավել Անդրկովկասը, Հյուսիսային Կովկասը, ապա հասնել մինչև Վոլգայի ափերը, այնուհետև թափանցել Միջին Ասիա: Թուրքական ապագա մեծ կայսրությունը՝ «Մեծ Թուրանը», պետք է տարածվեր Բալկաններից մինչև Ալթայ և Հեռավոր Արևելք, Ղրիմից մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոս: Կայսրության պատերազմի մեջ մտնելու գլխավոր պատճառներից մեկն էլ Հայկական հարցի «լուծումն» էր՝ հայ ժողովրդի բնաջնջումը:

Այսպիսով, 1912-1914 թթ. Հայկական հարցի «լուծման» միջազգային քննարկումները ունեցան այն կարևոր նշանակությունը, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին և դրանից հետո, այն շարունակեց իր վրա այս կամ այն չափով սևեռված պահել եվրոպական դիվանագիտության ուշադրությունը, որից խուսափելն այսուհետ դարձավ անհնարին: 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրի բովանդակությունը թույլ է տալիս ենթադրելու, որ արևմտահայությունը ձեռք էր բերելու կյանքի, գույքի և տնտեսական գործունեության որոշակի ազատություն, որը կարևոր նախապայման կլիներ Հայկական հարցի լուծման ճանապարհին ու մինչ այժմ չի կորցել իր իրավական ուժը: Այս կապակցությամբ տալիս ենք խնդրի հետևյալ մեկնաբանությունը՝

1) 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, որն ամրագրում էր Արևմտյան Հայաստանում վարչաքաղաքական և

---

[53] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 80:

տնտեսահիրավական բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունն ու փաստորեն հիմնվում էր 1878 թ. Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի վրա և զարգացնում էր այն միջազգային իրավունքի տեսանկյունից, վավերացված միջպետական փաստաթուղթ էր, ինչի արդյունքում Հոֆը և Վեստենեկը պետք է անցնեին Վանում և Սեբաստիայում իրենց ստանձնած տեսչական պարտականությունների կատարմանը:

2) Օսմանյան կայսրությունը, օգտագործելով Առաջին աշխարհամարտի սկսվելու առիթը, չկենսագործեց դրա դրույթները, սակայն այդ փաստը իրենից ոչինչ չի ներկայացնում, քանի որ Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 54-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի համաձայն. «Պայմանագրի դադարեցումը կամ մասնակցի դուրս գալը կարող է տեղի ունենալ. ա) պայմանագրի դրույթներին համապատասխան, կամ բ) բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝ ցանկացած ժամանակ պայմանավորվող մյուս պետությունների հետ խորհրդակցելուց հետո»[54]: Իսկ կոնվենցիայի 56-րդ հոդվածը իր ենթակետերով ամրագրում է. «Պայմանագիրը, որը ոչ մի դրույթ չի պարունակում այն դադարեցնելու մասին, և որն այն չեղյալ համարել կամ դրանից դուրս գալ չի նախատեսում, ենթակա չէ չեղյալ հայտարարվելու և դրանից դուրս գալ չի թույլատրվում, եթե միայն. ա) սահմանվել է, որ մասնակիցները մտադրվել էին թույլատրել այն չեղյալ հայտարարելը կամ դրանից դուրս գալը, կամ բ) պայմանագրի բնույթը ենթադրում է չեղյալ հայտարարելու կամ դուրս գալու իրավունքը: Պայմանագիրը չեղյալ հայտարարելու կամ դրանից դուրս գալու իր մտադրության մասին մասնակիցը տեղյակ է պահում ոչ ուշ, քան տասներկու ամիս առաջ»[55]:

Այսպիսով, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրում պայմանագրի դադարեցման, մասնակից կողմերից որևէ մեկի ցանկացած ժամանակ դուրս գալու վերաբերյալ պայմանավորվածություն չի եղել: Ռուսական կայսրությունը և Խորհրդային Ռուսաստանը (ԽՍՀՄ), ինչպես նաև Օսմանյան կայսրությունը և նրա իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունն ոչ մի պայմանագիր չեն կնքել կամ

---

[54] Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին // http://www.un.am/res/UN%20Treaties/ XIV_1.pdf

[55] Նույն տեղում:

պաշտոնական հայտարարություն չեն արել, որը չեղյալ կհամարեր 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը: Անհրաժեշտության դեպքում ժամանակակից Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) կարող է պնդել, որպեսզի Թուրքիան իրականացնի պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կատարումը, որը իր նպաստը կարող է ունենալ Հայկական հարցի լուծման գործընթացում: Այս պարագայում ժամանակակից Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) պետք է այնպես կառուցի իր հարաբերությունները ՌԴ-ի և մյուս ուժային կենտրոնների հետ, որ Հայկական հարցի լուծումը և Հայոց ցեղասպանության ճանաչումը բխի նաև նրանց շահերից:

3. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՍԻԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԳԱՂՏՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (ՍԱՅՔՍ-ՊԻԿՈ)

Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո Անտանտի պետությունների միջև դիվանագիտական պայքար էր ծավալվել Ասիական Թուրքիայի տարածքների բաժանման վերաբերյալ: Պատերազմում Ռուսաստանի նպատակն էր Թուրքիայից զավթել սևծովյան նեղուցները՝ Դարդանելն ու Բոսֆորը, ապա Արևմտյան Հայաստանի վրայով դուրս գալ Միջերկրական ծով: 1914 թ. նոյեմբերին անգլիական կառավարությունը պաշտոնապես հայտնեց ցարական կառավարությանը, որ նա պատրաստ է օժանդակելու պատերազմում ռուսական գլխավոր նպատակներից մեկին՝ Կ. Պոլսի և նեղուցների հարցի կենսագործմանը: 1915 թ. մարտի 12-ին Անգլիան, իսկ ապրիլի 10-ին Ֆրանսիան տեղեկացրին ցարական կառավարությանը, որպեսզի նեղուցները և Կ. Պոլիսը անցնեն Ռուսաստանին: Դաշնակիցների այդ կարևոր դիվանագիտական ակտն ուղեկցվում էր բազմանշանակ վերապահությամբ, որ Ռուսաստանի հավակնությունները Կ. Պոլսի և նեղուցների նկատմամբ կբավարարվեն այն պայմանով, որ «պատերազմը կհասցվի բարեհաջող ավարտի, և եթե իրագործվեն Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ցանկությունները, ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ ուրիշ տեղերում»: Նման վերապահումը հնարավորություն էր ստեղծում Անգլիայի և Ֆրանսիայի համար հարկ եղած պահին հրաժարվել Ռուսաստանին տված իրենց խոստումներից, այն պատրվակով, որ «Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ցանկությունները ինչ-որ տեղ չեն իրագործվել»: Անգլիան և Ֆրանսիան Ռուսաստանից որպես փոխհատուցում՝ Կ. Պոլսի և նեղուցների դիմաց պահանջում էին ճանաչել իրենց հավակնություններն արաբական երկրների նկատմամբ (հենց նույն բանակցությունները բացահայտում են արաբական երկրների բաժանման շուրջ Անգլիայի և Ֆրանսիայի միջև տարաձայնությունները, որոնք կարգավորելու համար 1915 թ. նոյեմբերին Լոնդոնում սկսվում են անգլո-ֆրանսիական նոր բանակցություններ)[56]:

---

[56] Дипломатия в годы Первой Мировой войны // http://www.e-reading.link/chapter.php/1002147/17/Pugachev_-_Diplomatiya_v_novoe_vremya_1872_-_1919_gg.html

1916 թ. Կովկասյան ճակատում ռուսական զորքերի հաջողությունները կրկին աշխուժացրին Թուրքիայի տարածքի բաժանման անգլո-ֆրանսիական բանակցությունները: Երբ 1916 թ. փետրվարին ռուսական բանակը գրավեց Էրզրումը և Բիթլիսը, մոտեցավ Իրաքի և Սիրիայի մատույցներին, դաշնակիցները շտապեցին իրենց նախագիծը համաձայնեցնել Ռուսաստանի հետ, և 1916 թ. մարտի 9-ին Պետրոգրադում Անգլիայի արտակարգ լիազոր Մ. Սայքսը և Ֆրանսիայի դեսպան Ժ. Պիկոն Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին հանձնեցին հուշագիրը: Վերջինս դժգոհություն հայտնեց այն պատճառով, որ ըստ բանակցությունների արդյունքի Անգլիան և Ֆրանսիան Թուրքիայից զգալի տարածքներ էին ձեռք բերում: Որպես հակապայման Ռուսաստանը մասնավորապես պահանջեց իրեն հանձնել Արևմտյան Հայաստանը, Հաքիարի շրջանը և Սև ծովի հարավային ափի մի մասը: Հանգելով փոխզիջումների՝ համաձայնությունը կայացավ: Դաշնակիցները հավաստում են վերջինիս իրավունքները Կ. Պոլսի և նեղուցների նկատմամբ, որոնք նախատեսված էին 1915 թ. անգլո-ֆրանց-ռուսական համաձայնագրով, ինչպես նաև նրան են խոստանում Արևմտյան Հայաստանի նահանգները (Էրզրում, Վան, Բիթլիս, Տրապիզոն) և Քրդստանի մի մասը: Ըստ Անտանտի տերությունների կողմից մշակած Ասիական Թուրքիայի բաժանման ծրագրի, Մեծ Հայքը և Փոքր Հայքը մտնելու էին տարբեր պետությունների ազդեցությունների գոտիների մեջ, և դրանով իսկ հայկական տարածքները տարրալուծվելու էին[57]:

Ի վերջո, 1916 թ. մայիսի 16-ին Լոնդոնում Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյի և Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնի միջև կնքվեց Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ գաղտնի պայմանագիր, որը պատմության մեջ մտավ Սայքս-Պիկոյի պայմանագիր անունով՝ պայմանավորված անգլիական դիվանագետ Մ. Սայքսի և ֆրանսիացի դիվանագետ Ժ. Պիկոյի անվան հետ, որոնք պատրաստել էին փաստաթուղթը: Սայքս-Պիկոյի պայմանագիրը նախատեսում էր տարբեր երկրներին անցնող հինգ՝«կապույտ», «կարմիր», «դեղին», «դարչնագույն» «կանաչ» և «A», «B», «C» գոտիների ստեղծում: Առաջին կապույտ գոտին, որի մեջ մտնում էին Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան, Այնթապը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը, Սվազը (Սեբաստիա) և Հաքյարը, անցնում էր Ֆրանսիային: Երկրորդ՝ «կարմիր»

---

[57] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 677:

գոտին, որ ներառում էր Իրաքի հարավային մասը՝ Բաղդադի և Բասրայի վիլայեթները, Հաֆֆայի և Ակայի նավահանգիստները, անցնում էր Անգլիային, երրորդ՝ «դարչնագույն» գոտին, որ ներառում էր Պաղեստինը՝ առանց Հաֆֆայի և Ակայի, պետք է անցներ միջազգային կառավարման ներքո, որի մեջ մտնում էր նաև Ռուսաստանը: Չորրորդ՝ «A» գոտին, որի մեջ մտնում էր Արևելյան Սիրիան և Մոսուլի վիլայեթը, համարվում էր ֆրանսիական ազդեցության գոտի: Հինգերորդ՝ «B» գոտին, որ ընդգրկում էր Անդրհորդանանը և Կենտրոնական Իրաքը, համարվում էր Անգլիական ազդեցության գոտի: Նախատեսվում էր, որ «կապույտ» և «կարմիր» գոտիներում, որոնք անցնելու էին Անգլիայի և Ֆրանսիայի տիրապետության տակ, նրանք իրավունք ունեին հաստատել կառավարման այնպիսի վարչակարգ, որը նրանք նպատակահարմար կգտնեին: «A», «B» գոտիներում ենթադրվում էր ստեղծել արաբական անկախ պետություններ, կամ արաբական պետությունների դաշնություն: Եվ քանի որ այդ գոտիները համարվում էին ֆրանսիական և անգլիական գոտիներ, ապա Ֆրանսիան և Անգլիան, համապատասխանաբար յուրաքանչյուրը իր գոտում, նախապատվություն էին ստանում ֆինանսատնտեսական հարցերում (կոնցեսիաներ, փոխառություններ և այլն): Իտալիայի կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելուց մեկ տարի հետո Օսմանյան կայսրության քարտեզի վրա ավելացավ «կանաչ» գոտին (կայսրության հարավարևմտյան շրջաններ) և «C» գոտին (կայսրության արևմտյան և կենտրոնական մաս), որոնք նախատեսված էին հանձնել Իտալիային[58]:

«Դեղին» գոտին, որի մեջ մտնում էր Էրզրումը, Վանը, Բիթլիսը, Տրապիզոնը և Հաքյարի շրջանի մի մասը, ինչպես նաև Կ. Պոլիսը և նեղուցների գոտին, անցնում էր Ռուսաստանին:

Անտանտի պետությունների բանակցություններում և կնքած համաձայնագրերում և հատկապես Օսմանյան կայսրության Ասիական շրջանների բաժանման պայմանագրում շոշափվում էր նաև Հայկական հարցը, սակայն այն, ըստ էության, անտեսվում էր: Համաձայնագրով Հայաստանը բաժանվելու էր երկու մասի և «Հայաստան» էր համարվելու միայն Ֆրանսիային տրվող Զեյթունը, Հաճնը, Դիարբեքիրը, Սեբաստիան և այլ վայրեր: Դրա պատճառն իրականում այն էր, որ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան չէին ցանկանում Ռուսաստանին հանձնել

---

[58] Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел (Е. В. Адамов), М:, НКИД, 1924. с. 154-159, 178-182.

ամբողջ Հայաստանը, նրա «ոչ ցանկալի» հարևանությունը Մոսուլի նավթահանքերից հեռու պահելու համար[59]:

Դեռ բանակցությունների ժամանակ Մ. Սայքսը փորձել է համոզել Ս. Սազոնովին, որ Փոքր Հայքի հայերը կապված չեն Կովկասի հայ արդյունաբերողների հետ և ընդհանուր քիչ բան ունեն նրանց հետ և Փոքր Հայքի Ֆրանսիային անցնելուց հետո Ռուսաստանին անհանգստություն չեն պատճառի: Մ. Սայքսը առաջարկում էր «Ռուսաստանի շահերից ելնելով Մուշը նույնպես դարձնել ֆրանսիական», որը ռուսական պետությանը կազատեր հեղափոխական գործունեության օջախից և կովկասյան հեղափոխականների քարոզչության համար ամենապիտանի մարզերից մեկը կկտրեր գործունեության ոլորտից: Փոխարենը Ռուսաստանը ստանալու էր Էրզրումը, Վանը, Բիթլիսը, որտեղ կոտորածների և գաղթի արդյունքում մնացել էին աննշան թվով հայ բնակչություն, և ռուսները կարող էին իրենց հայեցողությամբ այլազգիներ բնակեցնել: Ռուսաստանին տրվող տարածքը չէր դիտվելու որպես Հայաստան, քանի որ Ֆրանսիան ստանալու էր Փոքր Հայքը «որպես Հայաստան և ֆրանսիական գոտին լինելու էր հայկական ազգային զարթոնքի կենտրոն»: Այն հեռու էր լինելու Ռուսաստանից և Արևելահայաստանից ու ազատելու էր Ռուսաստանին Արևելյան և Արևմտյան Հայաստանների հնարավոր միավորման և Ռուսաստանից անջատվելու վտանգից: Ըստ Մ. Սայքսի. «Եթե Էրզրումը լինի հայկական ազգային զարթոնքի կենտրոն, ապա անարխո-սոցիալիստները իրենց ձեռքը կվերցնեն հայկական ամբողջ քաղաքական համակարգը և կամրացնեն այն, քանի որ Էրզրումի և Վանի ազգային երգերն ու ավանդույթները հանդիսանում են հայկական անարխո-սոցիալիստների գաղափարական հիմքը»[60]:

Կովկասյան ռազմաճակատում տարած հաղթանակների արդյունքում ռուսական կառավարությունը պահանջեց Էրզրումից, Վանից ու Բիթլիսից բացի իրեն հանձնել նաև Տրապիզոնը, որին անգլիական և ֆրանսիական իշխանությունները տվեցին իրենց համաձայնությունը:

1916 թ. կեսին Ռուսաստանի համար օրակարգի հարց էր դարձել Արևմտյան Հայաստանի տարածքային կառավարման խնդիրը: Այս առումով հետաքրքրություն կարող է ներկայացնել Ս. Սազոնովի 1916 թվականի հունիսին կովկասյան փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչին հղած նամակը: Ս. Սազոնովը նրանում շարադրել էր Հայկական հարցի

---

[59] Նույն տեղում, էջ 92:
[60] Նույն տեղում, էջ 158:

լուծման հակադիր երկու տարբերակ: «Դրանցից մեկը,-գրում է նա,- հայ ազգայնականների ձգտումն է, 1913 թ. մեր առաջադրած բարենորոգումների համաձայն Ռուսաստանի հովանու տակ տալ կատարյալ ինքնավարություն», իսկ մյուսը հակադիր է սրան. հայերի քաղաքական նշանակությունը հավասարեցվում է զրոյի, փոխարենը նրանց տեղը դնելով մահմեդականներին: Սազոնովի կարծիքով այս երկու տարբերակն էլ հակասում են Ռուսաստանի շահերին: Ցարական կառավարությունն այլևս աննպատակահարմար էր համարում Արևմտյան Հայաստանին լայն ինքնավարություն տալը, քանի որ «թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված «պատժիչ միջոցները» նրանց թվաքանակը դարձրել էր բնակչության մեկ քառորդից էլ քիչ, և հայկական ինքնավարության իրականացումը կհանգեցներ փոքրամասնության կողմից մեծամասնության անարդար ստրկացման: Փոխարենը առաջարկվում էր հայերին որոշակի շրջանակներում տալ դպրոցական, եկեղեցական անկախություն, մայրենի լեզվից օգտվելու իրավունք, հայերին պետք է վերապահել նաև քաղաքային և գյուղական ինքնավարություն[61]»: Հողատիրության և գաղութաբնակեցման հարցերը նախատեսվում էր լուծել օրինական և անաչառ սկզբունքով, արգելվելու էր ամեն տեսակի կամայական բռնագրավումները:

Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում համարելով «Թուրքերի կողմից իրականացվող միջոցառում»՝ Ս. Սազոնովը հակասել է իր իսկ վկայությանը, որ Աբդուլ Համիդը դեռ XIX դ. 80-ական թթ. «ձեռնամուխ է եղել Հայաստանում հայերի ծրագրավորված ոչնչացմանը...»[62]:

1916 թ. հուլիսին կովկասյան փոխարքան Ս. Սազոնովին գրած պատասխան նամակում հայտնում է, որ ռուսական կայսրության մեջ երբեք Հայկական հարց գոյություն չի ունեցել և այն եղել է միայն Թուրքահայաստանում, որի գրավումով այստեղ նույնպես վերանում է այդ հարցը: Փոխարքայի կարծիքով. «...ինչպես որ Ռուսաստանում չկա յակուտների հարց, այնպես էլ չկա Հայկական հարց»[63]:

Այսպիսով, եթե ցարական Ռուսաստանը պատերազմից դուրս գար հաղթանակով, Ռուսաստանին անցնելիք Արևմտյան Հայաստանի հայերը պետք է բավարարվեին ազգային-մշակութային «իրավունքի» փշրանք-

---

[61] Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Ե., «Լուսակն», 2007, էջ 32- 34:

[62] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 688:

[63] Раздел Азиатской Турции по секретным документам, с. 211-212.

ներով[64]: Մինչդեռ Ֆրանսիային անցած Արևմտյան Հայաստանի մյուս հատվածը՝ Փոքր Հայքը այս կամ այն չափով ձեռք կբերեր ազատ զարգացման հնարավորություն, որով Ռուսաստանը կընկներ «անհարմար» դրության մեջ:

1916 թ. հունիսին Ռուսաստանը Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներում ստեղծեց Պատերազմի իրավունքով Թուրքիայի գրաված մարզերի զինվորական գեներալ-նահանգապետություն: Եթե պատերազմի նախօրեին և սկզբնական շրջանում ցարիզմը ներկայանում էր իբրև Օսմանյան կայսրությունում ապրող քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի պաշտպան, բողոքում հայերի տեղահանությունների և կոտորածների առնչությամբ, ստեղծում կամավորական ջոկատներ, ապա այժմ ձգտում էր Հայկական հարցը հանել ռուսական դիվանագիտության գործունեության ոլորտից և զրոյի հավասարեցնել հայերի քաղաքական նշանակությունը: Պատերազմի իրավունքով գրավված հայկական նահանգները պետք է վերածվեին Ռուսաստանի ծայրամասային նահանգների՝ գործնականում զրկված հայ բնակչությունից[65]: 1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո Ռուսաստանում ստեղծված ժամանակավոր կառավարությունը, առաջնորդվելով Հաագայի 1907 թ. հոկտեմբերի 18-ի «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորությունների» կոնվենցիայի 42 և 43-րդ հոդվածներով, 1917 թ. ապրիլի 26-ին ընդունեց «Պատերազմի իրավունքով գրավված Թուրքահայաստանի շրջանների կառավարման մասին» որոշում[66]:

Համաձայն Հաագայի կոնվենցիայի 42-րդ հոդվածի, տարածքը համարվում է գրավված, եթե այն իսկապես գտնվում է հակառակորդ բանակի վերահսկողության ներքո և գրավումը տարածվում է միայն այն շրջանների վրա, որտեղ այդ իշխանությունը հաստատվել է և գրավողն ի վիճակի է իրականացնել իր գործունեությունը: Իսկ 43-րդ հոդվածով սահմանվում է, որ օրինական կառավարությունից տարածքը գրաված հակառակորդի ձեռքը իշխանության փաստացի անցնելուց հետո վերջինս պարտավոր է ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները, որքանով դա հնարավոր է, որպեսզի վերականգնվի հասարակա-

---

[64] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 688:

[65] Կիրակոսյան Ա. Ջ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, էջ 17:

[66] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 88:

կան կարգ ու կանոնը, հարգվեն գոյություն ունեցող օրենքները, եթե այդ գործում չեն հանդիպի անհաղթահարելի դժվարությունների[67]:

Հիմք ընդունելով այդ հոդվածների պահանջները, ժամանակավոր կառավարությունն այդ տարածքները դուրս էր բերում կովկասյան իշխանությունների և կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների ենթակայությունից և փոխանցում կառավարության անմիջական ենթակայության տակ, մինչև որ վերջնական խաղաղության պայմանագրով կորոշվի Թուրքահայաստանի ճակատագիրը[68]:

Տեղահանված և աքսորված հայերին թույլատրվեց վերադառնալ իրենց տները: Միևնույն ժամանակ, ժամանակավոր կառավարությունը շարունակեց ցարիզմի քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում՝ ամեն կերպ ոտնահարելով հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

1917 թ. մայիսից ռուս-թուրքական ճակատում ստեղծվեց ոչ պաշտոնական զինադադարի իրադրություն: Սակայն այստեղ էլ, ինչպես արևմտյան ճակատում, զինվորներին համակել էին հեղափոխական տրամադրությունները: Ճակատը լքելու և տուն վերադառնալու ռուս զինվորների ձգտումն առավել զգալի դարձավ 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Կովկասյան ճակատը մերկանում էր, և բարենպաստ պայմաններ էին ստեղծվում թուրքական արշավանքի համար[69]:

1917 թ. նոյեմբերի վերջին խորհրդային կառավարությունը հրապարակում է Սայքս-Պիկոյի համաձայնագրի բովանդակությունը, որով համաշխարհային հասարակայնությանը հայտնի է դառնում, և չեղյալ համարում այն: Դաշնակիցների միջև ստեղծված ուժերի նոր հարաբերակցության պայմաններում համաձայնագիրը վերանայվում է հօգուտ Մեծ Բրիտանիայի և դրվում հետագա համաձայնությունների հիմքում: Հետագայում Լլոյդ Ջորջն ու Ժորժ Կլեմանսոն «խոր տգիտություն» էին համարում Սայքս-Պիկոյի պայմանագրով սևծովյան նեղուցները և Կ. Պոլիսը Ռուսաստանին հանձնելը»[70]:

Օսմանյան կայսրության Ասիական շրջանների բաժանման պայմանագիրն այդպես էլ կյանքի չկոչվեց, սակայն Ասիական Թուրքիայի բաժանման խնդիրը և Հայկական հարցը չհանվեցին օրակարգից: Այնուամենայնիվ պայմանագրում պետք է ուշադրություն դարձնել այն

---

67 Նույն տեղում:

68 Նույն տեղում, էջ 88-89:

69 Կիրակոսյան Ա. Ջ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, էջ 17-18:

70 Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 694:

մասի վրա, որ Ռուսաստանին անցնող Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի վիլայեթները հետագայում ներառվեցին Սևրի պայմանագրի մեջ, որոնք տրվելու էին Հայաստանի Հանրապետությանը: Վերոհիշյալ փաստաթղթերի միջև ներքին տրամաբանական կապի գոյությունը ակնհայտ է: Պատահական չէ, որ համաձայնագրի վրա այսօր էլ առկա է ռուսական կայսր Նիկոլայ II-ի «համաձայն եմ» մակագրությունը (1916 թ.)[71]:

Այսպիսով, Օսմանյան կայսրության Ասիական շրջանների բաժանման պայմանագիրն ուրվագծեց Օսմանյան կայսրության մասնատման քարտեզը և իր ազդեցությունը թողեց Մուդրոսի զինադադարի և Սևրի պայմանագրի վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ 1916 թ. դրությամբ Թուրքիայի կողմից ցեղասպանության և տեղահանության ենթարկված հայերի նյութական վնասների հատուցման հարցը, որպես այդպիսին, դեռ դրված չի եղել: Նպատակ է եղել Ռուսաստանին անցած Արևմտյան Հայաստանի տարածքում իրականացնել օրինական և արդարացի հողաբաշխում, կամայական և անօրինական միջոցներով ունեցվածքի բռնագրավման բացառում, տեղահանվածների վերաբնակեցում: Թերևս նման իրավիճակում, երբ ռուսական դիվանագիտությունն այլևս բացառում էր Հայկական հարցի գոյությունը ռուսական պետության շրջանակներում, նրանից «ազգային-մշակութային» ինքնավարությունից ավելին սպասելն ավելորդ և միամիտ լավատեսություն կլիներ, քանի որ Ռուսաստանը Արևմտյան Հայաստանն արդեն դիտում էր իր տիրապետության տակ անցած գաղութային կցորդ, որի ցեղասպանության ենթարկված հայ բնակչության նկատմամբ նյութական փոխհատուցման առանձին խնդիր միջազգային ատյաններում այլևս չէր հարուցվի:

Հայության տնտեսական և նյութական վնասների փոխհատուցման հարցն առարկայական դարձավ հիմնականում այն ժամանակ, երբ անկախություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետությունը, որպես պատերազմող կողմ, կարողացավ Փարիզի խաղաղության խորհրդաժողովում քննարկման դնել հայերի նյութական կորուստների հատուցման հարցը:

Ինչ վերաբերում է Փոքր Հայքին և Կիլիկիային ֆրանսիացիների խոստացած ինքնավարությանը, ապա դա մնաց որպես խոստում և

---

[71] Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 35:

այդպես էլ կյանքում չիրագործվեց: Ինչպես ցույց կտա ապագան Ֆրանսիան քեմալական Թուրքիայի հետ գնաց անջատ (սեպարատ) հաշտության, և «Հայկական հարցի լուծումը» Փոքր Հայքի և Կիլիկիայի տարածքում նույնպես չիրականացվեց:

Սակայն, եթե նույնիսկ վերոհիշյալ տարածքները մնային Ֆրանսիային, ապա այստեղ հաստատվելու էր նրա գաղութատիրական իշխանությունը, ինչպես որ եղավ Սիրիայի և Լիբանանի նկատմամբ, որոնք հետագայում, այնուամենայնիվ, թոթափեցին ֆրանսիական գաղութատիրությունը և կերտեցին իրենց պետական անկախությունը, որը չեղավ Փոքր Հայքի և Կիլիկիայի հետ. վերջիններս նույնիսկ եվրոպական «գաղութային լծին» չարժանացան:

4. ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո արտաքին քաղաքականության մեջ Խորհրդային Ռուսաստանի առաջին քայլը դարձավ խաղաղության մասին դեկրետը, որը հրապարակվեց 1917 թ. հոկտեմբերի 26-ին Վ. Ի. Լենինի կողմից Խորհուրդների երկրորդ համառուսաստանյան համագումարի ժամանակ: Դեկրետում առաջարկվում էր բոլոր պատերազմող երկրներին անմիջապես սկսել բանակցություններ «արդար դեմոկրատական աշխարհի» ստեղծելու համար:

1917 թ. նոյեմբերի 9-ին Վ. Ի. Լենինը ելույթ ունեցավ ռադիոյով և կոչ արեց զինվորներին բանակցություններ սկսել հակառակ ճամբարի զինվորների հետ, որի հետևանքով ռազմաճակատներում սկսվեցին «զինվորական հաշտություններ»: Դրանով Վ. Ի. Լենինը և իր կողմնակիցները ձգտում էին իրականացնել համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն: Այդ կոչերից անմիջապես հետո սկսվեցին ցույցեր Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, որոնք պահանջում էին միանալ Խորհրդային Ռուսաստանին և կնքել հաշտություն: Այն բանից հետո, երբ Անտանտի երկրները մերժեցին հաշտության մասին դեկրետը, Խորհրդային Ռուսաստանը անջատ բանակցությունների գնաց Քառյակ միության երկրների հետ: 1917 թ. դեկտեմբերի 9-ին Բրեստ-Լիտովսկում Խորհրդային Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի մասնակցությամբ սկսվեցին հաշտության բանակցություններ: Խորհրդային պատվիրակությունը գլխավորում էր Ա. Իոֆֆեն: Խորհրդային պատվիրակության գլխավոր առաջարկներն էին՝ զորքերը դուրս բերել գրավված տարածքներից, ազատություն շնորհել այն ազգերին, որոնք զրկվել էին դրանից պատերազմի ընթացքում, հրաժարվել բոլոր տեսակ ռազմատուգանքներից և նման այլ պայմաններ[72]:

Գերմանական պատվիրակությունը երկար ժամանակ քննեց պայմանները և մշակեց սեփական ծրագիրը: Դրանք էին՝ միացնել Գերմա-

---

[72] Иванов И. С. Очерки истории Министерства иностранных дел России. 1802-2002, М.: ОМG, 2002, т. 2, с. 39-40.

նիային Մերձբալթիկան և մասնատել Լեհաստանը: Բացի դրանից Գերմանիան ձգտում էր պահպանել Ռուսաստանից գրավված տարածքները: Դրանով իսկ Գերմանիան հաղթանակած էր դուրս գալիս պարտված պատերազմից: Քառյակ միության երկրները արեցին հետևյալ հայտարարությունը, որ իրենց համար ընդունելի կլինի Խորհրդային Ռուսաստանի առաջարկը, եթե նա երաշխավորի, որ պատերազմին մասնակից տերությունները նույնպես կընդունեն այս պայմանները: Դրանով Գերմանիան ցույց էր տալիս, որ հաշտություն հնարավոր չէ այնքան ժամանակ քանի դեռ Անտանտի երկրները այդ պայմաններով համաձայն չեն լինի հաշտության: Այս հարցերի լուծման համար հայտարարվեց 10-օրյա ընդմիջում: 1917 թ. դեկտեմբերի 17-ին խորհրդային իշխանությունը Անտանտի երկրներին կոչ արեց անկախություն շնորհել իրենց հպատակության տակ գտնվող երկրներին՝ ելնելով ազգերի ինքնորոշման սկզբունքից՝ օրինակ բերելով Ֆինլանդիան, Ուկրաինան և Բելոռուսիան: Դրանով նրանք նաև փորձում էին իրականացնել իրենց ծրագրերը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության շուրջ, քանի որ նրանց կարծիքով այդ երկրների կողմից չընդունվելու դեպքում, ժողովուրդները կապստամբեն:

Տեսնելով, որ Անտանտի երկրները համաձայն չեն հաշտության հետ, 1917 թ. դեկտեմբերի 27-ից խորհրդային իշխանությունը միայնակ սկսեց բանակցությունները Գերմանիայի հետ: Այժմ արդեն խորհրդային պատվիրակության ղեկավարն էր արտաքին գործերի ժողկոմ L. Տրոցկին: Գերմանական պատվիրակությունը դրեց սեղանին մի քարտեզ, որով սահմանը անցնում էր արևելյան Մոնզունդյան արշիպելագով և Ռիգայով, Արևմտյան Դվինայով և շարունակվում էր մինչև Բրեստ-Լիտովսկ: Բրեստ-Լիտովսկի հարավային սահմանը որոշվելու էր գերմանական և ուկրաինական կենտրոնական ռադայի միջև բանակցությունների միջոցով: Դրանով Խորհրդային Ռուսաստանը զրկվում էր Լեհաստանից, Լիտվայից, Կուռլանդիայից և այլ տարածքներից[73]:

1918 թ. հունվարի 27-ին Քառյակ միության երկրները Ուկրաինայի կենտրոնական ռադայի հետ եկան համաձայնության, որ նրանց Ուկրաինան պետք է տրամադրի սննդամթերք՝ ռազմական օգնության փոխարեն: Նույն երեկոյան Խորհրդային Ռուսաստանին տրվեց վերջ-

---

[73] Мирные переговоры в Брест-Литовске, т. I, М:, НКИД, 1920, с. 29; **Потёмкина** В. П. Дипломатия в новое время (1872-1919 гг.), М:. ОГИЗ, 1945. Гл. 15.

նագիր գերմանական պահանջները կատարելու ու սահմանները մինչև Նարվա, Պսկով, Դվինա հասցնելու համար: Հունվարի 28-ին Լ. Տրոցկին պատասխանեց վերջնագրին, որ Ռուսաստանը պայմանագիրը չի ստորագրում, դադարեցնում է պատերազմը և դուրս է բերում զորքերը: Փետրվարի 18-ին Քառյակ միությունը հարձակման անցավ ամբողջ արևելյան ճակատով: Ռուսական բանակները չկարողացան դիմադրել այդ հարձակմանը և արդեն փետրվարի 19-ին համաձայնեցին ստորագրել հաշտությունը: Գերմանացիները շարունակեցին հարձակումը և միայն փետրվարի 22-ին համաձայնեցին հաշտության՝ հարկադրելով ավելի ծանր պայմաններ, քան նախկինում: Հաստատվեց 48-ժամյա զինադադար: Խորհրդային իշխանությունները ռազմաճակատի քայքայման պայմաններում լավ գիտակցում էին, որ իրենք չեն կարող դիմադրել Գերմանիայի հարձակմանը:

Երկարատև պայքարից հետո 1918թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի և մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի միջև Բրեստ-Լիտովսկում կնքվեց հաշտության պայմանագիր: Խորհրդային պատվիրակության մեջ մտնում էին Գ. Սոկոլնիկովը, Լ. Կարախանը, Գ. Չիչերինը, գերմանական կազմը ներկայացնում էին Ռ. Ֆոն Կյուլմանը, Ռոզենբերգը և այլք, Թուրքիան ուղարկել էր Ի. Խակի փաշային և Զեքի փաշային: Պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածներից, քարտեզից, երկու հավելվածից, եզրափակիչ արձանագրությունից, լրացուցիչ պայմանագրերից և բազմաթիվ այլ լրացումներից ու հավելվածներից[74]:

Ըստ պայմանագրի Ռուսաստանից կտրվեցին Մերձբալթյան երկրները և Բելոռուսիայի մի մասը: Ուկրաինան և Ֆինլանդիան հռչակվեցին ինքնիշխան հանրապետություններ: Կարմիր բանակը դուրս էր բերվում այդ տարածքներից ռազմածովային ուժերի հետ միասին: Ռուսաստանի կորցրած տարածքի մասը կազմում էր 1 մլն քառ. կմ, իսկ բնակչությունը՝ 46-50 մլն: Կորցրած տարածքում արդյունահանվում էր քարածխի 90%-ը, երկաթահանքի 73%-ը: Այդ տարածքի վրա բաշխված էր Ռուսաստանի արդյունաբերության 54%-ը և երկաթգծի 33%-ը: Մաքսային հարցում վերականգնվում էր 1904 թ. իրավիճակը՝

---

[74] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 420-530:

հօգուտ Գերմանիայի, որով վերջինս տնտեսական կոնցեսիաներ (զիջում) էր ձեռք բերում Խորհրդային Ռուսաստանի հետ առևտրում[75]:

Բրեստի հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածի և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ Օսմանյան կայսրությանն էին անցնում Արևմտյան Հայաստանը: Ռուսաստանը պարտավորվում էր անհապաղ դուրս բերել իր զորքը Արդահանի, Կարսի, Բաթումի մարզերից, ցրել կամավորական ջոկատները, Կովկասում պահել ընդամենը մեկ դիվիզիա, ճանաչել 1877 թ. սահմանները: Կարսի, Արդահանի ու Բաթումի մարզերում հարևան պետությունների և մասնավորապես Օսմանյան կայսրության համաձայնությամբ հաստատվելու էր «նոր կարգ»: Պայմանագրի 9-րդ հոդվածով «կողմերը փոխադարձաբար հրաժարվում էին իրենց ռազմական ծախսերի, այսինքն՝ պատերազմելու հետ կապված ծախսերի հատուցումից, ինչպես նաև պատերազմական վնասների, այսինքն՝ այն վնասների հատուցումից, որոնք իրենց և իրենց քաղաքացիներին պատճառված են պատերազմական գործողությունների գոտում պատերազմական միջոցառումների, այդ թվում նաև թշնամական երկրում կատարված բոլոր բռնագրավումների հետևանքով»[76]:

Մարտի 3-ին նույն Բրեստ-Լիտովսկում կնքվեց հարակից ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագիր, որին միացան նաև Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բուլղարիան: Ըստ «լրացուցիչ» պայմանագրի Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր զորքերը դուրս բերել Արևմտյան Հայաստանից, Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերից պայմանագրի ստորագրումից 6-ից 8 շաբաթվա ընթացքում (այդ տարածքներում ստեղծվելիք «նոր կարգը» տեղական բնակչությունը պետք է համապատասխանեցներ հարևան պետությունների՝ մասնավորապես Թուրքիայի հետ), ճանաչեր 1877 թ. սահմանը: Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր նաև զորացրել և արձակել թուրքահպատակ և ռուսահպատակ հայերից կազմակերպված կամավորական ջոկատները, որոնք գտնվում էին ինչպես Ռուսաստանում, այնպես էլ թուրքերի կողմից օկուպացրած նահանգներում: Դրանով հայերը թուրքական հարձակման պայմաններում մնում էին ամբող-

---

[75] Հարությունյան Ա. Հ., նշվ. աշխ., 326:

[76] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 426-428:

ջությամբ անպաշտպան: Մինչև համընդհանուր հաշտության կնքումը Կովկասում պետք է պահվեր մեկ ռուսական դիվիզիա՝ հակառակ դեպքում Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր պատերազմական վիճակի մեջ պահել իր բանակը[77]: Բրեստի հաշտությունը 1918 թ. օգոստոսի 27-ին լրացվեց Բեռլինի համաձայնագրով, որով Ռուսաստանը Գերմանիային էր տալիս 6 մլրդ մարկ ռազմատուգանք[78]:

Իր նպատակներին ծառայեցնելով Բրեստի հաշտության պայմանները՝ թուրքական կառավարությունը ճնշում էր գործադրում Անդրկովկասի վրա, պահանջում նրա անջատումը Ռուսաստանից՝ նպատակ ունենալով տարածաշրջանը բաժանել մասերի և հաստատել իր գերիշխանությունը: 1918 թ. մարտի 6-8-ը տեղի ունեցած ՌԿ(բ)Կ 7-րդ համագումարում, որտեղ քննվում էր Բրեստի պայմանագրի հարցը, Վ. Ի. Լենինը հանդես եկավ հայտարարությամբ, որ հաշտությունը դեռ կապիտուլյացիա չէ, այլ ժամանակավոր միջոց՝ իշխանություն և ժամանակ շահելու համար: Վ. Ի. Լենինին կողմ քվեարկեցին կուսակցականների մեծ մասը: Մարտի 15-ի Խորհուրդների 4-րդ արտակարգ համագումարում ընդունվեց Բրեստի հաշտությունը[79]:

Սակայն որոշ ժամանակ անց պայմանագրի դրույթների մեկնաբանության հարցում առաջացան տարաձայնություններ: Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմ Չիչերինը 1918 թ. սեպտեմբերի 20-ին թուրքական կողմին հղած բողոքի նոտայում նշում էր, որ հաշտության պայմանագրի 4-րդ հոդվածում «հատկապես օսմանյան կառավարության համաձայնությամբ հաստատել նոր կարգեր» ասելով, խորհրդային կողմը նկատի է ունեցել, թե հիշյալ մարզերի ճակատագիրը, նրանց միջազգային իրավական դրությունը պետք է որոշվեր այդ մարզերի բնակչության կամքի արտահայտմամբ: Սակայն Թուրքիան չհամակերպվելով նման պայմանների հետ, առանց խորհրդային իշխանությունների հետ համաձայնության, ներխուժեց Կարսի, Արդահանի և Բաթումի նահանգներ ու դաժան դատաստան տեսավ տեղի բնակչության հետ: Դա համարելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթների

---

[77] Նույն տեղում, էջ 431-432, տե՛ս նաև Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 89-90:

[78] Բրեստի հաշտության պայմանգրի ամբողջական տեքստը տե՛ս Документы внешней политики СССР, Т. 1, М.: Госполиздат 1959, с. 119-166:

[79] История государства и права СССР (под. ред. Чистякиова О. И.), ч. II, М:, 1986, с. 20.

խախտում՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը համարում է վերացված: Այս հանգամանքները հաշվի առնելով հայ հետազոտողներից Ա.Մարուքյանը հանգում է այն եզրակացության, որ խորհրդային կառավարությունը դեռ մինչև Մուդրոսի զինադադարը արդեն իսկ չեղյալ էր հայտարարել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և Օսմանյան կայսրությանը վերաբերող 4-րդ հոդվածի դրույթները[80]:

Ռուսական զորքերի դուրսբերումը Արևելյան Եվրոպայի ռազմաճակատից հնարավորություն տվեց Գերմանիային 1918 թ. մարտի 21-ից մինչև հունիսի 17-ը անցնել հարձակման հարավային ուղղությամբ, սակայն մեծ հաջողությունների չհասան: Անտանտի երկրները իրենց հերթին որդեգրեցին անդադար հարձակումների մարտավարությունը և ի վերջո հաղթեցին նրան: 1918 թ. նոյեմբերի 9-ին Գերմանիայում տեղի ունեցավ հեղափոխություն, որից հետո նոյեմբերի 13-ին խորհրդային կառավարությունը պաշտոնապես չեղյալ հայտարարեց Բրեստ-Լիտովսկիի հաշտությունը և անվավեր ճանաչեց տարածքային բոլոր զիջումները[81]:

Եզրակացության համար կարևոր ենք համարում հետևյալը.

1) Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, որը մեծ վնասներ հասցրեց Ռուսաստանին, հնարավորություն տվեց բոլշևիկներին իրենց ձեռքում պահել քաղաքական իշխանությունը: Խոսքը վերաբերում է ձախ էսեռներին, որոնք դուրս եկան իշխանությունից նաև Բրեստի հաշտության շուրջ ծագած հակասությունների պատճառով: Սա էր նաև պատճառը, որ Ռուսաստանում սկսվեց քաղաքացիական պատերազմ:

2) Պայմանագրով հայ կամավորական ջոկատները զորացրվում էին (նմանօրինակ կետ առկա էր նաև Բաքումի պայմանագրում), սակայն 1918 թ. սեպտեմբերի 10-ին խորհրդային կառավարությունը Գերմանիային և Թուրքիային ուղղված նոտաներում վճռական բողոք հայտնեց Կովկասում թուրքերի կողմից Բրեստ-Լիտովսկի պայմանագրի խախտման, հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ոտնահարման, գրաված շրջաններում հայ բնակչության նկատմամբ բռնությունների կիրառման դեմ՝ պահանջելով Հայաստանը մաքրել թուրքական

---

80 Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմիրավական հիմնավորումները, էջ 91:

81 Дмитриев С. Н. Таинственный Альянс // Наш современник, 1990, № 11 с. 128-136.

զորքերից և գաղթականների մասնակցությամբ անցկացնել ազատ հանրաքվե:

Չնայած ռուս-թուրքական «լրացուցիչ» պայմանագրին՝ խորհրդային կառավարությունը մարտի 16-ին պնդեց, որ հայ հեղափոխական կազմակերպությունները իրավունք ունենան ազատորեն կազմավորել հայկական կամավորական ջոկատներ, իսկ տեղում խորհրդային մարմիններին հրահանգ տվեց չարգելել այդ ջոկատներին Հայաստան շարժվելիս, քանի որ նրանց նպատակն էր պաշտպանել իրենց հայրենիքը թուրք-գերմանական բռնությունից:

Առաջին հայացքից կարող էր թվալ, որ խորհրդային կառավարությունն այս ձևով փորձում էր ապահովել հայերի շահերն ու անվտանգությունը, սակայն իրականում ռազմաճակատի քայքայվածության և ռուսական զորքերի զանգվածային դասալքության պայմաններում նա ցանկանում էր իր դիրքերն ու ազդեցությունը, որքանով որ դա հնարավոր էր, պահպանել հայկական ինքնապաշտպանական և կամավորական ջոկատների միջոցով և առիթը բաց չթողնել միջամտելու տարածաշրջանի գործերին, իսկ դա հայության համար կարող էր առաջացնել նոր փորձություններ ու վտանգներ:

Վերոհիշյալ պայմանները և պայմանագրի 4-րդ կետով «նոր կարգի» հաստատման անորոշությունը, որը պայմանավորվող կողմերը կարող էին մեկնաբանել իրենց ցանկալի ձևով, տարաձայնություններ առաջացրեցին խորհրդա-թուրքական հարաբերություններում: Կարսում, Արդահանում և Բաթումում «նոր կարգ» հաստատելու հասկացողությունը, փաստորեն թուրքական դիվանագիտության հաղթանակն էր. նրանք ձեռքերի ազատություն ստացան Անդրկովկասում, իսկ Խորհրդային Ռուսաստանը լուրջ քայլեր չձեռնարկեց վերոհիշյալ տարածքներում հաստատված «նոր կարգը» պաշտպանել այնպես ինչպես ինքը այն հասկացել էր Բրեստի հաշտությունը ստորագրելու ժամանակ:

4) Բրեստի պայմանագիրը չընդունած Անդրկովկասյան կոմիսարիատը և սեյմը անընդունակություն ցուցաբերեցին դիմակայել թուրքական բանակի հարձակմանը, որը 1918 թ. փետրվարին խախտել էր 1917 թ. Երզնկայի զինադադարը: Այդ պայմանագրով հայ ժողովրդի իրավունքները ոտնահարվեցին: Օսմանյան կայսրությանն անցավ Արևմտյան Հայաստանը, իսկ «նոր կարգով», փաստորեն, Կարսն ու Արդահանը: Բրեստի պայմանագիրը խրախուսեց թուրքերին Կովկաս-

յան ռազմաճակատում անցնելու հարձակման, և եթե չլիներ մայիսյան հերոսամարտը, ապա Արևելյան Հայաստանում կրկնվելու էր Արևմտյան Հայաստանում իրականացված ցեղասպանության սցենարը:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ձևավորվեց Բաքումի նոր ստորացուցիչ պայմանագիր հիմքերը:

5) Ռուս ժողովրդի ազգային-պետական շահերը նույնպես ոտնահարվեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, որին զրկել էին Բելոռուսիայի մի մասից, Ուկրաինայից, Ֆինլանդիայից, այսինքն՝ այդ կորուստները կրում էին համառուսաստանյան բնույթ:

6) Հարկ է նշել նաև, որ Բրեստի պայմանագրի 9-րդ հոդվածով, ինչու չէ նաև «լրացուցիչ» պայմանագրով կողմերը փոխադարձաբար հրաժարվում էին իրենց ռազմական ծախսերի, ինչպես նաև պատերազմական վնասների հատուցումից: Դրանով, փաստորեն, թուրքերը հրաժարվում էին նաև ցեղասպանության և բռնի տեղահանության ենթարկված հայերի նյութական վնասները հատուցելուց:

5. ԲԱԹՈՒՄԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Պատրվակ դարձնելով ռուսական զորքերի (իսկ 1918 թ. սկզբից նաև նրանց փոխարինած հայկական և վրացական զորամասերի) զբաղեցրած տարածքում իբրև թե մուսուլմանների հալածանքները՝ թուրք հրամանատարությունը, խախտելով Երզնկայի զինադադարը*, 1918 թ. փետրվարի 12-ին զորքերը (մոտ 25 հազ.) շարժեց Էրզրումի, Վանի և մերձնևծովյան ուղղությամբ: Նրանց դեմ կանգնած էին հայկական (մոտ 17 հազ.) և վրացական (12 հազ.) կորպուսները[82]: Վրացական զորքերը նահանջում էին գրեթե առանց դիմադրության, և հայկական զորամասերը, միայնակ կրելով կռվի ծանրությունը, չէին կարողանում կասեցնել թուրքական զորքերի հարձակումը: Մինչև մարտի կեսը թուրքերը գրավեցին Երզնկան, Բայբուրդը, Տրապիզոնը, Դերջանը, Էրզրումը և 50-60 հազ. կամավորական զորքով շարժվեցին առաջ՝ նպատակ ունենալով գրավել Կարսը և Սարիղամիշը[83]:

Այդ պայմաններում Անդրկովկասյան կոմիսարիատը, մերժելով մասնակցել Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին, իսկ այնուհետև չընդունելով Անդրկովկասի վերաբերյալ այդ պայմանագրի կետերը, որոշեց անջատ բանակցություններ սկսել Թուրքիայի հետ Տրապիզոնում:

1918 թ. փետրվարի 17-ին հաստատվեց Տրապիզոնում բանակցություններ վարող պատվիրակության կազմը՝ Ա. Չխենկելի (նախագահ), և 11 անդամներ, այդ թվում հայերից՝ Հ. Քաջազնունի, Ա. Խատիսյան: Լեոն և Ռ. Տեր-Մինասյանը պատվիրակության մեջ մտան որպես

---

* 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքվել է զինադադար Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական կովկասյան բանակի և 3-րդ թուրքական բանակի հրամանատարությունների միջև: Զինադադարը կնքվել է համաձայն 1917 թ. դեկտեմբերի 2-ին Բրեստ-Լիտովսկում մի կողմից՝ Ռուսաստանի և մյուս կողմից՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Թուրքիայի միջև ստորագրված զինադադարի պայմանագրի: Կողմերը պայմանավորվել են մինչև վերջնական հաշտություն կնքելը անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում: Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ կովկասյան բանակի կողմից օկուպացված գոտում (Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., ԵՊՀ, 2011, էջ 665):

82 Տե՛ս Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Ե., «Հայաստան» հրատ., 1964, էջ 345-346:

83 Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 24:

խորհրդականներ: Թուրքական 5 հոգանոց պատվիրակությունը ղեկավարում էր նախկին ծովային նախարար Ռաուֆ բեյը[84]:

Այդ ընթացքում Բրեստ-Լիտովսկի բանակցություններում խորհրդային պատվիրակության քարտուղար Լ. Կարախանը հեռագրով հայտնեց անդրկովկասյան կառավարությանը գերմանական ծանր վերջնագրի մասին և տեղեկացրեց, որ վերջնագրի ամենածանր կետը Արդահանի, Կարսի և Բաթումի անջատումն է Ռուսաստանից: Լ. Կարախանի հեռագիրը վրդովմունք առաջացրեց Սեյմում, որտեղ ընդունվեց բողոքի հետևյալ հեռագիրը. «...Համաձայն Սեյմի վճռի անդրկովկասյան կառավարության, Անդրկովկասին և նրա սահմաններին վերաբերող ամեն մի դաշնագիր, որ կնքվելու էր առանց իր գիտության ու մասնակցության համարվում է միջազգային արժեքից զուրկ...»[85]:

Տրապիզոնի հաշտության բանակցությունները սկսվեցին 1918 թ. մարտի 1-ին: Թուրքերը պահանջեցին ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը զիջել Կարսի մարզը, Արդվինի օկրուգը, Բաթումի մարզը և Անդրկովկասը հայտարարել «անկախ»[86]: Թուրքերը մտադիր էին խախտել նաև 1877 թ. ռուս-թուրքական սահմանը և ռազմական գործողությունները փոխադրել Անդրկովկասի խորքերը: Սեյմն ընդհատեց բանակցությունները և պատվիրակությանը հետ կանչեց Տրապիզոնից՝ պաշտոնապես պատերազմի մեջ մտնելով Թուրքիայի հետ, որը շուտով ավարտվելու էր Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետության (հռչակվել էր 1918-ի ապրիլի 22-ին) զորքերի պարտությամբ և ավելի ծանր հաշտության ստորագրմամբ:

Այսպիսով, Անդրկովկասյան Սեյմը չկարողացավ ճիշտ գնահատել ստեղծված դրությունը, այդ թվում կողմերի զինված ուժերի հարաբերությունները և հրաժարվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրից՝ հույս ունենալով պահպանել Կարսը, Արդահանը, Բաթումը, իսկ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը օրակարգից դուրս հանելով դարձնել զուտ գաղթականական արժեզրկված հարց: Մինչդեռ այս պայմաններում արժեր ժամ առաջ ընդունել Բրեստի հաշտության պայմանագիրը «որպես չարյաց փոքրագույն», այդ ձևով կանխել երզնկայի զինադադարի խախտումը և թուրքական արշավանքը դեպի Անդրկովկաս:

---

[84] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., «Հայաստան» հրատ., 1993, էջ 83:
[85] Նույն տեղում:
[86] Նույն տեղում, էջ 99-103:

Բնականաբար թուրքական կողմը, օգտվելով ստեղծված իրավիճակից, Սեյմում առկա ազգային-քաղաքական հակասություններից, վերսկսեց ռազմական գործողությունները և առանց լուրջ դիմադրության հանդիպելու հայտնվեց Անդրկովկասի մատույցներում:

Անդրկովկասի արտաքին քաղաքական վիճակը չփոխվեց նույնիսկ 1918 թ. ապրիլի 9-ին Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության հռչակումից հետո, երբ կազմվեց կառավարություն մենշևիկ Ա. Չխենկելու գլխավորությամբ: 1918 թ. ապրիլի 28-ին թուրքական հրամանատարությունը հայտնեց Անդրկովկասյան սեյմին, որ Թուրքիան ճանաչում է Անդրկովկասի անկախությունը: Մայիսին Բաթումում սկսվեցին բանակցություններ Թուրքիայի և անկախ Անդրկովկասյան Հանրապետության միջև, որոնք ընդհատվել էին Տրապիզոնում: Բանակցությունների ընթացքում նորից դրսևորվեցին անդրկովկասյան պատվիրակության անդամների միջև եղած տարաձայնությունները:

Ստեղծված պայմաններում, մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը հայտարարեց ինքնալուծարման մասին: Այդ առթիվ ընդունված որոշման մեջ ասված էր. «Նկատի ունենալով, որ պատերազմի և հաշտության հարցերով արմատական տարաձայնություններ դրսևորվեցին այն ժողովուրդների միջև, որոնք կազմել էին Անդրկովկասյան անկախ հանրապետությունը և այդ պատճառով անհնարին էր դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, սեյմն արձանագրում է Անդրկովկասի տրոհման փաստը և վայր է դնում իր լիազորությունները»: Նույն օրը, ստանալով Գերմանիայի աջակցությունը, Վրաստանի Ազգային խորհուրդը հռչակեց Վրաստանի անկախությունը, մայիսի 27-ին մահմեդական Ազգային խորհուրդը, ստանալով Թուրքիայի աջակցությունը, հռչակեց Ադրբեջանի անկախ հանրապետությունը*: Մնալով միայնակ՝ մայիսի 28-ին Թիֆլիսում Հայոց Ազգային խորհուրդը իրեն հռչակեց «Հայկական գավառների միակ և գերագույն իշխանություն»՝ դրանով իսկ սկզբնավորելով Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ)[87]:

Անդրկովկասի երեք անկախ հանրապետությունների հռչակումը, որը փաստորեն նշանակում էր երկրամասը կտրել Ռուսաստանից,

---

* Ադրբեջանը սկզբնապես կոչվում էր Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետություն, որին հենց այդ ժամանակ թուրքերն առաջին անգամ կոչեցին Ադրբեջան: Նրա կենտրոնը ժամանակավորապես դարձավ Գյանջան (Գանձակ), մինչև որ թուրք-մուսավաթական զորքերը կխորտակեին Ս. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան և մայրաքաղաքը կտեղափոխեին Բաքու:

[87] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 152-162:

տրամագծորեն հակասում էր հայ ժողովրդի կենսական շահերին: Գերմանա-թուրքական նվաճումների համար լիակատար հնարավորություն էր ստեղծվում ազատորեն խախտել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող 4-րդ հոդվածը, այն պատճառաբանությամբ, որ վերջինս անջատվել է Խորհրդային Ռուսաստանից, և այդպիսով Անդրկովկասը հեշտ ավար էր դառնում օտարերկրյա նվաճողների համար:

ՀՀ հռչակումը որպես անկախ պետություն, Անդրկովկասում ստեղծված իրավիճակի թելադրանք էր, պահի հրամայական և ոչ թե որևէ կուսակցության քաղաքական ծրագրի իրականացում որպեսիք չեն եղել: Եվ, այնուամենայնիվ, ՀՀ ստեղծումը թուրքերի «նվերը» չէր հայ ժողովրդին: Եթե այդ հարցի լուծումը կախված լիներ թուրքերից, անկախ Հայաստանը երբեք էլ չէր ստեղծվի[88]:

Օսմանյան կայսրությունը անդրկովկասյան երեք անկախ հանրապետությունների հետ Բաթումում շարունակեց բանակցությունները՝ յուրաքանչյուրի հետ առանձին:

Հայ Ազգային խորհրդի պատվիրակներ Ա. Խատիսյանը (պատվիրակության նախագահ), Հ. Քաջազնունին և Մ. Պապաջանյանը 1918 թ. հունիսի 4-ին թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյի, Վեհիբ փաշայի հետ ստորագրեցին հաշտության և բարեկամության պայմանագիր՝ բաղկացած 14 հոդվածներից, երեք հավելվածներից, որոնք վերաբերում էին տրանզիտին, սահմանակից շրջանների առևտրին, կրոնական ազատություններին և մեկ համաձայնագիր՝ երկաթուղային գույքի բաշխման մասին: Դա առաջին միջազգային փաստաթուղթն էր, որ ստորագրում էին անկախ ՀՀ-ի ներկայացուցիչները:

Բաթումի պայմանագրի առաջին հոդվածն արձանագրում էր, որ Օսմանյան կայսրության կառավարության և Հայկական Հանրապետության կառավարության միջև հաստատվում են հաշտություն ու մշտական բարեկամություն:

2-րդ հոդվածը գծում էր հայ թուրքական սահմանը: Օսմանյան կայսրությանն էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի զգալի մասը՝ Շարուր-Դարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը, Կաղզվանը, Սարիղամիշը, Ախալքալաքը, Լոռին: ՀՀ-ն բաղկացած էր լինելու Նոր Բայազետի, Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառի մի մասից՝ ընդամենը

---

[88] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 31:

9.000 քառ. վերստ (մոտ 11.000 քառ. կմ) տարածությամբ: Պետական սահմանն անցնում էր Երևանից 7 կմ հեռավորության վրա: Թուրքիան հայերին էր հատկացնում ամբողջ Անդրկովկասի տարածքի 5%-ը, որտեղ բնակվում էր ընդամենը 310 հազ. մարդ, որից էլ հայեր՝230 հազ: Մինչդեռ Վրաստանին տրվում էր երկրամասի տարածքի 33%-ը՝ 61.000 քառ. կմ, Ադրբեջանին՝ 38%-ը՝ 70.000 քառ. կմ: Հայերը պահանջում էին 54,5 հազ. քառ. կմ, որը 29%-ն էր, բայց ստացան 5%: Կովկասահայության ճնշող մասը՝ 1 մլն 200 հազ. մարդ բնակվում էին ՀՀ տարածքից դուրս[89]:

Ստորագրված հավելվածներով թուրքական զորքերը իրավունք էին ստանում անարգել անցնել Հայաստանի տարածքով օգտվել Ղարաքիլիսա-Ղազախ խճուղով՝ զորամասեր և ռազմամթերք տեղափոխելու համար:

Թուրքական կողմը համաձայնեց ինքնիշխան Հայաստանի գոյությանը այն հաշվով, որ տնտեսապես թույլ և չնչին տարածք ունեցող ՀՀ-ն չէր կարող վտանգ սպառնալ Թուրքիային, որը հեռանկարում տեսնում էր նաև այդ Հայաստանի վերացումը[90]:

4-րդ հոդվածով օսմանյան կառավարությունը պարտավորվում էր ռազմական օգնություն ցույց տալ ՀՀ-ի կառավարությանը, եթե վերջինս օգնություն խնդրի նրանից՝ երկրում կարգն ու հանգստությունն ապահովելու համար: 5-րդ հոդվածով ՀՀ կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ իր տարածքում հակաթուրքական «բանդաների» կազմակերպմանը և պետք է զինաթափեր ու ցրեր նրանց, ովքեր կփորձեին թաքնվել այնտեղ (խոսքը այստեղ վերաբերում էր Անդրանիկի զորամասին և գոյություն ունեցող հայդուկային խմբերին: ՀՀ-ն կարող էր ունենալ միայն մեկ հետևակային դիվիզիա): 12-րդ հոդվածով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը մնում էին ուժի մեջ իր այն դրույթներով, որոնք չէին հակասում Բաթումի պայմանագրին: 6-րդ հոդվածով ՀՀ-ում բնակվող մահմեդականներին տրվում էր կրոնական, քաղաքական և քաղաքացիական ազատություն, 11-րդ հոդվածով ՀՀ կառավարությունը պարտավորվում էր Բաքվից անհապաղ դուրս բերել այնտեղ գտնվող բոլոր հայկական զինված ուժերը, 14-րդ հոդ-

---

[89] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., ԲՊ, 1997, էջ 255-256:
[90] Նույն տեղում, էջ 254:

վածը նախատեսում էր, որ պայմանագիրը փոխադարձաբար կվավերացվի մեկ ամսվա ընթացքում[91]:

Ինչպես նկատել է ակադեմիկոս Հ. Ավետիսյանը, Բաթումի պայմանագիրը ոչ թե թուրքական «գթասրտության» արդյունք էր, նրանց «պարգևը» հայ ժողովրդին, ինչպես փորձում են ներկայացնել Ք. Կարաբեքիրը, Վեհիբ փաշան և ուրիշներ, այլ թուրքական քաղաքական շրջադարձի պատճառը, որը Խալիլ բեյի, նույն Վեհիբ փաշայի և Շևքի փաշայի ակամա խոստովանություններից հանդիսանում են Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի տակ հայերի հերոսամարտերը: Դեռ 1920 թ. ապրիլի 20-ին ժխտելով Հայաստանի անկախության թուրքական շնորհ համարելու մտայնությունը, Հ. Օհանջանյանը հայտարարել է, որ հայ ժողովուրդը իր անկախությունը պաշտպանելու պատրաստակամությունը ապացուցել է մայիսյան հերոսամարտերում և այլուր, որտեղ Հայաստանի հազարավոր զավակներ զոհվեցին այդ անկախության համար, ինչի արդյունքում էլ ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը[92]:

Ջորավար Անդրանիկը Բաթումի պայմանագիրը համարում էր հայության վզին կրկին փաթաթած ստորության շղթա: Անդրանիկին հատկապես զայրացրել էր Բաթումի պայմանագրի 5-րդ հոդվածը, որի համաձայն ինքը և իր զորքը կամավորական այլ զորաջոկատների հետ միասին համարվում էին օրենքից դուրս: Նա հայության համար կործանարար էր համարում Ռուսաստանից անջատ նրա գոյությունը[93]:

1918 թ. հունիսի 5-9-ը Երևանում տեղի ունեցան խոշոր ցույցեր ընդդեմ հաշտության: ՀՀ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը ստիպված էր հանդես գալ հայտարարությամբ և համոզել ժողովրդին որ այլ ելք չկար[94]:

Այսպիսով, Բաթումի պայմանագրի հիմնական դրույթների մասին կարող ենք ասել հետևյալը.

1) Հայաստանը չպետք է դիվանագիտական հարաբերություններ հաստատեր Օսմանյան կայսրության հետ պատերազմական դրության մեջ գտնվող պետությունների (Անտանտի և Խորհրդային Ռուսաստանի)

---

[91] Պայմանագրի տեքստն ամբողջությամբ տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 531-537, նաև՝ ճակատագրական պայմանագրեր (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ **Ազատյան Հ. Գ.**), էջ 74-80:

[92] **Ավետիսյան Հ.**, նշվ. աշխ., 253-254:

[93] **Կարապետյան Մ.**, նշվ. աշխ., էջ 240:

[94] **Սիմոնյան Հ.**, Անդրանիկի ժամանակը, Գիրք բ, Ե., 1996, էջ 161-165:

հետ, որը նշանակում էր միջազգային առումով նրա մեկուսացում: ՀՀ-ի արտաքին (ինչու չէ նաև ներքին) քաղաքականությունը դրվում էր Թուրքիայի վերահսկողության տակ:

2) Թուրքերի պարտադրանքով, ըստ 5-րդ հոդվածի, ՀՀ-ը պետք է զորացրեր իր զինված ուժերը, որոնք Բաքումի պայմանագրով ձևակերպված էին «բանդա»* եզրույթով՝ նպատակ ունենալով Անդրանիկի զորամասին և հայ կամավորական ֆիդայական ջոկատներին տալ «հանցագործ», «քրեական», «հակաօրինական» որակավորում, նրանց հայտարարել օրենքից դուրս և ՀՀ-ը թուրքական հարձակման համար թողնել անպաշտպան: Այդ «բանդա» որակավորումն ուներ նաև թաքնված ենթատեքստ, այն է հայ ազգային-ազատագրական-ինքնապաշտպանական պայքարին տալ «անօրինական», իսկ հայ կամավորական, հայդուկային և ֆիդայական ջոկատներին «քրեական հանցագործների» տեսք:

3) Թուրքական կողմն իրավունք ստացավ իր զորքերը փոխադրել Հայաստանի երկաթգծով, որի համար երկաթուղային բոլոր կայարանները պիտի գտնվեին թուրք ռազմական կոմիսարների հսկողության տակ: Իսկ դա նշանակում էր նաև վերահսկողություն Հայաստանի ոչ միայն հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքի, այլև միջազգային առևտրի, արտահանվող և ներմուծվող ապրանքների նկատմամբ:

4) Բաքումի պայմանագրով ՀՀ-ն, փաստորեն, հրաժարվում էր պահանջատիրությունից, ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած վնասների ու կորուստների փոխհատուցումից:

5) Հայաստանի և Ադրբեջանի սահմանների որոշմանը վերաբերող համաձայնագիրը պետք է հաղորդվեր Օսմանյան կայսերական կառավարությանը: Դա նշանակում էր Հայաստանի տարածքների հաշվին Թուրքիայի պարտադիր միջամտությամբ Արցախի, Սյունիքի, Շարուր-Դարալագյազի (Վայոց Ձոր) պատկանելիության հարցերի լուծում հօգուտ Ադրբեջանի: Այդ է վկայում նաև պայմանագրի 11-րդ հոդվածը, որով Հայաստանի կառավարությունը պարտավորվում էր էվակուացնել Բաքվում գտնվող հայկական բոլոր զինված ուժերը:

6) Բաքումի պայմանագրի 6-րդ հոդվածը, որում խոսվում էր ՀՀ-ում բնակվող մահմեդականների կրոնը հարգելու մասին, խիստ

---

* Բանդա - հանցագործ նպատակներով միավորված մարդկանց խումբ. կողոպտիչների, մարդասպանների և այլ հանցագործությունների համար ստեղծված հրոսակախումբ:

միակողմանի էր, քանի որ առկա պայմանագրում չէր խոսվում Օսմանյան կայսրությունում և հատկապես Արևմտյան Հայաստանում ապրող քրիստոնյա հայության դավանաբանական իրավունքները հարգելու մասին, որը կարող էր նշանակել Արևմտյան Հայաստանում ցեղասպանությունից մազապուրծ եղած հայ բնակչության մնացորդների անտեսում, նրանց նկատմամբ ծուլողական (ասիմիլացիայի) քաղաքականության և հայ հոգևոր ու նյութական մշակույթի հուշարձանների յուրացման սպառնալիք:

7) Պայմանագրում ոչինչ չէր ասվում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի կրած նյութական կորուստների և, առավել ևս, դրանց հատուցման մասի: Հայաստանն ինքն էր հանդիսանում «պարտվող» կողմ և անիրավահավասար պայմանագրում նման հարց առաջ քաշել չէր կարող:

Այնուամենայնիվ, ուշադրություն դարձնենք 10-րդ հոդվածին, որտեղ ասվում էր. «Պայմանավորվող կողմերից մեկի տարածքի բնակիչները կամ համայնքները, որոնք ունեն սեփականության կամ օգտագործման իրավունք սահմանի մյուս կողմում գտնվող անշարժ գույքի նկատմամբ, կարող են օգտագործել դրանք, շահագործել կամ վարձակալության տալ, վարել կամ վաճառել անձամբ կամ վստահված անձանց միջոցով: Ոչ ոք չի կարող զրկվել այդ անշարժ գույքի նկատմամբ իրեն պատկանող սեփականության իրավունքից...»[95]: Սա նշանակում էր, որ Արևմտյան Հայաստանից տեղահանված հայությունն իր անշարժ գույքի օգտագործման նկատմամբ պահպանում էր սեփականության իրավունքները և հայերի նյութական փոխհատուցման հարցը դեռ փակված չէր:

8) Բաթումի պայմանագիրը կնքվել էր ուժի ազդեցության պայմաններում և խախտում էր ինքնորոշման սկզբունքը: Պայմանագրի 14-րդ հոդվածով այն վավերացվելու էր մեկ ամսվա ընթացքում և վավերացման օրինակները պետք է փոխանակվեին Կ. Պոլսում: Այն գործողության մեջ պետք է դրվեր փաստաթղթերի փոխանակման օրը: Սակայն պայմանագիրը չի վավերացվել պայմանագիրը ստորագրող պետությունների կողմից և ուրեմն չի մտել օրինական ուժի մեջ[96]: Բայց, այդ ամենով հանդերձ, Բանումի պայմանագիրը մի քանի

---

[95] Ճակատագրական պայմանագրեր (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ Ազատյան Հ. Գ.), էջ 79:

[96] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 92-93:

ամսով իր բացասական ազդեցությունը թողեց Հայաստանի Հանրապետության, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքական և տնտեսական կյանքի վրա:

Բաքումի պայմանագիրը, փաստորեն, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի տրամաբանական շարունակությունն էր: Բարեբախտաբար այդ ստորացուցիչ պայմանագիրը երկար կյանք չունեցավ: Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունը, Մուդրոսի զինադադարը և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի չեղյալ հայտարարելը հնարավորություն տվեց Հայաստանի Հանրապետությանը չեղյալ հայտարարել իրեն պարտադրված Բաքումի պայմանագիրը, վերադարձնել Կարսը, Արդահանը, Սուրմալուն և Հայկական հարցը կրկին բարձրացնել միջազգային ատյաններում:

6. ՄՈՒԴՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Օսմանյան կայսրության պարտությունից հետո՝1918 թ. հոկտեմբերի 30-ին, Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում կանգնած անգլիական Ագամեմնոն հածանավի վրա դաշնակիցների (Անտանտ) և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև ստորագրվեց զինադադար (դեռևս հոկտեմբերի 7-ին կանգնած լինելով պարտության առաջ երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց): Դաշնակիցների անունից զինադադարը ստորագրեց բրիտանական ծովակալ Քալթրոփը, Թուրքիայի՝ Ռաուֆը, Հիքմեթը և Սադուլլան: Այն բաղկացած էր 25 հոդվածից[97]:

Մուդրոսի զինադադարի ընդհանուր բովանդակությանը հետևյալն էր՝ Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր դաշնակիցներին հանձնել իր ռազմանավերը, զորացրել բանակը, բացառությամբ այն զորքերի, որոնք անհրաժեշտ են սահմանները և ներքին կարգը պահպանելու համար, զորքերը դուրս բերել արաբական բոլոր տարածքներից, դաշնակիցների վերահսկողության տակ դնել փոստը, հեռագրական կապը: Սևծովյան նեղուցները դրվում էին դաշնակիցների վերահսկողության տակ, նրանք իրավունք էին ստանում ռազմակալելու ցանկացած ռազմավարական (ստրատեգիական) կետ[98]:

Անմիջականորեն հայությանը առնչվող հոդվածներից կարող ենք տալ հետևյալ գնահատականը.

1) Մուդրոսի զինադադարով, փաստորեն, չեղյալ հայտարարվեցին Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը: Թուրքական զորքերը պարտավորվում էին հետ քաշվել Կարսից, Արդահանից, Բաթումից ընդհուպ մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: 11 հոդվածի համաձայն՝ նախատեսվում էր թուրքական զորքերի դուրսբերումն Անդրկով-

---

[97] Zurcher Erik J. Turkey. A Modern history, Londin: I.B. TAUTIS, 2007, p.233, տե՛ս նաև Սարուխանյան Տ., նշվ., աշխ., էջ 166-167:

[98] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 537-539, նաև՝ Sir Frederick Maurice, The Armistices of 1918. London, New York, Toronto: Oxford University Press, 1943, p. 85-87.

կասից, իսկ 16-րդ հոդվածով՝ Կիլիկիայից, որը դեռ Սայքս-Պիկոյի պայմանագրով պետք է անցներ Ֆրանսիային:

2) Մուդրոսի զինադադարի 5-րդ հոդվածով բանակի զորացրումը «բացառությամբ այն զորքերի որոնք անհրաժեշտ են սահմանները և ներքին կարգը պահպանելու համար հետագայում կարևոր նշանակություն ունեցավ քեմալական շարժման ծավալման համար» կարևոր նշանակություն ունեցավ Թուրքիայի կենտրոնական և արևելյան վիլայեթներում քեմալական շարժման ծավալման ու զարգացման համար, որը Թուրքիային դուրս բերեց ռազմաքաղաքական այն ճգնաժամից, որում նա հայտնվել էր Առաջին համաշխարհային պատերազմից հետո և Անկարայի կառավարությանը օգնեց դաշնակիցների հետ խոսել ուժի և սպառնալիքի դիրքերից՝ թույլ չտալով Թուրքիայի մասնատումը և մասնավորապես Հայկական հարցի դրական լուծումը:

3) Զինադադարի 7-րդ հոդվածով, որի համաձայն «դաշնակիցները իրավունք կունենան օկուպացնելու բոլոր ստրատեգիական կետերը, այն դեպքում, երբ դաշնակիցների անվտանգության համար հանգամանքները կդառնան սպառնալից», ինչպես ցույց կտա ապագան «վերապահում» էր արվել միայն Հայաստանի համար: Դաշնակիցները այդպես էլ հաշվի չառան, որ նրանց դաշնակից նորանկախ Հայաստանի Հանրապետության համար (անկախությունը դե ֆակտո ճանաչվել էր 1920 թ. հունվարին) 1920 թ. կեսերից քեմալական Թուրքիայից եկող «սպառնալից հանգամանքները» դարձել էին առարկայական: Նրանք ոչ մի միջոց չձեռնարկեցին նրան թուրքական հարձակումից պաշտպանելու համար:

ա) Հայաստանը որպես «ստրատեգիական նշանակություն ունեցող կետ» կարող էր լինել դաշնակիցների համար կարևոր այնքանով, որ կհանդիսանար անմիջական սեպ և բաժանարար (բուֆերային) գոտի Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև և լրջորեն կխոչընդոտեր նրանց հարաբերությունների բարելավմանը, ինչպես եղավ հետպատերազմյան շրջանում:

բ) Հայաստանը որպես «ստրատեգիական կետ» անտեսվեց նաև այնքանով, որքանով որ 1919 թ. բրիտանական զորքերը դուրս բերվեցին Անդրկովկասից՝ անտեսելով նրան սպառնացող թուրքական և բոլշևիկյան վտանգը:

գ) Պաշտպանելով Հայաստանին՝ դաշնակիցները կարող էին անմիջականորեն արգելապատնեշ ստեղծել թուրք-ադրբեջանական մերձեցման համար, որոնք շարունակում էին մեծ նշանակություն տալ պանթուրքիզմի՝ Մեծ Թուրանի ստեղծման գաղափարին և այդ ուղղությամբ պատերազմից հետո էլ շարունակում էին կատարել գործնական քայլեր:

Բրիտանացի պատմաբան Դեյվիդ Մ. Լենգը գրել է. «Բրիտանիայի ներխուժումը Կովկաս հանդիսանում է նրա վրայով դեպի Աֆղանստան և Հնդկաստան կատարվող թուրք-գերմանական առաջխաղացումը շրջափակելու նպատակ: 1918 թ. վերջին կենտրոնական պետությունների պարտություններից հետո բրիտանական զորքերը մնացին այստեղ՝ Մերձավոր Արևելքը և Հնդկաստանը բոլշևիկյան վտանգից պաշտպանելու համար»[99]: Հոկտեմբերի 31-ին Անգլիայի ռազմական կաբինետը Իրաքում գտնվող իր զորքերին հրահանգեց օկուպացնել Բաքուն և մոտակայքում ընկած նավթային շրջանները: Դա Խորհրդային Ռուսաստանի դեմ ընդարձակ պլանի մի մասն էր[100]:

4) Հայ դատի համար կարևորություն ներկայացնող 24-րդ հոդվածում ասված էր, որ «Հայկական նահանգներից որևէ մեկում անկարգությունների դեպքում դաշնակիցներն իրենց իրավունք են վերապահում գրավելու դրա մի մասը»: Հոդվածը, սակայն, չէր մանրամասնում, թե «անկարգություններ» ասելով ինչ պետք է հասկանալ: Եթե այդ հոդվածը նկատի ուներ պաշտպանել հայերին նոր ցեղասպանությունից, բռնություններից ու տեղահանություններից և նպաստել հայկական վիլայեթներում օրինականության հաստատմանը, անտարակույս ողջունելի է, սակայն ոչ լիարժեք: «Անկարգության» տակ հարկ էր նաև ընդունել Անտանտի երկրների քաղաքականության և ճնշված ժողովուրդների ազատագրական շարժման դեմ շուտով հանդես եկող թուրքական ազգայնամոլ բուրժուազիային՝ Մ. Քեմալի գլխավորությամբ, որը Անկարայում ստեղծեց սուլթանական կառավարությունից անկախ և, փաստորեն, անօրինական իշխանություն ու օգտվելով Մուդրոսի զինադադարի վերոհիշյալ 24-րդ և 5-րդ հոդվածների հակահայկականությունից՝ կարողացավ կազմակերպել լավ զինված բանակ

---

[99] British Policy in Transcaucasia 1918-1919, Publications of the Modern Humanities Research Associations. Vol. 11, p. 203.

[100] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 51:

և պատերազմելով ՀՀ-ի, Հունաստանի և դրանով իսկ անմիջականորեն Անտանտի պետությունների դեմ՝ ստիպել նրանց գնալ Օսմանյան կայսրությանը ծեռնտու հաշտության: Անկարայի կառավարությունը չճանաչեց Մուդրոսի զինադադարը, հետագայում նաև Սևրի պայմանագիրը ու կարողացավ հասնել Անկարայի (ինչի արդյունքում ֆրանսիական զորքերը դուրս բերվեցին Կիլիկիայից) և Լոզանի պայմանագրերի կնքմանը:

24-րդ հոդվածի անորոշության և անլիարժեքության մասին է խոսում նաև այն հանգամանքը, ըստ որի անկարգությունների ծագման դեպքում, դաշնակիցները գրավելու էին հայկական նահանգները ոչ թե ամբողջությամբ, այլ նրա «մի մասը»: Այսինքն՝ նրանք սահմանափակում էին իրենց գործողությունները և «անկարգությունների» դեպքում, զինադադարի սահմանված կարգով իրավունք չէին ունենալու գրավելու հայկական նահանգները կամ Արևմտյան Հայաստանն ամբողջությամբ: Ի՞նչպես կարող էին դաշնակիցները երաշխավորել, որ չգրաված հայկական վիլայեթների «մյուս մասում» «անկարգություններ» չեն լինի:

24-րդ հոդվածից, փաստորեն, կարելի էր ենթադրել, որ Հայկական հարցի լուծման դեպքում էլ դաշնակիցները մտադրություն չեն ունեցել հայության տնօրինությանը հանձնել ամբողջ Արևմտյան Հայաստանը: Դա էր ապացուցում Կիլիկիայի հանձնումը Ֆրանսիային և 1916 թ. դաշնակիցների կողմից Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման գաղտնի համաձայնագիրը (Սայքս-Պիկո):

5) Այնուամենայնիվ սկզբնական շրջանում Մուդրոսի զինադադարը տվեց իր դրական արդյունքները 1918-1919 թթ. նոյեմբեր-մայիս ամիսների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը վերադարձրեց Կարսը, Արդահանը, Կաղզվանը, Կողբը, Սարդարապատը, Սուրմալուն, Վեդիբասարը, վերականգնվեց 1914 թ. սահմանը:

6) Մուդրոսի զինադադարը հնարավորություն տվեց ՀՀ-ին Առաջին աշխարհամարտի ժամանակ հայությանը հասցված նյութական կորուստները հաշվարկի ենթարկել և բարձրացնել Փարիզի հաշտության խորհրդաժողովում, որոնք հիմք հանդիսացան Սևրի պայմանագրի 142-րդ և հատկապես 144-րդ հոդվածների համար (վերջինս անմիջականորեն վերաբերում էր հայերի լքյալ գույքին):

7. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ

1918 թ. նոյեմբերի 11-ին Ֆրանսիայի Ռետոնդ կայարանի մոտ գտնվող Կոմպիենի անտառում կնքվեց զինադադար մի կողմից պարտված Գերմանիայի, մյուս կողմից՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի միջև, որով Առաջին համաշխարհային պատերազմը ավարտվեց: Եվ աղթողների և պարտվողների միջև պետք է կնքվեր հաշտության պայմանագրերի մի ամբողջ համակարգ:

1918 թ. հունվարի 8-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը հանդես եկավ իր հանրահայտ «14 կետերով», որոնք պարունակում էին հաշտության պայմանագրեր կնքելու համընդհանուր պահանջներ, «բաց դռների» և «ազատ ծովերի» քաղաքականություն: Այդ փաստաթղթում Հայկական հարցը առանձին չի ձևակերպվել, այլ դրվել է ընդհանուր ձևով և բավականաչափ մանվածապատ: 12-րդ հոդվածում ասվում էր. «Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական մասի համար պետք է հավաստել անվտանգ ինքնիշխանություն, սակայն մյուս ազգերի համար, որոնք ներկայումս գտնվում են թուրքական իշխանության տակ, պետք է ապահովել կյանքի աներկբա անվտանգություն և ինքնավար զարգացման կատարելապես անխախտ պայմաններ...»[101]:

Թեև Վ. Վիլսոնի ուղերձում առանձնանշված չէ որևէ երկիր, այսուհանդերձ, անտարակույս, ԱՄՆ-ի նախագահի ուղերձը վերաբերում էր նաև Հայաստանին: Վիլսոնը սույն ուղերձի վրա, իր խորհրդական գնդապետ է. Հաուզի հետ միասին, աշխատել է 1918 թ. հունվարի 4-ին, 5-ին և 7-ին: Այդ մասին վկայված է նախագահի խորհրդականի օրագրի մեջ: Ահա թե ինչ է արձանագրում Հաուզը 1918 թ. հունվարի 7-ին. «Երբ գրվել էր Թուրքիային վերաբերող պարբերությունը, նախագահը մտածեց, որ այն պետք է դարձնել ավելի հստակ, որ Հայաստանը, Միջագետքը, Սիրիան և այլ մասերը պետք է նշվեն անուններով: Ես չհամաձայնեցի սրա հետ, հավատացած լինելով, որ այն, ինչ ասված է, բավարար է

[101] Տե՛ս Гершов З. М. Вудро Вильсон, М.: «Мысль», 1983, с 145-156; Շիրինյան Լ., Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (22), 2008, էջ 101:

ցույց տալու համար դա, և ի վերջո ամեն ինչ մնաց այնպես, ինչպես ձևակերպված էր սկզբում»[102]:

Մի փոքր առաջ ընկնելով և մեկնաբանելով Վ. Վիլսոնի մոտեցումը 12-րդ կետի վերաբերյալ, նշենք, որ Փարիզի խաղաղության վեհաժողովում ԱՄՆ-ի պաշտոնական պատվիրակությանը (30 հոկտեմբերի, 1918 թ.), նախագահ Վիլսոնը, անդրադառնալով իր ծրագրային ուղերձի 12-րդ կետին, տալիս է իր պատկերացումները Թուրքիայի ապագայի և նախնական դիրքորոշումը՝ Հայաստանի սահմանների վերաբերյալ. «Հայաստանին պետք է տրվի նավահանգիստ Միջերկրականի ծովափում, և հաստատվի հովանավորող ուժ: Ֆրանսիան կարող է հավակնել դրան, սակայն հայերը կնախընտրեն Մեծ Բրիտանիան»: Իր հերթին, մեկնաբանելով ԱՄՆ-ի նախագահի հանձնարարականը, գնդապետ է. Հաուզը, ով նաև Փարիզի Խաղաղության վեհաժողովում ԱՄՆ-ի պաշտոնական պատվիրակության ղեկավարն էր, գրում է. «Մերձավոր Արևելքում նախագահ Վ. Վիլսոնի նպատակն էր Կ. Պոլսի համար ապահովել միջազգային վերահսկողություն, Անատոլիան տալ թուրքերին և ստեղծել անկախ Հայաստան»[103]:

Հայերին թուրքական լծից ազատագրված տեսնելու իր այս ձգտումը նախագահ Վ. Վիլսոնը վերահաստատել է Հռոմի Բենեդիկտոս XV պապին 1918 թ. դեկտեմբերի 26-ին գրած նամակում. «Վստահեցնում եմ Ձեզ, որ խոսում եմ ոչ միայն իմ, այլև ողջ ամերիկյան ժողովրդի անունից, երբ ասում եմ, որ ոչ մի այլ ժողովրդի տառապանք այդքան խորապես չի խռովել ամերիկացիներին, որքան հայերինը: Վստահաբար, իմ ամենանվիրական ձգտումներից է լինելու կարողությանս չափով մասնակցություն ունենալ, ապահովելու համար այդ անիրավված և տարաբախտ ժողովրդի օրինավոր և ամբողջական ազատագրումը անարդար լծից»: 1919 թ. սեպտեմբերի 23-ին ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնն իր մեկ այլ ուղերձում հստակորեն նշում է. «Հայաստանը մեկն է այն շրջաններից, որը պետք է լինի Ազգերի լիգայի խնամակալության ներքո: Հայաստանը պետք է ազատվի: Թուրքին պետք է արգելվի իշխանություն իրականացնել այնտեղ, և քրիստոնյա ժողովուրդներին ոչ միայն պետք է թույլ տրվի օգնել Հայաստանին, այլև նրանց պետք է թույլ տրվի պաշտպանել Հայաստանը»[104]:

---

[102] Տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրություն. հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Ե., 2012, էջ 69:
[103] Նույն տեղում:
[104] Նույն տեղում, էջ 70:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Թուրքիան Վ. Վիլսոնի առաջադրած սկզբունքները միանշանակորեն ճանաչել է որպես խաղաղության բանակցությունների հիմք: Օսմանյան կառավարությունը զինադադարի իր պաշտոնական գրության մեջ (1918 թ. հոկտեմբերի 14) հստակորեն հայտարարել է. «Ինքը (Օսմանյան կայսերական կառավարությունը) որպես բանակցությունների հիմք է ընդունում այն ծրագիրը, որն առաջադրվել է ԱՄՆ-ի նախագահի կողմից Կոնգրեսին հղված 1918 թ. հունվարի 8-ի ուղերձում»: Միմիայն այս պարտավորությունը նկատի ունենալով է, որ ամերիկացիները միջնորդել են դադարացնել ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ և կնքել Մուդրոսի զինադադարը[105]:

Հայկական հարցի դրական լուծման վերաբերյալ հայերին խոստումներ էին տալիս նաև Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի տարբեր պետական գործիչներ, ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը, Անգլիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը, Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոն, Իտալիայի վարչապետ Վ. Օռլանդոն և այլք:

Հայերը որոշակի սպասելիքներ ունեին և նախապատրաստվում էին վեհաժողովին: Դեռ պատերազմի ժամանակ Եվրոպայում էր արևմտահայերից բաղկացած Ազգային պատվիրակությունը եգիպտահայ Պ. Նուբար փաշայի գլխավորությամբ: Նա 1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դիմեց դաշնակից պետություններին, որպեսզի նրանք Հայաստանը պաշտոնապես ճանաչեն պատերազմող կողմ և հրավիրեն հաշտության վեհաժողով, սակայն մերժում ստացավ, քանի որ ՀՀ-ն դեռ չէր ճանաչվել որպես պետություն և չէր հանդիսանում միջազգային իրավունքի սուբյեկտ[106]:

1918 թ. հունվարի 18-ին Փարիզում բացվեց հաշտության վեհաժողովը, որին մասնակցում էին 27 երկրների 2000 պատվիրակներ: Վեհաժողովում հիմնական դերակատարը «Մեծ եռյակն» էր (Վ. Վիլսոն, Դ. Լլոյդ Ջորջ, Ժ. Կլեմանսո) [107]: Հայաստանի և ոչ մի ներկայացուցիչ Փարիզի կոնֆերանսին պաշտոնապես չմասնակցեց: Հրավիրված չէր նաև Խորհրդային Ռուսաստանը:

Կոնֆերանսում հաստատվեց Ազգերի լիգայի կանոնադրությունը, ընդունվեց մանդատային համակարգը: Մանդատները պետք է տար Ազգերի լիգան այն երկրներին, որոնք չէին կարողանում տվյալ ծանր ժամանակաշրջանում ինքնուրույն կառավարվել և այս կամ այն զար-

---

[105] Նույն տեղում:

[106] Տե՛ս **Աճեմեան Լ.**, Եգիպտահայ տարեցոյց 1925,Աղեքսանդրիա, 1924, էջ 87:

[107] **Никольсон Г.** Как делался мир в 1919 г. М.: Госполитиздат, 1945, с. 57; **Тардье,** Мир, М.: Госполитиздат 1943, с. 85.

գացած պետության հովանավորության կարիքն ունեին: Ենթամանդատային երկրները բաժանվեցին երեք կատեգորիաների, և Արևմտյան Հայաստանը մտավ առաջինի մեջ՝ որպես Օսմանյան կայսրության նախկին տիրապետության տակ եղած նախկին մարզ[108]:

Փարիզի կոնֆերանսին մասնակցելու համար 1918 թ. դեկտեմբերին կազմվեց ՀՀ պատվիրակությունը, որի ղեկավարն էր Ա. Ահարոնյանը, անդամներն էին Հ. Օհանջանյանը, Մ. Պապաջանյանը: Փետրվարի 4-ին պատվիրակությունը հասավ Փարիզ[109]:

Հայկական երկու պատվիրակությունները գործում էին բավականաչափ անմիաբան: Եթե ազգային պատվիրակությունը Պ. Նուբարի գլխավորությամբ ներկայացնում էր արևմտահայությանը և հավակնում էր միացյալ և անկախ Հայաստանի ստեղծմանը, որի բաղկացուցիչ մասը պետք է լիներ «Արարատյան հանրապետությունը» (ՀՀ-ը), ապա ՀՀ-ի պատվիրակությունը Ա. Ահարոնյանի գլխավորությամբ պահանջում էր հաշվի նստել ստեղծված փաստի հետ և հայոց ընդարձակ պետության ստեղծման համար հենակետ դարձնել արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը[110]:

Ի վերջո Ա. Ահարոնյանի պատվիրակությունը ընդունեց Պ. Նուբարի մշակած պահանջները, և 1919 թ. փետրվարի 12-ին հայկական երկու պատվիրակությունների նախագահները Փարիզի վեհաժողով ներկայացրին «Հայկական պահանջների հուշագիրը»:

Ըստ հուշագրի Հայաստանն ընդգրկելու էր հետևյալ տարածքները.

1. Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Էրզրումի, Սվազի և Տրապիզոնի վիլայեթները:

2. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշը, Սիսը, Ջեբել-Բեշիքերթը և Ադանան՝ Ալեքսանդրետ նավահանգստով:

3. Կովկասի Հայկական Հանրապետության տարածքը՝ Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավարևմտյան մասը, Կարսի նահանգը՝ առանց Արդահանից հյուսիս ընկած շրջանի[111]: Դա կազմում էր մոտ 300 հազ. քառ կմ տարածք[112]: Դաշնակից տերություններից մեկը կամ Ազգերի լիգան պետք է երաշխավորեր ստեղծվող հայկական պետության տարածքային ամ-

---

[108] Կարապետյան Մ., Նշվ. աշխ. , էջ 302:

[109] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» 1999, էջ, 89:

[110] Նույն տեղում, էջ 89-90:

[111] Տե՛ս «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» Ե., 2002, N6, էջ 105-118 և 2002, N5, էջ 154-167, նաև՝ Քաջազնունի Հ., Հ. Յ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 62-64:

[112] Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ , Ե., 1973, էջ 227:

բողջականությունն ու անձեռնմխելիությունը: Դաշնակից տերություններից մեկին լիազորություններ պետք է տրվեին՝ 20 տարով ստանձնելու Հայաստանի մանդատը: Հայաստանը պետք է փոխհատուցում ստանար կրած կորուստների համար, պատերազմի տարիներին բռնի տեղահանված հայերը պետք է հնարավորություն ստանային վերադառնալ իրենց հայրենիքը: Հայերի զանգվածային ոչնչացման մեղավորները պետք է պատժվեին[113]:

Հայկական պահանջները խիստ դիմադրության հանդիպեցին Ֆրանսիայի կողմից, որը ձգտում էր Կիլիկիան միացնել Սիրիային: Կիլիկիան պահանջելու հարցում հայերին խրախուսում էր Միացյալ Նահանգները, որը Հայաստանի մանդատի հիմնական հավակնորդն էր: Սակայն այս փաստաթուղթը պատշաճ արձագանք չգտավ: 1919 թ. հոկտեմբերին, երբ ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը այցելեց Լոնդոն Անգլիայի արտգործնախարար լորդ Ջ. Քերզոնը որոշակիորեն ասաց, որ անհնար է ստեղծել Հայաստան՝ համաձայն 1919 թ. փետրվարի 12-ի հուշագրի: Դրա փոխարեն դաշնակիցները նախատեսվում էին ստեղծել Հայաստան՝ Կովկասյան Հայաստանին ավելացնելով Թուրքահայաստանի մի մասը՝ ելքով դեպի Սև ծով, իսկ Կիլիկիան տրվելու էր Ֆրանսիային[114]:

Պարտված Գերմանիայի հարցերով զբաղված դաշնակից տերությունները չէին շտապում քննարկել թուրքական հարցը, որի հետ սերտորեն առնչվում էին Հայկական հարցն ու հայկական միասնական պետության ստեղծումը: 1919 թ. հունիսի 28-ին Վերսալում Գերմանիայի հետ ստորագրվեց հաշտության պայմանագիր: Փարիզի խորհրդաժողովի աշխատանքների մի մասը ավարտվեց: Եվ, այնուամենայնիվ, 1920 թ. հունվարի 19-ին կոնֆերանսը դե ֆակտո ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Հետագայում Հայկական հարցը քննարկվեց Սան Ռեմոյի կոնֆերանսում և իր արտահայտությունը գտավ Սևրի հաշտության պայմանագրում:

1919 թ. փետրվարի 24-ից մինչև ապրիլի 22-ը Փարիզում տեղի ունեցավ ազգային համագումար, որին մասնակցում էին հայկական գաղթօջախների 38 ներկայացուցիչներ: Ա. Ահարոնյանը և Հ. Օհանջանյանը մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով: Համագումարը հաստատեց կոնֆերանսին ներկայացված հուշագիրը և ավելացրեց վնասների հատուցման չափը: Ըստ Հայ ազգային հա-

---

[113] Նույն տեղում:
[114] Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 307:

մագումարի տվյալների այն կազմում էր 19 մլրդ 130 մլն 982 հազար ֆրանկ: Այդ գումարի 14 մլրդ 598 մլն 510 հազարը տրամադրվելու էր արևմտահայությանը, 4 մլրդ 532 մլն 472 հազարը՝ արևելահայությանը[115]:

Փաստաթուղթը հանդիսանում է Հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշիռը, որը կազմվել է Հայ ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից և որպես հուշագիր 1919 թ. փետրվարին ներկայացվել Անտանտի տերությունների ուշադրությանը՝ Փարիզում հրավիրված խաղաղության վեհաժողովին:

1919 թ. փետրվարին Փարիզի հաշտության կոնֆերանսին ներկայացվեց երկու հուշագիր, մեկում հայ ժողովուրդը առաջ էր քաշում իր քաղաքական (տարածքային) պահանջները, մյուսը նվիրված էր Առաջին աշխարհամարտի ընթացքում հայ ժողովրդի կրած մարդկային և նյութական կորուստների համար դրամական փոխհատուցման խնդրին (ռեպարացիաներ):

Դրամական փոխհատուցմանը վերաբերող հուշագիրը կրում է «Tableau approximatif des rnparations et indemnitns pour les dommages subis par la nation armnnienne en Armnnie de Turquie et dans la Rnpublique Armnnienne du Caucase» վերնագիրը:

Հաշվեկշիռը կազմված է յուրաքանչյուր հայ ընտանիքին հասցված վնասի հաշվարկով, միջպատերազմյան կամ հին գների միջին արժեքի և 1919 թ. գործող գների միջին արժեքի չափով, ֆրանսիական դրամանիշի՝ ֆրանկի, արտահայտությամբ:

Հաշվեկշիռը բաղկացած է երկու մասից և հիմնականում նպատակ էր հետապնդում հատկացումների և հատուցումների պայմանով վերականգնել հայ ժողովրդի կրած նյութական վնասները:

Փաստաթուղթը բաղկացած է երկու մասից. առաջին մասում ներկայացված է արևմտահայերի կոտորածների և տեղահանության արդյունքում մարդկային և նյութական կորստի և դրա փոխհատուցման չափի հաշվարկ, իսկ երկրորդ մասը նվիրված է 1918 թ. թուրքական առաջխաղացման և օկուպացիայի արդյունքում Արևելյան Հայաստանի տարածքում բնակվող հայերի կորուստներին:

Փարիզի վեհաժողովին ներկայացված հաշվեկշռի ներածական բաժնում առաջին անգամ փորձ է կատարվում պաշտոնապես տեղեկացնել պատերազմի մասնակից պետություններին, թե պատերազմի չորս տարիներին ինչպիսի փոփոխություն է կրել Օսմանյան Թուրքիայի

---

[115] Վրացյան. Ս., նշվ., աշխ., էջ 286:

տարածքում բնակվող հայ ազգաբնակչության թվակազմը: Ըստ այդ տեղեկատվության, 1914 թ. Օսմանյան կայսրությունում հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2,026,000 մարդ: Այդ ընդհանուր թվից առանձնացվում է Կոստանդնուպոլսից, Զմյուռնիայից և մի քանի այլ շրջաններից չտեղահանված 226,000 հայերի թիվը, իսկ մնացյալ 1,800,000 հայերը ոչնչացան, տեղահանվեցին ու ապաստան գտան Եվրոպայում և Կովկասում՝ լքելով իրենց տներն ու գույքը:

Վիճակագրական հաշվարկների սկզբունքների կիրառմամբ այդ 1,800,000 հայերը կազմում էին 360,000 ընտանիք (1 ընտանիք՝ 5 շունչ), որոնց մեկ քառորդը՝ 90,000 ընտանիքներ բնակվում էին քաղաքներում, իսկ մնացած 270,000 ընտանիքները՝ գավառներում[116]:

Ստորև ներկայացվում է հայ ժողովրդի կրած նյութական վնասների մոտավոր հաշվեկշռի գլխավոր հաշվարկների աղյուսակը[117].

Ա. Գավառների բնակչության կրած վնասները (մեկ ընտանիքի հաշվարկով)	1914թ. գինը	1919թ. գինը
1. Կալվածքներ (տներ, ագարակներ, մթերանոցներ, ջրաղացներ, անտառներ, այգիներ, թթենու տնկարաններ)	475	2850
2. Կահ–կարասի (կարասի, հագուստեղեն և գոհարեղեն, գույք)	600	3000
3. Երկրագործական գործիքներ (արոր, սայլ և կառք)	300	1500
4. Մեկամյա հունձքերի կորուստ (հաշվարկը կատարվել է Թուրքիայի երեսփոխանական ժողովի 1911 թ. տարեկան պաշտոնական հաղորդագրությունում տեղ գտած վիճակագրության համաձայն, ըստ որի հայկական վեց գավառների վճարված տուրքը՝ տասնորդը, կազմել էր 992,583 թուրքական ոսկի: Ըստ հաշվարկի յուրաքանչյուր հայ ընտանիքի մեկամյա հունձքի արժեքը կազմել է 1488 դահեկան կամ 338 ֆրանկ)	-	338
5. Արջառ. Յուրաքանչյուր ընտանիքի համար հաշվարկվել է		
ա. Վարող արջառ – 1,5 զույգ (1 զույգ եզը 10 թուրքական ոսկի (230 ֆրանկ) արժեքով)	375	3000
բ. Տնային այլ կենդանիներ (կով, հորթ, ձի)	187,5	1500
գ. Ոչխար և այծ (ըստ հաշվարկների յուրաքանչյուր ընտանիք հարկ է վճարել 14 ոչխար և այծ պահելու համար, որը կազմել է 55 դահեկան): Մեկ ոչխարի կամ այծի գինը կազմել է 20 ֆրանկ	280	1680
6. Պարեն (հաշվարկվել է յուրաքանչյուր ընտանիքի 6 ամսվա սննդամթերքի և անասունների կերի արժեքը)	287,5	2875
7. Դրամագլուխ (ծախսվող դրամագլուխը)		300
Մեկ ընտանիքի կրած վնասները		17043
Գավառներում ապրող 270,000 ընտանիքների կրած վնասները		4,601,610,000

[116] Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին (քննիչ հանձնաժողովի փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ Զաքարյան Ա., Ե., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, հավելված, էջ 222-223

[117] Նույն տեղում, էջ 223-225:

Բ. Քաղաքների բնակչության վնասները և վերականգնման համար նրանց կարիքները (մեկ ընտանիքի հաշվարկով)		
8. Կալվածքներ (բնակարաններ, մենատներ, վաճառատներ, հյուրանոցներ, գործարաններ, արհեստանոցներ, խանութներ, ջրաղացներ, պարտեզներ, այգիներ և անտառներ)	1900	15200
9. Կահ–կարասի (կահույք, հագուստեղեն և գոհարեղեն, գույք)	1800	9000
10.Պարեն (վեց ամսվա հաշվարկով)	575	5750
11.Դրամագլուխ (առևտրականների, արվեստագետների և արհեստավորների արժեքորեր, ապրանքներ և հիմնադրամ)	-	6000
Մեկ ընտանիքի կրած վնասը		35950
Քաղաքային բնակչության 90000 ընտանիքների կրած վնասը		3.235.500.000

Գ. Մարդկային կորուստներ		
12. Հատուցումներ մեկ միլիոն ոչնչացված մարդկանց վերապրող ժառանգներին (իսկ նրանց բացակայության դեպքում՝ ազգին), յուրաքանչյուր մարդուն 5000 ֆրանկի չափով		5.000.000.000
13. Հատուցումներ 50000 հաշմանդամներին, վիրավորներին և անբուժելի հաշմանդամներին, յուրաքանչյուրին 5000 ֆրանկի չափով		250.000.000
14. Հատուցումներ 346350 աքսորվածների ժառանգորդներին, յուրաքանչյուրին 1000 ֆրանկի չափով		346.350.000
15. Հատուցումներ աքսոր վերապրողներին, արտասահմանում ապաստանածներին, որոնք զրկվել են աշխատանքից և սեփականության իրավունքից, 800000 մարդու կամ 160000 ընտանիքի հաշվարկով, յուրաքանչյուր ընտանիքին 4000 ֆրանկի չափով		640.000.000
16. Հատուցումներ կաշառակերության և բռնագրավման և բռնագրավման հետևանքով կրած վնասների		200.000.000
17. Արտասահմանում ապաստան գտած գաղթականներին (հիվանդանոցների, որբանոցների և առողջապահական հաստատությունների պահպանության և մատակարարման համար)		200.000.000
18. Հատուցումներ ազգային և կրոնական հաստատությունների ամբողջական կամ մասնակի ավերումների համար, այդ թվում՝ 83 առաջնորդարաններ, 1860 եկեղեցի և մատուռ, 229 վանքեր, 26 վարժարաններ և դպրեվանքեր, 1439 դպրոցներ, 42 որբանոցներ, իրենց գույքով, ինչպես նաև ծեռագիր մագաղաթներ և պատմագեղարվեստական հուշարձաններ և արժեքներ		75.000.000
19. Զրանցքներ, աղբյուրներ, ջրհորներ և այլ կառույցներ		50.000.000
Ընդամենը		6.761.350.000

Ընդամենը գավառների բնակչության կրած վնասները՝ 4.601.610.000
Ընդամենը քաղաքների բնակչության վնասներ՝ 3.235.500.000
Ընդամենը ընդհանուր վնասներ՝ 6.761.350.000
Ընդհանուր գումար՝ 14.598.460.000 ֆրանկ*

* Ս. Վրացյանի նշված աշխատությունում արևմտահայերին նախատեսվող գումարը կազմում է 14 մլրդ 598 մլն 510 հազ. ֆրանկ: Նույնն է նաև Ա. Սահարոնյանի և Պ. Նուբարի Փարիզի կոնֆերանսում արված զեկույցում՝ Tableau approximatif des Reparations et indemnitns Pour les Dommages subis par la Nation Armenienne en Armenie de Turquie et Dans la Republique Armenienne Du caucase, Paris, 1919. Սակայն պետք է հաշվի առնել, որ այդ հաշվարկները մոտավոր են:

Այսպիսով, խաղաղության վեհաժողովին Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի կողմից ներկայացված հայերի նյութական պահանջների վերաբերյալ հուշագրում հայ ժողովրդին թուրքերի հասցրած վնասները կազմում են 19 մլրդ 130 մլն 932 հազ. ֆրանկ (1919 թ. Ֆրանսիայում գործող գների և ֆրանկի փոխարժեքին համապատասխան), որից Արևմտյան Հայաստանին բաժին է ընկնում 14 մլրդ 598 մլն 460 հազ., իսկ Հայաստանի Հանրապետությանը և Կովկասի հայաբնակ շրջաններին՝ 4 մլրդ 532 մլն 472 հազ. ֆրանկ:

Պետք է նշել, որ Առաջին Աշխարհամարտում հայ ժողովրդի կրած կորուստների հաշվարկի գործը սկսվել էր իրականացվել դեռ 1918 թ. վերջին: Մուդրոսի զինադադարի կնքումից մեկ օր անց՝ 1918 թ. հոկտեմբերի 31-ին Թիֆլիսում կայանում է Հայկական հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի նիստը Հվ. Թումանյանի գլխավորությամբ: Խորհուրդը, լսելով քարտուղար Հ. Համբարձումյանի զեկուցումը Հաշտության համագումարին հայ ժողովրդի կողմից մի հուշագիր ներկայացնելու և այդ հուշագիրը կազմելու գործի կազմակերպության մասին, միաձայն որոշում է հուշագիրը կազմելու գործը իրագործելու համար ընտրել մի հանձնաժողով՝ բաղկացած խորհրդի գործադիր մարմնի անդամներից, ինչպես նաև Պ. Աբելյան, Ջ. Տեր–Գրիգորյան, Թ. Խզմալյան, Ն. Սարգսյան[118]:

1918 թ. նոյեմբերի 2-ին կայանում է հուշագիրը կազմող հանձնաժողովի նիստը, որտեղ որոշվեց հուշագիրը կազմակերպելու խնդիրը քննելու նպատակով նշանակել մի այլ նիստ, որին հրավիրել մասնակցելու Հովսեփ Խունունցուն, Մ. Բունիաթյանին, պրոֆեսոր Յ. Ղամբարյանին, տնտեսագետ Հ. Փիրալյանին, Մ. Բերբերյանին, գաղթականական գործի վարիչ Հ. Արղությանին, Ազգային խորհրդի նախագահին և Ի. Դոլուխանյանին:

Այս հանձնաժողովի հիման վրա և զուգահեռ 1918 թ. նոյեմբերի 21-ին Թիֆլիսում գործող մի շարք հայրենակցական միությունների նախաձեռնությամբ և Հայ հայրենակցական միությունների կենտրոնական խորհրդի ընդհանուր ժողովի կողմից ստեղծվում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովը»: Քննիչ հանձնաժողովի կենտրոնական բյուրոյի կազմում ընդգրկվում են Լեոն, Խ. Վերմիշյանը, Տ. Հովհաննիսյանը, զինվորական ներկայացուցիչը, ֆինանսական ներկայացուցիչը և Վրաստանում ՀՀ

[118] Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, փ. N 5, էջ 24-25:

ներկայացչության ղեկավար Ա. Ջամալյանը: Բյուրոյի նախագահ է ընտրվում Հվ. Թումանյանը[119]:

Հանձնախումբը ստանում է նաև կառավարության թույլտվությունը և, փաստորեն, գործում որպես պետական իրավասություններով օժտված հանձնախումբ: 1919 թ. հունիսի 24-ի օրենքի համաձայն հանձնաժողովի կողմից «հավաքված ու մշակված նյութերը կազմում են Հայաստանի կառավարության սեփականությունը»[120]:

Ունենալով պետական կարգավիճակ, հանձնաժողովը նաև որոշակի ֆինանսավորում է ստացել Հայաստանի Հանրապետության կառավարությունից: Հատկանշական է, որ հանձնաժողովի աշխատանքներով հետաքրքրվել և օժանդակելու ցանկություն է հայտնել Թիֆլիսում ամերիկյան հյուպատոսը[121]:

Հանձնաժողովի մշակած փաստաթղթից էլ ձևավորվեց 1919 թ. փետրվարին Փարիզի խորհրդաժողովին դաշնակից տերություններին հայկական պատվիրակության ներկայացրած հուշագիրը: Հանձնաժողովի անդամներից տնտեսագետ Հ. Փիրալյանը որպես խորհրդական ընդգրկվել էր Փարիզ մեկնող ՀՀ պատվիրակության կազմում:

Փարիզում անհրաժեշտություն էր հուշագրի տեքստը համաձայնեցնել Արևմտահայոց ազգային պատվիրակության հետ: Այդ նպատակով ստեղծվում է նոր հանձնաժողով Գ. Նորատունկյանի գլխավորությամբ, որը և ստանձնում է հուշագրի վերջնական տեքստի մշակման գործը:

1919 թ. ապրիլի 22–ին ներկայացնելով Ա. Ահարոնյանին «Tableau approximatif des rnparations et indemnitns pour les dommages subis par la nation armnnienne en Armnnie de Turquie et dans la Rnpublique Armnnienne du Caucase» բրոշյուրի տպագիր օրինակը, որտեղ ամփոփված էին վերոնշյալ թվերը, Հ. Փիրալյանը պարզաբանում է այն մեթոդը, որը օգտագործվել է հայ ժողովրդի կորուստները և փոխհատուցման չափը որոշելու հաշվումների հիմքում. «Այլ փաստական տվյալների բացակայության պայմաններում բնակչության կրած վնասների հաշվումների հիմքում դրվել է բյուջետային համակարգը: Որպես չափման միավոր վերցվել է ոչ թե անհատը, այլ տնտեսությունը:

---

[119] Արևմտահայոց Ազգային Համագումարի կողմից 2013 թ. // http://ncwarmenians.org/hy/ReparationIssue

[120] Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, փ. N 123, էջ 188:

[121] Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի աշխատանքների մասին, տե՛ս Թումանյան Հվ., Երկերի լիակատար ժողովածու, հ. XX, Ե., 1999, նաև՝ Արևմտահայոց Ազգային համագումարի կողմից 2013 թ. // http://ncwarmenians.org/hy/ReparationIssue

Տնտեսությունների թիվը որոշվել է յուրաքանչյուր շրջանում բնակչության թիվը հինգի բաժանելու միջոցով, այն ենթադրությամբ, որ յուրաքանչյուր տուն բաղկացած է միջինը հինգ շնչից»[122]:

Քննիչ հանձնաժողովը Փարիզում հայկական պատվիրակության կողմից հուշագիր ներկայացնելուց հետո էլ, դեռ որոշ ժամանակ շարունակել է աշխատել:

1922 թ. Ջենովայի կոնֆերանսում Խորհրդային Միությունը՝ ի դեմս Ռուսաստանի պատվիրակության, որի կազմում էր և Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց ժողկոմ Ա. Բեգզադյանը, հարց բարձրացրեց ու պահանջներ ներկայացրեց նաև ինտերվենտներից կրած վնասների փոխհատուցման մասին: Անարդյունք ավարտված այս կոնֆերանսից որոշ ժամանակ անց հարցն արծարծվում է մեծ տերությունների դիվանագիտական շրջանակներում: Շրջանառության մեջ է դրվում նաև Թուրքիայի կողմից Հայաստանին հասցված նյութական կորուստների հարցը: Հայտնի է, որ 1924 թ. մարտի 15-ից ապրիլի 23-ը Հայաստանի կառավարական հանձնաժողովը ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի պահանջով պատրաստում է «Զեկույց 1914-1924 թթ. հայ բնակչությանը թուրքական կառավարության հասցրած նյութական վնասների մասին» վերնագրով՝ նշումով, որ օգտագործվել են նաև Քննիչ հանձնաժողովի նյութերը»[123]:

Ա մփոփելով կարող ենք նշել՝

1) Քննիչ հանձնաժողովի կողմից ստեղծված փաստաթուղթը ունի պետական, իրավական կարգավիճակ, հանդիսանում է ՀՀ սեփականությունը: Հայկական երկու պատվիրակությունների կողմից հիմնական գծերով համաձայնեցված այս փաստաթուղթը ներկայացվել է փարիզյան խորհրդաժողովին և, բնական է, իր ազդեցությունն է թողել Սևրի պայմանագրի լքյալ գույքին վերաբերող 144-րդ հոդվածի վրա: Հուշագիրը մինչ այժմ չի կորցրել իր արդիականությունը և հանդիսանում է Առաջին աշխարհամարտի տարիներին ցեղասպանության արդյունքում հայ ժողովրդի կրած նյութական վնասների հատուցման կարևորագույն փաստաթղթերից մեկը:

2) Հայ հետազոտողներից Ա. Մարուքյանի կարծիքով Փարիզի խորհրդաժողով ներկայացված հուշագիրը պետք է ճշգրտվի նաև ըստ

---

[122] Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին, փ. N 5, էջ 208-209:

[123] Казахецян В. О материальном ущербе, нанесенном армянскому народу в Закавказье и в Карсской области турецкими интервентами., Вестник общественних наук, АН АрмССР, 1987 N2, с. 81-88.

Հոլոքոստի հետևանքով Գերմանիայի կողմից հրեաներին հասցված վնասների հատուցման փաստաթղթերի, մասնավորապես ըստ 1952 թ. սեպտեմբերի 10-ին կնքված Լյուքսեմբուրգյան համաձայնագրի, որով Գերմանիան պարտավորվում էր սկսել Հոլոքոստի հետևանքով հրեա ժողովրդին հասցված նյութական վնասների հատուցումը: Նման հաշվարկներ կատարելիս պետք է անպայմանորեն հաշվի առնել Թուրքիայի կողմից Լոզանի պայմանագրի դրույթները կոպտորեն խախտելու միջոցով հայկական համայնքի կալվածքների ապօրինի բռնագրավման հանգամանքը: Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի զանգվածային ունեզրկումը կանխեց այդ նյութական հարստության բազմապատկման հնարավորությունը: Ցեղասպանությունից հրաշքով փրկված տասնյակ հազարավոր հայեր, կորցնելով իրենց ունեցվածքը, ստիպված էին արտասահմանում ամեն ինչ սկսել զրոյից՝ կրելով անասելի սոցիալական զրկանքներ: Այդ իսկ պատճառով, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքները հաշվարկելիս չպետք է մոռանալ նաև բաց թողնված շահույթի մասին: Նյութական կորուստների հետևանքների հետ կապված պետք է հաշվարկվեն նաև անցած տասնամյակների ընթացքում այդ գումարի վրա ավելացած թե՛ սղաճը և թե՛ բանկային տոկոսները, որով միայն կամբողջացվի հայերին հասցված նյութական կորուստների վերջնական թիվը[124]:

Լրացում կատարելով վերոհիշյալին, մենք կարծում ենք, որ դրան պետք է ավելացնել նաև հետևյալը. ինչպես գիտենք 1921-1936 թթ. Խորհրդային Հայաստան են ներգաղթել ավելի քան 42 հազ. տարագիր հայ, իսկ 1946-1948 թթ.՝ավելի քան 89 հազ. մարդ և այլն: Հայրենադարձների բացարձակ մեծամասնությունը եղել են ցեղասպանությունից փրկվածներ, որոնք հաստատվել էին տարբեր երկրներում: Նրանց ներգաղթը կազմակերպել և ծախսերի զգալի մասը հոգացել են Խորհրդային Հայաստանը (ԽՍՀՄ կառավարության թույլտվությամբ և աջակցությամբ), արտասահմանում գործող հայկական և հայանպաստ տարբեր բարեգործական կազմակերպությունները և այլն: Հայրենադարձներին տրամադրել են հող, լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ, բնակարաններ, վարկեր, շինանյութ և այլն: Կառուցվել են նոր բնակավայրեր՝ Նոր Արաբկիր, Նոր Բութանիա, Նուբարաշեն և այլ

[124] Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետևանքները և դրանց հաղթահարման ուղղությամբ կատարվելիք հաջորդ քայլերը // http://www.azg.am/AM/2015032011

ավանները[125]: Այսպիսով, ցեղասպանության հետևանքով տարագրված արևմտահայության մի հատված ներգաղթել է Խորհրդային Հայաստան, որոնց նյութական խնդիրները բավարարելու համար և ՀԽՍՀ կառավարությունը, և՝ բարեգործական կազմակերպությունները կատարել են ծախսեր, որոնք կարող էին չլինել, եթե չլիներ ցեղասպանությունն ու նրա հետևանքները: Եվ, ուրեմն այդ ծախսերը, նաև ներգաղթյալների անձնական ծախսերը պետք է ներառվեն նյութական վնասների փոխհատուցման մեջ և որպես լրացուցիչ պահանջ ներկայացվեն Թուրքիային:

3) Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության իրավահաջորդը (1990 թ. օգոստոսի 23-ի ՀՀ անկախության հռչակագրի 5-րդ կետով, իսկ հղման միջոցով նաև ՀՀ Սահմանադրությամբ, ամրագրված է հետևյալը. «Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը ... զարգացնելով 1918 թ. մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդական ավանդույթները... հռչակում է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբ): 1919 թ. հունիսի 24-ի օրենքի համաձայն քննիչ հանձնաժողովի կողմից «հավաքված ու մշակված նյութերը կազմում են Հայաստանի կառավարության սեփականությունը» և ուրեմն լինելով նաև ներկայիս ՀՀ-ի սեփականությունը, որի վրա հիմնվելով վերջինս կարող է համայն հայության անունից Թուրքիայից նյութական վնասների հատուցում պահանջել: Բացի այդ դեռևս 1919 թ. մայիսի 28-ին ՀՀ խորհրդարանը իր ձայնը Փարիզի խորհրդաժողովին ավելի լսելի դարձնելու նպատակով կատարեց Միացյալ և Անկախ Հայաստանի հռչակումը դեռևս գոյություն չունեցող մեկ միասնական պետության մեջ միավորելով Արևելյան և Արևմտյան Հայաստանները: Այս առումով ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, անկախ Սևրի պայմանագրից և Վ. Վիլսոնի գծած իրավարար սահմանագծից, շարունակում է պահանջատեր լինել Արևմտյան Հայաստանի հանդեպ:

---

[125] Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980 թթ. Ե., 1985, էջ 240-242, նաև Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Ե., «Զանգակ 97» հրատ., 2007, էջ 245-246:

8. ՍԱՆ ՌԵՄՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՐՑԸ

1920 թ. ապրիլի 19-26-ին Իտալիայի Սան Ռեմո քաղաքում տեղի ունեցած Անտանտի տերությունների Գերագույն խորհրդի նիստը մի շարք այլ հարցերի թվում քննարկեց նաև Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախագծի մշակման խնդիրը: Կոնֆերանսին մասնակցում էին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը, արտգործնախարար Ջ. Քերզոնը, Ֆրանսիայի վարչապետ Ա. Միլերանը, Իտալիայի վարչապետ Ֆ. Նիտտին, Ֆրանսիայում Ճապոնիայի դեսպան Մացուին և այլք: ԱՄՆ-ի ներկայացուցիչը մասնակցում էր դիտորդի կարգավիճակով:

Սան Ռեմոյի կոնֆերանսում քննարկվեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի, Ազգերի լիգայի կողմից արաբական երկրներին տրվելիք մանդատի, Գերմանիայի կողմից Վերսալի պայմանագրի դրույթների կատարման, Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ դաշնակիցների դիրքորոշման հարցերը:

Վեհաժողովի որոշմամբ Անգլիան ստացավ Իրաքի և Պաղեստինի, Ֆրանսիան՝ Սիրիայի և Լիբանանի մանդատները: Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև էր բաժանվում Մոսուլի նավթային հանքերը: Կոնֆերանսը որոշում ընդունեց նաև Խորհրդային Ռուսաստանի հետ առևտրական հարաբերությունները վերականգնելու մասին:

Հայաստանի վերաբերյալ հարցերը քննարկելիս թույլատրվել էր նաև Ա. Ահարոնյանի և Պ. Նուբարի մասնակցությունը[126]: Հետաքրքրական է, որ Վ. Վիլսոնը հեռագրեց Սան Ռեմո և հիշեցրեց Անտանտի տերություններին հայկական պետություն ստեղծելու իրենց պարտքի մասին: Դեռևս 1919 թ. հոկտեմբերին, երբ Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը այցելեց Լոնդոն, Անգլիայի արտգործնախարար լորդ Ջ. Քերզոնը որոշակիորեն ասաց, որ անհնար է ստեղծել Հայաստան՝ համաձայն 1919 թ. փետրվարի 12-ի հուշագրի: Դրա փոխարեն դաշնակիցները նախատեսում էին ստեղծել Հայաստան՝ Կովկասյան

[126] Սան Ռեմոյի կոնֆերանսում Հայաստանին և Հայկական հարցին առնչվող խնդիրների մասին առավել մանրամասն տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 612-672:

Հայաստանին ավելացնելով Թուրքահայաստանի մի մասը՝ ելքով դեպի Սև ծով, իսկ Կիլիկիան տրվում էր Ֆրանսիային[127]:

Սակայն Հայկական հարցի լուծման բարդացումը պայմանավորված էր նրանով, որ դեռ 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի թուրքական խորհրդարանը, որի անդամների ճնշող մեծամասնությունը (120-ից 95-ը) Մ. Քեմալի կողմնակիցներն էին[128] ընդունեց Թուրքիայի անկախության հռչակագիրը՝ «Ազգային ուխտը»*, որը բանաձևեց 1919 թ. հուլիս-սեպտեմբերին Էրզրումի և Սեբաստիայի համագումարների ծրագրային հարցադրումները, քեմալական ազգայնական պայքարի նպատակներն ու ծրագրային դրույթները, որտեղ առաջին պլան էր մղվում թուրքական կայսրության ամբողջականությունը փրկելու ձգտումը: Էրզրումի համագումարի որոշման հենց առաջին կետում ընդգծվում էր Անատոլիայի վեց վիլայեթներում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում հայկական իշխանության ստեղծումը կանխելու անհրաժեշտությունը, որը հռչակվում էր որպես թուրքերի սրբազան գործ: Մ. Քեմալը անհնարին էր համարում Հայաստանին կամ որևէ այլ պետության գեթ մի թիզ հող հանձնելը և ասում, որ մենք կապրենք կամ կկործանվենք Ազգային ուխտի հետ միասին[129]:

Դրանից հետո դաշնակից տերությունների անունից 1920 թ. մարտի 16-ին օկուպացրին Կ. Պոլիսը և ցրեցին թուրքական պառլամենտը[130]: Արդեն 1919 թ. կեսերից Անատոլիայի վրա իր վերահսկողությունը հաստատած Մ. Քեմալից զինված ուժի միջոցով որևէ բան ստանալ Հայաստանի Հանրապետությունն ի վիճակի չէր: Իսկ Անտանտի տերությունները Սան Ռեմոյում ընդունած իրենց որոշումները անկարող էին պարտադրել Թուրքիային, որովհետև այնտեղ, բացի Կ. Պո-

---

[127] Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 307:

[128] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 134:

* Ազգային ուխտի («անկախության պայքարի ծրագիր», որն իրականում արտացոլում էր քեմալական շարժման ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները) հիմքում ընկած էր «ազգային սահմանի» սկզբունքը, որը պահանջում էր Թուրքիայի տարածք ճանաչել այն բոլոր հողերը, որոնք Օսմանյան կայսրության կազմում էին Մուդրոսի զինադադարի կնքման պահին՝ առանց արաբական երկրների (մոտավորապես այժմյան Թուրքիայի տարածքը): «Ազգային ուխտի» 2-րդ կետը, որը վերաբերում էր Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններին, ուղղված էր այդ տարածքների նկատմամբ հայերի և վրացիների ունեցած անվիճելի իրավունքների դեմ:

[129] Кемаль М., Путь Новой Турций, т. I, М.: Литиздат НКИД, 1929, с. 63-64, 87-88.

[130] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ. 135:

լսից և առափնյա մի շարք շրջաններից դրության տերը ոչ թե սուլթանն էր, այլ հենց նույն Անտանտի դեմ պայքարող Մ. Քեմալը:[131]

Իր իշխանությանը օրինական բնույթ տալու նպատակով, Մ. Քեմալը դաշնակից պետությունների կողմից թուրքական խորհրդարանը ցրելուց հետո, խորհրդարանական լրացուցիչ ընտրություններ անցկացրեց Անկարայում: Օսմանյան սահմանադրությամբ չնախատեսված այդ նոր պառլամենտը 1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում իրեն հռչակեց որպես Թուրքիայի Ազգային մեծ ժողով (ԹԱՄԺ): Գործադիր իշխանության նախագահ ընտրվեց Մ. Քեմալը: ԹԱՄԺ-ը հայտարարեց, որ չի ճանաչում Կ. Պոլսի կառավարությունը և երկրում ամբողջ իշխանությունը վերցնում է իր ձեռքը[132]: 1921 թ. հունվարի 20-ին մեջլիսում ընդունվեց «Հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը, որով իրավաբանորեն ամրագրվում էր ԹԱՄԺ-ի՝ որպես երկրի օրենսդիր ու գործադիր իշխանության գերագույն մարմնի դիրքը և հռչակում էր ազգի գերիշխանության սկզբունքը[133]: Դրանով ԹԱՄԺ-ը ցանկանում էր իրեն հաղորդել օրինական (լեգիտիմ) տեսք՝ որպես այլընտրանք Կ. Պոլսի սուլթանական կառավարությանը:

Այս պայմաններում Սան Ռեմոյում Հայկական հարցի քննարկման ժամանակ դրվեց այն հարցը, որ այժմ էրզրումը հանդիսանում է թուրք ազգայնականների կենտրոնը, և ուրեմն որևէ մեկը պետք է նրանց դուրս բերի այնտեղից: Դ. Լլոյդ Ջորջը պարբերաբար կրկնում էր, որ դաշնակից տերությունները ի վիճակի չեն ուժեր ուղարկելու հայերին օգնելու համար, իսկ եթե էրզրումը զիջվի հայերին, ապա միակ պատասխանը, որ կտան թուրքերը, կլինի հայերին կոտորելը: Ապրիլի 20-ի նիստում նա ուղղակի հայտարարեց, որ հայերը պետք է զինվեն և հնարավորություն ունենան անձամբ գործելու: Եթե հայերը ի վիճակի չեն պաշտպանելու իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում նման ժողովրդից ոչ մի օգուտ չկա, և դաշնակից կառավարություններից ոչ մեկը պատրաստ չի լինի օգնելու նրան թեկուզ մեկ գումարտակով[134]:

---

[131] Կիրակոսյան Զ., Սահակյան Ռ., Սան Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1972, թիվ 3, էջ 20-22:

[132] Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Ե., ՀՀ ԳԱԱ, «Զանգակ 97», 2001, էջ 20:

[133] Նույն տեղում:

[134] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 139:

Ֆրանսիացի դիվանագետ Բերտելոն իր հերթին ասաց, որ էրզրումը պետք է գրավել զենքի ուժով, իսկ ինքը չի հավատում որ հայերը, որոնք չկարողացան պաշտպանվել կոտորածից, դեռ մի բան էլ կշարժվեն թշնամական երկիր և կգրավեն մի ամրոց, որ ռուսական բանակներին է դիմադրել[135]:

Պատասխանելով այն պնդումներին, որ առանց էրզրումի հայերը չեն կարող գոյություն ունենալ, Լլոյդ Ջորջը ասաց. «Եթե Հայաստանը չի կարող գոյություն ունենալ առանց էրզրումի, ուրեմն հայերը չեն կարող գոյություն ունենալ ընդհանրապես: Տերությունները չեն կարող վերցնել այն և հանձնել հայերին, իսկ նրանք իրենք չեն կարող վերցնել»: Այնուամենայնիվ նա այն կարծիքին էր, որ անհնար է նոր Հայաստան ստեղծել առանց Հայաստանին համապատասխան միջոցներ տրամադրելու[136]:

Պ. Նուբարը և Ա. Ահարոնյանը մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի համոզեն էրզրումը տալ Հայաստանին, քանի որ առանց նրա անհնար է պատկերացնել Հայաստանի գոյությունը և անվտանգությունը: Նրանք փորձում էին համոզել Կոնֆերանսի գերագույն խորհրդին, որ հարկ եղած պարագայում հայերը կարող են ոտքի հանել 40 հազարից ոչ պակաս բանակ և գրավել էրզրումը մյուս նահանգների հետ միասին, եթե դաշնակիցները տրամադրեն անհրաժեշտ զենք զինամթերք և հանդերձանք[137]: Դաշնակիցները վախենալով, որ առանց էրզրումի ՀՀ-ն կարող են հրաժարվել Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելուց, որոշեցին այն տալ հայերին:

Ի վերջո, ապրիլի 24-ին տերությունների ղեկավարները որոշեցին Հայաստանի մանդատն առաջարկել ԱՄՆ-ին, իսկ հրաժարման դեպքում առաջարկվում էր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին լինել իրավարար Հայաստանի և Թուրքիայի սահմանների հաստատման հարցում: Խոսքը էրզրումի, Բիթլիսի, Վանի և Տրապիզոնի վիլայեթների մասին էր, որոնք պետք է մտնեին Հայաստանի մեջ՝ ելքով դեպի Սև ծով:

1920 թ. մայիսի 17-ին Վ. Վիլսոնը Փարիզում ԱՄՆ-ի դեսպանի միջոցով Անտանտի Գերագույն խորհրդին հայտնում է իր համաձայնությունը՝ լինել ապագա Հայաստանի սահմանների իրավարարը: Եվ մայիսի 24-ին դիմում է ԱՄՆ-ի Կոնգրեսին ուղերձով՝ Հայաստանի մանդատն ընդու-

---

[135] Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ., նշվ. հդվ., էջ 23:
[136] Նույն տեղում:
[137] Նույն տեղում, էջ 51-56:

նելու առաջարկով: Վ. Վիլսոնը տեսնում է, որ Կոնգրեսի մեծամասնությունը հանդես է գալիս Հայաստանի մանդատի դեմ՝ այն հիմնավորումով, թե ԱՄՆ-ը Հայաստանում չի կարող պահել 100 հազարանոց խոշոր բանակ[138]:

ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների խորհրդաժողովի 1920 թ. մայիսի 27-ին պատրաստում է մի բանաձև, որով 4 դեմ, 11 կողմ ձայնով Կոնգրեսի երկու պալատներին էլ հանձնարարում է Հայաստանի մանդատը ստանձնելու իրավունք չտալ գործադիր իշխանությանը: Որպես հանձնարարականի կատարում՝ Սենատը երկար վիճաբանությունից հետո մայիսի 29-ին, 52 դեմ, 23 կողմ ձայնով, հուլիսի 1-ին ընդունում է հանձնախմբի նախագահ (հանրապետական) Լաջի (Henry Cabot Lodge) բանաձևը, որ «հարգանքով կհրաժարվի նախագահին տալ իրավասություն՝ ընդունելու Հայաստանի մանդատը»[139]: Սենատոր Սմիթը հայտարարեց, որ Մեծ Բրիտանիան իր իշխանության տակ ունի Միջագետքը, Ֆրանսիան՝ Սիրիան, որոնք հարուստ են նավթով ու պղնձով, և մտահոգություն հայտնեց, որ ԱՄՆ-ը կհանդիսանա որպես արգելապատնեշ՝ ընդդեմ ռազմատենչ Խորհրդային Ռուսաստանի, ում հետ ռազմական բախումը կդառնա անխուսափելի: Նա ավելացրեց նաև, որ ԱՄՆ-ին առաջարկվում է մի երկիր, որը ոչինչ չի բերելու, բայց խլելու է չափազանց շատ գումարներ և մարդկային կյանքեր: Սենատոր Թոմասը իր հերթին ավելացրել է. «ԱՄՆ-ը այնքան դրամ չունի, որ չիմանա թե ինչ անել դրա հետ» և, որ միայն Հայաստանի մանդատը վերցնել, նշանակում է նախօրոք կանխորոշել մանդատի խղճուկ ապագան[140]:

Ի սկզբանե խոսքը միայն Հայաստանի մանդատի մասին չէր, և խոսելով Հայաստանի մասին՝ ԱՄՆ-ը դրա տակ հասկացել է նաև ամբողջ Թուրքիան և Անդրկովկասը[141]:

Այսպիսով, Հայաստանի մանդատի մերժումն ուներ իր տնտեսական և քաղաքական դրդապատճառները. նախ Հայաստանի տնտեսական հնարավորությունները, նրա հանքային հանածոները անբավարար էին թվում ամերիկացիներին, որի հետ համաձայն ենք լիովին և, երկրորդ, նրանց զսպում էր ամրապնդվող Խորհրդային Ռուսաստանի դեմ դուրս գալու հնարավորությունը: Վերջինիս առաջխաղացումը

---

[138] Շիրինյան Լ., Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (22), 2008, էջ 108:
[139] Նույն տեղում էջ 109:
[140] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 225-227:
[141] Оганян Д. А. Стереотипы Армянской историографии, Ереван: НГ, 2010, с. 31-32.

Անդրկովկասում և նրա մերձեցումը քեմալական Թուրքիայի հետ փոխել էր տարածաշրջանի միջազգային դրությունը, որին ավելացավ նաև Մերձավոր Արևելքում Անտանտի տերությունների միջև առկա հակասությունների սրումը, որի հետ համաձայն ենք, սակայն էական վերապահումներով:

Պատմագիտության մեջ տարածում ունի այն կարծիքը, որ այս հանգամանքներն էլ ստիպեցին ԱՄՆ-ի սենատին մերժել Հայաստանի մանդատն ընդունելու Վ. Վիլսոնի առաջարկը, որը սակայն, քիչ համոզիչ է:

Այս հարցում մեր մոտեցումը հետևյալն է՝

1) Ինչպես հայտնի է, մեծ տերությունների միջև հակասություններ գոյություն ունեին ոչ միայն Մերձավոր Արևելքում, այլև Եվրոպայում, Աֆրիկայում, Չինաստանում և այլուր, որտեղ փոխզիջումների միջոցով, այնուամենայնիվ, հնարավոր է եղել ապահովել մեծ տերությունների համագործակցությունը:

2) Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև ռազմական բախման անթույլատրելիությունը նույնպես հիմնազուրկ է, քանի որ պատերազմական գործողություններ այն ժամանակ արդեն իսկ գոյություն են ունեցել, երբ 1918-1922 թթ. Անտանտի տերությունները, որոնց թվում նաև ԱՄՆ-ը ներխուժել են Ռուսաստանի տարածք բոլշևիկյան հեղափոխությունը ճնշելու նպատակով: Դա ցույց է տալիս, որ այս դեպքում ԱՄՆ-ը չխուսափեց Խորհրդային Ռուսաստանի դեմ ռազմական բախումից:

3) ՀՀ-ում 1920 թ. մայիսյան հայտնի բոլշևիկյան ապստամբությունը նույնպես չէր կարող լուրջ ազդեցություն թողնել մանդատի մերժման հարցում, որովհետև, ինչպես գիտենք, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ուղեկցվում էր հեղափոխությունների ուժգին ցնցումներով: Հեղափոխություններ եղան ոչ միայն Ռուսաստանում, այլև Գերմանիայում (1918 թ.), հեղափոխական շարժումներ՝ Ֆինլանդիայում, Ավստրիայում, Չեխոսլովակիայում, Մերձբալթյան երկրներում: Կազմավորվեցին Բավարիայի և Հունգարիայի խորհրդային հանրապետությունները, որոնք շուտով ճնշվեցին, և Եվրոպայում ԱՄՆ-ի հովանավորությամբ իր գործունեությունը ծավալեց Ամերիկյան նպաստամատույց վարչությունը (ԱՆՎ, ARA), իսկ 1924 թ. սկսվեց իրագործվել առաջին աշխարհամարտից ավերված Գերմանիայի, ինչու չէ նաև Եվրոպայի տնտեսության վերականգնման «Դոզի կամ Դաուեսի ծրա-

գիրը»՝ ելնելով այն կանխադրույթից, որ սովը և ավերվածությունները մարդկային զանգվածներին առավել ընկալունակ են դարձնում կոմունիստական գաղափարախոսություններին:

4) 1920 թ. հայ-թուքական պատերազմը նույնպես չէր կարող մանդատի մերժման պատճառ հանդիսանալ (չնայած դաշնակից տերությունները հակված չէին հայերին ռազմական օգնություն ցույց տալ և զորքերը մտցնել Արևմտյան Հայաստան): Այն սկսվել էր սեպտեմբերին, իսկ Հայաստանի մանդատի հարցը մերժվել էր դեռևս մայիսին:

5) Չնայած մանդատային տարածքների բաժանման ժամանակ, ի տարբերություն Անգլիայի և Ֆրանսիայի, ԱՄՆ-ին ոչինչ չհասավ, սակայն մանդատային համակարգը վերջինիս համար ապահովեց «բաց դռների» քաղաքականությունը, այսինքն՝ կապիտալի ազատ մուտքը ենթամանդատային շրջաններ:

6) Հումքի ձեռքբերման և սպառման առումով հետաքրքրություն չներկայացնող Հայաստանը առանց սևծովյան նեղուցների, Անդրկովկասի և նրան հարող տարածքների իրական հետաքրքրություն չէր ներկայացնում ԱՄՆ-ի համար:

7) Սան Ռեմոյի կոնֆերանսը Թուրքիայի հետ ապագա հաշտության՝ Սևրի պայմանագրի հիմքը հանդիսացավ, սակայն մանդատի բացակայության պայմաններում այն Թուրքերի կողմից օր առաջ Հայաստանը ռազմական ուժով ջախջախելու պատճառ դարձավ՝ դրանով, փաստորեն, հայ-թուրքական նոր պատերազմը դարձավ անխուսափելի:

9. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՆԱԽԱԳԱՀ Վ. ՎԻԼՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎԵՃՈՒ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Սևրի պայմանագիրը Առաջին աշխարհամարտի ավարտին վերաբերող վերսալյան համակարգի վերջին պայմանագիրն էր: Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի հիմքում դրվել էին մեծ տերությունների՝ Սան Ռեմոյի վեհաժողովի որոշումները, որոնք քննարկվեցին և հաստատվեցին Փարիզից ոչ հեռու Սևր փոքրիկ քաղաքում՝ 1920 թ. օգոստոսի 10-ին: Պայմանագիրը կնքվեց մի կողմից Թուրքիայի սուլթանական կառավարության, մյուս կողմից՝ գլխավոր դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Թուրքիայի դեմ պատերազմող մի շարք երկրների՝ Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Սերբա-խորվաթա-սլովակյան թագավորության (Հարավսլավիայի),Հեջազի միջև: Հայաստանի Հանրապետության անունից պայմանագիրը ստորագրել է Ա. Ահարոնյանը: Միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը, որպես պայմանագրի մասնակից, դե յուրե (ըստ օրենքի) ճանաչվում էր պայմանագիր ստորագրած մյուս բոլոր պետությունների կողմից:

Պայմանագիրը բաղկացած էր 13 մասից, որոնք բոլորը միասին պարունակում էին 433 հոդված: Այն Թուրքիային զրկում էր իր նախկին տարածքի 3/4 մասից, թուրքական տիրապետությունից ազատվում էին հայերը, արաբները, քրդերը և այլ ժողովուրդներ: Ըստ պայմանագրի, որպես մանդատային տարածք, Ազգերի լիգայի միջոցով Պաղեստինը և Իրաքը տրվում էին Անգլիային, Սիրիան և Լիբանանը՝ Ֆրանսիային: Թուրքիան հրաժարվում էր Արաբական թերակղզու և Հյուսիսային Աֆրիկայի նկատմամբ ամեն տեսակի հավակնություններից, ճանաչում էին Անգլիայի պրոտեկտորատը Եգիպտոսի և Կիպրոսի նկատմամբ: Իտալիային էր անցնում Դոդեկանեզի կղզիները, Հունաստանին՝ Արևելյան Թրակիան՝ Էդիրնեյի հետ, Գալլիպոլի թերակղզին և Իզմիրը: Նեղուցների գոտին ենթարկվում էր լրիվ ապառազմականացման և անցնում էր Անտանտի կողմից ստեղծված նեղուցների կառավարման միջազգային հանձնաժողովի հսկողության

տակ: Սևրի հաշտության պայմանագրի համաձայն՝ Թուրքիային մնում էին Կոստանդնուպոլիսը և շրջակայքը՝ բարեխիղճ կատարման պայմանով, իսկ Ասիական Թուրքիան սեղմվում էր մինչև Արևմտյան Անատոլիայի սահմանը: Վերականգնվում էր կապիտուլյացիոն ռեժիմը, որով դաշնակից տերությունները իրավունք ունեին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին: Սահմանափակվում էր Թուրքիայի զինված ուժերը՝ 50 հազ. զինվոր և 35 հազ. ոստիկանություն[142]:

Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը՝ 88-93-րդ հոդվածները ամբողջությամբ վերաբերում էին Հայաստանին: Մասամբ կամ անուղղակիորեն Հայաստանին կամ հայերին էին վերաբերում նաև 125, 142, 144, 226, 228, 230, 277, 349, 351, 352-րդ հոդվածները[143]:

Սևրի պայմանագրի վերոհիշյալ հոդվածները արտահայտում էին հետևյալը.

88-րդ հոդվածով Թուրքիան Հայաստանը ճանաչում էր որպես ազատ ու անկախ պետություն: 89-րդ հոդվածով Թուրքիան ու Հայաստանը համաձայնում էին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի վիլայեթներում երկու պետությունների միջև սահմանազատումը, ինչպես նաև Հայաստանին դեպի ծով ելք տալու մասին առաջարկը թողնել ԱՄՆ-ի որոշմանը: 90-րդ հոդվածի համաձայն Թուրքիան հրաժարվում է Հայաստանին հանձնված հիշյալ 4 վիլայեթների ամբողջ տարածքի կամ նրա մի մասի նկատմամբ բոլոր իրավունքներից և իրավահիմունքներից: 92-րդ հոդվածով՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները պետք է որոշվեին շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ, իսկ եթե նրանք չկարողանան, սահմանագիծը կորոշեն Գլխավոր դաշնակից պետությունները: 352-րդ հոդվածով Հայաստանին տրվում էր Տրապիզոնի նավահանգստի վրայով ազատ մուտք դեպի Սև ծոց՝ այնտեղ Հայաստանին առհավետ վարձակալության հանձնելով մի տեղամաս:

Հետագայում ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը նշեց հայ-թուրքական սահմանագիծը և 1920 թ. նոյեմբերին այն հանձնեց դաշնակիցներին: Ըստ այդ որոշման հայ-թուրքական սահմանագիծը անցնում էր՝ Կե-

---

[142] Տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М.: Литиздат НКИД, 1927, с. 3-303.

[143] Ամբողջությամբ տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 676-682, նաև՝ Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М.: Литиздат НКИД, 1927, с. 3, 5, 31-32, 38, 41-43, 48, 67, 111-112, 136; ՀՀ ԱԱ, ֆ.450, ց. 2, գ.14:

ռասուն (Կիրասունտ)-Երզնկա-Մուշ-Բիթլիս-Վանա լիճ[144], որով Արևմտյան Հայաստանից մոտ 103,599 հազ. քառ կմ տարածք միանում էր Հայաստանի Հանրապետությանը[145]՝ հայկական անկախ պետությունը կունենար մոտ 160 հազ. քառ. կմ տարածք՝ ելքով դեպի Սև ծով: Վանա լիճ-Մալաթիա-Մարաշ գծից հարավ Անգլիայի հովանավորությամբ ստեղծվում էր Քրդական ինքնավարություն:

Կարևոր առաջադիմական նշանակություն ուներ 144-րդ հոդվածը, որը չեղյալ էր համարում Օսմանյան կայսրության օրենքները ոչ թուրք ժողովրդի բռնագաղթի մասին, և նրանց իրավունք էր վերապահվում վերադառնալ իրենց բնակավայրերը, վերստանալ կորցրած կարողությունը (անօրինական էր հայտարարվում լքյալ գույքի մասին օսմանյան կառավարության 1915 թ. օրենքը):

Օսմանյան կառավարությունը համաձայնվում էր, որպեսզի Ազգերի լիգայի խորհուրդը միջնորդ հանձնաժողովներ նշանակեր բոլոր այն վայրերում, որտեղ դա կհամարվի անհրաժեշտ: Այդ հանձնաժողովներից յուրաքանչյուրը կազմված էր լինելու օսմանյան կառավարության մեկ ներկայացուցչից, տուժած համայնքի մեկ ներկայացուցչից, և Ազգերի լիգայի խորհրդի նշանակած նախագահից: Միջնորդ հանձնաժողովները վարելու էին այն բոլոր հարցերը, որոնք նշված էին 144-րդ հոդվածում: Դրանք լուծելու էին արագընթաց վարույթի կարգով:

Միջնորդ հանձնաժողովները օժտված էին լինելու հետևյալ լիազորություններով.

1. Ավերված բնակավայրերի վերակառուցման համար տրամադրելու էին աշխատող ուժ:

2. Մեկուսացնելու էին այն անձանց, որոնք հետաքննությունից հետո կճանաչվեին վայրագությունների կամ տեղահանությունների ակտիվ մասնակիցներ կամ դրանց հարուցողներ:

3. Վերադարձնելու էին 1914 թ. հունվարի 1-ից հետո համայնքի մահացած կամ անհետացած անդամներին պատկանող ամբողջ գույքը և ամեն տեսակ սեփականությունը: Այդ գույքը և սեփականությունը պետության փոխարեն կարող էր վերադարձվել համայնքին:

---

[144] Հայկական պետության սահմաններն ըստ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի, (խմբագիր՝ Ք. Ռ. Պետրոսյան) Ե., ՀՀ Մտիյուռքի նախարարություն, 2011, էջ 22-33:

[145] Նույն տեղում, էջ 6:

4. Չեղյալ էին հայտարարելու 1914 թ. հունվարի 1-ից հետո անշարժ գույքի վաճառման կամ նրա նկատմամբ սեփականատիրական իրավունքների հաստատման ակտերը: Այդ անշարժ գույքերի (այժմյան) տերերին փոխհատուցելու պարտականությունն ընկնելու էր օսմանյան կառավարության վրա: Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր հնարավորության սահմաններում դյուրացնել հանձնաժողովի աշխատանքը և ապահովել նրանց որոշումների կատարումը, որոնք կլինեն անբողոքարկելի: Այդ որոշումներին չէին կարող հակադրվել օսմանյան դատական կամ վարչական իշխանությունների ոչ մի որոշում[146]:

144-րդ հոդվածն ունի տնտեսական, քաղաքական և իրավական մեծ նշանակություն: Այն հաստատում էր, որ 1915 թ. և դրանից հետո, մինչև պատերազմի ավարտն ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրության մոտ 2 մլն 265.000 հայությունն իր հայրենիքից տեղահանվել է կեղծ պատճառաբանությամբ: Օսմանյան կառավարության ու պաշտոնյաների ցեղասպանական գործողությունների արդյունքում հայ ժողովրդի դարավոր ունեցվածքը հափշտակվել է թուրքական պետության, նրա պաշտոնյաների ու անհատ քաղաքացիների կողմից: 144-րդ հոդվածը ճանաչում էր նաև հայության՝ իր բնակավայրերը վերադառնալու, այնտեղ ապրելու և կրած նյութական բոլոր վնասների համար օսմանյան պետությունից ու մեղավոր ֆիզիկական անձանցից հատուցում ստանալու իրավունքները[147]: Վերոհիշյալ հոդվածով Օսմանյան կայսրությունը չեղյալ էր հայտարարում 1915 թ. ընդունած «Լքյալ գույքի» մասին օրենքը և դրա լրացումները, որով «օրինականացրել» էր ցեղասպանության ենթարկված հայության ունեզրկման քաղաքականությունը: Նա պարտավորվում էր ապագայում չընդունել նմանօրինակ օրենքներ[148]:

Սևրի պայմանագրի ուժի մեջ մտնելու դեպքում 144-րդ հոդվածի հիման վրա հայերին իրենց կրած նյութական վնասների հատուցման համար հիմք կարող էր ծառայել Փարիզի խորհրդաժողովին ներկայացրած հուշագիրը և նրանում սահմանված 19 մլրդ 130 մլն 932 հազ. ֆրանկը:

---

[146] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 678-680:

[147] **Սահակյան Տ.**, Տավալի պայմանագրեր, Ե., «Լուսակն», 2007, էջ 278:

[148] **Барсегов Ю.**, Турецкая доктрина международного права на службе политики (О концепции члена «Комиссии примирения» Гюндюз Актана), М.:, Готика, 2002, с. 32-33:

144-րդ հոդվածին լրացնելու է գալիս 288-րդ հոդվածը, ըստ որի դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ipso facto (փաստացի ուժով) ձեռք բերած նախկին թուրքահպատակների Թուրքիայում մնացած ունեցվածքը, իրավունքներն ու շահերը ներկա կամ մեկ այլ պայմանագրով Թուրքիայից անջատված տարածքներում պետք է վերադարձվեն նրանց իրենց ներկա վիճակով: Սա նշանակում է, որ Թուրքիայի կողմից արևմտահայերին հպատակությունից զրկելը կամ նրանց կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը թուրքական իշխանությունների համար չէր կարող հիմք հանդիսանալ նրանց ունեցվածքից, իրավունքներից կամ շահերից զրկելու համար[149]:

Սևրի հաշտության պայմանագիրը թույլատրում էր բնակչության կամավոր փոխադրում, տասնութից բարձր տարիք ունեցող անձինք կարող էին քաղաքացիություն ընտրել տարածաշրջանի մի այլ երկրում՝ համապատասխան իրենց ազգության կամ կրոնական պատկանելիության, որտեղ նրանք մեծամասնություն էին կազմում: Այդ մարդիկ պահպանում էին իրենց իրավունքը անշարժ գույքի նկատմամբ, բայց պարտավորվում էին մեկ տարվա ընթացքում իրենց շարժական գույքը փոխադրել այն երկիր, որն ընտրել էին: Թուրքիայում մնացող փոքրամասնությունների պաշտպանությունը, կյանքը, ազատությունն ու հավասարությունը օրենքի առաջ պետք է ապահովվեր կառավարության կողմից: Պատերազմի ժամանակ Թուրքիայում մարդկանց նկատմամբ կատարված վայրագությունների պատճառած չարիքն առավելագույն չափով քավելու համար օսմանյան կառավարությունը պարտավորվում էր իր և օսմանյան իշխանությունների կողմից ցույց տալ ամեն տեսակ աջակցություն՝ 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկալված և ազատազրկված ամեն ռասայի և ամեն կրոնի մարդկանց որոնելու և ազատելու համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը և Պարսկաստանը Բաթումի նավահանգստով ազատ մուտք ունենան դեպի Սև ծով: Դաշնակիցները բարյացակամորեն էին վերաբերում Կարսից Ճորոխ հովտով դեպի Բաթում Հայկական միջանցքի գաղափարին, սակայն պայմանագիրը ստորագրելու պահին Վրաստանը դրա փոխարեն հայերին առաջարկեց երկաթուղի կառուցել Վրաստանի տարածքով: Եվ քանի որ դեռևս հայտնի չէր՝ Տրապիզոնի նավահանգիստը Հայաստանի մեջ կմտցվի թե ոչ, ապա հատուկ հոդ-

[149] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 104:

վածով Հայաստանին երաշխավորում էին տրանզիտային արտոնություններ ու այդ նավահանգստի մի մասի առհավետ վարձակալություն[150]:

Պայմանագրի 7-րդ բաժինը կրում էր «Սանկցիաներ» վերնագիրը և նվիրված էր պատերազմի հանցագործների հարցին: 226-րդ հոդվածը նախատեսում էր ռազմական դատարանին ենթարկել այն անձանց, որոնք մեղավոր էին պատերազմի օրենքներն ու սովորությունները խախտող գործողությունների մեջ, իսկ թուրքական կառավարությունը համաձայնում էր հանձնել նաև այդ մարդկանց, ինչպես նաև նրանց կատարած ոճրագործությունների վերաբերյալ տեղեկություններն ու փաստաթղթերը. «...Այդ անձինք պատասխանատու են կատարված ջարդերի համար այն ժամանակ, երբ երկիրը գտնվում էր պատերազմի վիճակում այն տարածքում, որը կազմում էր թուրքական կայսրության մասը 1914 թ. օգոստոսի 1-ին»[151]: Օրենքով նախատեսված պատիժներ պետք է կիրառվեին մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ՝ անկախ բոլոր դատավարություններից և դատական գործերից, որոնք հարուցված էին Օսմանյան կայսրության կամ նրա դաշնակիցների դատական ատյանների կողմից[152]:

Սա նշանակում էր, որ դաշնակից տերությունները իրենց իրավունք էին վերապահում դատել պատերազմական հանցագործներին, անկախ այն բանից, թե Թուրքիան կամ նրա դաշնակից Գերմանիան և Ավստրո-Հունգարիան իրենց դատարաններում կդատեն այդ հանցագործներին թե ոչ: Սակայն պետք է ասել, որ դաշնակիցները հետևողական չգտնվեցին այդ հոդվածների դրույթները կատարելու գործում[153]:

228-րդ հոդվածով Օսմանյան կայսրությունը պարտավորվում էր մեղսագրվող փաստերին լրիվ ծանոթանալու համար դատաքննությանն ապահովել ցանկացած բնույթի փաստաթղթերով և տեղեկություններով՝ մեղավորներին որոնելու ու պատասխանատվությունների չափը ճշգրիտ որոշելու համար: Դրանով Սևրի պայմանագիրն իրավական հիմք էր ստեղծում Օսմանյան կայսրության կողմից իր հպատակ ոչ թուրք քաղաքացիների դեմ գործած ոճիրների դատական հետապնդման համար: Սակայն 1918-1919 թթ. անգլիացիները ձախողվեցին թուր-

---

[150] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 678, 680-682:

[151] Տե՛ս Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 98-102:

[152] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահիրավական հիմնավորումները, էջ 99:

[153] Նույն տեղում, էջ 99-100:

քական կառավարությունից այդպիսի փաստաթղթեր և տեղեկություններ ստանալու հարցում, որոնք հնարավորություն կտային դատական գործ հարուցել ենթադրյալ մարդասպանների դեմ[154]:

Ակնհայտ է, որ Սևրի պայմանագրի 226 և 228-րդ հոդվածները բխում են Հաագայի 1899 թ. և 1907 թ. խմբագրված «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորության մասին» կոնվենցիայի դրույթներից և կրկնում են պատերազմի հանցագործներին պատժելու մասին Վերսալի և այլ պայմանագրերում տեղ գտած հոդվածները[155]:

Ստեղծված իրավիճակում Թուրքիան շտապեց երիտթուրք պարագլուխների նկատմամբ սկսել սեփական դատական գործ, որպեսզի ապագայում խուսափի միջազգային ատյանի ստեղծման հնարավորությունից, քանի որ այդ տրիբունալում ակնհայտ կդառնար Օսմանյան կայսրության դերակատարումը հայերի զանգվածային բնաջնջման գործում, թուրքական պետության համար դրանից բխող հետևանքներով[156]:

Սևրի պայմանագիր 230-րդ հոդվածի համաձայն թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքները քրեական պատասխանատվության կանչելու ոչ միայն այն անձանց, ովքեր մեղավոր էին պատերազմի օրենքները և սովորությունները խախտելու մեջ, այլև պարտավորվում էր նաև հանձնել այն անձանց, ովքեր պատերազմի ընթացքում հանցագործություններ են կատարել այն տարածքներում, որոնք 1914 թ. օգոստոսի 1-ի դրությամբ հանդիսանում էին Օսմանյան կայսրության տարածքի մի մասը[157]:

Հատկանշական է, որ 1948 թ. մայիսի 28-ի զեկույցում ՄԱԿ-ի «Պատերազմական հանցագործությունների» հանձնաժողովը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել հատկապես Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածին և մեկնաբանել է այնպես, որ դրանով հաղթանակած տերությունները նպատակ էին հետապնդում ի կատար ածել 1915 թ. մայիսի 24-ի Անտանտի տերությունների համատեղ հռչակագրի պարտավորությունն առ այն, որ պատասխանատվության կանչվեն մարդկության դեմ կատարած հանցագործությունների համար մեղավորները, այսինքն՝ այն հանցագործություններ, որոնք թուրքական տարածքում կատարում էին օսմանյան հպատակություն ունեցող ազ-

---

[154] Նույն տեղում, էջ 100:
[155] Նույն տեղում:
[156] Նույն տեղում:
[157] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Ե., «Տիր», 2014 թ., էջ 117:

գությամբ ոչ թուրք (հայ կամ հույն) հպատակների նկատմամբ, ինչը հանձնաժողովի կարծիքով, նախադեպ է ծառայել Նյումբերգի և Տոկիոյի տրիբունալների՝ համապատասխանաբար 6c և 5c հոդվածների համար, այն է՝ մարդկության դեմ կատարած հանցագործություններ[158]:

Այսպիսով, ի տարբերություն 226 և 228-րդ հոդվածների 230-րդ հոդվածը վերաբերում էր, ոչ թե պատերազմական հանցագործություններին, այլ 1915 թ. մայիսի 24-ի դաշնակից տերությունների համատեղ հայտարարության հետևանքն էր, քանզի դաշնակիցները դեռ այն ժամանակ խոստանում էին պատասխանատվության կանչել հայերի զանգվածային սպանությունների մեջ մեղադրվողներին[159]:

230-րդ հոդվածի այս դրույթը կարևոր էր նաև այն իմաստով, որ Թուրքիան չէր կարող խուսափել Միջագետքի անապատներում հայերի զանգվածային կոտորածներում մեղադրվող անձանց հանձնելուց այն պատճառաբանությամբ, թե չի կարող հանձնել այն անձանց, որոնք հանցագործություններ են կատարել այն տարածքներում, որոնք այլևս իրեն չեն պատկանում[160]:

Պայմանագրի կնքման օրը չորս Գլխավոր դաշնակիցները Սևրում առանձին հատուկ պայմանագիր կնքեցին ՀՀ-ի հետ, որը ստորագրեցին Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը: Դրանով դաշնակիցները կանոնարկում էին իրենց պահանջները Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ ընդհուպ ընտրական համակարգի մշակումը[161]:

Սևրի պայմանագրի վավերացման գործընթացը պետք է տեղի ունենար հետևյալ կերպ. առաջին հերթին այն պետք է վավերացվեր մի կողմից պարտված Թուրքիայի, իսկ մյուս կողմից Գլխավոր դաշնակիցներ՝ Անգլիայի Ֆրանսիայի, Իտալիայի (սրանցից մեկին կարող էր փոխարինել Ճապոնիան) կողմից: Մինչև Թուրքիայի և գլխավոր երեք դաշնակիցների կողմից վավերացման ակտը տեղի չունենար, դաշնակից մյուս պետությունների, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից պայմանագրի վավերացումը չէր կարող լինել: Պայմանագրի ուժի մեջ մտնելու այդ խրթին գործընթացը մեծապես նպաստեց Թուրքիայի կողմից նրա վավերացումը ձգձգելուն և ի վերջո չվավերացնելուն[162]:

---

[158] Նույն տեղում, էջ 118-119:
[159] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահիրավական հիմնավորումները, էջ 101:
[160] Նույն տեղում:
[161] Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Ե., «Զանգակ-97», 2003, էջ 316:
[162] Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 285:

Սևրի պայմանագրի մշակման խնդրում վճռական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունում փաստական իշխանությունն իրենց ձեռքը վերցրած քեմալականները դաշինքի մեջ էին մտել Խորհրդային Ռուսաստանի հետ, ուստի Սևրի պայմանագրի հետապնդած նպատակներից մեկը քեմալականների վրա ճնշում գործադրելն ու Խորհրդային Ռուսաստանին հակադրելն էր: Անկախ Հայաստանի ստեղծումը մի կողմից կթուլացներ քեմալական Թուրքիայի դիրքերը, իսկ մյուս կողմից՝ հուսալի պատնեշ կլիներ Խորհրդային Ռուսաստանի և նոր Թուրքիայի միջև[163]:

Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները կարծես թե իրականություն էին դարձնում Արևմտյան Հայաստանի ազատագրումը, որը Արևելյան Հայաստանի հետ միասին կազմելու էր Միացյալ և Անկախ Հայաստան: Պայմանագիրը Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էր, անկախ այն հանգամանքից, որ պայմանագիրը կյանքի չկոչվեց[164]:

Ն. Ադոնցը դիպուկ է նկատել, որ Սևրի պայմանագրի ամենակարևոր թերություններից մեկը եղել է այն, որ չկար երաշխիքային հոդված, որով այդ փաստաթուղթը ստորագրող հաղթանակած Անտանտի տերությունները իրենց վրա պարտավորություն կվերցնեին ապահովելու հայկական վիլայեթների անարգել փոխանցումը Հայաստանի հանրապետությանը[165]:

Ըստ ակադեմիկոս Գ. Գալոյանի. «Սևրի պայմանագրի ձգձգումը բացասական հետևանք ունեցավ, քանի որ թուրքերին հնարավորություն տվեց ոտքի կանգնելու և դաշնակիցների հետ ուժի դիրքերից խոսելու: Եվ այն հանգամանքը, որ այդ ընթացքում Թուրքիայում իրական իշխանությունը իրենց ձեռքն էին վերցրել քեմալականները, Սևրի պայմանագիրը դարձնում էր անհնարին»: Նա գտնում էր նաև, որ Սևրի պայմանագիրը ստորագրած խոշոր տերություններից և ոչ մեկը չի հավատացել, որ Հայաստանին վերաբերող նրա հոդվածները կարող են իրականանալ, քանզի նրանց բոլորին հայտնի էր, որ Մ. Քեմալն արդեն զենքի տակ ուներ 150 հազ. լավ զինված և կարգապահ բանակ, որի դեմ եվրոպական դաշնակիցներից և ոչ մեկը զենք գործադրելու մտադրություն չուներ: Դրանով, Սևրի պայմանագիրը մար-

---

[163] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» 1999, էջ 275-276:
[164] Նույն տեղում, էջ 279:
[165] Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., ԵՊՀ,1989, էջ 16:

տահրավեր էր Թուրքիային և անխուսափելի էր դարձնում հայ-թուրքական պատերազմը[166]:

Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանին, որը դեռ 1917 թ. դեկտեմբերն «Թուրքահայաստանի» մասին դեկրետով էր ճանաչել Արևմտյան Հայաստանի ազգային ինքնորոշման իրավունքը, ընդհուպ ազգային պետություն ստեղծելը, չէր ցանկանում, որ հայերը իրենց անկախությունը ստանան Անտանտի տերություններից և դրանով իսկ ընդմիշտ կախված լինեն նրանցից: Այդ Հայաստանը կխանգարեր «համաշխարհային հեղափոխության» ալիքի տարածումը Արևելքում և Խորհրդային Ռուսաստանին ու «հեղափոխական» Թուրքիային կբաժաներ իրարից[167]:

Դաշնակից տերությունները Սևրի հաշտության պայմանագիրը կնքել էին Թուրքիայի սուլթանական կառավարության հետ, որը, սակայն, մնաց թղթի վրա, այն չվավերացրեց նույնիսկ սուլթանական կառավարությունը:

1920 թ. օգոստոսի 14-ին Մ. Քեմալը հրաժարվեց ընդունել Սևրի պայմանագիրը և հայտարարեց, որ պատրաստվում է գրավել Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Բաթումը, որոնք ըստ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերի պատկանում են Թուրքիային ու քայլեր ձեռնարկել կանխելու հայերի հնարավոր հարձակումը Էրզրումի վրա[168]:

Սևրի պայմանագիրը ստորագրվեց Փարիզի կոնֆերանսի հրավիրումից ավելի քան մեկուկես տարի անց, այդ ընթացքում քաղաքական ուժերի վերադասավորումն ընթացավ Թուրքիայի օգտին և վերջինս սկսեց ուժի դիրքերից խոսել դաշնակիցների հետ: Այդ ընթացքում Անտանտի տերությունների հակաթուրքական դիրքորոշումը փոխարինվեց Մ. Քեմալի հետ համաձայնության գալու և նրան Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղելու քաղաքականությամբ: Դրանով Եվրոպան հրաժարվում էր Թուրքիան մասնատելու ծրագրերից և արդեն ստորագրած Սևրի պայմանագրից[169]:

Ու. Չերչիլը, որ այդ ժամանակ Մեծ Բրիտանիայի ռազմական և ավիացիայի նախարարն էր, Սևրի պայմանագրի մասին նշում է.

---

[166] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., էջ 277-280:
[167] Նույն տեղում, էջ 283:
[168] Ататюрк К. Избранные речи и выступления, М.: «Прогресс», 1966, с 105.
[169] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 288-289:

«Տասներեք ամիս նախապատրաստվող այդ փաստաթուղթը հնացավ ավելի շուտ, քան պատրաստվել էր»[170]:

Այնուամենայնիվ չվավերացված Սևրի պայմանագիրը մասամբ գործադրվեց այն ստորագրողների կողմից՝ արաբական հողերը Օսմանյան կայսրությունից անջատելու առումով, ինչը նախատեսված էր պայմանագրով, փաստորեն, դա գործադրվեց՝ չվավերացված լինելով: Քաղաքական առումով մեծ տերություններն այդ տարածքների բաժանման հարցն իրենց մեջ լուծել էին դեռ մինչև Սևրի պայմանագիր ստորագրումը, երբ դեռ պատերազմի ժամանակ 1916 թ. ստորագրվել էր Օսմանյան կայսրության ասիական տարածքների բաժանման գաղտնի համաձայնագիրը և պատերազմից հետո 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյի խորհրդաժողովի որոշումներով վերահաստատել այդ տարածքների օտարումը [171]:

Սևրի պայմանագրի կողմ հանդիսացող եվրոպական մեծ տերությունները, առաջին հերթին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ելնելով իրենց շահերից, միմյանց միջև պայմանավորվածություն ձեռք բերելով, սկսեցին ընտրողաբար կիրառել չվավերացված և դեռ ուժի մեջ չմտած Սևրի պայմանագրի հոդվածները, կապված արաբական տարածքների Օսմանյան կայսրությունից օտարելու հետ: Պայմանագրի չվավերացրած լինելու պայմաններում նրա հոդվածների հիման վրա մինչև Լոզանի պայմանագրի ստորագրումը, փաստորեն, ավարտվեց Օսմանյան կայսրության տրոհման և մանդատների ու պրոտեկտորատների կիրառմամբ պետությունների (Սիրիա,. Լիբանան, Իրաք Սաուդյան Արաբիա և այլն) ստեղծման գործընթացը, որը, ցավոք, շրջանցեց Հայաստանն ու Քրդստանը[172]:

Այսպիսով, պայմանագրի կողմ հանդիսացող եվրոպական տերությունները, կիրառելով Սևրի պայմանագրի որոշակի հոդվածների դրույթներ, առանց վավերացման, փաստորեն, արաբական երկրների հարցով մասնակի գործողության մեջ են դրել այդ պայմանագրի որոշակի դրույթներ[173]:

Սևրի պայմանագրի մասնակի կիրառման մասին կիրառման օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ 1921 թ. հայտնի Լոնդոնի

---

[170] Черчиль В. Мировой кризис, М-Л:, Государственное военное издательство, 1932, с. 258.

[171] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 108:

[172] Նույն տեղում, էջ 110:

[173] Նույն տեղում:

խորհրդաժողովի ժամանակ դաշնակից տերությունները բարձրացրել են Սևրի պայմանագրի վերանայման հարցը (Սևրի պայմանագրի հարցը շոշափվել է նաև 1921 թ. Մոսկվայի խորհրդաժողովում), իսկ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով քեմալական Թուրքիան առաջադրել է Սևրի պայմանագրից հրաժարվելու հոդվածներ: Այստեղ հարց է առաջանում, ի՞նչպես կարելի է վերոհիշյալ կոնֆերանսներում և պայմանագրերում անդրադառնալ Սևրի պայմանագրից հրաժարվելուն, եթե այն համարվում էր անվավեր և իրավական ուժ չունեցող: Սևրի պայմանագրի հանդեպ թուրքերի մտահոգությունը առկա է նաև մեր օրերում, ինչի վկայությունն է Հայկականի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար առաջ քաշված Սևրի պայմանագրից և տարածքային պահանջներից հրաժարվելու թուրքական նախապայմանները[174]:

Հարկ է նաև ընդգծել, որ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի արդյունքում պարտություն կրած Հայաստանի Հանրապետությունը, չնայած նոյեմբերի 18-ին քեմալական Թուրքիայի հետ կնքեց զինադադար և նոյեմբերի 26-ին կատարեց հայտարարություն Սևրի պայմանագրից հրաժարվելու մասին[175], սակայն միջազգային իրավունքի տեսանկյունից այդ գործողությունները (նաև Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագիրը) իրավական ուժ չունեն, քանի որ պարտադրվել են ուժով: Ըստ 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն «ուժի կամ այն կիրառելու սպառնալիքի միջոցով պետությանը հարկադրելը պայմանագիրը համարում է առ ոչինչ, եթե այն կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ»[176]:

Այսպիսով, Սևրի պայմանագրի չվավերացված, կիսավավերացված (օրենքի ուժ չունենալու) կամ մասնակի կիրառված լինելու խնդիրը, և դրանով իսկ պատմաքաղաքական ու իրավաքաղաքական դաշտում առկա բանավեճերը թույլ են տալիս ենթադրելու, որ Սևրի պայմանագրի հարցը դեռ ամբողջությամբ սպառված չէ, և այն դամոկ-

---

[174] Նույն տեղում, էջ111:

[175] Первая республика: как это было // http://defacto.am/3235.html#.VXTkNtLtlHX; 28 мая 1918г. провозглашение Армянской Республики // http://k4500.com/history/716-28-maya-1918g-provozglashenie-armyanskoj.html;

[176] Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքների մասին // http://www.un.am/res/UN%20Treaties/XIV_1.pdf

լյան սրի պես կախված է թուրքական պետության վրա ու վերջինիս մոտ առաջացնում է ապագայի հանդեպ մտավախություն:

Այնուամենայնիվ հարցը լրիվ այլ է ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի հայ-թուրքական սահմանի իրավարար վճռի կապակցությամբ, որը, մեր խորին համոզմամբ, չպետք է նույնականացնել Սևրի պայմանագրի հետ:

Դեռևս 1920 թ. ապրիլի 25-ին Սան Ռեմոյի խորհրդաժողովը որոշել էր դիմել նախագահ Վ. Վիլսոնին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկով, իսկ հրաժարման դեպքում՝ հանդես գալ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանազատման իրավարար (արբիտր) հիշյալ նահանգներում: 1920 թ. մայիսի 17-ին Վ. Վիլսոնը Փարիզում ԱՄՆ-ի դեսպանի միջոցով Անտանտի Գերագույն խորհրդին հայտնում է իր համաձայնությունը՝ լինել ապագա Հայաստանի սահմանների իրավարարը (Վ. Վիլսոնը, մշակված ընթացակարգի համաձայն, իրավարարության առաջարկն ստանալուց յոթ ամիս հետո, իսկ Հայաստանի բռնի խորհրդայնացումից յոթ օր առաջ՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին, կայացրեց ու հռչակեց իրավարարական իր վճիռը)[177]:

Այս համաձայնության հիման վրա Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածը պարունակում է հետևյալ կարևոր դրույթը՝ «Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատումը թողնել ԱՄՆ-ի որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ»[178]:

89-րդ հոդվածին լրացնելու էր գալիս 90-րդ հոդվածը, որի համաձայն՝

1) Որպես իրավարար (միջնորդ) հանդես եկող ԱՄՆ-ի նախագահին լիազորություն է տրվում նշված չորս վիլայեթներն (Էրզրում,

---

[177] Շիրինյան Լ., Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան, «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (22), 2008, էջ 110, տես նաև Մարությյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, էջ 123-13, նույն հեղինակի՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 112-120: Հայկական պետության սահմաններն ըստ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի, Ե., ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2011, էջ 14-21:

[178] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 676

Տրապիզոն, Վան, Բիթլիս – է.Ն.) ամբողջությամբ կամ մասամբ հանձնել Հայաստանին:

2) Թուրքիան Սևրի պայմանագրի կնքման օրը՝ 1920 թ. օգոստոսին 10-ին, արդեն հայտարարում է, որ որոշման օրից՝1920 թ. նոյեմբերի 22-ից, ինքը հրաժարվում է հանձնված տարածքի (Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի վիլայեթների) նկատմամբ իր բոլոր իրավունքներից և իրավասություններից:

3) Պայմանագրի կողմերը և, հատկապես Թուրքիան, ԱՄՆ-ի նախագահի հիշյալ որոշման իրավաբանական և փաստաբանական գործողության սկիզբը համարում են նրա կայացման օրը՝ 1920 թ. նոյեմբերի 22-ը և այդ հանգամանքը կախման մեջ չեն դնում Սևրի պայմանագրի ուժի մեջ մտնելուց, սկսում է իրավաբանորեն գործել 1920 թ. նոյեմբերի 22-ից, և որի համաձայն որևէ նշանակություն չունի Սևրի պայմանագրի ուժի մեջ մտած կամ չմտած լինելու հանգամանքը[179]:

Այսպիսով, 89-րդ (ինչու չէ նաև 90-րդ) հոդվածի այս դրույթներն էլ հիմք են տալիս պնդելու, որ չնայած Սևրի պայմանագիրը չի վավերացվել Թուրքիայի սուլթանական և քեմալական կառավարությունների կողմից, այնուամենայնիվ այն չի կորցրել իր ուժը հատկապես Հայաստան-Թուրքիա սահմանազատման և չորս վիլայեթների Հայաստանին անցնելու հարցում:

Վ. Վիլսոնի այս իրավարարությունը համապատասխանում է 1907 թ. հոկտեմբերի 18-ին Հաագայում ընդունած «Միջազգային ընդհարումների խաղաղ լուծման վերաբերյալ կոնվենցիայի» (ուժի մեջ է մտել 1910 թ. հունվարի 26-ին) դրույթներին ու նորմերին: Այդ կոնվենցիան փոխարինվեց միայն 1999 թ. հուլիսի 29-ին Հաագայում ընդունած նույնանուն կոնվենցիայով: 1907 թ. հոկտեմբերի 18-ին Հաագայի կոնվենցիան ընդունել և ստորագրել են բազմաթիվ երկրներ, այդ թվում և Օսմանյան կայսրությունում:

Կոնվենցիայի խնդիրն էր պետությունների միջև առկա կամ երբևէ ծագող անհամաձայնությունները, ներառյալ ընդհարումները, լուծել խաղաղ ճանապարհով՝ դիմելով մեկ կամ մի քանի պետությունների միջնորդական ջանքերին և օգնությանը:

Կոնվենցիայի 1-ին բաժնի («Համընդհանուր խաղաղության պահպանման» մասին) 1-ին հոդվածի համաձայն. «Պետությունների միջև հարաբերություններում ուժի գործադրման, ըստ հնարավորին կան-

---

[179] Տե՛ս, Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 271-272:

խարգելման նպատակով, պայմանավորվող պետությունները համաձայնվում են՝ իրենց բոլոր ջանքերը գործադրել միջազգային համաձայնությունների խաղաղ լուծման ապահովման մեջ»: Կոնվենցիայի 2-րդ բաժնի («Բարի ծառայությունների և միջնորդությունների մասին») 2-րդ հոդվածի համաձայն. «Պայմանավորվող պետությունները համաձայնվում են կարևոր տարակարծության կամ ընդհարման դեպքում, նախքան մինչև զենքին դիմելը, դիմել, որքան որ թույլ կտան հանգամանքները, մեկ կամ մի քանի բարեկամական երկրների բարի ծառայություններին կամ միջնորդությանը»: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անկախ այդ դիմումից, պայմանավորվող պետություններն օգտակար ու ցանկալի են համարում, որպեսզի ընդհարմանը չմասնակցող մեկ կամ մի քանի պետություններ, սեփական նախաձեռնությամբ, որքանով որ թույլ կտան հանգամանքները, վեճի մեջ գտնվող պետություններին առաջարկեն իրենց բարի ծառայությունները կամ միջնորդությունը»: Կոնվենցիայի 4-րդ բաժնում սահմանվում է «միջնորդական քննության» կարգը: Կոնվենցիայի 56-րդ հոդվածի համաձայն. «Եթե միջնորդ դատավոր է ընտրվում թագավորը կամ պետության գլուխը, ապա միջնորդական քննության կարգը նա ինքն է սահմանում»: Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Միջնորդ դատարանին դիմելը առաջ է բերում միջնորդ որոշմանը բարեխղճորեն ենթարկվելու պարտավորություն»: Կոնվենցիայի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Միջնորդ որոշումը պարտադիր է միայն վիճող կողմերի համար»[180]:

1920 թ. ապրիլի 26-ին՝ Սան Ռեմոյի վեհաժողովի որոշմամբ, ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնին միջազգային առաքելությամբ հանդես գալու վերաբերյալ հղած առաջարկից սկսած, 1920 թ. մայիսի 17-ին նախագահ Վ. Վիլսոնի կողմից այդ առաջարկի ընդունմամբ և միջնորդական մասնագիտական մարմինների ստեղծմամբ ու դրանց զեկույցները քննության առնելով ու 1920 թ. նոյեմբերի 22-ի միջնորդ որոշման կայացմամբ և դեկտեմբերի 6-ին այն Անտանտի Գերագույն խորհրդին հայտնելով ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի «Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատման, դեպի Սև ծով Հայաստանի ելքի և Հայաստանի սահմաններին հարող թուրքական տարածքների ապառազմականացման վերաբերյալ որոշումը» համապատասխանում է Հաագայի 1907 թ.

[180] Նույն տեղում էջ 301-302:

հոկտեմբերի 18-ի կոնվենցիայի ոգուն ու տառին, սկզբունքներին ու նորմերի[181]:

Տեղին է նշել, որ իրավարարության բնույթով իրավարարի որոշումը կողմերն ընդունում են «ապրիորի, այն պարտադիր է նրանց համար և վավերացման կարիքը չունի»: Սևրի դաշնագրի ստորագրումը՝ կատարված աշխարհի ազգաբնակչության 66%-ը ներկայացնող 14 երկրների կողմից, ստեղծել էր միջազգային բազմակողմանի պարտավորություն՝ ընդունել իրավարարության պայմանները[182]: Ընդսմին, այդ կարգի պարտավորությունների վերանայումը «հնարավոր է միայն բոլոր կողմերի և հատկապես այն կողմի, որի օգտին կայացվել է իրավարարական որոշումը, համաձայնությամբ», ինչը, բնականաբար, Սևրի դաշնագիրը ստորագրելուց հետո, մասնավորապես ՀՀ կողմից, տեղի չի ունեցել: Գլխավոր դաշնակից երկրները, երբ դիմում էին իրավարարության, տվյալ դեպքում ևս, անշուշտ, համաձայն էին, որ «իրավարարի կարգադրությունները, որքանով այն վերաբերում է իրենց, լինելու են վերջնական և համապատասխանաբար, պայմանավորվեցին հարգել իրավունք ձևավորող այդ միջազգային համաձայնությունը»: Ընդսմին, նախագահ Վիլսոնի բացատրությամբ, իրավարարական վճիռը կայացվել է ամենահավաստի տեղեկատվության և «արդարության բարձրագույն շահերի գիտակցումով»[183]:

Այսպիսով, Հաագայի 1907 թ. հոկտեմբերի 18-ի կոնվենցիան, Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածի ամերիկյան իրավարարության մասին դրույթը, Սևրի պայմանագրից, ըստ էության, անկախ լինելու Վ. Վիլսոնի իրավարար որոշումը, որը համապատասխանում է միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև օրենքի հետադարձ ուժ չունենալու հանգամանքը, գալիս են ապացուցելու, որ Սևրի պայմանագրով նախատեսված հայկական չորս վիլայեթների հանդեպ հայ ժողովրդի պահանջատիրությունը չի կորցրել իր արդիականությունը և իրավական ուժը:

---

[181] Նույն տեղում:

[182] Սահակյան Տ., Վուդրո Վիլսոն. մարդը և քաղաքագետը, Ե., «Լուսակն», 2006, էջ 63:

[183] Շիրինյան Լ., նշվ. հդվ., էջ 110: Տե՛ս Պապյան Ա., Հայրենատիրություն. հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Ե 2012, էջ 18-20, 61-67, 68-71, 187-191:

10. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքական վիճակը 1920 թ. կեսերից սկսեց բարդանալ: Ակնհայտ դարձավ, որ տեղի է ունեցել թուրք-բոլշևիկյան մերձեցում և համագործակցություն: Խորհրդային կառավարությունը, ձգտում էր Թուրքիայում սկսված քեմալական շարժումն ուղղել Անտանտի դեմ, վերջինիս զրկել Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի դեմ պատվար դարձնելու հնարավորությունից, փորձել իր միջնորդությամբ կայունացնել վիճակը տարածաշրջանում, կանխել պատերազմը, հասնել Հայաստանի և Թուրքիայի միջև կայուն սահմանների հաստատման: Սակայն 1920 թ. խորհրդա-հայկական և խորհրդա-թուրքական բանակցությունները բազմիցս ընդհատվեցին և ձգձգվեցին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ժամանակ էր շահում մինչև Սևրի հաշտության կնքումը, իսկ թուրքական կողմը չէր ուզում հրաժարվել արևմտահայկական հողատարածքներից*: 1920 թ. ամռանը Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային տրամադրեց ռազմական և դրամական զգալի օգնություն, որն օգտագործվեց արևմուտքում՝ Հունաստանի, արևելքում՝ Հայաստանի Հանրապետության դեմ:

Թուրքիայի համար Հայաստանը Սևրի պայմանագրով ոչ միայն պահանջատեր էր դարձել Արևմտյան Հայաստանի՝ «Թուրքիայի արևելյան մարզերի» նկատմամբ, այլև ստեղծել էր մի գործուն արգելապատնեշ նրա և Խորհրդային Ռուսաստանի միջև՝ խոչընդոտելով արդյունավետ օգնություն ստանալ բոլշևիկներից: Հիմնականում այս երկու հանգամանքն էլ դրդեցին քեմալականներին որոշում ընդունել ՀՀ-ը ոչնչացնելու մասին և Հայաստանի տարածքը կրճատել այնպես,

---

* 1920 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում հրավիրված առաջին ռուս-թուրքական կոնֆերանսում Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը պաշտոնապես ճանաչում է «Ազգային ուխտի» պահանջները: Այդ էր պատճառը, որ նույն ժամանակ Մոսկվայում Խորհրդային կառավարության բանակցությունները ՀՀ պատվիրակության հետ ոչ մի արդյունք չեն տալիս: Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Խորհրդային Ռուսաստանի և ՀՀ-ի միջև կնքված համաձայնագրում խոսվում է միայն ՀՀ պետականությունը ճանաչելու և տարածքային հարցերը (Արցախ, Սյունիք, Նախիջևան) կարգավորելու մասին, իսկ Արևմտյան Հայաստանի տարածքների ճակատագիրը ընդհանրապես չի քննվում (տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 238-274, Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 471-515, Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 321-329, 343-354):

որպեսզի նա չեղյալ հայտարարեր Սևրի պայմանագիրը և բացել ճանապարհը Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

1920 թ. սեպտեմբերին թուրքական բանակն անցավ հարձակման: Անկարայի կառավարությունը, զավթելով նորանոր տարածքներ (Օլթի, Սարիղամիշ, Կաղզվան, Իգդիր,Կարս, Ալեքսանդրապոլ) և կոտորելով հայ ժողովրդի արևելյան հատվածը, ձգտում էր զրկել հայերին սեփական պետություն վերստեղծելու հնարավորությունից: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ենթադրում էր, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Իտալիան, իրականացնելով Սևրի հաշտության պայմանները, անմիջապես հանդես կգան հօգուտ հայերի և հակահարված կտան Թուրքիային: Հայկական կառավարությունը դիմեց նաև Ազգերի լիգային՝ խնդրելով համապատասխան միջոցներ կիրառել Թուրքիայի նկատմամբ: Սակայն այդ դիմումները ցանկալի արդյունք չտվեցին: Միայն Ռումինիայի կառավարությունն առաջարկեց օգնել Հայաստանի Հանրապետությանը, սակայն այդպես էլ հաջողության չհասավ: Թուրքական զորքերը շարունակեցին հարձակումը: Թուրքիայի քեմալական կառավարության անհաշտ ու ռազմատենչ դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ պայմանավորված էր ստեղծված միջազգային բարենպաստ իրադրությամբ, մասնավորապես, Անտանտի ու Խորհրդային Ռուսաստանի միջև ռազմական առճակատումով: Կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր Թուրքիան օգտագործել իր շահերի համար[184]: Հեղափոխական քարոզչությամբ բարոյալքված, հարևանների ոտնձգությունների դեմ անընդհատ պատերազմելու հետևանքով թուլացած հայկական բանակը պարտվեց[185]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստիպված էր Ալեքսանդրապոլում ստորագրել «Հաշտության պայմանագիր» Թուրքիայի հետ, որով պատերազմը համարվում էր ավարտված և որոշվում էին երկու պետությունների միջև սահմանները:

Հայաստանի խորհրդարանում և կառավարությունում ձևավորված ընդհանուր տեսակետն այն էր, որ եթե չստորագրվեր հաշտության պայմանագիրը թուրքական բանակն ամենայն հավանականությամբ առաջ կշարժվեր և մինչև ռուսների հավանական օգնության հասնելը

---

[184] Կիրակոսյան Ա. Զ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, էջ 25-26:

[185] 1920 թ. թուրք-հայկական պատերազմի մասին տե՛ս Զուրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997:

կգրավեր էջմիածինն ու Երևանը*: «Հանուն հայ ժողովրդի փրկության,- գրում է Ս. Վրացյանը,- պետք էր ստանձնել պատասխանատվությունը պատմության առջև և ստորագրել դաշնագիր: Եթե բոլշևիկները այդքան ազդեցիկ էին թուրքերի առջև, նրանց համար դժվար չէր լինի մերժել «դաշնակների» ստորագրությունը և Հայաստանի համար ավելի նպաստավոր դաշնագիր կնքել: Եթե բոլշևիկները այդ կարողությունը պիտի չունենան վաղը, նշանակում է նրանց խոստումները անարժեք էին: Այս նկատառումներով և այս գիտակցությամբ ժողովուրդը որոշեց լիազորել Ալեքսանդրապոլի պատվիրակությանը՝ ընդունելու թուրքական պայմանները և ստորագրելու հաշտության դաշնագիրը:

Կասկած չկա, որ բոլշևիկներն էլ, Մոսկվայի ճնշումով, ստիպված պիտի լինեին ստորագրելու Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ինչպես որ մեկ տարի հետո ստորագրեցին Կարսի խայտառակ դաշնագիրը: Ազգային տեսակետով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտություն էր, դժբախտ, բայց անխուսափելի»[186]:

1920 թ. դեկտեմբերի 2-ին լույս 3-ի գիշերը (այսինքն՝ դեկտեմբերի 3-ին) ստորագրվեց Ալեքսանդրապոլի բազմաթիվ առումներով խայտառակ, ստորացուցիչ ու կողոպտչական պայմանագիրը, որի տակ առանց այդ իրավունքն ունենալու, Հայաստանի Հանրապետության անունից իրենց ստորագրությունը դրեցին Ա. Խատիսյանը, Ա. Գուլխանդանյանը և Ս. Ղորխանյանը, Թուրքիայի կողմից՝ Ք. Կարաբեքիր փաշան, Համիդ բեյը և Ս. Բեջարի բեյը:

---

* 1920 թ. նոյեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը վերջնագրի ձևով ՀՀ կառավարությանը հայտարարում է, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի խորհրդայնացման կուրս է վերցրել: Նույն օրը Բաքվում (Ադրբեջանում խորհրդային կարգերը հաստատվել էին դեռևս 1920 թ. ապրիլի 28-ին) ստեղծվում է Հայաստանի հեղափոխական կոմիտեն (հայ հեղկոմը)՝ Ս. Կասյանի գլխավորությամբ, որը խորհրդային 11-րդ բանակի հետ Ղազախից մտան Քարվանսարայ (Իջևան): Հեղկոմը հրապարակեց դեկլարացիա, որով Հայաստանի կոմկուսն այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում Բ. Լեգրանի, մյուս կողմից ՀՀ կառավարության ներկայացուցիչներ Ղրոյի և Հ. Տերտերյանի միջև ստորագրվեց համաձայնագիր: Հայաստանը հայտարարվում էր անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, ՀՀ կառավարությունը հեռանում էր իշխանությունից: Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը և վերոհիշյալ ակտը հետփաստային իրավական ձևակերպումներ էին, որոնք պայմանավորված էին 1920 թ. նոյեմբերի 29-ին հայհեղկոմի կողմից Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով (Документы внешней политики СССР, т. 3, М.: Госполитиздат, 1959, с. 346-350; Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլուցիան և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1960, էջ 531: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 373):

[186] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 535-536:

Ալեքսանդրապոլի 14 հոդվածներից բաղկացած պայմանագրի էությունը կայանում էր հետևյալում[187].

Թուրքիային էր անցնում Կարսը, Արդահանը, Սարիղամիշը, Օլթին, Սուրմալուի գավառը, Կաղզվանը, Ալեքսանդրապոլը: Նախիջևանի, Շարուրի և Շահթաղթի շրջանները ժամանակավորապես դրվում էին Թուրքիայի պաշտպանության տակ, մինչև այնտեղ հանրաքվեի անցկացումը, որին Հայաստանը չպետք է մասնակցի: Դա, ըստ էության, նշանակում էր, որ այդ շրջանները տրվում էին Թուրքիային:

Հայրենազրկող ձևակերպում ուներ նաև 3-րդ հոդվածը, ըստ որի «ներկա պայմանագրով Թուրքիային զիջված շրջաններում, որոնք անվիճելի, պատմական, էթնիկական և իրավական կապ ունեն Թուրքիայի հետ»:

6-րդ հոդվածով արգելվում էր իրենց բնակավայրեր վերադառնալ այն գաղթականներին ովքեր արտաքսվել են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում և թշնամու շարքերում կռվել են իրենց կառավարության դեմ և նրանցից, ովքեր մասնակցել են ջարդերին, իսկ 7-րդ հոդվածով Թուրքիայի կառավարությունը... հրաժարվում էր ներկա պատերազմի հետ կապված ծախսերի հատուցումից, պատերազմ, որ նա ստիպված էր ձեռնարկել Հայաստանի դեմ: Պայմանավորվող երկու կողմերը հրաժարվում էին նաև Համաշխարհային պատերազմի ժամանակ կրած վնասները հատուցելու ամեն տեսակ պահանջներից: Այսինքն՝ 6-րդ և 7-րդ հոդվածներով ցեղասպանության հետևանքով իրենց անշարժ գույքը կորցրած հայերին արգելվում էր ոչ միայն վերադառնալ հայրենիք, այլև վերստանալ կորցրած և բռնագրավված շարժական և անշարժ գույքը, ինչպես նաև Հայաստանի դեմ 1920 թ. սկսած պատերազմը համարում էր արդարացի:

9-րդ հոդվածով Հայաստանի կառավարությունը չեղյալ էր հայտարարում Սևրի պայմանագիրը, որին լրացնելու է գալիս 13-րդ հոդվածը՝ Հայաստանի կառավարությունն անվավեր էր ճանաչում այն բոլոր պայմանագրերը, որ կարող են կնքվել և առնչություն ունենալ Թուրքիայի հետ, ճիշտ այնպես, ինչպես և այն բոլոր պայմանագրերը, որ կկնքվեն ի վնաս Թուրքիայի շահերի: Սրանցով ՀՀ-ն անվավեր էր հայտարարում հայության համար մեծ նշանակություն ունեցող Սևրի

---

[187] Ալեքսանդրապոլի պայմանագրի ամբողջ տեքստը տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 683-987, տե՛ս նաև ճակատագրական պայմանագրեր (փաստաթղթերի ժողովածու) էջ 95-99, Վրացյան Ս., էջ 536-537:

պայմանագիրը, ինչպես նաև Մուդրոսի զինադադարի դրույթները: Հայաստանը ընկնում էր Թուրքիայի ազդեցության տակ, նրա ռազմական, հասարակական, տնտեսական, ներքին և արտաքին քաղաքականության վրա հաստատվում էր թուրքական վերահսկողությունը: Այս պայմանագիրը իր հոդվածներով նման էր Բաթումի պայմանագրին:

Հայաստանը լինելով պարտված կողմ փաստորեն ոչ միայն հրաժարվեց Սևրի պայմանագրից, այլև 7-րդ հոդվածով նաև Առաջին աշխարհամարտի տարիներին ցեղասպանության ենթարկված հայության նյութական վնասների հատուցման պահանջներից:

Ռազմավարական առումով Ալեքսանդրապոլի պայմանագիրն ուղղված էր նաև Ռուսաստանի դեմ: Ալեքսանդրապոլի իրավական ուժ չունեցող պայմանագիրը չճանաչվեց ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունների կողմից և դրա չեղյալ հայտարարելը դարձավ նրանց անհետաձգելի խնդիրներից մեկը[188]:

Այնուամենայնիվ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը պետք է համարել անվավեր և իրավական ուժ չներկայացնող՝

1) Հաշտության պայմանագրի պայմաններից մեկն այն էր, որ ստորագրումից հետո մեկ ամսվա ընթացքում այն պետք է վավերացվեր ԹԱՄԺ-ի և Հայաստանի խորհրդարանի կողմից, որը տեղի չունեցավ[189]:

2) Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո ՀՀ կառավարությունն այլևս լիազորություններ չուներ որևէ պայմանագիր ստորագրել Թուրքիայի հետ: Հայաստանի խորհրդայնացման գործընթացը սկսվել է 1920 թ. նոյեմբերի 29-ից և ավարտվել դեկտեմբերի 2-ին Երևանի պայմանագրով: Վերջինս հետփաստային իրավական ձևակերպում էր: Ա. Խատիսյանը, չունենալով Խորհրդային Հայաստանի կառավարության լիազորությունները և խախտելով միջազգային իրավունքի նորմերը՝ ստորագրեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

3) Երևանի պայմանագրով իշխանությունը խորհուրդներին էր հանձնվելու դեկտեմբերի 2-ին, գիշերը ժամը 12-ին, իսկ Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը: Կան բազմաթիվ ուսումնասիրություններ, որտեղ Ալեքսանդրապոլի պայմանագրի օրը համարվում է դեկտեմբերի 3-ը (ժամը 2-ին): Պայմանագրերի կնքման հստակ ժամերի հետ կան հակասություններ, սակայն

---

[188] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 381:
[189] Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 539:

մի բան պարզ է, որ Երևանի համաձայնագիրը կնքվել է Ալեքսանդրապոլի պայմանագրից մի քանի ժամ շուտ:

4) Միջազգային իրավունքի տեսանկյունից Ալեքսանդրապոլի (նաև Մոսկվայի և Կարսի) պայմանագիրը իրավական ուժ չունի, քանի որ պարտադրվել են ուժով: 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն «ուժի կամ այն կիրառելու սպառնալիքի միջոցով պետությանը հարկադրելը պայմանագիրը համարում է առ ոչինչ, եթե այն կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ»[190]:

[190] Առավել մանրամասն տե՛ս Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 537-538, Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 343-344, 347-348: Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 121-122: Պապյան Ա., Փոքր, բայց կարևոր ճշտում կամ ե՞րբ է ստորագրվել Ալեքսանդրապոլի պայմանագիրը // http://www.lragir.am/index.php/arm/0/comments/view/ 41368; Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքների մասին // http://www.un.am/res/UN%20Treaties/XIV_1.pdf

11. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԵՎ ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Դեռևս 1920 թ. հուլիս-օգոստոսին Մոսկվայում ռուս-թուրքական՝ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև հարաբերությունները կարգավորելու պայմանագիր կնքելու նպատակով հրավիրվել էր կոնֆերանս: Խորհրդային Ռուսաստանի կողմից բանակցությունները վարում էին արտգործժողկոմ Գ. Չիչերինը, նրա տեղակալ հայազգի Լ. Կարախանը, Թուրքիայի կողմից՝ Բեքիր Սամի բեյը (պատվիրակության ղեկավար), Յուսուֆ Քեմալ բեյը, Իբրահիմ Թալի բեյը և ուրիշներ: Պայմանագրի նախագծի, ինչպես նաև կողմերին հետաքրքրող մյուս հարցերի քննարկման և նախապատրաստման նպատակով ստեղծվում են երկու հանձնաժողովներ՝ քաղաքական և ռազմական: Ռազմական հանձնաժողովում թուրքական գլխավոր շտաբի փոխգնդապետ Սեյֆին առաջարկում է կարճ ժամանակամիջոցում Թուրքիային տրամադրել զենք ու զինամթերք, նավթ և այլն: Չնայած ոչ բոլոր պահանջներն են ընդունվում, սակայն համաձայնություն է կայացվում Թուրքիային ֆինանսական օգնություն (5 մլն ռուբլի ոսկով) ցուցաբերելու, անհրաժեշտ չափով զենք ու զինամթերք մատակարարելու շուրջ: Կոնֆերանսում խիստ տարաձայնություն է առաջացնում տարածքային սահմանազատումների հարցը: Խորհրդային Ռուսաստանը, փորձելով հանդես գալ որպես միջնորդ և մեղմել հայ-թուրքական լարված հարաբերությունները, առաջ է քաշում տարածքային հարցերի լուծման ազգագրական սկզբունքը՝ «հիմնված մինչև մեծ պատերազմը գոյություն ունեցած ազգային փոխհարաբերությունների վրա և առաջարկում է փոխադարձ վերաբնակեցում կատարել, որպեսզի երկու կողմից ստեղծվի միատեսակ ազգագրական տարածք»: Բեքիր Սամի բեյը պնդում է Բրեստի հաշտությամբ գծված սահմանների վրա և պահանջում ճանաչել թուրքական «Ազգային ուխտը»: Բեքիրը նաև պահանջում է Ռուսաստանի համաձայնությունը (թեկուզ և բանավոր)՝ գրավելու համար Հայաստանի Հանրապետության որոշ տարածքներ, հատկապես՝ Սարիղամիշի և Շահթախթիի շրջանները՝ Նախիջևանի վրայով կարմիր բանակի և Խորհրդային Ռուսաստանի հետ անմիջական կապ ստեղծելու նպատակով, առանց որի, Բեքիրի պնդմամբ,

թուրքերը մեկ ամիս էլ չեն դիմանա: Գ. Չիչերինը Թուրքերին բացատրում է, որ Ռուսաստանը չի կարող թույլ տալ, որ թուրքերն իրենց ուժերով բացեն ճանապարհը, որը կնշանակեր պատերազմ Հայաստանի և Թուրքիայի միջև: Չստանալով Գ. Չիչերինի համաձայնությունը՝ Բեքիր Սամին պահանջում է հանդիպել Վ. Ի Լենինի հետ:

Օգոստոսի 13-ին ՌԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոն Վ. Ի. Լենինի մասնակցությամբ քննարկում է Գ. Չիչերինի առաջարկները Թուրքիայի և Հայաստանի մասին, իսկ օգոստոսի 14-ին Լենինն անձամբ ընդունում է Թուրքիայի պատվիրակությանը: Թուրքիայի կողմից Շահթախթիի և Սարիղամիշի գրավման նպատակահարմարության հարցը Կովկասյան ճակատի ՌՀԿ անդամ Գ. Օրջոնիկիձեի հետ հեռագրով պարզելուց հետո Գ. Չիչերինը Բեքիր Սամիին հայտնում է, որ խորհրդային կառավարությունը դեմ չէ այդ միջոցառմանը, բայց պայմանով, որ թուրքերն այդ գծից չանցնեն:

Բանակցությունների ժամանակ Գ. Չիչերինը պնդել է, որ Թուրքիան Հայաստանին տա Վանի, Բիթլիսի մարզերից որոշ տարածքներ, որին ի պատասխան՝ Բեքիր Սամին հայտարարել է, որ Թուրքիայում հայկական վիլայեթներ չկան, և հայերը ոչ մի տեղ մեծամասնություն չեն կազմում, և այդ պահանջը համարել է Թուրքիան մասնատելու Անտանտի քաղաքականությանը համազոր:

Կոնֆերանսն ավարտվում է օգոստոսի 24-ին, կազմվում է «Ռուսաստանի և Թուրքիայի» միջև պայմանագրի նախագիծ, որը նախաստորագրվեց կողմերի պատվիրակությունների ղեկավարների կողմից: Բեքիր Սամի բեյը հայտարարեց, որ ինքը չի կարող ստորագրել պայմանագիրն առանց նրա նախագիծն իր կառավարության հետ համաձայնեցնելու: Բանակցություններն ընդհատվեցին, և թուրքական պատվիրակությունը վերադարձավ Անկարա՝ իր հետ տանելով Թուրքիային չբավարարող պայմանագրի նախագիծը:

Պայմանագրի նախագծի առաջին հոդվածում կողմերը պայմանավորվում էին չճանաչել այս կամ այն կողմին ուժով պարտադրված որևէ պայմանագիր կամ միջազգային ակտ: ՌԽՖՍՀ-ն պարտավորվում էր ոչ մի դեպքում չճանաչել Թուրքիային վերաբերող և Թուրքիայի ազգային կառավարության կողմից չճանաչված միջազգային պայմանագրերը, չեղյալ հայտարարել ցարական Ռուսաստանի և Թուրքիայի միջև նախկինում ստորագրված պայմանագրերը: Թուրքիայի հասկացության տակ ենթադրվում էր այն տարածքները, որոնք մտցված էին «Ազգային ուխտի» մեջ:

Երկրորդ հոդվածով Թուրքիան ընդունում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ուժը կորցրած լինելը, որը 1918 թ. նոյեմբերին խորհրդային կառավարությունը հայտարարել էր անվավեր:

Երրորդ հոդվածով Ռուսաստանը և Թուրքիան պետք է համաձայնության գային Հայաստանի վրայով դեպի Թուրքիա տարանցիկ ճանապարհի բացման հարցում:

Հաջորդ հոդվածները վերաբերում էին Սև ծովի և նեղուցների միջազգային կարգավիճակի կարգավորմանը, տնտեսական, ֆինանսական և հյուպատոսական համաձայնություններ կնքելուն և այլն:

Այսպիսով, պայմանագրի նախագծի 1-ին հոդվածով Խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, պարտավորվում էր չճանաչել Սևրի պայմանագիրը, որը օգոստոսի 14-ին չէր ճանաչել Մ. Քեմալը, իսկ հոդվածի վերջին պարբերությամբ չեղյալ հայտարարել «Թուրքահայաստանի» մասին դեկրետը:

Հայաստանի համար առանձնակի կարևորություն էին ստանում նաև 3-րդ և 4-րդ հոդվածները, որոնցից առաջինում ասված էր, որ կողմերը պարտավորվում են փոխադարձ համաձայնությամբ, ամենակարճ ժամկետում ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները մարդկանց և ապրանքների փոխադրման նպատակով Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհներ բացելու համար: Պարզ էր դառնում, որ այդ ճանապարհը պետք է բացվեր Հայաստանի վրայով: 4-րդ հոդվածում ասված էր. որ ՌԽՖՍՀ-ն համաձայն է ստանձնել միջնորդությունը Թուրքիայի և սահմանակից այն երրորդ պետությունների միջև, որոնք իրենց իշխանության տակ են պահում թուրքական «Ազգային ուխտի» մեջ մտցված որևէ տարածք:

Խորհրդային Ռուսաստանը սկզբունքորեն ընդունելով «Ազգային ուխտի» դրույթները, բանակցությունների ընթացքում, այնուամենայնիվ դրսևորում էր առանձնակի վերապահումներ, որոնք անհանդուրժելի էին դառնում թուրքական պատվիրակության համար, խոսքը վերաբերում էր Հայաստանին ու Վրաստանին պատկանող Կարսին, Արդահանին, Բաթումին, որոնց պատճառով էլ հիմնականում հետաձգվում է պայմանագրի վերջնական ստորագրումը: Պայմանագրի այս նախագիծը հետագայում հիմք հանդիսացավ 1921 թ. Մոսկվայի պայմանագրի համար:

Մոսկվայում քեմալական Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադը, այդ թվում նաև պատմաբան Թ. Բյուրիկողլուն հավաստում են, որ օգոստոսի 24-ի ռուս-թուրքական պայմանագրի նախագծի չհաստատման

գլխավոր պատճառն այն էր, որ ռուսական կողմը էրզրումը, Վանը, Բիթլիսը հայերին զիջելու հարց էր դնում[191]:

1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն համաձայնություն տվեց Մ. Քեմալի առաջարկությանը՝ Մոսկվայում նոր խորհրդաժողով հրավիրելու մասին: Մերժելով օգոստոսի 24-ի ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը, նա հասկացնում էր Մոսկվային, որ Թուրքիան ավելիին է սպասում, որտեղ կենտրոնականը Խորհրդային Ռուսաստանի կողմից Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչումն էր: Դեկտեմբերի 9-ին Խորհրդային Ռուսաստանը նոտայով ողջունեց թուրքական կառավարության առաջարկը՝ նշելով որ անհրաժեշտ է հայկական և ադրբեջանական կառավարությունների ներկայացուցիչների մասնակցությունը, քանի որ այդ պետությունների հետ առկա են տարածքային և այլ հարցեր: Սակայն թուրքական կառավարությունը վճռականորեն դեմ արտահայտվեց Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությանը:

Դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի կառավարությանը ներկայացրած թուրքական կառավարության նոտայում ուղղակի հարց էր տրվում թե ինչպիսի՞ն է Մոսկվայի դիրքը Հայկական հարցում: Նոտայում նշվում էր, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ թե բռնի հաշտություն է, այլ հիմնված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, և իրենք անեքսիայի են ենթարկել սոսկ թուրքական բնակչություն ունեցող տարածքները: Անհանգստություն էր հայտնվում, որ Մոսկվան ցանկանում է վերանայել հիշյալ պայմանագիրը և Հայաստանին վերադարձնել թուրքական բնակչությամբ տարածքները:

Դեկտեմբերի 19-ին, պատասխանելով թուրքական նոտային, Գ. Չիչերինը գրում է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև հաշտությունը պետք է հիմնված լինի ժողովուրդների ինքնորոշման վրա: Նա հույս էր հայտնում, որ թուրքական բանակը անհապաղ կմաքրի Ալեքսանդրապոլի շրջանը և բոլոր այն վայրերը, որոնք գտնվում են Կարսի շրջանից հյուսիս և արևելք[192]:

Խորհրդային Ռուսաստանին հայտնի էր Թուրքիայի հակախորհրդային և հակառուսական դիրքորոշումը[193]: 1920 թ. դեկտեմբերի

---

[191] Մարլյան Զ., Երեք դաշնագիրներ (Ալեքսանդրապոլ, Մոսկվա, Կարս), Բեյրութ, 1979, էջ 43:

[192] Документы внешней политики СССР, т. 3, с. 392-399.

[193] Рубинштейн Н. Л., Ближний и Средний Восток после первой мировой войны. Лозанская конференция, М., 1952, с. 21.

21-ի կուսակցական ֆրակցիայի փակ նիստում Վ. Ի. Լենինը ասել է. «Հայաստանի դեմ ուղղված հարձակումը մեր դեմ էր ուղղված... Թուրքիան ղեկավարում են կադետներ, ազգայնականներ, որոնք պատրաստ են մեզ վաճառել Անտանտին»[194]: Այնուամենայնիվ Խորհրդային Ռուսաստանը չէր կարող պատերազմի մեջ մտնել Թուրքիայի հետ, որովհետև մտավախություն ուներ, որ պատերազմում Թուրքիան կմիանա Անտանտին և առաջին հերթին Անգլիային: Այս վտանգից խուսափելու համար, Խորհրդային Ռուսաստանը դիմում է զիջումների ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի հաշվին[195]:

Մենշևիկյան Վրաստանը չհրավիրվեց մասնակցելու ռուս-թուրքական բանակցություններին, քանի որ մտավախություն կար, որ նա կարող է Անտանտի լրտեսը լինել: Խորհրդային Հայաստանի կառավարությունը այդ բանակցություններին մասնակցելու համար Մոսկվա ուղարկեց պատվիրակություն հետևյալ կազմով՝ Ա. Բեկզադյան, Ա. Կարինյան. Ս. Տեր-Գաբրիելյան: Սակայն Հայաստանի պատվիրակությանը թույլ չտրվեց մասնակցելու բանակցություններին[196]:

1921 թ. փետրվարին Մոսկվայում ռուս-թուրքական խորհրդաժողով հրավիրելու մասին լուրը ստիպեց դաշնակիցներին հրավիրել իրենց խորհրդաժողովը, որը նախատեսվեց Լոնդոնում՝ փետրվարի 21-ին: Նրան մասնակցելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Բելգիայի, Գերմանիայի, Թուրքիայի ներկայացուցիչները և հայ պատվիրակները: Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Բեքիր Սամի բեյը:

Լոնդոնի խորհրդաժողովի փետրվարի 26-ի նիստում ելույթ ունենալով՝ Բեքիր Սամին կոչ արեց ճանաչել ԹԱՄԺ-ի ընդունած «Ազգային ուխտը», չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը և հայ-թուրքական սահմանը ճանաչել ըստ Ալեքսանդրապոլի պայմանագրի[197]:

1921 թ. փետրվարի կեսին Հայաստանում սկսվեց հակախորհրդային ապստամբություն: Ս. Վրացյանի գլխավորած հայրենիքի փրկության կոմիտեն հայտարարեց իշխանությունը իր ձեռքը վերցնելու և Ալեքսանդրապոլի պայմանագիրը ճանաչելու մասին[198]:

---

[194] Լենին Վ. Ի., Երկեր, հ. 42, էջ 271:
[195] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 413:
[196] Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Ե., «Զանգակ 97», 2007, էջ 102:
[197] Նույն տեղում, էջ 102-103:
[198] Հայաստանում 1921 թ. փետրվարյան ապստամբության մասին առավել մանրամասն տե՛ս Վրացյան Ս. նշվ. աշխ., էջ 557-580:

Անկասկած փետրվարյան խռովությունն իր բացասական կնիքը թողեց Մոսկվայի և Լոնդոնի բանակցությունների վրա, երբ շոշափվում էր Հայկական հարցը:

Թուրքական պատվիրակությունը, որի մեջ մտնում էին Յուսուֆ Քեմալը բեյը, Ռ. Նուրի բեյը, Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադ փաշան, Մոսկվա ժամանեց փետրվարի 18-ին: Պաշտոնական բանակցությունները տեղի ունեցան փետրվարի 26-ին: Մ. Քեմալը հրահանգ էր տվել ամեն գնով խուսափել հայ-թուրքական տարածքային հարցերը քննարկելուց և ձգտել նրան, որպեսզի ռազմաքաղաքական դաշինք կնքվի Ռուսաստանի հետ՝ համարելով, որ տարածքային հարցերը Ալեքսանդրապոլի պայմանագրով արդեն լուծվել են: Կոնֆերանսում ՌԽՖՍՀ-ն ներկայացնում էին Գ. Չիչերինը և Զ. Կորկմասովը:

Երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշվում է բանակցությունների հիմքում դնել ռուս-թուրքական առաջին կոնֆերանսի մշակած օգոստոսի 24-ի պայմանագրի նախագիծը, որը, սակայն, պետք է կրեր փոփոխություններ և լրացվեր: Այս նպատակով ստեղծվում են երեք հանձնաժողովներ՝ քաղաքական, իրավաբանական և խմբագրական: Կոնֆերանսում քննարկվող հարցերից առավել կարևորն ու դժվարությունն հարուցողը տարածքային սահմանազատման խնդիրն էր: Թուրքական պատվիրակությունն այս հարցում ցուցաբերում է մեծ համառություն՝ հավակնելով Բաթումի, Կարսի, Սուրմալուի և Նախիջևանի մարզերին, որոնց նկատմամբ իր իրավունքները հիմնավորելու համար վկայակոչում է օսմանյան խորհրդարանի ընդունած «Ազգային ուխտը»: Միաժամանակ, քեմալականները ձեռնարկում են գործուն քայլեր Բաթումի և Նախիջևանի գրավման համար՝ ձգտելով Խորհրդային Ռուսաստանին կանգնեցնել կատարված փաստի առաջ: Նախիջևանում իշխանությունը գրավելու նպատակով ապստամբության մի քանի փորձ է կատարվում, իսկ մարտի 11-ին թուրքական մի ջոկատ, Վրաստանի մենշևիկյան կառավարության համաձայնությամբ, մտնում է Բաթում: Համոզվելով, որ Բաթումի և Նախիջևանի հարցում զիջում չի լինելու, թուրքական պատվիրակությունը որոշում է չափավորել իր պահանջները, որպեսզի չզրկվի Խորհրդային Ռուսաստանի օգնությունից: Մինչև մարտի 10-ը տարածքային հարցերը քննարկվում են կոնֆերանսի ոչ պաշտոնական նիստերում, որոնց սովորաբար մասնակցում էին Ի. Ստալինը և Բ. Շահթախթինսկին: Մարտի 10-ին կոնֆերանսն անցնում է տարածքային հարցերի պաշտոնական քննարկմանը: Գ. Չիչերինը հայտարարում է, որ Խորհրդային Ռուսաստանը

պատրաստ է ճանաչել թուրքերի կողմից հռչակված «Ազգային ուխտի» սահմանները, սակայն պահանջում է կատարել որոշ փոփոխություններ Բաթումի մասում: Չիչերինը ընդգծեց Բաթումի՝ որպես սևծովյան նավահանգստի բացառիկ կարևորությունը ամբողջ խորհրդային հանրապետությունների համար: Երկար վիճաբանություններից հետո ընդունվում է որոշում, որով Բաթումը մնում է Վրաստանի կազմում, Թուրքիան Բաթումի նավահանգստով ազատ և առանց մաքսի տարանցիկ առևտրի իրավունք է ստանում:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 14-ին Գ. Չիչերինը պատասխանելով Վ. Ի. Լենինի հարցումներին՝ նշել է, որ Կարսը Բաթումի բանալին է, ուստի խիստ կարևոր է Կարսը Հայաստանին թողնելը, մինչդեռ Թուրքիան ամեն կերպ ձգտում էր տիրել Կարսին: Իսկ այն պայմաններում, երբ Հայաստանում իշխանության անցած Հայրենիքի փրկության կոմիտեն Ս. Վրացյանի գլխավորությամբ թուրքերին առաջարկել էր հայ-թուրքական հարաբերությունների հիմքում դնել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, Ռուսաստանը վարանում էր քննարկման դնել Կարսը Հայաստանին վերադարձնելու հարցը, վախենալով, որ դա կարող է ամրապնդել դաշնակցականների դիրքերը: Ռուսաստանը ի վերջո հրաժարվեց Կարսը Հայաստանին վերադարձնելու պահանջից:

Հայաստանի սահմանների հարցի կապակցությամբ Չիչերինը հայտարարում է, որ ռուսական կառավարությունը չի պնդի սահմանը Արփաչայից արևմուտք և Արաքսից հարավ անցկացնելուն: Դա նշանակում էր, որ Թուրքիային էին անցնում ոչ միայն ամբողջ Կարսի մարզը, այլև Սուրմալուի գավառը, որը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Սակայն թուրքական պատվիրակությունը չի բավարարվում այդքանով և պահանջում է, որպեսզի Նախիջևանի մարզը չմնա Հայաստանին, այլ դրվի Ադրբեջանի հովանավորության տակ, վերջինս էլ պետք է պարտավորվեր ապագայում չզիջել այդ հովանավորությունը մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին: Չիչերինն առաջարկում է սահմանափակվել Նախիջևանի մարզը ուղղակի Ադրբեջանի հովանավորությանը հանձնելով, իսկ թուրքական պատվիրակությունը պահանջում է ավելին՝ Նախիջևանին միացնել Շարուր-Դարալագյազը և Երևանի գավառի մի մասը՝ մինչև Արարատ կայարանը: Այս առաջարկության նպատակը հետևյալն էր. չկարողանալով գրավել Նախիջևանը՝ Թուրքիան ձգտում էր գոնե դրա հետ ունենալ ընդհանուր սահման: Երկարատև վիճաբանություններից հետո ընդունվում է որոշում, որ այդ մասում սահմանը ճշտի Հայաստանի, Ադրբեջանի և

Թուրքիայի ներկայացուցիչների խառը հանձնաժողովը: Տարածքային հարցերի քննարկումից հետո Չիչերինն հայտարարում է՝ քանի որ թուրք-անդրկովկասյան սահմանը ենթակա է հաստատման, ապա այն պայմանագրերում, որոնք Թուրքիան կնքելու էր այդ հանրապետությունների հետ, չպետք է թույլատրվի ինքնիշխանության որևէ խախտում և որ Թուրքիայի ցանկացած փորձ այս ուղղությամբ Խորհրդային Ռուսաստանը կդիտի որպես իր դեմ ուղղված միտում: Նման հայտարարությունը հետապնդում էր անդրկովկասյան հանրապետությունները, մասնավորապես Հայաստանը, Թուրքիայի ոտնձգություններից պաշտպանելու նպատակ, քանի որ վերջինս շարունակում էր կառչել Ալեքսանդրապոլի պայմանագրից: Սակայն Հայաստանի ինքնիշխանությունն արդեն խախտվել էր ամենահիմնական և ամենակենսական հարցում՝ սահմանների հարցում: Մարտի 14-ի նիստի ժամանակ երկու կողմերն էլ ներկայացնում են պայմանագրի իրենց նախագծերը և սկսում քննարկումը:

Կոնֆերանսի եզրափակիչ նիստը տեղի է ունենում մարտի 16-ին, և նույն օրն էլ ստորագրվում է «Բարեկամության և եղբայրության պայմանագիր ՌԽՖՍՀ և Թուրքիայի միջև»: Ստորագրվում է նաև համաձայնագիր, որով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում է Թուրքիային անհատույց տրամադրել 10 միլիոն ռուբլի ոսկով, զենք, զինամթերք և այլն:

ՌԽՖՍՀ կողմից պայմանագիրը ստորագրեցին Գ. Չիչերինը, Զ. Կորկմասովը, Թուրքիայի կողմից՝ Յուսուֆ Քեմալ բեյը, Ռ. Նուրի բեյը, Ալի Ֆուադ փաշան: Պայմանագիրը բաղկացած էր 16 հոդվածներից և 3 հավելվածից:

Խորհրդային Ռուսաստանը պայմանագիրը վավերացրեց մարտի 20-ին, իսկ ԹԱՄԺ-ը՝ հուլիսի 22-ին:

Պայմանագրի կնքումից հետո, 1921 թ. ընթացքում Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային տվեց ավելի քան 33 հազ. հրացան, 58 մլն փամփուշտ, 327 գնդացիր, 54 հրանոթ, 130 հազ. արկ, 6,5 մլն ոսկի ռուբլի: Այդ օգնությունը շարունակվեց նաև հետագայում[199]:

Պայմանագրի հիմնական հոդվածները հանգում էին հետևյալին՝ 1-ին հոդվածով Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը փոխադարձաբար հրաժարվում և չեղյալ էին հայտարարում Սևրի պայմանագիրը և «Թուրքահայաստանի» մասին դեկրետը: Ռուսաստանը իրեն

---

[199] Գալոյան Գ., Հայատանը և մեծ տերությունները, էջ 456:

«իրավունք վերապահեց» հայերի փոխարեն, անտեսելով նրա ազգային և պետական շահերը, հրաժարվել հայկական պահանջատիրությունից և Հայ դատից: Կարսի մարզը (Օթի, Արդահան, Կաղզվան, Սարիղամիշ) և Սուրմալուի գավառը հանձնվեց Թուրքիային: Վերջինս, ինչպես հայտնի է, երբեք չի եղել Օսմանյան Թուրքիայի կազմում: Հայաստանի և Թուրքիայի սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով, ինչը գոյություն ունի մինչ օրս: 3-րդ հոդվածով Նախիջևանը հայտարարվեց Ադրբեջանին ենթակա ինքնավար տարածք՝ առանց երրորդ պետությանը, այսինքն՝ Հայաստանին հանձնելու պայմանով: Ռուսաստանի համաձայնությամբ Նախիջևանը պետք է դառնար այն հենակետը, որով Թուրքիան կկարողանար կապ ունենար Ադրբեջանի և թյուրքալեզու այլ ժողովուրդների հետ: Ապագան ցույց տվեց, որ խորհրդային տարիներին Նախիջևանը գրեթե ամբողջությամբ հայաթափվեց, իսկ 1921 թ. հուլիսին Արցախը բռնակցվեց Ադրբեջանին:

Թուրքիայի պնդմամբ մտցվեց 15-րդ հոդվածը, ըստ որի Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց: Ինչպես ցույց կտա ապագան, ՌԽՖՍՀ-ի կողմից «Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմվող քայլերը, հատկապես Հայաստանի տարածքների հարցում նրա կողմից միակողմանի պարտադրանքի բնույթ ունեին, որոնք բեկանման ենթակա չէին[200]:

Մոսկվայի պայմանագիրը քեմալական Թուրքիայի հաղթանակն էր, քանի որ նա կարողացավ չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը և գրավել Հայաստանի Հանրապետությանը պատկանող 24 հազ. քառ կմ տարածք: Պայմանագրում խոսք անգամ չկար Արևմտյան Հայաստանի և Հայկական հարցի գոյության մասին:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը բողոք ներկայացրեց Ռուսաստանի կառավարությանը առանց իր մասնակցության Մոսկվայի պայմանագրով տարածքային հարցեր լուծելու կապակցությամբ: Սակայն դա ստեղծված իրավիճակը չփոխեց:

---

[200] Մոսկվայի պայմանագրի լրիվ տեքստը և հավելվածները տե՛ս Документы внешней политики СССР, т. 3, М.: Госполитиздат, 1959, с. 597-604, նաև Հայաստանը միջազգային դիվանագիտության և արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.), էջ 499-507:

Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ Մոսկվայի պայմանագրով չեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը և այն, որ առանց Խորհրդային Ռուսաստանի աջակցության Խորհրդային Հայաստանը չէ կարող դիմադրել Թուրքիայի նվաճողական քաղաքականությանը: 1921 թ. ապրիլի 4-ին Գ. Չիչերինը հայտարարել էր, որ Ռուսաստանը ոչ մի բանի առաջ կանգ չի առնի, եթե կրկնվեն Ալեքսանդրապոլի պայմանագիրը Հայաստանին ստիպողաբար ճանաչել տալու փորձերը: Խորհրդային Ռուսաստանի վճռական գործողությունների արդյունքում է, որ 1921 թ. մայիսին թուրքական զորքերը դուրս բերվեցին Ալեքսանդրապոլից:

Անդրադառնալով պայմանագրի օրինական կողմին՝ պետք է արձանագրել հետևյալը.

1) Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է, ոչ թե 1921 թ. մարտի 16-ին, այլ 18-ին, սակայն փաստաթղթով այն թվագրված է 16-ով: Պայմանագրի ամսաթվի այս կեղծիքն ունի իր պատճառները: Ինչպես հայտնի է, Մոսկվայի խորհրդաժողովին զուգահեռ Լոնդոնում ընթանում էր մեկ այլ միջազգային խորհրդաժողով, որին մասնակցում էին, ինչպես քեմալական Թուրքիայի, այնպես էլ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունները: Լոնդոնի կոնֆերանսում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Կլասինը խնդիր ուներ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Անգլիայի հետ: Սակայն անգլիական քաղաքական վերնախավն ի դեմս Ու. Չերչիլի և Ջ. Քերզոնի Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու հարցում առաջ էին քաշում նախապայմաններ, որոնց թվում պնդում էին, որ վերջինս վերանայի իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, մասնավորապես հայ-թուրքական հարաբերություններում իր որդեգրած մոտեցումը: Այնուամենայնիվ 1921 թ. մարտի 16-ին Կրասինին հաջողվում է Լոնդոնում Անգլիայի հետ կնքել առևտրական պայմանագիր: Դա Խորհրդային Ռուսաստանի de facto ճանաչումն էր Անգլիայի կողմից: Գ. Չիչերինը քաջ գիտակցում էր, որ խորհրդա-անգլիական պայմանագրից հետո, մարտի 18-ին թուրքերի հետ կնքվելիք պայմանագիրը կարող էր հանգեցնել անգլիացիների հետ դեռ չհաստատված հարաբերությունների տապալման: Իրավիճակը փրկելու համար ընտրվեց «թուրքերի հետ ավելի վաղ կնքված պայմանագրով» անգլիացիներին փաստի առաջ կանգնեցնելու կեղծ մեթոդը, թե իբր խորհրդա թուր-

քական պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 18-ին, այլ 16-ին՝ խորհրդա-անգլիական պայմանագիրց ավելի շուտ[201]:

Այս մասին է վկայում Գ. Չիչերինի մարտի 17-ին Վ. Ի. Լենինին արված զեկույցն այն մասին, որ թուրքերի հետ պայմանագիրը կստորագրվի հաջորդ օրը, սակայն պայմանագրի ամսաթիվը կնշվի մարտի 16-ը, երբ իրենք իբր դեռ չգիտեին Անգլիայի հետ ստորագրված պայմանագրի մասին: Կեղծիքը քողարկելու համար Գ. Չիչերինը Կրասինին հեռագիր է ուղարկում, որտեղ ցուցում է տալիս անգլիացիների հետ խնդիրներ ծագելու դեպքում պնդել, որ խորհրդա-թուրքական պայմանագիրը կնքվել է խորհրդա-անգլիական պայմանագրից առաջ նույն օրը և Մոսկվայում չէին սպասում, որ Լոնդոնում բանակցությունները այդքան արագ կավարտվեին: Հեռագրի վերջում, որպես կատարածի արդարացում, ասվում էր, որ ի վերջո Անգլիան չի կարող Խորհրդային Ռուսաստանից պահանջել հրաժարվել Կարսը և Արդահանը Թուրքիային զիջելուց, ինչը կհանգեցնի նրա հետ պատերազմի: Ակնհայտ է, որ Մոսկվայի պայմանագրի ամսաթվի կեղծելու փաստն ի սկզբանե ստվեր է գցում դրա օրինականության վրա[202]:

2) Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է տվյալ ժամանակաշրջանի և այսօր էլ գործող միջազգային իրավունքի հիմնական նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտումներով: Մասնավորապես այս պայմանագրի ստորագրման պահին, վաղուց ուժի մեջ էին մտել դեռևս Հաագայի Խաղաղության կոնֆերանսի ընթացքում ի թիվս 13 այլ կոնվենցիաների 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» և «Պայմանագրային պարտավորությունների կատարման հարցում ուժի կիրառման սահմանափակման մասին» կոնվենցիաները, որոնցում շեշտադրվում էին այն սկզբունքները, որ պետությունների անվտանգության և ժողովուրդների բարեկեցության հիմքում պետք է դրվեն իրավունքի և արդարության սկզբունքները, իսկ պետությունները չպետք է դիմեն ռազմական ուժի այլ պետությունների նկատմամբ պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, նշված սկզբունքները ավելի հստակ տեղ գտան Ազգերի լիգայի Կանոնադրության մեջ, որտեղ ամրագրվում էին ազգերի միջև հարաբերություններում ստանձնած պարտավորու-

---

[201] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 122-123:

[202] Նույն տեղում, էջ 123-124:

թյունները հարգելու և կատարելու, ինչպես նաև պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը չխախտելու սկզբունքները: Նշված սկզբունքները խախտելու դեպքում Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն կազմակերպությունը իրավասություն ուներ դիմելու անգամ պատժամիջոցների, ընդհուպ մինչև ռազմական ուժի կիրառում, որպեսզի վերականգնի խախաղությունն ու արդարությունը: Նշված միջազգային փաստաթղթերը շարունակեցին միջազգային պայմանագրային իրավունքի համակարգման (կոդիֆիկացիայի) գործընթացը, և պետք է արձանագրել, որ Մոսկվայի և առավել ևս Կարսի պայմանագրերում ակնհայտորեն նկատվում են արդեն իսկ այդ պահին միջազգային իրավունքի անբաժան մասը կազմող պայմանագրային պարտավորությունները կատարել տալու նպատակով ուժի կիրառման բացառման ու պետությունների տարածքային ամբողջականությունը և քաղաքական անկախությունը չխախտելու նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտումներ[203]:

Միջազգային պայմանագրերի սովորութային իրավունքն ամբողջացնող հիմնական միջազգային փաստաթուղթ համարվում է Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիան, որն ամբողջացրեց միջազգային իրավունքի պայմանագրային ուղղության կոդիֆիկացիան, և ներկայումս ցանկացած երկկողմ կամ բազմակողմ պայմանագրի օրինականության հարցը ճշգրտվում է հենց տվյալ փաստաթղթի դրույթներով: Այս իմաստով ծագում է Վիեննայի կոնվենցիայի հետադարձ ուժի և Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի նկատմամբ նրա կիրառելիության հարցը: Կոնվենցիայի 4-րդ հոդվածով այն կիրառելի է միայն կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո պետությունների կողմից ստորագրված պայմանագրերի նկատմամբ, սակայն նույն հոդվածով նաև սահմանվում է, որ կոնվենցիայի հետադարձ ուժի բացառման դրույթը չպետք է վնաս հասցնի կոնվենցիայում շարադրված միջազգային իրավական նորմերի գործադրմանը, որոնք կիրառելի են պայմանագրերի նկատմամբ ընդհանրապես: Այդ հոդվածը, փաստորեն, արձանագրում է Վիեննայի կոնվենցիայի կոդիֆիկացնող բնույթը, այսինքն՝ կոնվենցիայում նոր բան չի հայտնագործվել, այլ ընդամենը ամփոփվել են

[203] Նույն տեղում, էջ 124-125:

մինչ այդ միջազգային պայմանագրերի սովորութային իրավունքին վերաբերող նորմեր[204]:

3) Խորհրդային Հայաստանին պատվիրակությանը չի թույլատրվել մասնակցել խորհրդա-թուրքական բանակցություններին և նա պայմանագրի կնքման կողմ չի հանդիսանում, այնինչ Խորհրդային Հայաստանը ինքնիշխան պետություն էր, առանց որի մասնակցության Կարսի մարզը, Սուրմալուի գավառը օտարվեցին նրանից և տրվեցին քեմալական Թուրքիային, իսկ Նախիջևանի գավառը՝ Խորհրդային Ադրբեջանին: Դա միջազգային իրավունքի ևս մի խախտում է, քանի որ ըստ 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի («Երրորդ պետություններին վերաբերող ընդհանուր նորմի»)՝ պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և «պայմանագիրը երրորդ պետության համար պարտավորություններ կամ իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնության»[205]:

4) Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը հանձնվում էր Ադրբեջանի խնամակալությանը, պայմանով, որ վերջինս այն չի զիջի երրորդ պետությանը (Հայաստանին): Այս դրույթները միջազգային իրավունքի jus cogens (իմպերատիվ), այսինքն՝ պարտադիր ու անբեկանելի նորմերի խախտում են: Համաձայն Վիեննայի կոնվենցիայի վերոհիշյալ 34-րդ հոդվածի, պայմանագիրը կարող է պարտադիր լինել այն ստորագրող կողմերի համար, իսկ 35-րդ հոդվածով այլ կողմերի միջև ստորագրված պայմանագիրը կարող է պարտավորություն առաջացնել երրորդ կողմի համար միայն այն դեպքում, երբ այն որոշակիորեն գրավոր ձևով ստանձնել է այդ պարտավորությունը[206]:

1918 թ. հունվարի 15-ին «Խորհրդային կառավարության ազգային քաղաքականությանը հավանություն տալու» Խորհուրդների համառուսաստանյան երրորդ համագումարի որոշումով արձանագրում էր, որ խորհրդային իշխանությունները Ռուսական կայսրության կազմում բնությամբ պահվող ժողովուրդների ազգային հարցերում միանշանակ առաջնորդվելու են ազգերի ինքնորոշման սկզբունքով: Այսպիսով, Խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, հրաժարվում էր Ռուսական կայսրության

---

[204] Նույն տեղում, էջ 125:

[205] Տե՛ս Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին // http://www.un.am/res/UN%20Treaties/XIV_1.pdf

[206] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 126, տե՛ս նաև՝ Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին // http://www.un.am/res/UN%20Treaties/XIV_1.pdf

նախկին տարածքներից՝ իբրև ժառանգությունից, ինչի արդյունքում անկախություն ստացան Ֆինլանդիան և Ուկրաինան: Ռուսական կայսրության նախկին տարածք հանդիսացող Արևելյան Հայաստանում ստեղծվել էր անկախ, ինքնիշխան պետություն, որը որևէ փաստաթղթով չէր ընդունել Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը՝ Թուրքիայի հետ իր հարաբերություններում և հետևաբար չէր տվել իր գրավոր համաձայնությունը, կամ չէր լիազորել Մոսկվայի պայմանագիրը ստորագրող կողմերին որոշելու իր տարածքների ճակատագիրը: Համաձայն Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածի jus cogens իմպերատիվ սկզբունքների կնքված պայմանագրերը առ ոչինչ են և չեն կարող ունենալ իրավական ուժ[207]:

5) Խորհրդային Ռուսաստանը ստորագրելով Մոսկվայի պայմանագիրը խախտեց նաև իր ներպետական իրավական ակտերը: Ինչպես հայտնի է, իր արտաքին քաղաքական առաջին փաստաթղթում «Խաղաղության մասին դեկրետում» խորհրդային կառավարությունը սկզբունքորեն դատապարտել էր անեքսիան, այն բնութագրելով ոչ միայն որպես օտարի տարածքի բռնազավթում, այլ իբրև որևէ ազգի ազատորեն արտահայտված կամքին հակառակ, բռնությամբ նրան որևէ պետության կազմի մեջ պահելու միջոց՝ ազգերի ինքնորոշման իրավունքի ոտնահարում: Հետևաբար ստորագրելով Մոսկվայի պայմանագիրը և Կարսը, Արդահանը, Սուրմալուն Թուրքիայի սեփականություն ճանաչելով, Խորհրդային Ռուսաստանը հակառակ իր հռչակած սկզբունքների ճանաչում և վավերացնում էր Թուրքիայի անեքսիայի արդյունքները: Դրանով նա չեղյալ էր հայտարարում նաև «Թուրքահայաստանի մասին դեկրետը», որով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախության հռչակում[208]:

6) Մոսկվայի պայմանագրի անմիջական հոդվածներն ուղղակի հակասության մեջ են միմյանց հետ: Միջազգային իրավունքում առկա ուժի սպառնալիքի կամ հարկադրանքի տակ ստորագրված պայմանագրերի անընդունելիության պարտադիր սկզբունքն ամրագրված է Մոսկվայի պայմանագրի հենց 1-ին հոդվածով, որով կողմերը հրաժարվում էին ինչպես Սևրի պայմանագրից այնպես էլ «Թուրքահայաստանի մասին

---

[207] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 126-127:

[208] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 127-128:

դեկրետից»: Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր ճանաչել Թուրքիային այնպիսի տարածքներով, որոնք ընդգրկված էին «Ազգային ուխտի» մեջ (մոտավորապես համապատասխանում է ժամանակակից Թուրքիայի սահմաններին)[209]:

Սակայն այդ նորմի ամրագրումը չխանգարեց, որ 15-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը Թուրքիայի հանդեպ պարտավորություն ստանձնի՝ քայլեր ձեռնարկելու անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ, որպեսզի նրանք Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում պարտադիր ճանաչեն իրենց վերաբերող հոդվածները: Դա նշանակում էր, որ Ռուսաստանը պարտավորվում էր ճնշման և ահաբեկման միջոցով ստիպել հատկապես Հայաստանին ճանաչել Թուրքիայի հետ կնքված իր ապօրինի գործարքը, ինչը միջազգային իրավունքի կոպիտ խախտում է: Այսպիսով, Կարսի պայմանագիրը նախապատրաստող Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի կոպիտ խախտումներով և այն չի կարող ճանաչվել որպես իրավական ուժ ունեցող պայմանագիր[210]:

7) Ինչպես գիտենք, 1945 թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը կայացավ Բեռլինի (Պոտսդամի) վեհաժողովը, որտեղ ԽՍՀՄ-ը տարածքային պահանջներ ներկայացրեց Թուրքիային[211]: Այն է՝ չեղյալ հայտարարել 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ու Խորհրդային Հայաստանին վերադարձնել անօրինակությամբ խլված Կարսի մարզը և Արևմտյան Հայաստանի այլ տարածքները[212]: Հուլիսի 16-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ արտգործժողկոմ Վ. Մոլոտովի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Ա. Իդենի զրույցը, որի ընթացքում Վ. Մոլոտովը ասել է, որ 1921 թ. թուրքերը օգտվելով խորհրդային պետության թուլությունից, այսինքն՝ ուժի կիրառման սպառնալիքով, նրանից խլել են Խորհրդային Հայաստանի տարածքի մի մասը: Դրանով Վ. Մոլոտովը ցանկացել է ընդգծել, որ Թուրքիայի գործողությունները հանդիսանում են միջազգային իրավական նորմի խախտում (որն ապագայում ամրագրվեց Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվա-

---

[209] Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության և արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923 թթ.), էջ 500:

[210] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 128:

[211] Տես **Киракосян А. Дж.**, Армения и советско-турецкие отношения в дипломатических документах: 1945-1946 гг., Е.: Национальный архив Армении, 2010.

[212] Берлинская (Потсдамская) конференция рукавадителей трех союзных держав СССР, США, Великобритании, 17 июля – 2 августа 1945 г., сб. документов, М.: Политиздат, 1984, с. 136-151.

ծով) և ուրենմ Խորհրդային Հայաստանին Կարսի և Արդահանի վերադարձման պահանջը օրինական է:

Ելնելով իրենց աշխարհաքաղաքական շահերից ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան իրենց պաշտպանության տակ առան Թուրքիային՝ դիմադրելով Խորհրդային Միությանը: 1945 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովի ջանքերը Կարսը և Արդահանը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցում հաջողության չհասավ[213]: Հայկական տարածքների վերադարձման, այսինքն՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերանայման հարցը իր ուրույն ազդեցությունը ունեցավ «սառը պատերազմն» ազդարարող՝ «զսպման» դրույթի, «Տրումենի հայեցակարգի», ինչպես նաև «Մարշալի պլանի» առաջադրման համար, որտեղ արտացոլված էին ԽՍՀՄ-ի դեմ պայքարի գլխավոր սկզբունքները: Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար 1952 թ. Արևմուտքի պետությունները ԱՄՆ-ի գլխավորությամբ նրան դարձրին ՆԱՏՕ-ի անդամ[214]:

«Սառը պատերազմի» պաշտոնական մեկնարկի, միջազգային լարվածության ուժեղացման և ատոմային զենքի կիրառմամբ նոր պատերազմի սպառնալիքի պայմաններում՝ 1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու և խաղաղություն ու անվտանգու-

---

[213] Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Ե., «Գիտություն», 2001, էջ 44:

[214] Նավոյան Է., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ազդեցությունը Հայաստանի առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և հայության վրա, «Կանթեղ», 4 (65), Ե., «Աստղիկ» հրատ., 2015, էջ 157-160:

՝ ԽՍՀՄ քաղբյուրոյի որոշ անդամների հուշերի համաձայն, երբ Ի. Ստալինին զեկուցել են ճապոնական Հերոսիմա և Նագասակի քաղաքների վրա ատոմային ռմբակոծությունների արդյունքների մասին, նա որոշ ժամանակ լուռ մտածելուց հետո ասել է, որ արշավանքը դեպի Ստամբուլ հետաձգվում է առավել բարենպաստ ժամանակների համար, և թուրքերը թող միշտ երախտապարտ լինեն ճապոնացիներին, որոնք հանուն նրանց զոհաբերեցին իրենց (Երկրորդ աշխարհամարտի տարիներին խորհրդա-թուրքական հարաբերությունները լարված էին. 1942 թ. Անդրկովկասի սահմանի վրա կենտրոնացված էր թուրքական 26 դիվիզիա: Եթե խորհրդային բանակը պարտություն կրեր Ստալինգրադի ճակատամարտում, ապա Թունքիան, որպես Գերմանիայի դաշնակից, կհարձակվեր ԽՍՀՄ-ի վրա): Մարշալ Հ. Բաղրամյանի, մի անգամ մասնավոր զրույցի ժամանակ ասել է, որ երբ հնարավորություն ստեղծվեց Հայկական հարցի պատմական արդարության վերականգնման համար, արևմտյան տերությունները «թափահարեցին միջուկային մահակը»՝ իրենց հովանու տակ վերցնելով Թուրքիային: Չլիներ դա Արևմտյան Հայաստանի խնդիրը կլուծվեր հաշված օրերի ընթացքում
(Несостоявшиеся войны Сталина // http://www.vremya.ru/2008/130/13/208743.html; Не нужен нам берег турецкий? // http://www.samoz.ru/article.php?id=48):

թյուն պահպանելու համար Հայաստանի և Վրաստանի (վերջիններս նույնպես հավակնում էին հայկական տարածքներին) կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից: Այսպիսով, խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից ոչ մի տարածքային պահանջներ չունի: Խորհրդային Հայաստանը, չունենալով միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ, անկարող էր, որևէ կերպ ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Հայ ժողովրդի արդարացի պահանջները կրկին անգամ զոհաբերվեցին մեծ տերությունների աշխարհաքաղաքական շահերին[215]:

Այսպիսով, ինչպես տեսանք, Երկրորդ Աշխարհամարտից հետո, ԽՍՀՄ-ի կողմից Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերանայման հարցը Թուրքիային պաշտպանող Արևմուտքի երկրներից և հատկապես ԱՄՆ-ից եկող ուժի սպառնալիքի պայմաններում տեղի չունեցավ: Եվ ուրեմն 1953 թ. մայիսի 30-ի հայտարարությունը ոչինչ չարժեր, իսկ Խորհրդային Հայաստանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր և նրա «կառավարության» հայտարարությունն էլ իրենից ոչինչ չէր նշանակում:

Անհրաժեշտության դեպքում ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնությունը և նրա ռազմավարական դաշնակից Հայաստանի Հանրապետությունը միջազգային ատյաններում կարող են հանդես գալ համատեղ՝ պահանջելով վերանայման ենթարկել բազմաթիվ առումներով միջազգային իրավունքի նորմերը խախտող Մոսկվայի և Կարսի պայմանագրերն ու Հայաստանին վերադարձնել Կարսն ու Արդահանը: Ռուսաստանը կարող է խոստովանելով և վկայակոչել վերոհիշյալ այն իրավախախտումները, որը Խորհրդային Ռուսաստանը Թուրքիայի հետ համատեղ իրականացրել են 1921 թ. հանձինս՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի: Ապացուցել, որ 1945-1953 թթ. ուժի սպառնալիքի պայմաններում ԽՍՀՄ-ին պարտադրվել են վերանայման չենթարկել Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, որը Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի խախտում է:

Դրանով Ռուսաստանը միայն կշահի, քանզի Հայաստանը Անդրկովկասում հանդիսանում է նրա շահերի և անվտանգության միակ անդավաճանելի պատվարը:

---

[215] Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 62-63:

12. ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն առաջարկեց դրա հիման վրա համապատասխան պայմանագիր կնքել անդրկովկասյան հանրապետությունների հետ: Մոսկվայում գտնվող անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ մշակվեց պայմանագրի նախագիծը և Գ. Չիչերինի բացատրական գրության հետ ուղարկվեց Թիֆլիս:

Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին նախապատրաստվելու նպատակով 1921 թ. մայիսի 7-ին Բաքվում հրավիրվեց անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդատվություն: Այստեղ Հայաստանից մասնակցում էր Ա. Բեկզադյանը, Վրաստանից՝ Օրախելաշվիլին, Ադրբեջանից՝ Մ. Հուսեյնովը, ինչպես նաև ՌԿ(բ)Կ ԿԿ անդամ Գ. Օրջոնիկիձեն և Անդրկովկասում ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Բ. Լեգրանը[216]:

Խորհրդաժողովը որոշեց, որ Թուրքիայի հետ առաջիկա խորհրդաժողովում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունները հանդես են գալու միասնաբար՝ որպես մեկ պայմանավորվող կողմ[217]:

Խորհրդակցությունում որոշվեց, որ բանակցությունների հիմքում պետք է դրվի Մոսկվայի պայմանագիրը:

1921 թ. օգոստոսի 26-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը քննարկեց կոնֆերանսին նախապատրաստվելու հարցը և կառավարության հետ կազմեց հուշագիր, որտեղ առաջարկվում էր Սուրմալուի գավառի Կողբի շրջանը թողնել Խորհրդային Հայաստանին, որովհետև Նախիջևանի երկրամասը Ադրբեջանին տալուց հետո Կողբի աղհանքերը միակն էին, որտեղից Հայաստանը կարող էր աղ ստանալ և ապրանքափոխանակություն կատարել արտասահմանի հետ: Հուշագիրը առաջարկում էր Նախիջևանի հանդեպ հովանավորության իրավունքը հանձնել Խորհրդային Հայաստանին:

---

[216] Կարապետյան Մ., Գևորգյան Է. նշվ. աշխ., էջ 177:

[217] Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920-1922 թթ, Ե., 1979, էջ 253:

Առաջարկվում էր Թուրքիային որոշակի տոկոս տալու պայմանով Հայաստանին իրավունք վերապահել տնտեսական շահագործման ենթարկելու Օլթիի քարածխի, Կաղզվանի մկնդեղի, Կողբի աղհանքերը և Սարիղամիշի անտառները, եթե դրանք մնային Թուրքիայի սահմաններում: Առկա էին նաև առաջարկություններ ապրանքների ազատ ներմուծման, արտահանման, տարանցման և մի շարք արտադրական կոնցեսիաների մասին:

Կարսի կոնֆերանսին նախապատրաստվելու հարցը քննարկվեց նաև ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի սեպտեմբերի 3-ի նիստում և որոշվեց խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները:

Կարսի խորհրդաժողովը սկսվեց 1921 թ. սեպտեմբերի 26-ին: ՀԽՍՀ-ից խորհրդաժողովին մասնակցում էին Ա. Մռավյանը (արտգործժողկոմ, պատվիրակության նախագահ), Պ. Մակինցյանը (ներքին գործերի ժողկոմ), ՎԽՍՀ-ից՝ Շ. Էլիավան (ռազմական և ծովային գործերի ժողկոմ), Ա. Սվանիձեն (արտաքին գործերի և ֆինանսների ժողկոմ), Ադրբեջանական ԽՍՀ-ից՝ Բ. Շահթախթինսկին (պետական վերահսկողության ժողկոմ, պատվիրակության նախագահ), և ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Յակով Գանեցկին: Թուրքական կողմը ներկայացնում էին Ք. Կարաբեքիր փաշան (Արևելյան ռազմաճակատի հրամանատար, պատվիրակության նախագահ), Վելի բեյը, Մուխթար բեյը, Մեմդուհ Շևքեթ բեյը (Ադրբեջանում Թուրքիայի լիազոր ներկայացուցիչ)[218]:

Խորհրդաժողովի սկզբին Ք. Կարաբեքիրը առաջարկեց պայմանագիր կնքել Անդրկովկասի հանրապետությունների հետ առանձին-առանձին, որը կտրականապես մերժեցին հանրապետությունների պատվիրակները՝ պնդելով ընդհանուր պայմանագրի ստորագրումը՝ մատնանշելով իրենց հանրապետությունների միջև ստեղծված տնտեսական, քաղաքական, ռազմական կապերը և արդեն ուրվագծվող Անդրֆեդերացիան: Մոսկվայի պայմանագրով՝ Անդրկովկասի հանրապետությունների հետ ընդհանուր պայմանագրի կնքում չէր նախատեսվում: Իսկ առանձին պայմանագրերի կնքման դեպքում Թուրքիայի համար դյուրին կլիներ իր կամքի պարտադրումը հանրապետություններին: Կարսում ևս թուրքերը շարունակում էին կյանքի կոչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, սակայն ապարդյուն[219]:

Անդրկովկասյան պատվիրակությունը, ընդառաջելով Հայաստանին, որոշեց հարց բարձրացնել Անին և Կողբի աղհանքերը նրան վերա-

---

[218] Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 399:
[219] Կարապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ., էջ 117-118:

դարձնելու վերաբերյալ: Իր ելույթում ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Յ. Գանեցկին ընդգծեց, որ Անիի ավերակների վերադարձման հարցը էական է ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի համար: Բայց թուրքերը մերժեցին որևէ զիջում կատարել: Խորհրդային Հայաստանի ոչ մի առաջարկ չընդունվեց[220]:

Սահմանային միակ հարցը, որի լուծմանը չմիջամտեց թուրքական կողմը, Խորհրդային Հայաստանի և Նախիջևանի միջև սահմանի ճշտումն էր: Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները կանխեցին թուրքական միջամտությունը՝ հայտարարելով, որ իրենք արդեն ճշտել են սահմանները: Տնտեսական հարցերի քննարկման ժամանակ խորհրդային կողմը Թուրքիայից պահանջեց վերադարձնել Ալեքսանդրապոլի գրավման ժամանակ կողոպտված քաղաքի դեպոյի գույքը: Թուրքերը հրաժարվեցին բավարարել այդ պահանջը: Վեճը շարունակվեց մինչև հոկտեմբերի 10-ի նիստը, որտեղ թուրքերը, փոխզիջման եկան խորհրդային կողմի հետ Բաթումի նավահանգստից օգտվելու հարցում և հասան այն բանին, որ Ալեքսանդրապոլի դեպոյի հարցը օրակարգից հանվեց[221]:

Կարսի պայմանագիրը ստորագրվեց 1921 թ. հոկտեմբերի 13-ին, բաղկացած էր 20 հոդվածներից և երկու հավելվածներից[222]:

Պայմանագրի 1-ին հոդվածով ուժը կորցրած էին համարվում բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվել էին պայմանավորվող կողմերի տարածքներում անցյալում ինքնիշխան կառավարությունների միջև. դրանով չեղյալ էր համարվում նաև Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Բացառությամբ Մոսկվայի ռուս-թուրքականի՝ չեղյալ էին համարվում այն պայմանագրերը, որոնք կնքվել էին երրորդ պետության հետ և վերաբերում էին Անդրկովկասի հանրապետություններին: Չնայած այդ «բացառության» գոյությանը, հոդվածը հստակ ցույց է տալիս, որ Մոսկվայի պայմանագիրը կնքվել է երրորդ պետության դեմ, որը, փաստորեն, ժամանակակից միջազգային իրավունքի տեսանկյունից անընդունելի է: Ինչպես արդեն նշել ենք, ըստ Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի՝ պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և «պայմանագիրը երրորդ

---

[220] Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 399-400:

[221] Զոհրաբյան Է., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, էջ 263-265:

[222] Պայմանագիրն ամբողջությամբ՝ հավելվածների հետ, տե՛ս Документы внешней политики СССР, т. 4, М.: Госполитиздат, 1960, с. 420-429; նաև՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 517-527:

պետության համար պարտավորություններ կամ իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնության»[223]:

2-րդ հոդվածով, որն առանձնապես կարևոր էր Թուրքիայի համար, կողմերը չէին ճանաչում «բռնի ուժով» պարտադրված ոչ մի պայմանագիր կամ միջազգային այլ ակտ. դա նշանակում էր, որ Խորհրդային Հայաստանը չի ճանաչում 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության պայմանագիրը: Չեղյալ է հայտարարվում Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Թուրքիայի և Անդրկովկասի հանրապետությունների միջև սահմանը որոշվում էր 4-րդ հոդվածով (ներկայիս սահմանը Թուրքիայի հետ): 5-րդ հոդվածով Թուրքիայի, Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների կառավարությունները համաձայնում էին Նախիջևանի մարզը՝ որպես ինքնավար տարածք, հանձնել Ադրբեջանի խնամակալությանը: 6–9-րդ հոդվածները վերաբերում էին Թուրքիայի և Վրաստանի փոխհարաբերություններին, համաձայն որոնց՝ Թուրքիան Բաթում քաղաքի ու մարզի նկատմամբ ինքնիշխանության իրավունքը զիջում էր Վրաստանին՝ պայմանով, որ տեղական բնակչությունն օգտվի լայն ինքնավարությունից, իսկ Թուրքիային իրավունք վերապահվի օգտվելու Բաթումի նավահանգստից՝ առանց դրա համար հատուկ հարկ վճարելու (հոդված 6): 10-րդ հոդվածով կողմերը պարտավորվում էին թույլ չտալ իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների կամ խմբերի գոյությունը, որոնք պայմանավորվող մյուս կողմի դեմ պայքարի նպատակ ունեն: Վերջին 20-րդ հոդվածով նախատեսված էր, որ պայմանագիրը ենթակա է վավերացման, և վավերագրերը կփոխանակվեն Երևանում՝ 1922 թ. սեպտեմբերի 11-ին: Մնացած հոդվածներով որոշվում էին կողմերի քաղաքացիների իրավական կացությունը միմյանց տարածքներում, զիջվող տարածքների բնակչության տեղափոխման իրավունքը, սահմանվում էին ռազմագերիների ու գաղթականների փոխանակման կարգը, առևտրական հարաբերություններ հաստատելու և այլ հարցեր:

Կարսի պայմանագրով վերահաստատվեցին 1921 թ. Մոսկվայի պայմանագրի զավթողական դրույթները, որոնք կոպտորեն ոտնահարում էին Հայաստանի կենսական շահերը: Կարսի պայմանագիրը չէր դիտվում որպես ինքնուրույն պայմանագիր, և շատ հոդվածներ բառացիորեն կրկնում էին Մոսկվայի պայմանագրի համապատասխան հոդվածները: Ինչպես խոստովանել է Խորհրդային Ռուսաստանի լիա-

[223] Տես Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին // http://www.un.am/res/UN%20 Treaties/ XIV_1.pdf

զոր ներկայացուցիչ, Կարսի խորհրդաժողովի մասնակից Յ. Գանեցկին, «Կոնֆերանսի ընթացքը կանխորոշված էր դեռ Մոսկվայի կոնֆերանսում»[224]:

1922 թ. մարտի 1-ին Մ. Քեմալը թուրքական ԹԱՄԺ-ում կատարեց անընդունելի մի հայտարարություն, թե Կարսի պայմանագիրը նշանակում է Արևելքում իրենց փաստացի վիճակի իրավական ճանաչում և կրկին վկայում Սևրի պայմանագրի գործնական անհնարինությունը և այլն, որ «այսպես կոչված Հայկական հարցը Կարսի պայմանագրում գտավ իր լուծումը»:

Հայ հետազոտողներից Մ. Արզումանյանը, անդրադառնալով Մ. Քեմալի այս ելույթին, ընդգծել է, որ Հայկական հարցը «այսպես կոչված» չէ, այլ իրական հարց՝ բարձրացված միջազգային իրավունքի աստիճանի, այն երբեք չլուծվեց, բայց մնում է բաց[225]:

Այսպիսով, վերլուծական այն մոտեցումները, որոնք կատարվել են Մոսկվայի պայմանագրի մեկնաբանության արդյունքում, ամբողջապես բնորոշ են նաև նրան հաջորդած և սկզբունքորեն կրկնող Կարսի պայմանագրին, մենք դրանց չենք անդրադառնում չկրկնվելու համար: Սակայն հարկ է մեկ անգամ ևս նշել, հետևյալը.

1) Կարսի պայմանագիրը հանդիսանում է Մոսկվայի պայմանագրի հետևանքը և կրում էր զուտ ձևական բնույթ, որով Խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան փորձում էին իրավական տեքս տալ իրենց ապօրինի գործարքին: 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն «ուժի կամ այն կիրառելու սպառնալիքի միջոցով պետությանը հարկադրելը պայմանագիրը համարում է առ ոչինչ, եթե այն կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ»[226]:

2) Կարսի պայմանագրին Խորհրդային Ռուսաստանի մասնակցությունն ի դեմս Յ. Գանեցկու, բացատրվում էր Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով ձեռք բերված համաձայնությամբ, որը հարկադրանքի ամենավառ դրսևորումն էր: Յ. Գանեցկու միջոցով Մոսկվան,

---

[224] Զոհրաբյան Է. Ա., 1920 թ. թուրք–հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, էջ 358:

[225] Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Ե., «Հայաստան», 1973, էջ 392:

[226] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 129: Տե՛ս նաև՝ Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքների մասին // http://www.un.am/res/UN%20Treaties/XIV_1.pdf

փաստորեն վերահսկում էր Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների գործողությունները, որպեսզի չձախողվի Մոսկվայի գործարքը: Վիեննայի կոնվենցիայի 51-րդ հոդվածով սահմանվում է, որ այն դեպքում, երբ պետության համար պայմանագիրը պարտադիր լինելու համար ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, այդ համաձայնագիրը չի կարող իրավական ուժ ունենալ[227]:

3) Չպետք է մոռանալ, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը քեմալա-բոլշևիկյան խարդավանքների և Հայաստանի վրա իրականացված երկկողմ ճնշումների հետևանք էր: Մոսկվայի խորհրդաժողովից մինչև Կարսի խորհրդաժողովն ընկած ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի պայմանագրի փաստարկով հայկական կողմին ապակողմնորոշելը նույնպես միջազգային իրավունքի նորմերի խախտում էր: Վիեննայի կոնվենցիայի 49-րդ հոդվածի համաձայն պայմանագիրը առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեության կամ ապակողմնորոշման միջոցով[228]:

4) Ինչպես տեսանք Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի» կոնվենցիայի վերոհիշյալ 49-րդ, 51-րդ, 52-րդ հոդվածներով Կարսի պայմանագիրը կարող է համարվել առ ոչինչ: Վիեննայի կոնվենցիայի 69-րդ հոդվածի 1-ին կետով առ ոչինչ համարվող պայմանագրերը իրավական ուժ չունեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետով, եթե պայմանագիրը առ ոչինչ է համարվում կոնվենցիայի 49-րդ, 50-րդ, 51-րդ կամ 52-րդ հոդվածների հիմքերով, ապա նշված գործողություններում պատասխանատու կողմը որևէ պահանջի իրավունք չունի մյուս կողմի նկատմամբ: Սա նշանակում է, որ նշված գործողություններն ապացուցելու դեպքում Թուրքիան ոչ մի պահանջ չի կարող ներկայացնել Հայաստանին, որոնք կապված են Կարսի պայմանագրի հետ[229]:

Սակայն Վիեննայի կոնվենցիայի դրույթներով առաջնորդվելով և դրանց հիման վրա Կարսի պայմանագիրը առ ոչինչ հայտարարելով՝ անուղղակիորեն կնշանակի, որ մինչև այդ քայլն անելը Հայաստանը, փաստորեն, ընդունել է դրա օրինականությունը: Ուստի Հայաստանի

---

[227] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 129:

[228] Նույն տեղում, էջ 130, 132:

[229] Նույն տեղում, էջ 134-135, տես նաև Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին // http://www.un.am/res/UN%20 Treaties/ XIV_1.pdf

Հանրապետությունն այս հարցում կարող է առաջնորդվել Tabula rasa (մաքուր թղթի) սկզբունքից և հիմնավորել, որ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված կարգով Հայաստանի համար միջազգային պայմանագրերը ուժի մեջ են մտնում և դառնում ՀՀ իրավական համակարգի մաս միայն նրա կողմից վավերացվելուց հետո, ինչը նշանակում է, որ ՀՀ կողմից չվավերացված Կարսի փաստաթուղթը նրա համար իրավական ուժ չունի[230]:

Ինչ վերաբերում է պայմանագրային իրավունքում ընդունված վաղեմության ժամկետի՝ էստոպելի սկզբունքին, ապա այս հարցը կարգավորվում է Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածով, որտեղ նշվում է, որ պայմանագիրը չեղյալ հայտարարելու կամ այն վերանայելու պահանջի ժամկետներ համարվում են բացթողնված այն դեպքում, երբ պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելյայն համաձայնվել է կատարված փաստի հետ: Իսկ երբ կողմը որոշակի գործողությունների միջոցով՝ հայտարարություններ, բողոքի նոտաներ և այլն հայտնում է իր անհամաձայնությունը, ապա տվյալ փաստաթղթի նկատմամբ չի կարող կիրառվել վաղեմության պահանջի սկզբունքը: Մոսկվայի ու Կարսի փաստաթղթերի հետ կապված վաղեմության ժամկետի պահանջը չի կարող կիրառվել, քանի որ Խորհրդային Հայաստանը դեռ 1921 թ. ապրիլի 15-ին է բողոք ներկայացրել Կարսի պայմանագրի հիմքը կազմող Մոսկվայի անօրինական գործարքի դեմ, իսկ հետագայում 1945 թ. հուլիսի 22-ին Պոտսդամի կոնֆերանսի կառավարությունների ղեկավարների վեցերորդ նիստի ժամանակ ԽՍՀՄ-ը Խորհրդային Հայաստանի ու Վրաստանի անունից տարածքային հարց է բարձրացրել Թուրքիայի առաջ՝ պահանջելով վերադարձնել Կարսն ու Արդահանը, ինչը պետք է համարել Կարսի պայմանագրի վիճարկում[231]:

Ճիշտ է նկատել Ա. Մարուքյանը, որ Հայաստանի համար Կարսի պայմանագրի հետևանքները չեզոքացնելու որևէ քայլ կատարելուն պետք է նախորդի լուրջ նախապատրաստական աշխատանք՝ հաշվի առնելով նաև աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումները[232]:

---

[230] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 135:
[231] Նույն տեղում, էջ 135-136:
[232] Նույն տեղում, էջ136:

13. ԼՈՆԴՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ (1921 թ.)

Մերձավոր Արևելքի հարցի շուրջ դաշնակիցների միջև ծագած տարաձայնությունները քննարկելու, Սևրի պայմանագիրը վերանայելու և Մոսկվայում կայանալիք ռուս-թուրքական կոնֆերանսին հակակշռելու համար 1921 թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 14-ը Լոնդոնում կայացավ խորհրդաժողով, որին մասնակցում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի և Բելգիայի պատվիրակությունները: Հրավիրված էին նաև Գերմանիայի և Թուրքիայի ներկայացուցիչները*: Վերջինս ներկայացված էր երկու՝ Կ. Պոլսի սուլթանական և Անկարայի (ԹԱՄԺ) պատվիրակություններով: Սակայն վեհաժողովի բացումից անմիջապես հետո սուլթանական պատվիրակությունը Ռեշիդ փաշայի գլխավորությամբ հրաժարվեց իր լիազորություններից՝ հայտարարելով, որ Թուրքիայի միացյալ տեսակետը կհայտարարի Անկարայի պատվիրակությունը և նրա ղեկավար Բեքիր Սամի բեյը[233]:

Դրանով Անկարայի քեմալական կառավարության «օրինականությունը», փաստացիորեն, այլևս վիճարկման չէր դրվում սուլթանական կառավարության կողմից, որը դաշնակից տերությունների հետ հարաբերությունների իրավունքը ամբողջությամբ վերապահում էր Անկարային: Քեմալական պատվիրակության հրավերը Լոնդոնի վեհաժողով նշանակում էր նաև դաշնակից պետությունների կողմից ԹԱՄԺ-ի և նրա կառավարության գոյության փաստի՝ դե ֆակտո ճանաչում, որին, սակայն, դեռ պետք է տրվեր օրինականության (լեգիտիմության) բնույթ*:

---

* Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի կառավարությունները փորձում էին Հայկական հարցը ծառայեցնել իրենց ծրագրերին և երբեք լրջորեն չմտահոգվեցին հայ ժողովրդի ճակատագրով: 1921թ. հունվարին Փարիզում, Անտանտի գլխավոր խորհրդի նիստում, Ֆրանսիան հանդես եկավ Սևրի պայմանագիրը վերանայելու պահանջով:

[233] Կառապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ., էջ 121:

* Երկիշխանության հանգամանքը ստիպեց քեմալականներին չհետաձգել սուլթանության հարցը: 1922 թ. նոյեմբերի 1-ին ԹԱՄԺ-ը վերացրեց սուլթանությունը, բայց պահպանեց խալիֆայությունը: Թուրքական վերջին սուլթան Մեհմեդ VI Վահիդետդինը նոյեմբերի 17-ին անգլիական հածանավով փախավ Մալթա: Հաջորդ օրը ԹԱՄԺ-ը որոշում ընդունեց նրան որպես խալիֆ գահընկեց անելու մասին: Խալիֆ ընտրվեց գահաժառանգ Աբդուլ Մեջիդը: 1923 թ. հոկտեմբերին ԹԱՄԺ-ը ընդունեց

Փետրվարի 24-ին վեհաժողովում հանդես եկավ Անկարայի պատվիրակությունը: Թուրքիայի դիրքորոշումը հետևյալն էր՝ 1) Թուրքիային վերադարձնել Արևելյան Թրակիան և վերականգնել 1913 թ. թուրքական սահմանները (առանց արաբական երկրների), 2) Թուրքիային վերադարձնել Կիլիկիան և նրանից արևելք ընկած տարածքները, 3) ճանաչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը և նրանով գծված սահմանները, վերադարձնել Իզմիրի (Զմյուռնիա) մարզը, 5) վերականգնել նեղուցների համակարգը՝ ապահովելով Թուրքիայի անվտանգությունը, 6) վերացնել կապիտուլյացիոն ռեժիմը[234]: Դրանով Թուրքիան պահանջում էր ընդունել «Ազգային ուխտը», ներառյալ Ալեքսանդրապոլի պայմանագիրը, չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը և դրանով իսկ Հայերի իրավունքը Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Լոնդոնի վեհաժողովում Հայաստանին առնչվող հարցերի քննարկման ժամանակ թույլատրվեց մասնակցել Փարիզի խորհրդաժողովի հայ պատվիրակություններին՝ ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանին և Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի շահերը պաշտպանող Պ. Նուբար փաշային:

Վեհաժողովում սկսվեցին երկարածավալ վիճաբանություններ: Դաշնակից պետությունները, որոնք ստորագրել էին Սևրի պայմանագիրը, մրցում էին միմյանց հետ Թուրքիային զիջումներ կատարելու հարցում, որպեսզի նրան կտրեն Խորհրդային Ռուսաստանից ու գրավեն իրենց կողմը:

Իտալիայի պատվիրակությունը առաջարկեց վերանայել Սևրի պայմանագիրը և համաձայնության գնալ քեմալականների հետ: Իսկ անգլիական կողմը հուշագիր ներկայացրեց Վ. Վիլսոնի կազմած սահմաններից հրաժարվելու և հետևյալ հոդվածը մտցնելու մասին, որ Թուրքիան ճանաչում է Երևանի հայկական հանրապետության անկախությունը նախապատերազմյան ռուսական սահմաններում և հրաժարվում է Կարսի, Ալեքսանդրապոլի և Արդահանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից ի ճանաչումն այն բանի, որ Հայաստանը իր հերթին հրաժարվում է թուրքական վիլայեթների հանդեպ ունեցած

օրենք Թուրքիան հանրապետություն հռչակելու մասին: 1924 թ. վերացվեց նաև խալիֆայությունը: Օսմանյան տոհմի անդամները արտաքսվեցին երկրից (Zurcher E. J., p. 166-168, 172-174; **Григорян А. Э.** Турецкая республика. Основные инструменты государственного строя, М.: Наука, 1975, с. 21-29):

[234] Documents on British foreign policy 1919-1939 (ed. by R. Butler and J.P.T. Bury, Vol. 15), International conferences and conversations. L.: H.M. Stat. off., 1967, p. 190-191.

հավակնություններից: Առաջարկվում էր նաև Կիլիկիայում հայկական ինքնավարության ստեղծում և այնտեղ հայ գաղթականների վերադարձ[235]: Բեքիր Սամի բեյը հրաժարվեց Հայաստանի Հանրապետության մաս ճանաչել Կարսը, Արդահանը և Ալեքսանդրապոլը, որտեղ նրա կարծիքով հայերը կազմում են բնակչության 20%-ը[236]: Առաջարկությունը մնաց թղթի վրա:

Լոնդոնի խորհրդաժողովի փետրվարի 26-ի նիստում ելույթ ունեցավ Բեքիր Սամի բեյը: Նա կոչ արեց նիստի մասնակիցներին ճանաչել «Ազգային ուխտը» և չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը, վերացնել կապիտուլյացիոն ռեժիմը, վերականգնել Թուրքիայի ինքնիշխանությունը, ինչի դեմ որևէ մեկը հանդես չեկավ:

1921 թ. փետրվարի 26-ին Լոնդոնում Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Քերզոնի առանձնասենյակում գումարված նիստում հրավիրվեցին նաև Ա. Ահարոնյանը և Պ. Նուբար փաշան, որոնք պետք է հայտարարություններ անեին Սևրի պայմանագրի վերաբերյալ: Կոնֆերանսը ցանկանում էր նաև իմանալ, թե ով է հայերի անունից խոսողը և հանուն ու՞մ է նա դիմում կոնֆերանսին: Պ. Նուբարը պատասխանեց, որ պատերազմի սկզբից ի վեր նա ներկայացնում է Թուրքիայի հայերին: Կազմված է նաև Երևանի հանրապետության պատվիրակություն Ա. Ահարոնյանի գլխավորությամբ, որը նույնպես կխոսի, բայց ինքը հանդես կգա որպես երկու պատվիրակությունների նախագահ: Պ. Նուբարը պահանջեց պահպանել Սևրի պայմանագիրը այնքանով, որքանով այն վերաբերում է Հայաստանին[237]: Եվ այն փաստը, որ Հայաստանին խորհրդային կարգեր են պարտադրվել, չպետք է ետ պահի դաշնակիցներին երկրի մյուս մասը, այն է թուրքական չորս վիլայեթներն ազատագրելուց: Իր հերթին Ա. Ահարոնյանը պատասխանեց, որ ինքը հանդես է գալիս Սևրի պայմանագիրը ճանաչած Հայաստանի Հանրապետության անունից, որի օրինական կառավարությունը հենց նոր վերականգնվել է խորհրդային ժամանակավոր ռեժիմի անկումից հետո (այստեղ խոսքը վերաբերում էր

---

[235] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 696:

[236] Տե՛ս Documents on British foreign policy 1919-1939, p. 214-216.

[237] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 697-698:

1921 թ. փետրվարյան ապստամբությանը և Ս. Վրացյանի գլխավորությամբ իշխանության եկած Հայրենիքի փրկության կոմիտեին – է. Ն.)[238]:

Լորդ Քերզոնը հայկական պատվիրակություններին ուղղեց հետևյալ երկու հարցերը, 1) որո՞նք են Հայաստանին անհրաժեշտ սահմանները, որոնք խնդրում են երկու պատվիրակությունները, 2) որո՞նք են մարդկային և դրամական այն աղբյուրները, որոնք կկարողանա տրամադրել Հայաստանը՝ իր անկախությունը ձեռք բերելու համար:

Պ. Նուբարը պատասխանեց, որ նախագահ Վ. Վիլսոնի որոշման մասին հայկական պատվիրակությանը չի տեղեկացվել: Հայերը երբեք Տրապիզոնը չեն պահանջել, ինչպես նշված է Վիլսոնյան սահմաններում: Հայերի պահանջը միայն Տրապիզոնի վրայով Սև ծով ելք ունենալն է, ինչ վերաբերում է Վիլսոնի սահմանագծի մնացած մասերին, իրենք պատրաստ են հարմարվել: Ա. Ահարոնյանը իր հերթին հանձնաժողովի անդամներին ներկայացնելով ՀՀ-ի և քեմալական Թուրքիայի միջև կնքված Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ընդգծել է, որ այն պարտադրվել է ուժով և կտրականապես մերժվում է հայերի կողմից:

Կիլիկիայում հայերի անվտանգությունը երաշխավորող խառը ժանդարմերիա ստեղծելու հարցի քննարկումից հետո հայկական պատվիրակությունը հեռացավ[239]:

Լոնդոնի խորհրդաժողովի 1921 թ. մարտի 12-ի նիստում ընդունվեց 10 կետից բաղկացած մի որոշում, որ վերաբերում էր հույն-թուրքական պատերազմի դադարեցմանը: Այստեղ Սևրի պայմանագիրը վերանայման ենթարկվեց հօգուտ Թուրքիայի: 9-րդ կետը վերաբերում էր Հայաստանին. «Ինչ վերաբերում է Հայաստանին, ներկա պարտավորությունները կարող են հարմարեցվել, պայմանով, որ Թուրքիան ճանաչի թուրքահայերի իրավունքը Ասիական Թուրքիայի արևելյան սահմաններում Ազգային մի օջախ ստեղծելու համար և ընդունի այն համաձայնագրի որոշումը, որը կնշանակվի Ազգերի լիգայի խորհրդի կողմից՝ նպատակ ունենալով ուսումնասիրել այն հողամասերի խնդիրը, որոնք արդարացի կլինեն այդ նպատակի համար տրամադրել Հայաստանին»[240]:

---

[238] Սահակյան Տ., նշվ. աշխ., էջ 357-361, տե՛ս նաև Կարապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ., էջ, 123-125:

[239] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 697-704:

[240] Լազեան Գ., Հայաստան և Հայ դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Ե., 1991 թ. էջ 282-283:

Այսպիսով, նախատեսվում էր Կարսի, Արդահանի, Սուրմալուի և միգուցե նաև այլ շրջանների վերադարձ Հայաստանի Հանրապետությանը: Դաշնակիցները, հրաժարվելով Սևրի պայմանագրով անկախ Հայաստան ստեղծելու գաղափարից, առաջարկեցին Թուրքիայի արևելյան հատվածում ստեղծել «Հայկական ազգային օջախ», որի սահմանները որոշելու էր Ազգերի լիգան: Ընդ որում՝ եթե Անգլիան Ազգային օջախը ցանկանում էր ստեղծել Կիլիկիայում, ապա Ֆրանսիան կարծում էր, որ այն պետք է ստեղծել Թուրքիայի արևելյան վիլայեթներում: Սակայն, նույնիսկ նման տարբերակը անընդունելի էր քեմալական Թուրքիայի համար:

Լոնդոնի կոնֆերանսում առաջին անգամ պաշտոնապես արտասանվեց ու արձանագրվեց «օջախ» (Home) բառը: Սևրի պայմանագիրը մոռացվել էր հիմնովին: Այլևս խոսքը անկախ Հայաստանի մասին չէր, այլ ինչ-որ ազգային Home-ի, մի կասկածելի օջախի ուրիշի տան մեջ[241]:

Ա. Ահարոնյանը գրում է, որ անգլիացի դիվանագետներից մեկը փորձում էր համոզել իրեն, թե իբր Home-ը թուրքերից հայկական հող խլելու մի ձև է և որ Home-ը, ինչպիսի բովանդակություն էլ ունենա, նույնպես պետություն է[242]:

Այսպիսով, մարտի 14-ին ավարտվեց Լոնդոնի վեհաժողովն անհաջողությամբ, հույները շարունակեցին պատերազմը թուրքերի հետ, իսկ խորհրդա-թուրքական բանակցությունները շարունակվեցին և ավարտվեցին մարտի 16-ին՝ պայմանագրի կնքմամբ: Կոնֆերանսի հիմնական նպատակն էր Թուրքիային դուրս բերել Խորհրդային Ռուսաստանի դեմ, որը չստացվեց, սակայն հնարավորություն տվեց թուրքերին բոլշևիկների հետ բանակցություններում հանդես գալ առավել կոշտ դիրքերից:

Սակայն բանակցությունների ժամանակ Թուրքիան ձեռք բերեց դիվանագիտական լուրջ հաղթանակ: Նախ և առաջ դա քեմալական

---

[241] Քաջազնունի Հ., ՀՅ դաշնակցությունը անելիք չունի այլևս, Ե., 1993, էջ 52:

[242] Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001, էջ 152:
Ֆրանսիական դիվանագիտությունը առավելագույն ջանքեր էր գործադրում Անկարայի կառավարության հետ անջատ գործարք կնքելու համար, և 1921 թ. մարտի 9-ին նրանց միջև կայացավ քաղաքական, ռազմական և տնտեսական համագործակցության համաձայնություն: Ֆրանս-թուրքական համաձայնությունը (որը փաստորեն քեմալականների ձեռքն էր տալիս Կիլիկիայի հայության բախտը) մեծ տագնապ առաջ բերեց Կիլիկիայի քրիստոնյա բնակչության մեջ: 1921թ. հոկտեմբերին Անկարայում ստորագրված թուրք-ֆրանսիական համաձայնագրով Կիլիկիան հանձնվեց Թուրքիային: 1922 թ. փետրվարին Անգլիայի վարչապետ Ջ. Քերզոնին ուղղված նա-

Թուրքիայի փաստացի ճանաչումն էր: Դաշնակից պետությունները այսուհետ սկսեցին լավ հասկանալ, որ Թուրքիային վերաբերող յուրաքանչյուր հարցում նրանք պետք է հաշվի նստեն Մ. Քեմալի գլխավորած կառավարության հետ, առանց որի տվյալ ժամանակաշրջանում այլևս անհնար կլինի լուծել որևէ հարց: Երկրորդ՝ Թուրքիային հաջողվեց կասկածի տակ դնել Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող դրույթների իրագործումը: Իր կոշտ մերժողական դիրքորոշմամբ Անկարային հաջողվեց Լոնդոնի խորհրդաժողովում վերանայման չդնել Սևրի պայմանագիրը: Երրորդ՝ դաշնակից տերությունները այլևս չէին պնդում Սևրի պայմանագրով Հայաստանին վերադարձվելիք չորս վիլայեթների, ինչպես նաև ցեղասպանության արդյունքում հայերի կրած նյութական վնասների հատուցման վրա: Փոխարենը առաջարկում էին Արևմտյան Հայաստանի որևէ հատվածում կամ Կիլիկիայում ստեղծել «արևմտահայերի հավաքատեղի», այսպես կոչված «ազգային օջախ»՝ դիվանագիտական անորոշ ձևակերպմամբ, որը կյանքի կոչվելու դեպքում էլ խոր հակասությունների ու տարաբնույթ իրավական մեկնաբանությունների առիթ կտար ու կրկին հարցը կթողներ չլուծված:

մակում Ֆրանսիայի վարչապետ Ռ. Պուանկարեն գրում էր. «Թուրքահայաստանի հարցի վերաբերյալ, ես կրկնում եմ, որ դժվար է պահպանել Սևրի պայմանները, բայց գտնում եմ, որ հայկական հարցի լուծումը չպետք է որոնել Կիլիկիայում, որտեղ, եթե կարելի է այդպես արտահայտվել, այլևս հայ չկա»: Այդպիսով, փաստորեն, ստեղծելով այնպիսի իրադրություն, որ հայերը ստիպված տարագրվեն այլ երկրներ: Ռ. Պուանկարեն հայտարարում է, որ Կիլիկիայում չկա անկյուն հայերի համար: Հայկական հարցում ֆրանսիական կառավարության երկդիմի քաղաքականությունն իր արտացոլումը գտավ նաև 1922-1923 թ. Լոզանի կոնֆերանսում, որն ավարտվեց մի պայմանագրի ստորագրմամբ, որտեղ հիշատակություն անգամ չկար Հայաստանի մասին (Саакян Р. Г. Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., с. 150-179):

14. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԼՈԶԱՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ (ԼՈԶԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ)

Անտանտի տերությունների մերձեցումը քեմալական Թուրքիայի հետ հատկապես մեծացավ հույն-թուրքական պատերազմի ավարտից հետո, որից Թուրքիան դուրս եկավ հաղթանակով: 1922 թ. հոկտեմբերին Մուդանիայում կնքվեց զինադադար: Դա պատճառ հանդիսացավ Լոզանի հաշտության խորհրդաժողով հրավիրելու համար: Զինադադարը, որը կնքեցին մի կողմից Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, իսկ մյուս կողմից Թուրքիան, նախատեսում էր հունական զորքերի անհապաղ դուրսբերում Արևելյան Թրակիայից և դաշնակից զորքերի ժամանակավոր ներկայություն Կ. Պոլսում և նեղուցների գոտում մինչև հաշտության պայմանագրի կնքումը: Մուդանիայի զինադադարը ուժի մեջ մնաց մինչև 1923 թ. հուլիսը՝ Լոզանի հաշտության պայմանագրի կնքումը:

Հարկ է նշել, որ թուրքերի ու բոլշևիկների միջև 1921 թ. կնքված Մոսկվայի պայմանագիրը, իսկ հետո նաև Կարսի պայմանագրում Խորհրդային Հայաստանի պատվիրակության ստորագրության առկայությունը ձեռքերի որոշակի ազատություն տվեց եվրոպական տերություններին, որոնք համարում էին, որ արդեն որոշակի «արդարացումներ» ունեին Սևրի պայմանագիրը ու հատկապես Վ. Վիլսոնի իրավարար վճռը անտեսելու, ինչպես նաև բոլշևիկների հետ թուրքերին տարածքային զիջումներ կատարելու մրցավազքի մեջ մտնելու համար[243]:

Լոզանի խորհրդաժողովը բացվեց 1922 թ. նոյեմբերի 20-ին, որին մասնակցում էին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ճապոնիան, Ռումինիան, Հարավսլավիան, Թուրքիան: ԱՄՆ-ը ուներ դիտորդի կարգավիճակ: Առանձին հարցերի քննարկման ժամանակ կոնֆերանսին թույլատրեցին մասնակցել Ալբանիային, Բելգիային, Բուլղարային և մի քանի այլ պետությունների: Խորհրդային Ռուսաս-

---

[243] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 137:

տանը հրավիրվեց միայն սևծովյան նեղուցների հարցի քննարկմանը մասնակցելու իրավունքով[244]:

Հաշտության խորհրդաժողովի հիմնական հարցերն էին Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի մշակումը և սևծովյան նեղուցների ռեժիմի սահմանումը: Ստեղծվեց երեք հանձնաժողով՝ քաղաքական, տնտեսական, իրավական:

Թուրքական պատվիրակության նախագահ, արտգործնախարար Իսմեթ Ինոնյու փաշան հենց սկզբից պահանջեց Թուրքիայի նախապատերազմական սահմանների պահպանում, որը նշանակում էր Սևրի պայմանագրի ամբողջական վերանայում:

Հայ ազգային գործիչները նույնպես նախապատրաստվել էին Լոզանի վեհաժողովին՝ Հայկական հարցը դաշնակիցների օգնությամբ լուծելու նպատակով:

Հայ ազգային պատվիրակության նախագահ, Պ. Նուբար փաշային փոխարինած, Գ. Նորատունկյանը և այլևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը համաձայնության եկան գործելու միասնաբար (միասնական պատվիրակության մեջ էին մտնում նաև Ա. Խատիսյանը, Գ.Սինապյանը, Լ. Բաշալյանը): Նրանք հանդիպումներ ունեցան տարբեր երկրների քաղաքական և պետական գործիչների հետ, որոնք, սակայն, որևէ էական խոստում չտվեցին: Հայ ազգային գործիչներին թույլ չտվեցին մասնակցելու հաշտության խորհրդաժողովին: Նրանց պատասխանեցին, որ կոնֆերանսում Հայկական հարց չի դրված և այն մտնում է ազգային փոքրամասնությունների ընդհանուր հարցի մեջ, ուստի անհրաժեշտության դեպքում հայկական պատվիրակությանը հատուկ հրավիրագիր կուղարկվի:

1922 թ. նոյեմբերին հայկական միացյալ պատվիրակությունը խորհրդաժողովին ներկայացրեց հուշագիր հայկական պահանջների մասին, որտեղ նշվում էր Հայկական հարցի ընդհանուր պատկերը, նշվում որ պատերազմի հետևանքով 2,5 մլն արևմտահայերից 1 մլն 250 հազ. ոչնչացվել է, 700 հազ.՝ գաղթել, 150 հազ. գտնվում է Կ. Պոլսում, 130 հազ. Թուրքիայի տարբեր մասերում, շատերը բռնի իսլամացել են և այլն: Հուշագրի վերջում առաջարկվում էր Հայկական հարցի երեք հնարավոր լուծում. 1) «Հայկական ազգային օջախի» ստեղծում

---

[244] Կարապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ., էջ 128:

ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի սահմանագծած Հայաստանի տարածքում՝ ելքով դեպի Սև ծով, 2) Երևանի հանրապետության ընդարձակում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով, 3) Հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում:

Գ. Սինապյանը, Լ. Բաշալյանը հանդիպեցին նաև Իսմեթ փաշայի հետ, որն ասաց, որ հայերի հողային պահանջներն արդեն լուծված են Արևելյան Հայաստանում:

Ազգային փոքրամասնությունների հարցի կապակցությամբ 1-ին հանձնաժողովն ու ենթահանձնաժողովը մի քանի նիստերում անդրադարձան հայկական ազգային օջախին: Դեկտեմբերի 12-ի նիստում նախագահողը Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Քերզոնը, անդրադառնալով Թուրքիայի ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցին, խոսքը մասնավորեցրեց հայերի վրա, որոնք «արժանի են հատուկ ուշադրության՝ աչքի առաջ ունենալով ոչ միայն սերունդների կյանքի ընթացքում նրանց կրած դաժան տառապանքները, որոնք հարուցել են քաղաքակիրթ աշխարհի համակրանքն ու զարհուրանքը, այլև նկատի առնելով ապագայի վերաբերյալ դաշնակից տերությունների կողմից տրված հատուկ հավաստիացումները»[245], և Անկարայի կառավարությանը խնդրեց այդպիսի «ազգային ոգի ու վճռականություն ունեցող» ժողովրդի համար «ազգային տուն» (օջախ) հատկացնել Թուրքիայի հյուսիսարևելյան նահանգներում կամ Կիլիկիայի ու Սիրիայի հարավարևելյան սահմանագծի վրա[246]:

Ի պատասխան Իսմեթ փաշան ասաց, որ հայերը Օսմանյան կայսրությունում միշտ ապրել են «ազատ և երջանիկ», և եթե մի «դեպք է» տեղի ունեցել, ապա դրա մեղավորները Ռուսաստանն ու իրենք՝ հայերն են[247]:

Դեկտեմբերի 13-ի նիստում նա Հայկական հարցի շուրջ ներկայացրեց Թուրքիայի մոտեցումը: Ըստ դրա Թուրքիայի որևէ տարածքի զիջումը և նրանում հայկական օջախի ստեղծումը կնշանակի թուրքական պետության մասնատման մի նոր փորձ, որ Խորհրդային Հայաստանի և ԹԱՄԺ-ի միջև ստորագրվել է պայմանագիր (Կարս – Է.Ն.),

---

[245] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 735-736:

[246] Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов: Тифлис, 1926, с. 3-5, 6-36.

[247] Կարապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ., էջ 131:

որից դուրս Թուրքիան պարտավոր չէ որևէ տարածք զիջել փոքրամասնություն կազմող հայերի համար[248]: Իսմեթ Փաշան ուղղակի հայտարարում է, որ Թուրքիայի արևելյան նահանգներում և Կիլիկիայում ոչ մի կտոր հող չկա, որ բնակեցված չլինի թուրքական մեծամասնությամբ և որը հնարավոր կլինի անջատել հայրենիքից: Իսկ երբ լորդ Քերզոնը հարցրեց, թե չի կարելի արդյոք հայերի համար մի անկյուն գտնել այնպիսի մի երկրում ինչպիսին է Թուրքիան, Իսմեթ փաշան պատասխանեց, որ կան Թուրքիայից ավելի մեծ տարածք ունեցող պետություններ[249]:

Հայկական պատվիրակության խնդրանքով դեկտեմբերի 26-ին հրավիրվեց վեհաժողովի ազգային փոքրամասնությունների ենթահանձնաժողովի մասնավոր դռնփակ նիստ, որտեղ կարճ զեկույցով հանդես եկավ Գ. Նորատունկյանը և հիմնավորեց Թուրքիայի հյուսիս-արևելյան վիլայեթներում կամ Կիլիկիայում հայկական օջախ ստեղծելու անհրաժեշտությունը:

Այնուհետև ելույթ ունեցավ Ա. Ահարոնյանը և ասաց, որ հայերը անժխտելի իրավունք ունեն իրենց զոհաբերությունների համար պահանջելու իրենց հայրենիքը, իսկ եթե առայժմ դա հնարավոր չէ, ուրեմն պետք է ստեղծել ազգային օջախ Թուրքիայում գտնվող հայկական տարածքներում[250]:

Հայ պատվիրակությունը նաև պարզաբանումներ տվեց հայ ազգային օջախի սահմանների ու կարգավիճակի մասին: Ա. Ահարոնյանը ցույց տվեց մի քարտեզ, որտեղ հայկական օջախի սահմանն անցնում էր Ռեզե-Հասանկալե-Մուշ-Վանա լիճ գծով մինչև Պարսկաստան՝ ներառելով այն տարածքները, որոնք Թուրքիան գրավել էր Արևելյան Հայաստանից՝ դուրս թողնելով Էրզրումը[251]: Հայ պատվիրակության առաջարկությամբ հայկական օջախի ընտրության վայրը թողնվելու էր Ազգերի լիգային, որը պետք է այս հարցում համաձայնության գար թուրքական կառավարության հետ[252]:

---

[248] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 748-751:
[249] Նույն տեղում էջ 751-754:
[250] Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 300-304:
[251] Կարապետյան Մ., Գևորգյան Է., նշվ. աշխ., էջ 133:
[252] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 754-755:

1923 թ. հունվարի 6-ի ազգային փոքրամասնությունների ենթահանձնաժողովի նիստում Հայկական հարցի «լուծման» շրջանակները ավելի նեղացան, ազգային օջախի փոխարեն, որը Թուրքիան ոչ մի կերպ չէր ընդունում, առաջ քաշվեց Թուրքիայի տարածքի որևէ «մասում» հայերի «հավաքման գաղափարը»: Դա, փաստորեն, «Հայկական հարցի լուծման մի վերջին պահանջն էր»[253]:

Սակայն թուրքական կողմը խստորեն առարկում և հրաժարվում էր ընդունել Հայկական հարցին ու հայերին վերաբերող որևէ բան, որը դուրս էր Մոսկվայի ու Կարսի պայմանագրի շրջանակներից:

Վերջին անգամ Հայկական հարցը շոշափվեց հանձնաժողովի 1923-ի հուլիսի 17-ի նիստում և, վերածվելով հայ գաղթականության հարցի, փոխանցվեց Ազգերի լիգային: Եվ արդեն կնքված պայմանագրում հիշատակություն անգամ չկար ոչ Հայաստանի, ոչ էլ հայերի մասին:

Այսպիսով, ինչպես Լոնդոնի խորհրդաժողովում, այնպես էլ Լոզանում, թուրքերը, մերժելով Հայկական հարցի լուծման «հայկական օջախի» ստեղծման տարբերակը մեխանիկորեն մերժում էին նաև Սևրի պայմանագրի համապատասխան դրույթների վերանայումը, քանզի ինչպես հայտնի է դրանով հայկական հարցին լրիվ այլ լուծում էր տրվել: Մինչդեռ միևնույն խնդրին նոր լուծում տալով (ասենք հայերին որոշ «զիջումներ» կատարելով) միայն կարելի կլիներ վերանայել նախորդ պայմանագրի՝ Սևրի դրույթները[254]:

Առաջ ընկնելով նշենք, որ Լոզանի պայմանագրի 37-44-րդ հոդվածներով թուրքական կառավարությունը պարտավորվում էր միայն ապահովել Թուրքիայի ազգային փոքրամասնությունների աղոթարանների, գերեզմանոցների ու կրոնական մյուս հաստատությունների պաշտպանությունը, ոչ մահմեդականներին տալով քաղաքացիական սովորական իրավունքներ[255]:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայերի հայրենադարձությանը, նրանց ներում շնորհելու և լքյալ գույքը վերա-

---

[253] Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, «Համազգային», 1968, էջ 401:

[254] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, էջ 138:

[255] TREATY OF PEACE WITH TURKEY SIGNED AT LAUSANNE JULY 24, 1923 // http: // wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

տանալու հարցին, ապա Լոզանի կոնֆերանսում դրանց անդրադարձել են մասնակի և ընդհանուր ձևաչափով: Թուրքական կողմի դիրքորոշումն հետևյալն էր.

Հունիսի 4-ի նիստում թուրքական պատվիրակությունը հանձինս Իսմեթ փաշայի հայտարարեց, որ եթե որոշ հայեր վերադառնան Թուրքիա, ապա ներման պատճառով նրանք չեն ենթարկվի հետապնդման, սակայն 100 հազ. հայերի վերադառնալու իրավունք տալու խնդիրը (խոսքը վերաբերում էր այն հայերին, ովքեր 1922 թ. զանգվածաբար հեռացել էին Թուրքիայից և ապաստան էին գտել Սիրիայում) բոլորովին փոխում է հարցը, այդ խնդիրը ուղղակի առնչվում է պետական անվտանգությանը: Ուստի Իսմեթ փաշան հրաժարվում էր քննարկել թուրքական տարածքից հեռացած անձանց զանգվածային վերադարձի հարցը: Այս խնդրում նա հրաժարվում էր նաև Թուրքիայի անունից ստանձնել որևէ պարտավորություն[256]:

Հուլիսի 17-ի նիստում թուրքական պատվիրակության ուշադրությունը հրավիրվեց Կիլիկիայում ֆրանսիական զորքերի էվակուացիայից հետո բազմաթիվ թուրքահպատակների, մեծ մասամբ քրիստոնյաների և հայերի վրա: Ֆրանսիական պատվիրակության անդամ գեներալ Պելլեն ասաց, որ միջազգային իրավունքի էական կանոններից մեկը պահանջում է, որ այդպիսի գաղթականները, եթե նրանք չեն կատարել ոչ մի հանցանք, ստանան իրենց տները վերադառնալու իրավունք: Իսկ իրականում լքված գույքին վերաբերող օրենքների կիրառման, այսինքն՝ նշված անձանց գույքի բռնագրավման համար գործադրված միջոցների հետևանքը եղավ ներման գործողության վաղաժամ վերացումը[257]: Խորհրդաժողովում դաշնակից պետությունների ներկայացուցիչները նաև ավելացրեցին, որ «ինչ վերաբերում է իրենց օջախները լքած հազարավոր հայերի դրությանը, ապա թուրքական պատվիրակությունը չպետք է դրան մոտենա քաղաքական տեսանկյունից և որ պետք է հաշվի առնել ամբողջ մարդկության կոչը և անարդարացիորեն այդ մարդկանց չզրկեն հայրենիք վերադառնալու իրավունքից»[258]:

---

[256] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 759-761:
[257] Նույն տեղում, էջ 762:
[258] Նույն տեղում, էջ 762-763:

Իսմեթ փաշան պատասխանում է, որ թուրքական պատվիրակությունը նախորդ ժողովներում շարադրել է իր տեսակետը հայ վտարանդիների մասին և կարծում է, որ իմաստ չունի վերադառնալ այդ հարցին[259]:

Խոսքն այստեղ հիմնականում վերաբերում էր 1922 թ. դեկտեմբերի 13-ի Իսմեթ փաշայի հայտարարությանը. «Ինչ վերաբերում է ներկայումս այստեղ գտնվող հայերին, նրանց ոչինչ չի խանգարում իրենց հայրենակից թուրքերի հետ լիակատար փոխըմբռնողությամբ շարունակել ապրել աշխատանքային ու բարեկեցիկ կյանքով, ինչպես դա եղել է առաջներում...»:

Իսմեթ փաշայի այս պատասխանը չէր ենթադրում բռնագաղթված վտարանդի հայերի վերադարձ: Նա «վերադարձ» կամ «հայրենադարձ» բառի փոխարեն օգտագործել էր «ներկայումս Թուրքիայում գտնվող հայերին»[260] արտահայտությունը, նույնօրինակ արտահայտությունն արձանագրված էր նաև հուլիսի 17-ի նիստում, սակայն այս անգամ «այն հայերը, որոնք կցանկանան մնալ Թուրքիայում»[261] ձևակերպմամբ: Խոսք անգամ չկար վերադարձողների կամ հայրենադարձների մասին, այլ՝ Թուրքիայում «ներկայումս գտնվող», կամ «մնալ ցանկացող» հայերին: Դրանով թուրքական պատվիրակությունը ցանկանում էր շեշտել և բացառել հայերի հայրենադարձության անհնարինությունը և հրաժարվում էր այդ հարցում որևէ պատասխանատվություն ստանձնել: Թուրքական պատվիրակությունը ընդգծել էր, որ նույնիսկ 100 հազ. հայերի հայրենադարձությունը Թուրքիայի համար կարող է հարուցել ազգային անվտանգության խնդիր: Թուրքիան կարող էր «հանդուրժողականություն» ցուցաբերել միայն «որոշ թվով» հայ հայրենադարձների հարցում, սակայն ոչ ավելին:

1923 թ. ապրիլի 15-ին Մ. Քեմալի նախաձեռնությամբ Թուրքիայում ընդունվեց օրենք «Լքյալ գույքի» մասին, որով «օրինականացվեց» արևմտահայերի ամբողջ ունեցվածքի հափշտակումը, իսկ հայ փախստականներին իրավունք չտրվեց վերադառնալ իրենց ավերված օջախները[262]: Այդ անմարդկային նոր իրավախախտումը դժբախտա-

---

[259] Նույն տեղում, էջ 764:
[260] Նույն տողում, էջ 748:
[261] Նույն տեղում, էջ 763:
[262] Տես Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Ե., «Նաիրի» հրատ., 2013, էջ 127-128:

բար մարսվեց թուրքերի կողմից, քանի որ ո՛չ ԽՍՀՄ-ը, և ո՛չ էլ նրա մաս կազմող Խորհրդային Հայաստանը հանդես չեկան որպես իրավապահանք: Իսկ արևմտյան տերությունները այն ընդունեցին «հավուր պատշաճի»[263]:

Լոզանի պայմանագրի ստորագրումից չորս օր անց հրապարակված 1923 թ. հուլիսի 28-ի 2559 թվակիր որոշմամբ արգելվում էր Թուրքիայից դուրս գտնվող անձանց՝ լիազորագրի միջոցով իրենց ունեցվածքի նկատմամբ իրավունքների պաշտպանության հնարավորությունը: Դրանով փաստորեն, Թուրքիայից դուրս գտնվող ոչ մահմեդական բնակչությանը լիազորագրի միջոցով գույքի ետ ստանալու գործընթացը արգելվում էր[264]:

1927 թ. մայիսի 23-ին թուրքական իշխանությունները հրապարակեցին մի նոր օրենք, որը լիովին բացառում էր հայերի վերադարձը իրենց պատմական հայրենիք[265]:

Լոզանի խորհրդաժողովի արդյունքում 1923 թ. հուլիսի 24-ին ի վերջո կնքվեց հաշտության պայմանագիր դաշնակից պետությունների և Թուրքիայի միջև: Այն բաղկացած էր 143 հոդվածներից 5 մասերից (քաղաքական, ֆինանսական, տնտեսական, հաղորդակցման ուղիներ և սանիտարական հարցեր):

Լոզանի պայմանագրով Անտանտի պետությունները ճանաչեցին Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, որը գրեթե ամբողջությամբ ներառված էր «Ազգային ուխտի» մեջ՝ Արևելյան Թրակիայի, Փոքր Ասիայի, Արևմտյան Հայաստանի (Արևելյան Հայաստանից ընդգրկված էր Կարսի մարզը, Սուրմալուի գավառը), Սիրիա-Միջագետք բարձրավանդակի հյուսիսային մասի սահմաններով: Վերացավ կապիտուլյացիոն ռեժիմը (օտարերկրացիների քաղաքական և տնտեսական վերահսկողությունը), չեղյալ հայտարարվեցին Թուրքիայի նկատմամբ միջազգային ֆինանսական վերահսկողությունը և անիրավահավասար պայմանագրերը, սևծովյան նեղուցների նկատմամբ հաստատվեց միջազգային վերահսկողություն՝ Անտանտի գլխավո-

---

[263] Գալոյան Գ., Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 731-732:

[264] Հայաստանը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, հայագիտական միջազգային երկրորդ համաժողով՝ 17-19 հոկտեմբեր, 2013 թ. (զեկուցումների ժողովածու), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 464:

[265] Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 128:

ությամբ, նեղուցների գոտին ապառազմականացվեց և հաստատվեց ազատ նավագնացություն: Քեմալական Թուրքիան պարտավորվեց մարել 1912-1923 թթ. օսմանյան կառավարության արտաքին պարտքը: Դա վճարվելու էր այն պետություններին, որոնք տարածքային ձեռքբերումներ էին ունեցել նրա հաշվին՝ վերջին տասնմեկ տարվա ընթացքում[266]: Այսինքն՝ դա նշանակում էր, որ Թուրքիան ոչ թե վճարելու է ռազմատուգանք (ռեպարացիա), այլ՝ օսմանյան կառավարության արտաքին պարտքը, որի հիմնական մասը գոյացել էր դեռևս Ղրիմի պատերազմի ժամանակ (1853-1856 թթ.): Այստեղ ոչ մի հիշատակություն չկար Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի կրած նյութական կորուստների փոխհատուցման մասին: Թուրքիան Լոզանի պայմանագրով հանդես էր գալիս, ոչ թե պարտված, այլ՝ հաղթող կողմ, որի բարեկամությունը շահել ձգտում էին Անտանտի պետությունները և ԽՍՀՄ-ը:

Որպես ազգային փոքրամասնություններ Թուրքիայում «ճանաչվեցին» հայերը, հույները և հրեաները՝ սահմանափակ մշակութային իրավունքով, իսկ քրդերը, որպես ժողովուրդ չճանաչվեցին, որի դիմաց Անգլիան ստացավ Քիրքուքը և Մոսուլը:

Թուրք-քրդական սահմանների վերջնական որոշման հարցը տրվեց թուրք-բրիտանական կառավարությունների փոխհամաձայնությանը, որի բացակայության դեպքում հարցը լուծելու էր Ազգերի լիգան (հդվ. 1-ին): Թուրքիան հօգուտ Անգլիայի հրաժարվում էր Եգիպտոսից, Սուդանից, Կիպրոսից (հդվ. 17-21): Ֆրանսիան Թուրքիայից ստանում էր Սիրիան (Ալեքսանդրետի մարզով) և Լիբանանը (հդվ. 3-րդ), իսկ Իտալիան՝ Լիբիան, ինչպես նաև Աստրոպոլիան, Հռոդոսը, Կալկին և մի քանի այլ կղզիներ[267]:

---

[266] TREATY OF PEACE WITH TURKEY SIGNED AT LAUSANNE JULY 24, 1923 // http: // wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne
Քրդերի մասին թուրքական հանրագիտարանում գրված է, որ նրանք թուրքեր են, որոնք ապրում են լեռներում և մոռացել են իրենց մայրենի լեզուն, քրդերը թուրքական ծագում ունեն և կազմում են թուրք ժողովիդի մի խումբն ու թուրքական ցեղերից մեկի ճյուղը:

[267] Լոզանի պայմանագրի ամբողջական տեքստը տես TREATY OF PEACE WITH TURKEY SIGNED AT LAUSANNE JULY 24, 1923 // http: // wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne

Փաստորեն, Լոզանի պայմանագրով հաստակեցվում էր միայն Թուրքիայի արևմտյան և հարավային սահմանները: Ոչ մի խոսք չկար արևելյան և Հայաստանի հետ սահմանների մասին[268]:

Լոզանի պայմանագրի 37-44-րդ հոդվածները («Փոքրամասնությունների պաշտպանություն» 1-ին մասի 3-րդ բաժին) վերաբերում են Թուրքիայում ապրող ազգային, ավելի ճիշտ կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: Այդ առումով պետք է նշել, որ ինչպես նկատել է Ա. Մարուքյանը, Լոզանի պայմանագրի այս հոդվածները գրեթե բառացիորեն կրկնում են 1878 թ. Բեռլինի պայմանագրի 62-րդ հոդվածի պահանջները, ինչն ինքնին նշանակում էր, որ տերությունները արձանագրում էին Օսմանյան կայսրության կողմից այդ դրույթների չկատարումը և նույն պահանջները առաջադրում էին Թուրքական նոր իշխանությանը[269]:

Լրացնելով համեմատական վերլուծության վերհիշյալ մոտեցումը, նշենք, որ Լոզանի պայմանագրում բացակայում էր, որևէ հոդված կամ արտահայտություն, որը կհիշեցներ Բեռլինի պայմանագրի համար բնորոշ 61-րդ հոդվածը: Սա ցույց է տալիս, որ Լոզանի պայմանագիրը ոչ միայն իր դրույթներով զիջում է Բեռլինի պայմանագրին, այլև Հայկական հարցի հետ որևէ առնչություն չունի: Եվ ուրեմն մոլորություն կլինի Հայկական հարցի լուծումը փնտրել Լոզանի պայմանագրում:

37-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր եվրոպական տերությունների առաջ 38-44-րդ հոդվածները ճանաչել որպես հիմնարար օրենքներ և ոչ մի օրենք, ոչ մի կարգավորում կամ պաշտոնական գործողություն չպետք է հակասեին այս պայմաններին ու գերակայեին նրանց:

38-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր ապահովել Թուրքիայի բնակիչների կյանքն ու ազատությունը՝ անկախ նրանց ազգային, լեզվական ու դավանաբանական պատկանելիությունից: Թուրքիայի բոլոր բնակիչներն ազատ էին հանրային կամ մասնավոր գործունեություն ծավալելու, տարբեր կրոններ դավանելու և համոզմունքներ ունենալու մեջ, որոնք չէին հակասի հանրային կարգերին ու բարոյական նորմերին: Ոչ մահմեդական փոքրամասնու-

---

[268] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմիրավական հիմնավորումները, էջ 138:

[269] Նույն տողում, էջ 140:

թյունները կունենային ազատ տեղաշարժման և արտագաղթելու (էմիգրացիա) իրավունք:

Առաջին հայացքից թվում է, որ Թուրքիան պարտավորվում է Եվրոպական տերությունների վերահսկողությամբ ապահովել իր ոչ մահմեդական բնակիչների՝ 38-րդ հոդվածով ստանձնած իրավունքները: Սակայն հոդվածում տեղ գտած ,որոնք չէին հակասի հանրային կարգերին ու բարոյական նորմերինե արտահայտությունը կարող էր նշանակել, որ այդ ոչ մահմեդական փոքրամասնությունը՝ ասենք հայերը և հույները, ազգային ազատագրական պայքար ծավալելու, ինքնորոշում պահանջելու իրավունք չունեին: Դրանով, ինչպես կհամոզվենք նաև հաջորդ հոդվածներով, Եվրոպական տերությունների (մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի) առաջ Թուրքիան, փաստորեն, ստանձնել էր, ոչ թե «պարտականություն», այլ վերոհիշյալ երկրները եկել էին «փոխհամաձայնության»: Այսինքն՝ դաշնակից տերությունները համաշխարհային հասարակության առաջ իրենց դեմքը փրկելու համար, պայմանագրով Թուրքիայից պահանջում էին ոչ մահմեդական բնակչության կյանքի, դավանանքի և քաղաքացիական իրավունքին բնորոշ այլ ազատություններ, իսկ Թուրքիան իրավունք էր ձեռք բերում «հանրային նորմերի և կարգերի» պատրվակը վկայակոչելով տարբեր առիթներով երկրի ներսում վարել ազգային փոքրամասնություններին հալածելու և ծուլման (ասիմիլացման) քաղաքականություն:

Դաշնակից տերությունների կողմից Թուրքիային կատարված զիջում էր նաև այն հանգամանքը, որ Լոզանի պայմանագրով (37-44-րդ հոդ.) Թուրքիայում «ազգային փոքրամասնություն» հասկացողությունը փաստորեն կերպարանափոխվեց «ոչ մահմեդական փոքրամասնության», որը վտանգավոր էր այնքանով, որ Թուրքիան հարկ եղած պարագայում կարող էր հայտարարել, որ երկրում չկան «ազգային փոքրամասնություններ», այլ կան ոչ «մահմեդական թուրքեր»:

Հայկական հարցի տեսանկյունից զավեշտով պայմանական հետաքրքրություն են ներկայացնում նաև պայմանագրի, 39, 40, 41, 42 և, հատկապես, 44-րդ հոդվածը:

39-րդ հոդվածով Թուրքիայի քաղաքացի հանդիսացող ոչ մահմեդական փոքրամասնությունները մահմեդականների նման կարող էին օգտվել միևնույն քաղաքացիական և քաղաքական իրավունքներից: Պաշտոնական թուրքերենի հետ կրոնական փոքրամասնությունները

ները համարժեք պայմաններ պետք է ունենային ոչ թուրքերենով դատարաններում հանդես գալու համար: 40-րդ հոդվածով Թուրքիայի ոչ մահմեդական փոքրամասնությունները օգտվելու էին բժշկական օգնության և անվտանգության իրավունքից: Նրանք իրավունք էին ունենալու կառավարելու իրենց սեփական միջոցները, իրենց հաշվին հիմնելու բարեգործական ընկերություններ, դպրոցներ և այլն: 41-րդ հոդվածով Թուրքիայի այն բնակավայրերում, որտեղ կային մեծ թվով ոչ մահմեդական բնակիչներ, թույլատրվում էր ունենալ դպրոցներ, որտեղ թուրքերենի հետ միասին կուսուցանվեր նաև մայրենի լեզուն:

Այս հոդվածները հիշեցնում են այն բոլոր պայմանագրային և ծրագրային դրույթները, որոնք առնչվել են Հայկական հարցին (1878 թ. Բեռլինի պայմանագիր, 1895 թ. մայիսյան բարենորոգումների նախագիծ, 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների նախագծեր, 1914 թ. հունվարի 26-ի պայմանագիր): Եվրոպական տերությունները կարողացան վերոհիշյալ հոդվածները «պարտադրել» Թուրքիային միայն այն ժամանակ, երբ հայերն Արևմտյան Հայաստանում արդեն ենթարկվել էին բնաջնջման: Իսկ այդ պայմանները Թուրքիայի համար ընդունելի դարձան միայն այն ժամանակ, երբ ցեղասպանության ենթարկված հայերը այլևս վտանգավոր չեին թուրքական պետության համար:

42-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր ապահովել Թուրքիայի ոչ մահմեդական փոքրամասնությունների աղոթարանների, գերեզմանոցների ու կրոնական մյուս հաստատությունների պաշտպանությունը: Այդ հոդվածով հայկական եկեղեցիները, ոչ միայն չպետք է քաղվեին այլև՝ վերանորոգվեին[270]:

44-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվում էր ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների հարցերով վեճերը դատական գործերով լուծելու հնարավորությունը: Լոզանի պայմանագրին մասնակից երկրներից մեկի պահանջով հարցը կարող է տեղափոխվել Արդարադատության միջազգային մշտական ատյան, որի վճիռը պետք է լիներ վերջնական: Այսինքն՝ գործնականում Լոզանի պայմանագրի անդամ պետություններից յուրաքանչյուրը այսօր էլ Թուրքիայի ոչ մահմեդական բնակչության իրավունքների ոտնահարման հարցերով կարող է դիմել ՄԱԿ-ի միջազգային դատարան: 44-րդ հոդվածով նաև նշվում էր, որ ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունք-

[270] Նույն տեղում, էջ 141:

ներին վերաբերող հիշյալ հոդվածները հանդիսանում են Թուրքիայի միջազգային պարտավորությունը դաշնակից տերությունների առջև և դրանց կատարման հսկողությունը դրվում էր Ազգերի լիգայի խորհրդի անդամների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վրա[271]:

44-րդ հոդվածը որքան էլ մարդասիրական միտումներ ունենար, մեր կարծիքով, հետապնդում էր նաև այլ նպատակ: Նախ՝ Արևելքի քրիստոնյաներին պաշտպանելու պատրվակով եվրոպական տերությունները միշտ էլ միջամտել են թուրքական պետության ներքին գործերին: Նրանք այս միջոցով ցանկացել են ազդեցություն ձեռք բերել Թուրքիայի նկատմամբ և վերահսկել նրա հարաբերությունները Խորհրդային Միության հետ՝ հանձինս այս 44-րդ հոդվածի ունենալով ճնշման լծակ: Ազգերի լիգայի առկայությունը դեռ չէր նշանակում, որ նրա անդամ Եվրոպական տերություններ միջև այլևս գոյություն չունեն հակասություններ. նրանք առաջվա պես շարունակում էին մնալ որպես գաղութային երկրներ, որոնց հակակշիռների վրա խաղալով թուրքական պետությունը այս կամ այն չափով կարողացել էր տանել իր քաղաքական գիծը:

Այսպիսով, եթե Սևրի պայմանագրով Հայկական հարցը ստանում էր իր լուծումը և հայերին տեր դարձնում իրենց հայրենիքի մի զգալի մասին, ապա Լոզանի խորհրդաժողովում մեծ տերությունների աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում, այն դեռ լուծում չստացած, սկսեց նրանց կողմից աստիճանաբար «չեզոքացվել»՝ Լոնդոնի վեհաժողովում «Հայկական անկախ պետություն» արտահայտությունը փոխարինվեց «հայկական ազգային օջախի»[272], իսկ Լոզանում «ազգային օջախից» էլ առավել անորոշ «հայերի հավաքատեղիի» և իսպառ հանվեց այն ժամանակվա միջազգային դիվանագիտության ասպարեզից:

Լոզանի պայմանագիրը չէր կրկնում Սևրի պայմանագրով նախատեսված հայերի ցեղասպանության համար պատասխանատվություն սահմանող հոդվածների դրույթները: Սակայն այդ հարցերի չարծարծվելը Լոզանի պայմանագրում չի կարող նշանակել, որ դրանք վերա-

---

[271] Նույն տեղում, էջ 141-142:
[272] Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2-րդ, էջ 280-281:

ցել կամ փոխարինվել են: Անգամ թուրք պատմաբաններն ընդունում են, որ Լոզանի համաձայնագրում հայերի ջարդերի և Հայաստանի իրավունքների հիշատակման բացակայությունը թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինենյու և Ջ. Քերզոնի միջև ձեռք բերված գաղտնի պայմանավորվածության հետևանք է[273]:

Ինչպես ցույց տվեց ապագան, նույնիսկ ազգային փոքրամասնությունների մասին այս հոդվածները իրենցից բացարձակապես ոչինչ չէին ներկայացնում[274]: Ոչ մահմեդական փոքրամասնությունների մասին Լոզանի պայմանագրային դրույթները չկիրառելու և Ազգերի Լիգայի միջամտությունը բացառելու համար Թուրքիայի կառավարությունը վճռեց փախստական հայերին զրկել թուրքական քաղաքացիությունից: Իսկ 1920-1930-ական թթ. ուժեղացան ճնշումները ազգային փոքրամասնությունների՝ հայերի, հույների և քրդերի նկատմամբ: 30-40 հազար հայեր արտաքսեցին դեպի Սիրիա և իսկ նրանց համայնական կալվածքները բռնագրավեցին[275]:

1924 թ. ապրիլի 20-ին ընդունվեց Թուրքիայի Հանրապետության առաջին սահմանադրությունը*, որն ուներ ազգայնական բնույթ՝ Թուրքիայի բոլոր բնակիչները անկախ ազգային պատկանելիությունից հայտարարվեցին թուրք[276]:

Ամփոփելով Լոզանի պայմանագրին վերաբերող վերլուծությունը կարող ենք նշել՝

---

[273] Լոզանի և Սևրի պայմանագիր համեմատական վերլուծությունը տես Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահիրավական հիմնավորումները, էջ 138:

[274] Տես Մարուքյան Ա., նշվ., աշխ էջ 137-145:

[275] Նույն տեղում, էջ 144:

* 1931 թ. Մ. Քեմալի նախաձեռնությամբ Անկարայում հիմնվեց «Թուրքական պատմաբանական ընկերություն», որ կոչված էր ստեղծելու թուրքական հանրապետության պաշտոնական պատմագրությունը՝ «Թարիխը»: Մ. Քեմալ Աթաթյուրքի անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց այդ պատմությունը՝ միաձուլված օսմանականության, թուրքականության և պանթուրքական գաղափարաքաղաքական տեսություններով: Ըստ նոր թուրքական պատմագրության թուրքերը «համաշխարհային քաղաքակրթության ստեղծողներն ու կրողներն են», անդիսանում են «Փոքր Ասիայի բնիկներ», «հին խեթերը եղել են թուրքեր» և այլ նմանօրինակ մտացածին կեղծ պատմություններ: Այս քայլով Աթաթուրքը և նրա համախոհները, ոչ միայն խնդիր ունեին «օրինականացնել» թուրքերի «պատմական իրավունքները» տարածաշրջանի նկատմամբ, այլև թուրքերի վրայից ջնջել նվաճողի, ավերողի, քաղաքակրթությունները կործանողի և մարդկությանը ոչ մի արժեք չտվողի մեղադրանքները, որոնք թուրքերի մոտ առաջացնում էին թերարժեքության զգացում:

[276] Սիմոնյան Հ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., «Հայաստան» հրատ., 1991, էջ 429:

1) Հայկական հարցի լուծման համար տուրք տալ Լոզանի պայմանագրին նշանակում է բռնել կրավորական և պարտվողական դիրք:

2) Սխալ կլինի կարծել, որ Լոզանի պայմանագիրը հանդիսացավ Հակական հարցի վերջը. նման մոտեցումը սխալ է և հակագիտական: Հայկական հարցը լուծում չգտավ այն ժամանակ (ինչպես լուծում չգտավ, 1878 թ., 1912-1914 թթ. և այլ տարիներին), սակայն դա չի նշանակում, որ այն և նրա հետ կապված նյութական կորուստների փոխհատուցման խնդիրը չի լուծվի ապագայում: Հայկական հարցը մնում է բաց և մինչ այժմ լուծման կարոտ: Դա է ապացուցում նաև երկրորդ աշխարհամարտից հետո Հայկական հարցի նոր փուլի վերարծարծումը և արդի ժամանակաշրջանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման շարունակական գործընթացը:

Ներկայումս անցյալի սխալներն ու վրիպումները հաշվի առնելով անհրաժեշտ է Հայկական հարցի լուծման համար միջազգային ասպարեզում մշակել որակապես նոր ռազմավարություն, որը կհանգեցնի Հայ դատի դրական լուծմանը:

3) Ինչպես Մոսկվայի և Կարսի պայմանագրերն են համարվում միջազգային իրավունքի նորմերը խախտող պայմանագրեր, այնպես էլ Լոզանի պայմանագիրը հայկական մասով և Հայկական հարցի տեսանկյունից պետք է համարել անօրինական: Հայաստանի Հանրապետությանը փոխարինած Խորհրդային Հայաստանը չի մասնակցել Լոզանի բանակցություններին և պայմանագրի կնքման կողմ չի հանդիսանում, այնինչ Խորհրդային Հայաստանը ինքնիշխան պետություն էր, գոյություն ունեցող փաստ, առանց որի մասնակցության անքույլատրելի էր Լոզանի պայմանագրի ստորագրումը: Դա միջազգային իրավունքի խախտում էր, քանի որ ըստ 1969 թ. Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի («Երրորդ պետություններին վերաբերող ընդհանուր նորմի»)՝ պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և «պայմանագիրը երրորդ պետության համար պարտավորություններ կամ իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնության»[277]: Մյուս կողմից Խորհրդային Հայաստանը միջազգային իրավունքի սուբյեկտ չէր հանդիսանում, որով կարելի էր արդարացնել պայմանագրին նրա մասնակից չլինելու հանգա-

[277] Տես Կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին // http://www.un.am/res/UN%20 Treaties/ XIV_1.pdf

մանքը, սակայն հայկական միացյալ պատվիրակությունը (ՀՀ պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի և Ա. Խատիսյանի, ազգային պատվիրակությունը՝ Գ. Նորատունկյանի և Գ. Սինապյանի մասնակցությամբ) նույնպես չստորագրեց Լոզանի պայմանագիրը, այն դեպքում, երբ նրանք ներկայացնում էին արևմտահայության և ՀՀ-ի շահերը, որը Սևրի պայմանագրով ճանաչվել էր դե յուրե, և որի պատվիրակությունը Լոզան էր ներկայացել հանձինս Ա. Ահարոնյանի և Ա. Խատիսյանի:

4) Ինչպես տեսանք Առաջին աշխարհամարտի ժամանակ և դրան հաջորդած տարիների ընթացքում հայերի տնտեսական կորուստների հարցը իր լուծումը չստացավ Լոզանի պայմանագրում և փորձ արվեց այդ խնդիրը նույնպես «քողարկել» պայմանագրի ոչինչ չներկայացնող 37-44-րդ հոդվածների համատեքստում:

Լոզանի պայմանագիրը թուրքական կառավարությանը իրավունք չէր տալիս բռնագրավելու հայերի ունեցվածքը և պայմանագրի, 44-րդ և Ազգերի լիգայի կանոնադրության 14-րդ հոդվածների համաձայն[278] կարող է ստանալ միջազգային վեճի բնույթ՝ հայերի լքյալ գույքի հետ կապված հարցերի լուծման տեսանկյունից:

[278] Барсегов Ю. Геноцид армян - преступление по международному праву, М. 2000, с. 211-212.

15. ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԼՔՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՀԱՐՑԸ

Ազգերի լիգան որպես միջազգային կազմակերպություն ստեղծվել էր 1919 թ. Փարիզի խաղաղության խորհրդաժողովի որոշմամբ: Ազգերի լիգան համաշխարհային նշանակության առաջին միջազգային կազմակերպությունն էր, որի հիմնական նպատակները խաղաղության պահպանումն ու միջազգային համագործակցության զարգացումն էին: Ազգերի լիգայի ղեկավար մարմինները գտնվում էին Ժնևում, որտեղ գումարվում էին նրա համաժողովները (ասամբլեա): Ազգերի լիգայում ղեկավար դեր էին խաղում Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան: Այն հանդիսանում էր Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) նախօրինակը: Սակայն ՄԱԿ-ի հետ համեմատած Ազգերի լիգան բավականաչափ թույլ գտնվեց, որին չանդամակցեցին ո՛չ ԱՄՆ-ը, և ո՛չ էլ ԽՍՀՄ-ը (վերջինս լիգայի անդամ է եղել միայն 5 տարի՝ 1934-1939 թթ.)[279]:

Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածով միջազգայի պրակտիկայում առաջին անգամ մտցվեց կառավարման մանդատային համակարգը: Այն կիրառվեց Օսմանյան կայսրության նախկին արաբական տիրույթների և Գերմանիայի նախկին գաղութների նկատմամբ: Վերոհիշյալ հոդվածում արձանագրված էր, որ այդ երկրների ժողովուրդները դեռևս պատրաստ չեն ինքնուրույն կառավարման համար և կարիք ունեն «առաջադեմ ազգերի առաջնորդության»[280]: 1920 թ. Ազգերի լիգային կից ստեղծվեց Միջազգային արդարադատության մշտական դատարանը: Յուրաքանչյուր պետություն իրավունք էր ստանում բողոքել Ատյանին մեկ այլ պետության դեմ՝ այս կամ այն խնդրի կապակցությամբ: 1920-ական թթ. Ազգերի լիգայի ջանքերով հնարավոր եղավ լուծել տարբեր պետությունների տարածքային, քաղաքական, տնտեսական մի շարք հակասություններ (գերմանա-լեհական, շվեդա-լեհական, իտալա-հարավսլավոնական, հունա-բուլղարական և այլն): Սակայն Ազգերի լիգայի որոշումները չունեին օրենքի ուժ և պարտադիր չէին նույնիսկ նրա անդամ պետությունների համար: Դա առավել ակնհայտ դարձավ 1930-ական թթ., երբ սկսվեց Իտա-

---

[279] Ամերիկայի պատմության ուրվագծերը. Ե., ԱՄՆ-ի տեղեկատվական գործակալություն, 1996, էջ 246-247:

[280] Статут Лиги наций // http://www.hist.msu.ru/Departments/ModernEuUS/INTREL/SOURCES/Legnatust.htm

լիայի, Գերմանիայի և Ճապոնիայի նվաճողական քաղաքականությունը: Ազգերի լիգան չկարողացավ պահպանել իր անդամներ Եթովպիայի, Չեխոսլովակիայի, Ավստրիայի, Լեհաստանի, Չինաստանի անվտանգությունը: Այն անկարող ու անկենսունակ գտնվեց նաև Հայկական հարցի ու հայ ժողովրդի շահերի պաշտպանության խնդրում (բացառություն կարող է լինել Ազգերի լիգայի շրջանակներում մեծ հայասեր Ֆ. Նանսենի գործունեությունը): Լիգան գոյություն ունեցավ մինչև 1939 թ. սկսված երկրորդ համաշխարհային պատերազմի պայմաններում նա փաստորեն դադարեց գործել՝ անկարող լինելով կատարել իր հիմնական դերը՝ խաղաղության պահպանումը: Պաշտոնապես լուծարվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. 1946 թ.:

Փարիզի խաղաղության խորհրդաժողովին մասնակցող ՀՀ պատվիրակությունը Ա. Ահարոնյանի գլխավորությամբ 1920 թ. մայիսի 13 ին հեռագրով դիմեց Ազգերի լիգայի խորհրդին խնդրելով ապահովել ՀՀ-ի անդամակցելու համարը: Խնդրանքը երկար քննարկումների տեղիք տվեց, քանի որ Ազգերի լիգայի անդամ կարող էր դառնալ որոշակի պահանջներ բավարարող երկիրը, այն է՝ այլ պետությունների կողմից իրավաբանորեն դե յուրե կամ փաստացի՝ դե ֆակտո ճանաչում, կայուն պետական համակարգ, ճշգրտված սահմաններ, ազգաբնակչության ստույգ թվաքանակ, կառավարման ինքնուրույնություն և այլն[281]: Սակայն Հայաստանի առաջին հանրապետությունը իր գոյության ամբողջ ժամանակաշրջանում այդպես էլ Ազգերի լիգայի պահանջներին «չհամապատասխանեց»:

Ազգերի լիգայի կանոնադրության 1-ին հոդվածն ասում էր. «Յուրաքանչյուր պետություն, դոմինիոն կամ գաղութ, որը կառավարվում է ազատ, և որը նշված չէ կանոնադրության հավելվածում, կարող է դառնալ Ազգերի լիգայի անդամ, եթե նրա անդամությանը կողմ է արտահայտվում Վեհաժողովի երկու երրորդը, և տվյալ երկիրը արդյունավետ երաշխիքներ է ներկայացնում իր ստանձնած միջազգային պարտավորությունները պահպանելու, զինված ուժերի, ցամաքային, ջրային և օդային սպառազինությունների վերաբերյալ Ազգերի լիգայի կանոնակարգն ընդունելու իր անկեղծ մտադրությունների վերաբերյալ»[282]: Սակայն Ազգերի լիգային անդամության հայտ ներկայացրած որոշ երկրների պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

---

[281] Հովսեփյան Է., Մարդկության բարի հանճարը (Նանսեն), Ե., Ազգային արխիվ, 2011, էջ 85:

[282] Кольский А., Лига наций (Ее организация и деятельность), М., 1934, с. 30.

վերոնշյալ պայմանները բավական չէին Ազգերի լիգային անդամագրվելու համար, և վերջինս կարող էր մերժել պետության մուտքն իր կառույց՝ քաղաքական կամ որևէ այլ նկատառումից ելնելով: Այս երկակի չափանիշների քաղաքականությունն ազդեցություն ունեցավ նաև Ազգերի լիգային անդամակցելու հայտ ներկայացրած անդրկովկասյան հանրապետությունների վրա[283]: ՀՀ կառավարությունը բարձրացնելով Ազգերի լիգային անդամակցելու հարցը ենթադրում էր, որ միջազգային հանրությունը կպարտավորվի պաշտպանել Հայաստանի Հանրապետությունը (որպես Լիգայի անդամի) Թուրքիայի ոտնձգություններից: Դիմումը մի քանի ամիս քննարկվելուց հետո 1920 թ. դեկտեմբերի 16-ին մերժվեց[284]. Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչները եզրակացրին, որ «ներկայումս ցանկալի չէ այդպիսի քայլը», քանի որ 1920 թ. Սևրի հաշտության պայմանագիրը, որով Հայաստանը հռչակվում էր անկախ պետություն, դեռ վավերացված չէր: Բացի այդ, Վ. Վիլսոնի գծած Հայաստանի սահմանները այնքան ծգված էին, որ Ազգերի լիգայի անդամ տերությունները «ներկա պայմաններում դժվարությամբ կարող էին ստանձնել դրանք երաշխավորելու կամ պաշտպանելու պատասխանատվությունը»[285]: Իրականում այդ մերժումը պայմանավորված էր նախ Թուրքիայի շահերը պաշտպանելու՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ձգտմամբ. Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցումը անհանգստացրել էր Ազգերի լիգայի առաջատար տերություններին, որոնք վախենում էին կորցնել իրենց ազդեցությունը Թուրքիայում, երկրորդ՝ ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից հայկական մանդատից հրաժարվելու որոշման, ՀՀ-ի խորհրդայնացման հետ:

Ներկայումս մեր ձեռքում չկան բավարար նյութեր Ազգերի լիգայի կողմից հայերի լքյալ գույքին վերաբերող հարցերի վերաբերյալ: Սակայն առկա փաստերից կարող ենք կատարել հետևյալ հետևությունը.

1) 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի 142-րդ հոդվածով Ազգերի լիգային իրավունք էր տրվում զբաղվել հայերի դեմ իրագործված ցեղասպանության մեջ մեղադրվողներին պատժելու գործընթացով: Այդ նպատակով նախատեսվում էր, «որ օսմանյան կառավա-

---

[283] Գզոյան Է. Գ., Անդրկովկասի հանրապետությունների՝ Ազգերի լիգային անդամակցելու հարցը, Լրաբեր հասարակական գիտությունների, № 3 (2011), էջ 55:

[284] Եսայան Ա. Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Ե., «Միտք» հրատ., 1965, էջ 133-150:

[285] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 691:

ությունը պարտավորվում էր դյուրացնել Ազգերի լիգայի Խորհրդի կողմից նշանակվելիք խառը հանձնաժողովների գործողությունները՝ տուժածների, նրանց ընտանիքների և նրանց մերձավորների բողոքներն ընդունելու, անհրաժեշտ հետաքննություններ կատարելու և վերջնական ձևով վերոհիշյալ անձանց ազատելու մասին որոշումներ կայացնելու գործում»: Օսմանյան կառավարությունը համաձայնել էր Ազգերի լիգայի Խորհրդի կողմից միջնորդ հանձնաժողովների նշանակման հետ: «Լքյալ գույքի» մասին 144-րդ հոդվածում նշվում էր նաև «Ազգերի լիգայի Խորհրդի կողմից նշանակվելիք հանձնաժողովներից յուրաքանչյուրը կազմված կլինի օսմանյան կառավարության մեկ ներկայացուցչից, այն համայնքի մեկ ներկայացուցչից, որն իրեն համարում է տուժված կամ, որի անդամը իրեն համարում է տուժված և Ազգերի լիգայի Խորհրդի կողմից նշանակված նախագահողից»: Միջոցների ապահովումը, որոնք անհրաժեշտ էին այդ վճիռների իրականացումն երաշխավորելու համար, դրվում էր հիմնական դաշնակից տերությունների և Ազգերի լիգայի Խորհրդի վրա: Օսմանյան կառավարությունը պարտավորվում էր համաձայնել բոլոր որոշումների հետ, որոնք ընդունվում էին այդ հարցի շուրջ[286]:

Ըստ Ա. Մարուքյանի 144-րդ հոդվածը չի կորցրել իր արդիականությունը և լիարժեք կարող է կիրառվել Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների վերացման հիմքում՝այն տարբերությամբ, որ Ազգերի լիգայի Խորհրդին փոխարինի այդ կառույցի ժառանգորդի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը[287]:

Այնուամենայնիվ Սևրի պայմանագիրը չվավերացվեց, իսկ Ազգերի լիգան իր ստանձնած պարտավորությունները հայության հանդեպ չկատարեց՝ Հայկական հարցի լուծման համար դրսևորելով անբավարար ջանք:

2) Հայկական հարցը Ազգերի լիգայի փաստաթղթերում հիշատակվել է «Հայկական ազգային օջախի» ստեղծման գաղափարի քննարկման ժամանակ: Թուրքիայի հյուսիսարևելյան շրջանում կամ Կիլիկիայի և Սիրիայի սահմանագծում հայերի համար այդպիսի «ազգային տուն» ստեղծելու գաղափարը տվել էր Մեծ Բրիտանիան, որին

---

[286] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 678-680, Պարսամյան Ս., Միրզոյան Ա., Ազգերի լիգայի փաստաթղթերը ապացուցում են Հայոց ցեղասպանության փաստը Ազգերի լիգայի ստեղծման 90 ամյակի կապակցությամբ // http://genocidarmenia.ru/news/2012-02-03/160468

[287] Մարուքյան Ա., նշվ. աշխ., էջ 121:

պաշտպանել էին եվրոպական մյուս պետությունները, երբ պարզվել էր, որ Սևրի հաշտության պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող դրույթները չեն կատարվելու, իսկ Անտանտի տերությունները համաձայն են դրանց փոփոխմանը: Սակայն Թուրքիայի խիստ բացասական դիրքորոշումը Հայկական հարցում, որն ըստ էության շահախնդրորեն պաշտպանեցին նաև եվրոպական առաջատար տերությունները, հանգեցրեց նրան, որ այդպիսի «օջախ» ստեղծելու գաղափարը գործնական զարգացում չունեցավ: Հետագայում այդ եզրույթը հիշատակվել է Ազգերի լիգայի փաստաթղթերում, բայց արդեն «օջախի» ստեղծումը նախատեսվում էր ոչ թե Թուրքիայում, այլ ՀԽՍՀ տարածքում:

Հայկական հարցում Ազգերի լիգան դրսևորեց էական անկեղծություն, որն էլ պատճառ հանդիսացավ, որ այն մտնի փակուղի, իսկ Լոզանի պայմանագրի 37-44-րդ հոդվածներում հայ ազգային պահանջատիրությունից վերածվի Թուրքիայի ներքին գործերին վերաբերող «կրոնական փոքրամասնությունների» ոչինչ չասող խնդրի:

3) Ազգերի լիգայում բավական երկար քննարկվեց նաև աշխարհի շատ երկրներում ցրված գաղթական հայերին օգնություն կազմակերպելու հարցը: Այդ ուղղությամբ ջանքերը նույնպես քիչ արդյունք տվեցին: 1922 թ. Ազգերի լիգան փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար մտցրեց, այսպես կոչված, «Նանսենյան անձնագրերը»՝ անձը հաստատող ժամանակավոր վկայականներ, որոնցից ստացան մոտ 320 հազ. գաղթական հայեր: 1925 թ. Ազգերի լիգան քննության առավ Ֆ. Նանսենի զեկուցագիրը՝ Խորհրդային Հայաստան այցելության արդյունքների մասին (ՀԽՍՀ-ի հնարավորությունները փախստականներին ընդունելու վերաբերյալ): Զեկուցման մեջ նշվում էր, որ անհրաժեշտ օգնության դեպքում Խորհրդային Հայաստանը ի վիճակի է ընդունել 25-30 հազ. գաղթականների: Համոզվելով, որ Ազգերի լիգան ձգձգում է հարցի լուծումը, Ֆ. Նանսենը ձեռնամուխ եղավ սեփական ուժերով այդ մարդասիրական օգնությունը կազմակերպելուն: 1929 թ. նա առաջարկեց դադարեցնել հարցի քննարկումը, և սեպտեմբերի 21-ին Լիգայի ասամբլեան հարցը օրակարգից հանեց[288]:

---

[288] Տե՛ս Արզումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, Ե., «Հայաստան» հրատ., 1977, էջ 204-286, Հովսեփյան Է., Մարդկության բարի հանճարը (Նանսեն), Ե., ՀԱԱ, 2011, էջ 85-116, Հայ դատի նվիրյալները Ֆրիտյոֆ Նանսեն (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ Հովսեփյան Է.), Ե., ՀԱԱ, 2005, էջ 56-67, 116-121:

Այսպիսով, վերոհիշյալ երեք հիմնական կետերը այն առավելագույն քայլերն էին Ազգերի լիգայի կողմից, որոնք նա և մեծ տերությունները «կատարել են»՝ Հայկական հարցի և նրա հետ կապված առանձին խնդիրների վերաբերյալ:

Եթե Ազգերի լիգան այս կամ չափով անդրադառնում էր Հայկական հարցին, դա դեռ չէր նշանակում, որ անդրադարձ կար հայերի լքյալ գույքին: Վերջինս Հայկական հարցի և նրա բաղկացուցիչ մաս կազմող Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման պայմաններում դեռևս գտնվում էր մի տեսակ երկրորդական կարգավիճակում, քանի որ առանց Արևմտյան Հայաստանի տարածքների հարցի լուծման, ինչ ձևաչափով էլ որ այն լիներ, լքյալ կամ կողոպտված գույքի վերադարձման խնդիր դեռ օրակարգի խնդիր չէր: Վերջինս առանց առաջին երկուսի լուծման կամ դրական ընթացքի չէր կարող լուծվել, քանզի «ստորադասվում» էր նրանց, իսկ Ազգերի լիգան Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ու հայության փոխհատուցման հարցում ոչ մի էական քայլ չկատարեց:

Ազգերի լիգան իր անգործությունը և անկարողությունը դրսևորեց նաև 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ: Անգլիան և Ֆրանսիան բավարարվեցին միայն Ազգերի լիգայում անպտուղ ճառեր արտասանելով, հավաստիացնելով, որ քանի որ քեմալական Թուրքիան կազմակերպված պետություն չէ նրա վրա տնտեսական կամ որևէ այլ միջոց գործադրել հնարավոր չէ, որ Ազգերի լիգան իր տրամադրության տակ զինված ուժեր չունի և այլն: Նոյեմբերի 22-ին Ազգերի լիգայի ասամբլեան բանաձև ընդունեց որով դատապարտում էր Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումը: Այս ուշագրավ, սակայն անհասցե կոչը ոչ ոքի ոչինչ չէր պարտավորեցնում[289]:

Բացի այդ Անտանտի տերությունների հետ ուժի դիրքերից խոսացող քեմալական Թուրքիան, որը հաղթանակ տարավ նաև Հունաստանի դեմ պատերազմում և հանգեցրեց Մուդանիայի զինադադարին և ի վերջո Լոզանի պայմանագրին, արդեն դաշնակիցների ու Թուրքիայի համար «անհնարին» էր դարձնում Հայկական հարցի, ինչպես նաև վերջինիս բաղկացուցիչ մաս կազմող հայության լքյալ գույքի դրական լուծումը: Լոզանի պայմանագրով վերացվեց Թուրքիայի հանդեպ սահմանված կապիտուլյացիոն համակարգը, իսկ Հայկական

[289] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 309:

հարցն էլ խեղաթյուրվեց վերածվելով «ազգային փոքրամասնությունների» ոչինչ չնշանակող հարցի:

Ազգերի լիգայում հիմնական եղանակ ստեղծող պետությունները՝ Անգլիան ու Ֆրանսիան, ձգտում էին շահել Թուրքիայի բարեկամությունը և կտրել նրան Խորհրդային Ռուսաստանից (ԽՍՀՄ):

Այսպիսով, Ազգերի լիգան Հայկական հարցի (այդ թվում նաև հայերի լքյալ գույքի խնդրի) նկատմամբ դրսևորել է անբավարար ջանք, որ որոշումները պարտադիր չեն եղել անդամ պետությունների համար և մեծապես ազդել է նրա հեղինակության վրա: Միջազգային այս կառույցը Անգլիայի և Ֆրանսիայի համար ծառայել է որպես միջոց անդամ պետությունների հարաբերություններին ու գործերին միջամտելու համար: Ազգերի լիգայի թուլությունը և անկենսունակությունը ի վերջո հեղինակազրկեց նրան և հանգեցրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայկական հարցի պատմահրավական և տնտեսական վերլուծությունները ցույց տվեցին, որ այս ոլորտում ծավալված գործողությունները, ինչ ձևաչափով էլ որ դրանք լինեն, սկսած 1878 թ. մինչև 1923 թ. (այդ թվում նաև 1945-1953 թթ. Հայկական հարցի վերաբացման գործընթացը[290]) ավարտվել են անարդյունք: Եվ, անկախ մեծ տերությունների կամայականություններից, միջազգային բարդ իրադրությունից, հայ ժողովրդի պետականազուրկ վիճակից կամ 1918-1920 թթ. պետականության վերականգնումից ու նրա կորստից, միևնույն է Հայկական հարցը մնում էր չլուծված:

Հաշվի առնելով անցյալի փորձը, վրիպումներն ու բացթողումները և այն հանգամանքը, որ պատմությունը գրեթե միշտ կրկնվում է, սակայն ամեն անգամ կրկնվում է յուրովի՝ պայմանավորված ժամանակաշրջանի առանձնահատկություններով, անհրաժեշտ է որակապես նոր մոտեցում և ռազմավարություն մշակել Հայկական հարցի վերջնական լուծման ուղղությամբ: Այս ոլորտում հայությանը սպասվում է երկարատև և զգոն աշխատանք:

1) Սցենարային քաղաքականության սկզբունքով կարիք է զգացվում մշակել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարություն, որոնք կարող են տևել տարիներ կամ նույնիսկ տասնամյակներ և փուլային տարբերակով հաջորդեն միմյանց: Կարելի է ստեղծել հատուկ մասնագիտացված հանձնաժողով (կամ կառույց)՝ բաղկացած մի քանի հանձնաժողովներից, որոնցից առաջինը ծրագրավորելու է գործողությունների այնպիսի համակարգ, որ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության և, հատկապես, Հայկական հարցի լուծման գործընթացում ոչ մի բացթողումներ, «անակնկալներ» չլինեն: Երկրորդ հանձնաժողովը քայլեր պետք է ձեռնարկի Թուրքիայի դեմ տեղեկատվական, հոգեբանական պատերազմ և աշխարհով մեկ հայկական մշակույթի արտահանման քաղաքականություն ծավալելու համար: Երրորդ հանձնաժողովը պետք է

---

[290] Տե՛ս Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Ե., «Գիտություն» հրատ., 2001, էջ 34-63, Киракосян А. Дж. Армения и советско-турецкие отношения в дипломатических документах: 1945-1946 гг., Е.: Тигран Мец, 2010.

զբաղվի Հայկական հարցի իրավական խնդիրներով, մշակի միջազգային ատյաններ դատական հայց ներկայացնելու փաստաթղթեր: Չորրորդ հանձնաժողովը ճշգրիտ հաշվարկման և գնահատման պետք է ենթարկի ցեղասպանության արդյունքում հայության կրած նյութական կորուստները: Հինգերորդ հանձնաժողովը աշխատանք պետք է ծավալի Թուրքիայի հետ բանակցություններ վարելու համար, եթե միջազգային և տարածաշրջանային դեպքերը զարգանան ոչ ի նպաստ Հայաստանի:

2) Հարկավոր է հայկական մշակույթն իր բոլոր դրսևորումներով (հայկական սփյուռքի օժանդակությամբ) օգտագործել Հայաստանի Հանրապետության միջազգային դիրքերն ու հեղինակությունը ամրապնդելու, նրա մշակութային ազդեցությունը աշխարհում և տարածաշրջանում տարածելու համար: Սակայն հայ մշակույթը բարձրագույն դասական արժեք ծառայելուց բացի, պետք է հետապնդի քաղաքական և հոգեբանական նպատակ: Այն պետք է լինի «ուժային դիվանագիտության» այլընտրանքը, որպեսզի մարդկային զանգվածներին ու տարբեր ազգություններին դարձնի հայկական մշակույթի ու Հայաստանի իսկական համակիրների*:

3) Հայկական հարցի լուծման համար կարևոր է հաշվի առնել աշխարհի ուժային կենտրոնների աշխարհաքաղաքական շահերը, նրանց նպատակները, ինչպես Կովկասում, այնպես էլ Թուրքիայում, և ընդհանրապես Մերձավոր Արևելքում, որտեղ նկատվում է տարածաշրջանային քարտեզի վերաձևման գործընթաց:

4) Հայաստանի Հանրապետությունը, ազգային և պետական շահերից ելնելով, փոքր պետությունների հետ համատեղ պետք է գործնական քայլեր ձեռնարկի ՄԱԿ-ում և միջազգային այլ կառույցներում իր դերի բարձրացման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա բազմակողմանիորեն ապահովել իր ինքնիշխանությունը, անվտանգությունը և միջազգային ազդեցությունը:

5) Ընդգծելով միջազգային կառույցների և օրենքների կարևորությունը՝ չպետք է գերագնահատել նրանց ազդեցությունը, որոնք վեր-

---

* ԱՄՆ-ը իր հոլիվուդյան ֆիլմերով և ընդհանրապես «զանգվածային մշակույթով» ողողել է աշխարհը և դարձել այն լուրջ խթաններից մեկը, որ նպաստում է ամերիկյան աշխարհակարգի կայացմանը, Չինաստանը իր դասական մշակույթով մեծ ազդեցություն է թողել ու թողնում Հարավարևելյան Ասիայի երկրների վրա, ռուսական ուղղափառ եկեղեցին՝ սլավոնական ժողովուրդների վրա և այլն:

ջին տարիներին դրսևորված «գունավոր» ու «արաբական գարուն» հեղափոխությունների և ընդհանրապես Մերձավոր Արևելքում առաջացած ճգնաժամի պայմաններում դրսևորում են «անտարբերություն» կամ «անկենսունակություն»: Այս իրավիճակում որքան հնարավոր է հույսը պետք է դնել սեփական պետության և հայկական սփյուռքի ներուժի վրա:

Հայաստանը գտնվում է այնպիսի աշխարհագրական միջավայրում, որ և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականության մեջ նա սխալվելու կամ նույնիսկ թույլ վրիպում կատարելու իրավունք չունի:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ և փաստաթղթերի ժողովածուներ

1. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբագիր՝ Զ. Ս. Կիրակոսյան, Ե. «Հայաստան» 1972:
2. Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին (քննիչ հանձնաժողովի փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմող՝ Զաքարյան Ա., Ե., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005:
3. Հայ դատի նվիրյալները Ֆրիտյոֆ Նանսեն (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ Հովսեփյան Է.), Ե., ՀԱԱ, 2005:
4. Ճակատագրական պայմանագրեր (փաստաթղթերի ժողովածու, կազմող՝ Հ. Գ. Ազատյան), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998:
5. Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов: Тифлис, 1926.
6. Берлинская (Потсдамская) конференция рукавадителей трех союзных держав СССР, США, Великобритании, 17 июля – 2 августа 1945 г., сб. документов, М.: Политиздат, 1984.
7. Документы внешней политики СССР, т. 1, М.: Госполитиздат, 1959.
8. Документы внешней политики СССР, Т. 3, М.: Госполиздат 1959.
9. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году: Речь Гладстона, ст.: Ролен-Жекмена, Мак-коля, Грина, Диллона, Диева и др. / Предисл.: Л. А. Камаровский, проф. гр. – 2-е изд., М.: Тип. "Рассвет", 1896.
10. Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М.: Литиздат НКИД, 1927.
11. Сборник договоров России с другими государствами. 1856-1917 (составлен Козьменко И. В.), М.: Госполитиздат, 1952.
12. Documents on British foreign policy 1919-1939 (ed. by R. Butler and J.P.T. Bury, Vol. 15), International conferences and conversations. L.: H.M. Stat. off., 1967 https://archive.org/details/DocumentsOnBritishForeignPolicy1919-1939-Third SeriesVolumeV i1939

13. Sir Frederick Maurice, The Armistices of 1918. London, New York, Toronto: Oxford University Press, 1943, p. 85-87. // http://germanhistorydocs.ghi-dc.org/pdf/eng/armistice_germany_eng.pdf

2. Մենագրություններ

14. Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Ե., ԵՊՀ հրատ.,1989:
15. Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Ե., 2001:
16. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Ե., «Բրձ. դպր.», 1997:
17. Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Ե., «Նաիրի» հրատ., 2013:
18. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ , Ե. «Հայաստան», 1973:
19. Արզումանյան Մ. Վ., Նանսենը և Հայաստանը, Ե., «Հայաստան» հրատ., 1977:
20. Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Ե., ՀՀ ԳԱԱ, «Զանգակ 97», 2001:
21. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Ե., ԵՊՀ, 2011:
22. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
23. Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004:
24. Եսայան Ա. Ա., Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Ե., «Միտք» հրատ., 1965:
25. Թառոյան Կ. Զ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սուլթանական Թուրքիայի բռնատիրության դեմ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001:
26. Լազյան Գ., Հայաստանը և Հայ Դատը հայ և ռուս հարաբերություններու լույսի տակ, Ե. «Հայաստան», 1991:
27. Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915:
28. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, «Համազգային», 1968:
29. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Ե., «Զանգակ-97», 2003:
30. Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Ե., «Զանգակ 97», 2007:
31. Կիրակոսյան Ա. Զ., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը (պատմահիրավական եռալեզու տեղեկանք), Ե., «Նորավանք» ԳԿՀ, 2006:

32. Կիրակոսյան Ա. Ջ., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX դարի 30-ական թթ.-1914 թ.), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
33. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2-րդ, Ե., «Հայաստան» հրատ., 1983:
34. Հարությունյան Ա. Հ., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից, Ե., «Հայաստան», 1983:
35. Հովսեփյան Է., Մարդկության բարի հանճարը (Նանսեն), Ե., Ազգային արխիվ, 2011:
36. Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2014:
37. Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Ե., «Տիր», 2014:
38. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը 1920-1980 թթ. Ե. «Հայաստան», 1985:
39. Մուրադյան Ա. Մ., Մինասյան Է. Գ., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), Ե., ԵՊՀ, 2005:
40. Պապյան Ա., Հայրենատիրություն. հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոդվածների ժողովածու), Ե., 2012:
41. Պողոսյան Ս., Պատմագիտական ուսումնասիրություններ, Հայոց ցեղասպանության պատմություն, հ1 Ե., ԵՊՀ, 2008:
42. Պողոսյան Ս., Պատմագիտական ուսումնասիրություններ, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2, Ե., ԵՊՀ, 2009:
43. Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2-րդ, գիրք I, Ե., «Հայաստան» հրատ., 2001:
44. Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Ե., «Լուսակն», 2007:
45. Սահակյան Տ., Վուդրո Վիլսոն. մարդը և քաղաքագետը, Ե., «Լուսակն», 2006:
46. Սարգսյան Ե. Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Ե., «Հայաստան», 1964.
47. Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Ե., ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005:
48. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Գիրք բ, Ե., «Կաիսա» 1996:
49. Սիմոնյան Հ. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., «Հայաստան» հրատ., 1991:
50. Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Ե., «Գիտություն», 2001:

51. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., «Հայաստան», 1993.
52. Քաջազնունի Հ., ՀՅ դաշնակցությունը անելիք չունի այլևս, Ե., Շաղիկ, 1993:
53. Ататюрк К., Избранные речи и выступления, М.: «Прогресс», 1966.
54. Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики (О концепции члена «Комиссии примирения» Гюндюз Актана), М.:, Готика, 2002.
55. Барсегов Ю. Геноцид армян - преступление по международному праву, М.: Юристъ, 2000
56. Гершов З. М. Вудро Вильсон, М.: «Мысль», 1983.
57. Григорян А. Э. Турецкая республика. Основные инструменты государственного строя, М.: Наука, 1975.
58. Джордж ЛЛ. Правда о мирных договорах, т. 2, М.; Иностранная литература, 1957.
59. Иванов И. С. Очерки истории Министерства иностранных дел России. 1802-2002, т. 2., М.: OMG, 2002.
60. История государства и права СССР (под. ред. Чистякиова О. И.), ч. II, М:, 1986.
61. Истягин Л. Г. Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу, 1912-1914 гг., М.: Иностранная литература, 1959.
62. Кемаль М., Путь Новой Турций, т. I, М.: Литиздат НКИД, 1929.
63. Киракосян А. Дж., Армения и советско-турецкие отношения в дипломатических документах: 1945-1946 гг., Е.: Национальный архив Армении, 2010.
64. Леонтьев М. В., Большая Игра. Британская империя против России и СССР, М.: Астрель-СПбЕ, 2012.
65. Мандельштам А. Н., Младотурецкая держава. М., «Русская Мысль», 1915.
66. Никольсон Г. Как делался мир в 1919 г. М.: Госполитиздат, 1945.
67. Оганян Д. А. Стереотипы Армянской историографии, Ереван: НГ, 2010.
68. Потёмкина В. П. Дипломатия в новое время (1872-1919 гг.), М:. ОГИЗ, 1945.
69. Рубинштейн Н. Л., Ближний и Средний Восток после первой мировой войны. Лозанская конференция, М.: Лекции, прочитанные в Высшей партийной школе при ЦК ВКП(б) , 1952.
70. Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел (Е. В. Адамов), М:, НКИД, 1924.
71. Тардье, Мир, М.: Госполитиздат 1943.

72. Хопкирк П. Большая игра против России: азиатский синдром. М.: Рипол классик, 2004.
73. Черчиль В. Мировой кризис, М-Л:, Государственное военное издательство, 1932.
74. Zurcher Erik J. Turkey. A Modern history, Londin: I.B. TAUTIS, 2007.

3. Հոդվածներ ու հրապարակումներ

75. Գզոյան Է. Գ., Անդրկովկասի հանրապետությունների՝ Ազգերի լիգային անդամակցելու հարցը, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2011, № 3:
76. Կիրակոսյան Ջ., Սահակյան Ռ., Սան Ռեմոյի կոնֆերանսը և Հայաստանը, «Բանբեր Հայաստանի արխիվների», Ե., 1972, թիվ 3:
77. Նավոյան Է., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հայեցակարգերի ազդեցությունը Հայաստանի առաջին Հանրապետության, Խորհրդային Հայաստանի և հայության վրա, «Կանթեղ», Ե., «Աստղիկ» հրատ., 2015, 4 (65).
78. Շիրինյան Լ., Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան, Ե., «21-րդ ԴԱՐ», 2008, թիվ 4 (22):
79. Дмитриев С. Н. Таинственный Альянс // Наш современник, 1990, № 11.
80. Казахецян В. О материальном ущербе, нанесенном армянскому народу в Закавказье и в Карсской области турецкими интервентами., Вестник общественних наук, АН АрмССР, 1987, N-2.

4. Ինտերնետային աղբյուրներ

81. http://www.hist.msu.ru/Departments/ModernEuUS/INTREL/SOURCES/Legnatust.htm
82. http://k4500.com/history/716-28-maya-1918g-provozglashenie-armyanskoj.html
83. http://www.lragir.am/index.php/arm/0/comments/view/41368
84. http://www.omg-mozg.ru/avtory-napoleon-bonapart.htm
85. http://wwi.lib.byu.edu/index.php/Treaty_of_Lausanne
86. http://genocidarmenia.ru/news/2012-02-03/160468
87. http://www.un.am/res/UN%20Treaties/ XIV_1.pdf
88. http://ncwarmenians.org/hy/ReparationIssue
89. http://www.azg.am/AM/2015032011

ԷԴԳԱՐ ՆԱՎՈՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

(1878-1923 թթ.)

(պատմական, իրավական և տնտեսական վերլուծություն)

Հրատ. խմբագիր՝ Ա. Հովակիմյան
Էջադրումն ու ձևավորումը՝ Մ. Համբարձումյանի

Ֆորմատ՝ 60 × 84 1/16
Չափսը 10.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 150

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարանում

Ա 102370

Էդգար Լևոնի
ՆԱՎՈՅԱՆ

Ծնվել է 1985թ. Երևանում, ավարտել է թիվ 37 միջնակարգ դպրոցը:

2002-2007թթ. սովորել է ԵՊՄՀ պատմաիրավագիտության ֆակուլտետում, որն ավարտել է գերազանցությամբ:

2009-2012թթ. աշխատել է նույն դպրոցում որպես պատմության և հասարակագիտության ուսուցիչ:

2010թ-ից սոցիոգեբանության խորհրդատու է ոչ պետական հաստատությունում:

2014թ-ից ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ֆակուլտետի հայցորդ է, վեց գիտական հոդվածների հեղինակ:

2015թ. մարտից աշխատում է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող: